Մարդու իրավունքների միջազգային իրավական պաշտպանությունը, որի գործընթացը սկսվեց XX-րդ դարից, այսօր ձեռք է բերել միջազգային իրավունքի համապարտադիր նշանակության սկզբունքի ուժ /jus cogens/: Եվ դա բնական է, նկատի ունենալով, որ մարդու իրավունքները գերակայություն ունեն մարդկային համակեցության մյուս բոլոր կանոնների նկատմամբ[1]:

Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների միջազգային իրավական երաշխավորման ժամանակակից համակարգը քաղաքակիրթ ազգերի և ժողովուրդների կողմից ձևավորվեց բավականին երկար և քրտնաջան աշխատանքի արդյունքում:

Հարկ է ընդգծել, որ չնայած պետությունների ինքնիշխանությամբ պայմանավորված մարդու իրավունքների երաշխավորումը հանդիսանում է յուրաքանչյուր պետության առաջնային պարտավորությունը, սակայն այն ներկա ժամանակաշրջանում հնարավոր չէ լուծել առանց մարդու իրավունքների պաշտպանության հարցում պետությունների միջազգային ընտանիքի շրջանակներում լայն համագործակցության:

[1] История защиты прав человека; И.П.Мазитова; Accessed February 18 2010; Available from http:/www.law.edu.ru/doc/document.asp.

Պետությունները այս ոլորտում հիմնականում համագործակցում են հետևյալ կերպ. նախ՝ միջազգային մակարդակով ձևավորվում են մարդու իրավունքների միջազգային իրավական չափորոշիչներ, որոնք ընդունելի են պետությունների մեծամասնության համար, երկրորդ՝ հիմնվում են կոնվենցիոն և ինստիտուցիոնալ մարմիններ, որոնք հսկում են պետությունների կողմից այդ չափորոշիչների պատշաճ կատարման վրա, և երրորդ՝ ներպետական մակարդակում յուրաքանչյուր պետություն իր ազգային օրենսդրությունը համապատասխանեցնում է այդ միջազգային չափորոշիչներին՝ երաշխավորելով դրանց կենսագործումը:

Անշուշտ, առանց մարդու իրավունքների և ազատությունների վերաբերյալ բոլոր պետությունների համար համապարտադիր, երաշխիքային բնույթի իրավադրույթների ձևավորման, թե՛ միջազգային թե՛ ազգային մակարդակներում հնարավոր չէր լինի լիարժեք ապահովել մարդու ազատ ապրելու և ազատ գործելու բնական և անօտարելի իրավունքները:

Այս հանգամանքը նաև նպաստեց, որ մարդու իրավունքների և հիմանարար ազատությունների միջազգային պաշտպանությունը իրականացվի համընդգրկուն /ունիվերսալ/ և տարածաշրջանային մակարդակներով:

Մարդու իրավունքների միջազգային իրավական պաշտպանության երաշխիքներն ամրագրված են այնպիսի համընդգրկուն և տարածաշրջանային միջազգային իրավական փաստաթղթերում ինչպիսիք են՝ Միավորված ազգերի կազմակերպության կանոնադրությունը, 1948թ. Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիրը, 1966թ. Քաղաքական և քաղաքացիական իրավունքների մասին միջազգային դաշնագիրը, 1950թ. Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիան և մյուս միջազգային իրավական փաստաթղթերը: Մարդու իրավունքների միջազգային իրավական պաշտպանության երաշխիքները ընդհանուր բնույթի ձևակերպումներով ՄԱԿ-ի կանոնադրության մեջ ամրագրելուց հետո դրանք ավելի մանրամասնեցվին և հստակեցվեցին այդ կազմակերպության հովանու ներքո ընդունված տարաբնույթ միջազգային իրավական փաստաթղթերում:

Ասվածով հանդերձ, այսօր իրավունքի գերակայության տեսանկյունից, ձևավորվել է ոչ իրավաչափ պրակտիկա, որի արդյունքում մարդու իրավունքների վերաբերյալ միջազգային իրավական փաստաթղթերի իրավազորությունը կարծես թե տարածվում է միայն ճանաչված պետությունների քաղաքացիների վրա, մինչդեռ չճանաչված պետությունների ազգաբնակչությունը ըստ էության, միջազգային կոնվենցիոն նորմերի պաշտպանությունից զրկված է: Ինչ խոսք, այս մասին ուղղակիորեն որևէ միջազգային պայմանագրում կոնվենցիայում կամ համաձայնագրում նշված չէ, սակայն, ինչպես արդեն նշեցինք, դա փաստ է, որի վկայությունն է նաև միջազգային կազմակերպությունների և մարդու իրավունքների միջազգային դատարանների գործելակերպը: Միջազգային կազմակերպությունները և մարդու իրավունքների միջազգային դատարանները այսօր փաստացի հրաժարվում են ընդունել և քննել չճանաչված պետությունների քաղաքացիների դիմումը ուղղված իրենց պետության և հանրային իշխանության դեմ:

Մարդու իրավունքների վերաբերյալ միջազգային պայմանագրերի կատարումը ապահովելու նպատակով ՄԱԿ-ի համակարգում գործում են հատուկ մարմիններ, որոնք հետևում են պետությունների կողմից միջազգային պայմանագրերում ամրագրված պարտավորությունների կատարմանը և մարդու իրավունքների պաշտպանությանը: Միջազգային իրավունքում այդ մարմինները հայտնի են մարդու իրավունքների պաշտպանության կոնվենցիոն կառուցակարգեր անվանմամբ[1]: Այդ կոնվենցիոն մարմինները կարող են ստանալ և ուսումնասիրել անհատական գանգատներ կամ հաղորդումներ: Սակայն, այսօր ձևավորված պրակտիկայի արդյունքում ՄԱԿ-ի կոնվենցիոն մարմինները փաստորեն չեն ուսումնասիրում այն անհատական գանգատները կամ հաղորդումներն, որոնք գալիս են չճանաչված պետություններից, դրանք իրենց գործունեության ընթացքում երբևէ քննության չեն առել անհատական գանգատ որևէ վիճելի կարգավիճակ ունեցող տարածքի բնակչից:

Պետք է արձանագրել, որ այսօր ձևավորվել է մի իրավիճակ, երբ, այն ազգը կամ ժողովուրդը որը ցանկություն է հայտնում օգտվել 1966թ. Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրի 1-ին հոդվածով նախատեսված ինքնորոշման իր իրավունքից և այդ իրավունքի ուժով ազատորեն որոշել իր քաղաքական կարգավիճակը, ինքնուրույն տնօրինել իր ճակատագիրը, զրկված է, ինչպես համընդգրկում, այնպես էլ տարածաշրջանային միջազգային պայմանագրերի պաշտպանության հնարավորությունից:

[1] Human Rights: A Basic Handbook for UN Staff. Office of the Hight commissionier for human rights, United Nations staff college project. p 49

Դրա վառ օրինակը կարող է հանդիսանալ Արցախի Հանրապետության և նրա ազգաբնակչության փորձը: Ըստ էության, վերջիններս չեն օգտվում մարդու իրավունքների և օրինական շահերի պաշտպանության որևէ միջազգային կառուցակարգի պաշտպանությունից:

Չնայած Արցախի Հանրապետությունը միջազգայնորեն ճանաչված չէ, սակայն ունի ճանաչված պետություններին բնորոշ բոլոր բնութագրիչները, մասնավորապես, օժտված է ինքնիշխանությամբ, ունի տարածք և հանրային իշխանություն, որի իրավազորությունը տարածվում է իր կողմից իրավաչափորեն վերահսկվող տարածքների և այնտեղ բնակվող անհատների վրա: Արցախի Հանրապետությունը ունի կառավարման հատուկ ապարատ, հրապարակում է վարքագծի համապարտադիր նորմեր և որոնց կատարումը անհրաժեշտության դեպքում ապահովվում է պետական հարկադրանքով: Արցախի Հանրապետությունը ունի համապետական ժողովրդական հանրաքվեով ընդունված Սահմանադրություն, և դրա հիման վրա գործող օրենսդիր, գործադիր և դատական մարմինների համակարգ, բանակ և պետական բյուջե: Ներպետական մակարդակով Արցախի Հանրապետությունը պաշտպանում է իր քաղաքացիների և երկրում գտնվող օտարերկրյա քաղաքացիների և քաղաքացիություն չունեցող անձանց իրավունքները և օրինական շահերը:

Այսպիսով կարելի է արձանագրել, որ Արցախի Հանրապետությունը թեկուզ դեռևս միջազգայնորեն ճանաչված չէ, սակայն ժողովրդավարության մակարդակով ոչնչով չի զիջում դե յուրե ճանաչված պետություններին:

Համամիտ են մյուս պետությունները կամ քաղաքական գործիչները այս իրողության հետ թե ոչ, իրենց խնդիրն է, սակայն անհերքելի փաստ է, որ Արցախի Հանրապետությունը վաղուց հանդիսանում է միջազգային համակարգի ակտոր և պետք է օգտվի ժամանակակից միջազգային իրավակարգին բնորոշ պաշտպանիչ կառուցակարգերից, իսկ նրա իրավազորության ներքո գտնվող անձինք պետք է կարողանան իրենց խախտված կոնվենցիոն իրավունքները և ազատությունները պաշտպանեն միջազգային կազմակերպություններում և մարդու իրավունքների միջազգային դատարաններում:

Այս պարզ եզրահանգման հիմքում ընկած է այն փաստը, որ մարդու միջազգային իրավունքները ունեն համընդհանուր բնույթ և պատկանում է յուրաքանչյուր անհատի, անկախ նրանից, թե նրա պետությունը ճանաչված է թե ոչ: Անթույլատրելի է այնպիսի իրավիճակը, որի դեպքում որևէ վիճելի աշխարհագրական տարածքի կարգավիճակը առաջացնում է իրավական և ինստիտուցիոնալ փակուղի, որն հանգեցնում է այդպիսի տարածքներում բնակվող անհատներին պատկանող իրավունքները և օրիանական շահերը inter alia, միջազգային ատյաններում պաշտպանելու հնարավորությունից:

Մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանությունը լինելով jus cogens նորմ, որևէ կերպ տարբերակում չի դնում ճանաչված և չճանաչված պետությունների միջև: Անկախ նրանից պետությունը ճանաչված է թե ոչ անհատը, նրա իրավունքները և հիմնարար ազատությունները գտնվում են միջազգային հանրային իրավունքի պաշտպանության ներքո: Բացի այդ, մարդը բարձրագույն արժեք է, որևէ կերպ չի կարելի մարդուն տարբերակել այն հիմքով թե նա ճանաչված պետության քաղաքացի է թե ոչ: ՄԱԿ-ի կանոնադրությունում և այլ միջազգային իրավական համընդգրկուն փաստաթղթերում ամրագրված «յուրաքանչյուր ոք», «անձ», «մարդ» հասկացությունները ունեն համընդհանուր նշանակություն, դրանք ներառում են բոլոր մարդ արարածներին, անկախ որ երկրում են նրանք բնակվում, անկախ նրանց բնակության պետությունը միջազգայնորեն ճանաչված է թե ոչ: Եվ դա բնական է, Երկիր մոլորակի վրա չկա թեկուզ մեկ քառակուսի կիլոմետր, որի վրա չտարածվի ՄԱԿ-ի կանոնադրության և մարդու իրավունքներ վերաբերյալ մյուս միջազգային իրավական համընդգրկուն փաստաթղթերի իրավաբանական ուժը: Ինչպես նշվում է ՄԱԿ-ի Կանոնադրության 1-ին հոդվածի 3-րդ կետում՝ ՄԱԿ-ի նպատակներից է իրականացնել միջազգային համագործակցություն տնտեսական, սոցիալական, մշակույթային կամ մարդասիրական բնույթի միջազգային խնդիրների լուծման, ինչպես նաև բոլորի համար մարդու իրավունքների և հիմնական ազատությունների նկատմամբ հարգանքի տարածման և խրախուսման գործում անկախ ցեղից, սեռից, լեզվից կամ դավանանքից:

Ի դեպ, Արցախի Հանրապետության քաղաքացին, կամ նրա իրավազորության ներքո գտնվող օտարերկրացին չի կարող իր իրավունքների պաշտպանության համար դիմել նույնիսկ մարդու իրավունքների միջազգային իրավական պաշտպանության այնպիսի տարածաշրջանային կառուցակարգի ինչպիսին՝ Մարդու իրավունքների եվրոպական դատարանն է:

Որպես օրինակ կարող Է ծառայել Արցախի Հանրապետության բնակիչ Ա.Հ-ի գործը: Երբ նա գանգատով դիմեց Մարդու իրավունքների եվրոպական դատարան, այնտեղից 07.06.05թ. ստացավ հետևյալ բովանդակությամբ պատասխանը. «Մարդու իրավունքների եվրոպական դատարանը կարող է քննության առնել միայն այն գանգատները, որոնք ուղղված են Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիան վավերացրած պետությունների դեմ: Լեռնային Ղարաբաղն այդպիսին չի հանդիսանում: Այդ իսկ պատճառով, խնդրում եմ պարզաբանել, Կոնվենցիան վավերացրած որ պետության դեմ է ուղղված Ձեր դիմումը կից ներկայացնում եմ այդ պետությունների ցանկը: Հակառակ դեպքում,

Դատարանը չի կարողանա քննել Ձեր դիմումը»: Գանգատի հեղինակը, որը դժգոհում էր իր տղայի նկատմամբ Արցախի Հանրապետության դատարանների կողմից կայացված վճիռներից, գտնում է, որ տվյալ գործով խախտվել է Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածով նախատեսված արդար դատաքննության իրավունքը: Գործի նյութերից ակնհայտ է, որ ԱՀ դատարանները ո՛չ օրենսդրական և ո՛չ էլ փաստական առումով Հայաստանի կամ Ադրբեջանի դատական համակարգի հետ որևէ առնչություն չունեն: Արցախի Հանրապետությունը այնպիսի աշխարհագրական տարածք է գբաղեցնում, որն ըստ էության գտնվում է Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի իրավազորության ներքո[1]:

Եթե հետևենք Մարդու իրավունքների եվրոպական դատարանի վերը նշված պատասխանի տրամաբանությանը կարելի է եզրակացնել, որ Արցախի Հանրապետությունը միջազգային համակարգից դուրս է գտնվում, հետևաբար ազատվում է իր իրավազորության ներքո գտնվող անհատների իրավունքների և օրինական շահերի պաշտպանության պարտավորությունից: Հետաքրքիր է, եթե ԱՀ-ն որոշի իր տարածքում քիմիական կամ միջազգայնորեն արգելված զենք արտադրի ինչ հիմքով նրան կարգելեն:

Խնդիրը նրանումն է, որ չնայած Արցախի Հանրապետությունը որպես ժողովրդավարական պետություն ձգտում է ամբողջովին ապահովել իր իրավազորության ներքո գտնվող անհատների իրավունքների և օրինական շահերի պաշտպանությունը, սակայն չի բացառվում, որ ինչպես դատական, այնպես էլ գործադիր մարմինների մակարդակով կարող է խախտվի այս կամ այն անձի միջազգային իրավունքի մակարդակով սահմանված իրավունքները և ազատությունները, ընդ որում, ինչպես վկայում է այլ պետությունների փորձը, այդ խախտումը կարող է տեղի ունենա ոչ թե դիտավորության, այլ ցածր պրոֆեսիոնալիզմի պատճառով, և ի՞նչ, ստացվում է, որ անձը իրավաբանորեն ունի միջազգային կոնվենցիոն իրավունք, սակայն քաղաքական դրդապատճառներով պետությունների միջազգային ընտանիքը ժամանակավորապես կասեցնում է նրա իրավաբանական իրավունքները, մինչև նրա պետության լիարժեք ճանաչումը: Մեղմ ասած, սա կարելի է որակել նույնիսկ «միջազգային անարխիա»:

Այս հարցում կա նաև մեկ այլ խնդիր, միջազգային հանրությունը ընդունում է, որ թեկուզ չճանաչված ԱՀ-ն իր տարածքում կարող է իրականացնել և իրականացնում է հանրային կառավարում, որ նրա պետական մարմինները ընդունում են օրենքներ, որոշումներ, հրամանագրեր և այլ բնույթի իրավական ակտեր: Այն, որ այդ իրավական ակտերը կարող են հակասել նաև մարդու իրավունքների միջազգային չափորոշիչներին անվիճելի փաստ է, Մարդու իրավունքների եվրոպական դատարանը հարյուրավոր վճիռներ ունի այնպիսի ժողովրդավարական մեծ ավանդույթներ ունեցող պետությունների դեմ, ինչպիսիք են՝ Ֆրանսիան, Գերմանիան, Իտալիան և մյուսները, այնպես որ ԼՂՀ չի կարող բացառություն լինել, հարց է առաջանում, ի՞նչու ԱՀ-ի բնակիչները չպետք է իրավունք ունենան վերոնշալ դատարանի միջոցով պայքարեն իրենց թեկուզ չճանաչված պետության միջազգային իրավունքի տեսանկյունից ոչ իրավաչափ իրավական ակտերի դեմ:

Ասվածով հանդերձ, հարկ է նշել, որ ԱՀ Ազգային Ժողովը ձգտում է ամենինչ անել, որպեսզի իր կողմից ընդունվող օրենքները լիովին համապատասխանեն միջազգային իրավունքի հանրաճանաչ նորմերին և սկզբունքներին: Արցախի Հանրապետության Սահմանադրության 3-րդ հոդվածը սահմանում է, որ Արցախի Հանրապետությունում մարդը բարձրագույն արժեք է: Մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների և ազատությունների հարգումն ու պաշտպանությունը հանրային իշխանության պարտականություններն են: Պետությունը ապահովում է մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանությունը՝ միջազգային իրավունքի հանրաճանաչ սկզբունքներին և նորմերին համապատասխան:

Չնայած վերոնշյալի, ինչպես արդեն նշեցինք, Արցախի Հանրապետության ազգաբնակչությունը չի օգտվում միջազգային իրավական պաշտպանության միջոցներից, ինչը ամբողջովին հակասում իրավունքի գերակայության սկզբունքին:

Ամփոփելով կարող ենք ասել հետևյալը. եթե Արցախը մնար Ադրբեջանի կազմում, կամ եթե հանկարծ հայտնվի Ադրբեջանի կազմում, Արցախի Հանրապետության բնակիչների վրա ինքնաբերաբար կտարածվի իրավունքի գերակայության սկզբունքը, իսկ անհատները կարող են օգտվել իրենց իրավունքների պաշտպանության միջազգային բոլոր կառուցակարգերից, իսկ այն, որ արցախցիները մերժել են ադրբեջանական բռնապետության ներքո իրենց կյանքի շարունակությունը և իրենց ճակատագիրը ցանկանում են տնօրինել ինքնուրույն, այն որ նրանք ստեղծել են ավելի ազատ և

[1]Оганесян Владимир.Некоторые проблемы защиты прав человека в непризнанных государствах. Международный альманах. Конституционное правосудие в новом тысячелетии. Ереван 2005, стр. 214-219

ժողովրդավարական պետություն քան այսօրվա Ադրբեջանն է, հանդիսանում է իրենց իրավունքների միջազգային իրավական պաշտպանության լուրջ խոչընդոտ:

Կարծում ենք, ոչ միայն միջազգային իրավունքի, այլ նաև ողջախոհության տեսակետից այս բոլորը անընդունելի է, հասկապես անընդունելի է, եթե նկատի ունենանք, որ Արցախի Հանրապետությունում անհատը, որը պայքարում է ազատ ապրելու իրավունքի համար՝ մեկուսացված է միջազգային հանրությունից, ընդ որում, մարդու իրավունքների միջազգային իրավական պաշտպանությունից զրկված են շուրջ 145.053 մարդ[1]:

Արցախի ժողովրդի պայքարը իր ինքնուրույնության ճանաչման համար հնարավոր է, որ տևի բավականին երկար, ուստի հրատապ կերպով պետք է լուծել արցախցիների միջազգային իրավական կարգավիճակի խնդիրը: Գտնում ենք, որ այն լուծելու համար անհրաժեշտ է միջազգային համընդգրկուն մակարդակով ՄԱԿ-ի կողմից կամ տարածաշրջանային մակարդակով ընդունել շատ հեղինակավոր միջազգային իրավական մի փաստաթուղթ, որը կոնվենցիոն և ինստիտուցիոնալ մակարդակով կերաշխավորի չճանաչված պետություններում անհատի իրավունքների, հիմնարար ազատությունների և օրինական շահերի ex jure պաշտպանությունը:

Միջազգային հանրությունը, թեկուզ անուղղակիորեն ևս կարող է նպաստել Արցախի Հանրապետությունում անհատի իրավական կարգավիճակի բարելավմանը: Դա կարելի իրականացնել օրինակ, բազմաբնույթ մոնիթորինգների միջոցով՝ Արցախի Հանրապետություն այցելելով և մարդու իրավական պաշտպանության պրակտիկան ուսումնասիրելով և դրա մասին բարձրաձայնելով:

Գտնում ենք, որ Արցախի Հանրապետությունն իր հերթին պետք է հետևի Մերձդնեստրյան Մոլդովական Հանրապետության և Հարավային Օսիայի օրինակներին[2] և միակողմանիորեն պարտավորվի, որ թեկուզ չճանաչված լինելուն, միևնույն է, պատրաստ է բարեխղճորեն կատարել մարդու իրավունքների վերաբերյալ միջազգային պայմանագրերի և կոնվենցիաների համապատասխան դրույթները իր տարածքում:

Տեղեկություններ հեղինակի մասին.

Մարիամ Գրիգորյան, ԼՂՀ Նախագահի աշխատակազմի Անվտանգության խորհրդի աշխատանքների ապահովման բաժնի գլխավոր մասնագետ, ԱրՊՀ իրավունքի ամբիոնի դասախոս, ասպիրանտ
mariamgrigoryan93@yandex.ru

Հոդվածը տպագրության է երաշխավորել խմբագրական կոլեգիայի անդամ, ի.գ.դ., պրոֆեսոր Գ.Ս.Ղազինյանը:

[1] http://statnkr.am/files/publications/2016/Mardahamar_2015/MAS_2/1_1%20LXH.pdf

[2] 1992թ. Մերձդնեստրի Գերագույն Խորհուրդը հայտարարել էր, որ նրա տարածքում գործում է Քաղաքական և քաղաքացիական իրավունքների մասին միջազգային դաշնագիրը, Տնտեսական, սոցիալական և մշակույթային իրավունքների մասին միջազգային դաշնագիրը, Ցեղասպանություն հանցագործությունը կանխարգելելու և պատժելու մասին կոնվենցիան, Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիան, իսկ Հարավային Օսիան միակողմանիորեն ճանաչել է Քաղաքական և քաղաքացիական իրավունքների մասին միջազգային դաշնագիրը, Տնտեսական, սոցիալական և մշակույթային իրավունքների մասին միջազգային դաշնագիրը, Ցեղասպանություն հանցագործությունը կանխարգելելու և պատժելու մասին կոնվենցիան և նրա Կամընտիր արձանագրությունները:

ՀՏԴ 342 Սահմանադրական իրավունք

ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԻՐԱՎԱԿԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԱՐՏԱՑՈԼՈՒՄՆ ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ, ՈՐՊԵՍ ՉՃԱՆԱՉՎԱԾ ՊԵՏՈՒԹՅԱՆ, ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Սոսի ԶԱՔԱՐՅԱՆ

Բանալի բառեր. *Չճանաչված պետություններ, միջազգային իրավունք, մարդու և քաղաքացու իրավունքներ ու ազատություններ, միջազգային պայմանագիր, օրենքներ, ԼՂՀ, ԱՀ*

Ключевые слова. *Непризнанные государства, международное право, права и свободы человека и гражданина, международные договоры, законы, НКР, РА*

Key words: *Unrecognized States, international Law, human and citizen's rights and freedoms, international treaty, laws, NKR, RA*

МЕЖДУНАРОДНЫЕ ПРАВОВЫЕ ДОКУМЕНТЫ ПО ПРАВАМ ЧЕЛОВЕКА И ИХ ОТРАЖЕНИЕ В ЗАКОНОДАТЕЛЬСТВЕ АРЦАХСКОЙ РЕСПУБЛИКИ – КАК НЕПРИЗНАННОМ ГОСУДАРСТВЕ

С. ЗАХАРЯН

В условиях строительства правового государства на процессы демократических реформ имеет огромное влияние имплементация международных документов в национальное законодательство по правам и свободам человека и гражданина. С самого начала приобритения независимости Республика Арцах в одностороннем порядке присоединилась к некоторым международным договорам. Процесс уже начался, остается только действенные шаги, чтобы реализовать их.

INTERNATIONAL DOCUMENTS OF HUMAN RIGHTS AND THEIR REFLECTION IN THE LEGISLATION OF THE REPUBLIC OF ARTSAKH – AS IN THE UNRECOGNIZED STATE

S. ZAQARYAN

In the conditions of the construction of a legal state on the processes of democratic reforms, the implementation of international documents in the national legislation on the rights and freedoms of man and citizen has a huge impact. From the very beginning of independence, the Republic of Artsakh unilaterally joined several international treaties. The process has already started, there are only effective steps to realize them.

Իրավական պետության կառուցման պայմաններում ժողովրդավարական բարեփոխումների գործընթացի վրա հսկայան ազդեցություն ունի մարդու և քաղաքացու իրավունքների և ազատությունների վերաբերյալ միջազգային հանրահայտ փաստաթղթերի ներդնումն ազգային օրենսդրության մեջ: Անկախության ձեռք բերման հենց սկզբից Արցախի հանրապետությունը ձեռնամուխ եղավ մակողմանիորեն միանալու միջազգային մի քանի պայմանագրերի: Գործընթացն արդեն սկսված է, մնում է միայն գործնական քայլեր, դրանցում ամրագրված նորմերը կյանքի կոչելու համար:

Արցախի Հանրապետության կողմից պետական անկախության ձեռքբերումով մեծացել է հետաքրքրությունն՝ արցախյան և միջազգային իրավունքի հարաբերակցության հարցի շուրջ:

Իրավական պետության կառուցման պայմաններում ժողովրդավարական բարեփոխումների գործընթացի վրա հսկայան ազդեցություն ունի միջազգային իրավունքի նորմերի իմպլեմենտացիան: Միջազգային իրավունքի նորմերի իմպլեմենտացիան հանդիսանում է միջազգային իրավունքի հանրաճանաչ նորմերի ու սկզբունքների փաստական ներդնումն ազգային իրավական համակարգ, որն իրականացվում է միջազգային-իրավական փաստաթղթերի տրանսֆորմացիայի, ռեցեպցիայի, ինկորպորացիայի, ադապտացիայի, հղման ձևերով[1]: Անկախ նրանից, թե միջազգային նորմերի ներդնումն ազգային օրենսդրության մեջ ինչ անուն է կրում կամ

[1] Քոչարյան Վ. Միջազգային իրավունք: Ուսումնական ձեռնարկ-Եր.: Երևանի համալսարանի հրատարակչություն, 2002, էջ 18

ինչ փուլերով է ընթանում, կարող ենք փաստել, որ այդ գործընթացը վաղուց արդեն սկսված է, որից անմասն չեն նաև նորանկախ, չճանաչված, ինչպես նաև անկախության և միջազգային-իրավական ճանաչման ձգտող ազգերն ու պետությունները:

Միջազգային իրավունքի դոկտրինայում միջազգային և ներպետական իրավունքի հարաբերակցության հարցի շուրջ գոյություն ունեն երկու կոնցեպցիաներ՝ դուալիստական և մոնիստական: Անկախ նրանից, թե պետությունը մոնիզմի կամ դուալիզմի տեսություններից[1] որին է նախապատվություն տալիս, նա պարտավոր է իր ներքին ու արտաքին քաղաքականությամբ կատարել ստանձնած միջազգային պարտավորությունները և պահպանել միջազգային նորմերի առաջնայնությունը :[2]

Ինչպես նորանկախ երկրների մեծ մասը, այնպես էլ Արցախի Հանրապետությունը[3] , միջազգային իրավունքի հանրաճանաչ նորմերն ու սկզբունքները համարում է իր երկրի իրավական համակարգի բաղկացուցիչ մասը: Իսկ որպես միջազգային իրավունքի չճանաչված սուբյեկտ՝ նա ոչ միայն դեկլարատիվ կարգով՝ Սահմանադրությամբ նշված մեկ նախադասությամբ հռչակում է իր հավատարմությունը միջազգային իրավունքի հանրաճանաչ նորմերին ու սկզբունքներին, այլև դա անում է գործնական ասպարեզում: Խոսքն ոչ միայն այն մասին է, որ Արցախի խորհրդարանի կողմից ընդունված օրենքներում և նույնիսկ ենթաօրենսդրական ակտերում ուղղակի հղում է կատարվում միջազգային փաստաթղթերին՝ որպես տվյալ նորմատիվ ակտի ընդունման բաղկացուցիչ մասի, այլև նշվում է, որ եթե Արցախի Հանրապետության միջազգային պայմանագրերով սահմանված են այլ նորմեր, քան նախատեսված են տվյալ օրենքով, ապա կիրառվում են միջազգային պայմանագրի նորմերը: Իսկ համաձայն ԼՂՀ Միջազգային պայմանագրերի մասին օրենքի 5-րդ հոդվածի՝[4] <Ուժի մեջ մտած Լեռնային Ղարաբաղի Հանրապետության միջազգային պայմանագրի նորմերը Լեռնային Ղարաբաղի Հանրապետության տարածքում գործում են անմիջականորեն>: Օրենքը սահմանում է, որ եթե վավերացված միջազգային պայմանագրում սահմանվում են այլ նորմեր, քան նախատեսված են Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքներով, ապա կիրառվում են վավերացված միջազգային պայմանագրի նորմերը: Նույն տրամաբանությամբ էլ, եթե սահմանված կարգով հաստատված Լեռնային Ղարաբաղի Հանրապետության միջազգային պայմանագրում սահմանվում են այլ նորմեր, քան նախատեսված են Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Նախագահի նորմատիվ հրամանագրերով, կարգադրություններով, կառավարության որոշումներով կամ գերատեսչական նորմատիվ ակտերով, ապա կիրառվում են հաստատված միջազգային պայմանագրի նորմերը:

Չճանաչված լինելու պատճառով Արցախի Հանրապետությունը չի հանդիսանում միջազգային իրավունքի սուբյեկտ, ինչն էլ նրան զրկում է միջազգային պայմանագրի կնքման լիարժեք կողմ լինելու հնարավորությունից: Այդ պատճառով անկախության ձեռքբերման հենց սկզբից Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը ձեռնամուխ եղավ միակողմանիորեն միանալ մարդու իրավունքների վերաբերյալ մի շարք կոնվենցիաների: Այսպես, դեռևս 1992 թվականի նոյեմբերի 23-ի ԼՂՀ Գերագույն խորհրդի նախագահության N ՆԽ -0131-1 որոշմամբ /ԼՂՀ Գերագույն խորհրդի 23.11.1994թ. N ՊՆ-0098-1 որոշում/ միակողմանիորեն ԼՂՀ-ն միացավ

[1] <Միջազգային և ներպետական իրավունքի հարաբերակցության հարցը չճանաչված պետություններում /ԼՂՀ Օրինակով/> Ս. Ալեքսանյան, ԴԱՏԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆ Գիտամեթոդական ամսագիր, 1-2/187-188 հունվար-փոտրվար, Երևան 2015, էջ՝ 46

[2] В.А. Карташкин <Права человека: соотношение международного и внутригосударственного права>., Права человека — индикатор современного развития России: материалы Международной научно-практической конференции / отв. ред. Т. А. Сошникова. —М.: Изд-во Моск. гуманит. ун-та, 2015. с. 41

[3] 2017 թվականի փետրվարի 20-ին անցկացված համաժողովրդական հանրաքվեի արդյունքով Լեռնային Ղարաբաղի Հանրապետության քաղաքացիները ընդունեցին նոր Սահմանադրություն, որի բարեփոխումներից է նաև երկրի վերանվանումը՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունից՝ Արցախի Հանրապետություն: Համաձայն Սահմանադրության 1-ին հոդվածի 2-րդ կետի՝ <Արցախի Հանրապետություն և Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն անվանումները նույնական են>:

[4] ԼՂՀ <Միջազգային պայմանագրերի մասին> օրենքն ընդունվել է 2014 թվականի մարտի 26-ին, որով ուժը կորցրած ճանաչվեց .Լեռնային Ղարաբաղի Հանրապետության միջազգային պայմանագրերի մասինն Լեռնային Ղարաբաղի Հանրապետության 2005 թվականի նոյեմբերի 30-ի ՀՕ-237 օրենքը:

<Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրին>, <Գաղութային երկրներին և ժողովուրդներին անկախություն շնորհելու մասին հռչակագրին> և <Քաղաքացիական և քաղաքական իրավունքների միջազգային դաշնագրին> և դրան կից ֆակուլտատիվ արձանագրություններին, իսկ 1993 թվականի հունվարի 26-ին ԼՂՀ Գերագույն խորհրդի նախագահության N ՆԽ-0161-1 որոշմամբ /ԼՂՀ Գերագույն խորհրդի 23.11.1994թ. N ԹՆ-0097-1 որոշում/ Արցախը միակողմանիորեն միացավ նաև <Պատերազմի զոհերի պաշտպանության մասին> 1949 թվականի օգոստոսի 12-ի Ժնևյան համաձայնագրերին և դրանց 1977 թվականի սեպտեմբերի 26-ի լրացուցիչ արձանագրությանը:

ԱՀ-ի կողմից Մարդու իրավունքների վերաբերյալ հեղինակավոր կոնվենցիաներին միանալու գործընթացն դրանով չավարտվեց, այն շարունակվեց նաև հետագա տարիներին: Այսպես, 2014 թվականի հոկտեմբերի 29-ին ընդունվեց <Եվրոպական մշակութային կոնվենցիան վավերացնելու մասին> օրենքը, իսկ 2015 թվականի ապրիլի 20-ին ընդունվեց <Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիան վավերացնելու մասին>, <Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին միջազգային դաշնագիրը վավերացնելու մասին>, <Եվրոպայի ճարտարապետական ժառանգության պաշտպանության մասին կոնվենցիան վավերացնելու մասին> և <Հնագիտական ժառանգության պահպանության մասին մասին եվրոպական կոնվենցիան վավերացնելու մասին> ԼՂՀ օրենքները: Միջազգային պայմանագրերին միանալու այս գործընթացը գտնվում է շարունակական փուլում:

Ինչ վերաբերում է այն հարցին, թե միջազգային իրավունքի սուբյեկտ չհամարվող, միջազգային-իրավական ճանաչում չունեցող երկիրն ինչ իրավունք ունի միանալու Մարդու իրավունքների վերաբերյալ միջազգային հանրահայտ փաստաթղթերին, ապա, որպես հակափաստարկ կամ հիմնավորում, բերենք Միավորված ազգերի կազմակերպության կողմից 1948 թվական դեկտեմբերի 10-ին ընդունված Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի 2-րդ հոդվածը: Համաձայն նշված հոդվածի՝ <<Ամեն ոք ունի այս Հռչակագրում բերված բոլոր իրավունքներն ու ազատությունները՝ առանց որևէ խտրականության՝ հիմնված ռասայական, մաշկի գույնի, սեռի, լեզվի, կրոնի, քաղաքական կամ այլ համոզմունքների, ազգային կամ սոցիալական ծագման, ունեցվածքի, դասային պատկանելության կամ որևէ այլ կարգավիճակի վրա:

Ավելին, ոչ մի խտրականություն չպետք է հիմնված լինի երկրի կամ տարածքի, քաղաքական, իրավական կամ միջազգային կարգավիճակի վրա, լինի դա անկախ, խնամարկյալ, ոչ-ինքնակառավարվող կամ ինքնիշխանության որևէ այլ սահմանափակումով պետական կազմավորում, որին պատկանում է մարդը /ընդգծումը մերն է՝ Մ.Ա./>> :[1] Այս հոդվածն, առավել քան, վերաբերում է Արցախի Հանրապետության նման կարգավիճակ ունեցող երկրներին:

Նույն ոգով են շարունակվում նաև մարդու իրավունքների միջազգային օրինաշարը կազմող մյուս փաստաթղթերը՝ Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին և Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին դաշնագրերը/1966թ./: Այս երկու ակտերի նախաբաններն ու 1-ին մասերը լրիվ իդենտիկ են: Մասնավորապես, այդ ակտերի 1-ին մասի 1-ին հոդվածը հռչակում է բոլոր ժողովուրդների ինքնորոշման իրավունքը, ըստ որի՝ նրանք ազատորեն սահմանում են իրենց քաղաքական կարգավիճակը և ազատորեն ապահովում իրենց տնտեսական, սոցիալական ու մշակութային զարգացումը: <Բոլոր ժողովուրդներն իրենց նպատակներին հասնելու համար կարող են ազատորեն տնօրինել իրենց բնական հարստություններն ու ռեսուրսները՝ առանց խոչընդոտելու փոխշահավետության սկզբունքի վրա հիմնված միջազգայն տնտեսական համագործակցությունից բխող որևէ պարտավորություն և միջազգային իրավունք>: [2] Այս դրույթով երկու փաստաթղթերը ճանաչում են, որ մարդու իրավունքների իրականացումը շատ

[1] Սարգսյան Վ., Ռոյթեր Վ., Խյութեներ Կ.: Մարդու իրավունքների պաշտպանության միջազգային և հայաստանյան ընթացակարգեր Եր.: Մարդու իրավունքների և ժողովրդավարության ինստիտուտ՝ ՄԻԺԻ-ի հրատ., 2003թ., էջ 248

[2] ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ. ՄԱԿ-ի միջազգային փաստաթղթերի ընտրանի և ձեռնարկ մարդու իրավունքների վերաբերյալ: Միավորված ազգերի կազմակերպության հայաստանյան գրասենյակ, Երևան 2013, էջ 112

բաներով կախված է պետության և ազգի տնտեսական, սոցիալական և մշակութային զարգացման մակարդակից, որում մարդը կոնկրետ ապրում է :[1]

Ավելին, <Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պետական անկախության հիմունքների մասին> ԼՂՀ սահմանադրական օրենքի /ընդունվել է 1992 թվականի հունվարի 8-ին/ IX կետի երկրորդ մասը հայտարարում է՝

<… Հանրապետությունն ապահովում է քաղաքացիների իրավունքների ազատությունն այն լրիվ ծավալով, որը պարունակվում է Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի մեջ և միջազգային իրավունքի նորմերում>: [2]

Շարունակելով նույն դիրքորոշումը, ԱՀ Սահմանադրության 3-րդ հոդվածի չորրորդ մասը հռչակում է՝ <Պետությունն ապահովում է մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանությունը՝ միջազգային իրավունքի հանրաճանաչ սկզբունքներին և նորմերին համապատասխան>:

Հատկանշական է, որ Արցախի պետական մարմինները որևէ նորմատիվ ակտ ընդունելու ժամանակ, տարիներ շարունակ, հղում էին կատարում ոչ միայն ԱՀ-ի կողից միակողմանիորեն միացած, այլև չմիացած պայմանագրերի: Ասվածը վերաբերում է մարդու իրավունքների մասին միջազգային կոնվենցիաներին ու ԱՀ դատական իշխանությանը: Այսպես, ԼՂՀ Գերագույն դատարանի՝ 2014 թվականի հունվարի 24-ի քաղաքացիական գործով որոշման մեջ, որպես վճռաբեկ բողոքի հիմք, ընդունում է ոչ միայն ԼՂՀ Սահմանադրությունը, Քաղաքացիական դատավարության օրենսգիրքը, այլև Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի 4-րդ հոդվածի պահանջները, կոնվենցիա, որին այդ ժամանակ ԼՂՀ-ն դեռևս միացած չէր: Նմանատիպ դատական գործերն ամենևին էլ եզակի չեն:

Մարդու իրավունքների վերաբերյալ միջազգային հանրահայտ փաստաթղթերի դրույթների անդրադարձն Արցախի Հանրապետության օրենսդրության մեջ ցայտուն կերպով երևում է հատկապես ԱՀ Սահմանդրության մեջ, մանավանդ՝ մարդու և քաղաքացու իրավունքների, ազատությունների և պարտականություններին վերաբերող բաժնում: ԱՀ Սահմանդրությունում ոչ միայն կարող ենք գտնել մարդու և քաղաքացու իրավունքների և ազատությունների մասին հանրահայտ պոստուլատները, այլև դրանց անդրադարձը ԱՀ ընթացիկ օրենսդրության մեջ, իսկ ավելի կոնկրետ՝ մարդու իրավունքների վերաբերյալ հանրաճանաչ նորմերի և սկզբունքների հիման վրա ընդունված բազմաթիվ օրենքների մեջ: ԱՀ Սահմանադրության 2-րդ գլխում արտացոլված են այնպիսի միջազգային-իրավական ակտերի դրույթներ, ինչպիսիք են 1948 թվականի Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիրը, 1966 թվականին ընդունված Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին և Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին դաշնագրերը, Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիան/1950թ./ և այլ հեղինակավոր ակտեր: Խոսքը, մասնավորապես, այնպիսի իրավունքների ամրագրման մասին է, ինչպիսիք են արժանապատվության /հոդ. 23/, կյանքի /հոդ. 24/, ֆիզիկական և հոգեկան անձեռնմխելիության /հոդ. 25/, անձնական ազատության /հոդ. 27/, խոշտանգման և խտրականության արգելքի /հոդ. 26 և 29/, օրենքի առջև բոլորի հավասարության /հոդ. 28/, պատվի ու բարի համբավի, մասնավոր և ընտանեկան կյանքի անձեռնմխելիության /հոդ. 31/, բնակարանի անձեռնմխելիության /հոդ. 32/, անձնական տվյալների պաշտպանության /հոդ. 34/, կրթության /հոդ. 38/, ազատ տեղաշարժվելու /հոդ. 40/, մտքի, խղճի և դավանանքի /հոդ. 41/, կարծիքի արտահայտման /հոդ. 42/, հավաքների /հոդ. 44/, միավորումների /հոդ. 45/, կուսակցություններ ստեղծելու և դրանց անդամագրվելու /հոդ. 46/, ընտրական և հանրաքվեներին մասնակցելու /հոդ. 48/, պատշաճ վարչարարության /հոդ. 48/, հանրագիր ներկայացնելու /հոդ. 53/, քաղաքական ապաստանի /հոդ. 54/, աշխատանքի /հոդ. 57/, գործադուլի /հոդ. 58/, տնտեսական գործունեության ազատության /հոդ. 59/, սեփականության /հոդ. 60/,

[1] Капицын В.М. История, теория и защита прав человека: Учебник.-М.: Московский университет потребительской кооперации, 2003. С-70

[2] http://arlexis.am/ / հղումն 22.07.2017 –ի դրությամբ/

դատական պաշտպանության և մարդու իրավունքների պաշտպանության միջազգային մարմիններին դիմելու /հոդ. 61/, վնասի հատուցման /հոդ. 62/, անմեղության կանխավարկածի /հոդ. 66/ և այլ հիմնարար իրավունքներ ու ազատություններ:

Ի կատարումն ստանձնած միջազգային պարտավորությունների, Արցախի իշխանություններն ընդունել են մարդու իրավունքների վերաբերյալ բազմաթիվ ու բազմոլորտ օրենքներ և այլ իրավական ակտեր: Խոսքը վերաբերում է քաղաքական, քաղաքացիական, տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքներին վերաբերող բազմաթիվ օրենքների, որոնց ընդունման հիմքում ընկած են վերոնշյալ միջազգային-իրավական ակտերը:

Սակայն, միաժամանակ, պետք է նշենք, որ Արցախի Հանրապետության օրենսդրությունն /ինչպես նաև երկրի հասարակական-քաղաքական կյանքի մյուս ոլորտները/ չի առանձնանում իր ինքնուրույնությամբ: Այդ օրենքների ու ենթաօրենսդրական ակտերի ընդունման աղբյուրը գլխավորապես հանդիսանում է Հայաստանի Հանրապետությունը, մի հանգամանք, որն ունի իր տրամաբանական եւ պատմա-քաղաքական դրդապատճառները:

Հավելենք, որ անկախության ձեռքբերումից հետո Արցախի օրենսդիր մարմինն ընդունել է մոտ 340 օրենք, որոնք վերաբերում են երկրի հասարակական-քաղաքական կյանքի տարաբնույթ կողմերին: Այսպես, ԱՀ-ի կողմից ընդունված օրենքների գերակշիռ մասը կազմում է քաղաքացիների սոցիալ-տնտեսական հարաբերություններին վերաբերող օրենսդրությունը [1]: Ընդունվել են օրենքներ <Պետական կենսաթոշակների մասին> /16.12.11թ./, <Սոցիալական աջակցության մասին> /10.10.2009թ./, <Աշխատանքի վարձատրության մասին> / 20.03.2003թ./, <Առանց ծնողական խնամքի մնացած երեխաների սոցիալական պաշտպանության մասին>, <Անհատ ձեռնարկատերերի համար պարտադիր սոցիալական ապահովագրության վճարների արտոնություններ սահմանելու մասին> /23.06.2006թ./, <Բնակչության զբաղվածության և գործազրկության դեպքում սոցիալական պաշտպանության մասին>, <Զինծառայողների և նրանց ընտանիքի անդամների սոցիալական ապահովության մասին> /22.01.1999թ./, <Զբաղվածության մասին> /28.12.2013թ./, <Երկարամյա ծառայության աշխատանքայն կենսաթոշակներ նշանակելու պայմանների մասին> /03.08.1997թ./, <Ժամանակավոր անաշխատունակության նպաստների մասին> /30.12.2011թ./, <ԼՂՀ հաշմանդամների սոցիալական պաշտպանության մասին /20.11.1997թ./, <Նվազագույն ամսական աշխատավարձի մասին> /30.12.2008թ./ և այլ օրենքներ ու ենթաօրենսդրական ակտեր: Ազգային ինքնուրույնության պահպանման և անկախ պետականության կերտման գործում շատ կարևոր էր <Լեզվի մասին> օրենքի ընդունումը[2] : Համաձայն այս օրենքի 1-ին հոդվածի՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պետական լեզուն հայերենն է: ԼՂՀ պաշտոնական լեզուն գրական հայերենն է: ԼՂՀ-ն նպաստում է Ղարաբաղի /Արցախի/ բարբառի պահպանմանը, օգտագործմանը, խրախուսում նրա գիտական ուսումնասիրումը և ազգագրական ու բանահյուսական ժողովածուների հրատարակումը: Իսկ հոդված 3-ը հռչակում է, որ ԼՂՀ կրթության համակարգում դասավանդման և դաստիարակության լեզուն գրական հայերենն է: ԼՂՀ ազգային փոքրամասնությունների համայնքներում հանրակրթական ուսուցումն ու դաստիարակությունը կարող են կազմակերպվել իրենց մայրենի լեզվով՝ պետական ծրագրով և հովանավորությամբ, հայերենի պարտադիր ուսուցմամբ:

Ժողովրդավարական պետության կայացման համար շատ կարևոր է նաև այնպիսի օրենքների առկայությունը, ինչպիսիք են <Տեղեկատվության ազատությունը> /02.11.2004թ./, <Քաղաքացիների առաջարկությունները, դիմումները և գանգատները քննարկելու կարգի մասին> /19.11.2009թ./, <Զանգվածային լրատվության մասին> /10.11.2004թ./, <Հեռուստատեսության և ռադիոյի մասին> /20.01.2007թ./ և այլն:

Քաղաքացիների՝ նշված սահմանադրական իրավունքներն իրենց մանրամասն կարգավորումն են ստացել հանրապետության քրեական, քաղաքացիական և վարչական,

[1] Այվազյան Վ.Ն. Մարդու իրավունքների պաշտպանության վերաբերյալ միջազգային նորմերի արտացոլումը ՀՀ ազգային օրենսդրության մեջ . <Բանբեր Երևանի համալսարանի>, թիվ 3/84/, 1994, էջ 193

[2] <Լեզվի մասին> գործող օրենքն ընդունվել է 2013 թվականի մայիս 15-ին, որով ուժը կորցրած է ճանաչվել <Լեզվի մասին> 1995 թվականի դեկտեմբերի 20-ի խմբագրությամբ օրենքը:

նյութական ու դատավարական իրավունքի նորմերով: Մարդու և քաղաքացու խախտված իրավունքների և ազատությունների պաշտպանության համար յուրահատուկ մարմին է Մարդու իրավունքների պաշտպանի ինստիտուտը, որը ԱՀ-ում առաջին անգամ ներդրվեց՝ 2005 թվականի մարտի 5-ին ընդունված <Մարդու իրավունքների պաշտպանի մասին> օրենքով, իսկ այնուհետև ենթարկվեց սահմանադրական կարգավորման: Համաձայն ԱՀ Սահմանադրության 157-րդ հոդվածի՝ <Մարդու իրավունքների պաշտպանը անկախ պաշտոնատար անձ է, որը հետևում է պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու պաշտոնատար անձանց, իսկ Մարդու իրավունքների պաշտպանի մասին օրենքով սահմանված դեպքերում՝ նաև կազմակերպությունների կողմից մար-դու իրավունքների և ազատությունների պահպանմանը, նպաստում է խախտ-ված իրավունքների և ազատությունների վերականգնմանը, իրավունք-ներին ու ազատություններին առնչվող նորմատիվ իրավական ակտերի կատարելա-գործ-մանը>:

ԱՀ-ում ընդունվել են բազմաթիվ օրենքներ, որոնք կարգավորում են երկրի հասարակական-քաղաքական կյանքի տարբեր ոլորտները: Ողջունելի է այնպիսի <ժամանակակից> օրենքի հաստատումը, ինչպիսին է <Էկոլոգիական կրթության և դաստիարակության մասին> օրենքն՝ ընդունված 2016 թվականի դեկտեմբերի 14-ին: Այս օրենքի նախաբանում նշվում է՝ <Սույն օրենքը կարգավորում է էկոլոգիական անընդմեջ կրթության և դաստիարակության բնագավառում պետական քաղաքականության սկզբունքները, իրավական, կազմակերպական և ֆինանսատնտեսական հիմքերը: Լեռնային Ղարաբաղի Հանրապե-տությունում բարե-նպաստ էկոլոգիական անվտանգ շրջակա միջավայրում ապրելու՝ մարդու սահմա-նադրական իրավունքի և կարևորագույն պետական խնդրի՝ էկոլոգիայի ապահովման նպատակով շրջակա բնական միջավայրի պահպանության գործում յուրաքանչյուրի սահմանադրական պարտականությունների իրականացումը պահանջում է քաղաքա-ցիների էկոլոգիական բարձր գրագիտություն, որը ձեռք է բերվում էկոլոգիական անընդմեջ կրթության ընթացքում>:

Արձանագրենք, որ այսօրվա դրությամբ ԱՀ-ի կողմից միակողմանի կարգով միացած՝ միջազգային պայմանագրերի ցանկը դեռևս սահմանափակ է /մոտ մեկ տասնյակ/: Կարծում ենք՝ հաջորդ փուլում արժե միանալ ՄԱԿ-ի կանոնադրությանը, որն իրենից ներկայացնում է համաշխարհային <կարգ ու կանոնի> պահպանման յուրատեսակ միջոց: Անհրաժեշտություն է նաև միանալ Միջազգային պայմանագրերի մասին Վիեննայի կոնվենցիային/1969թ./, իսկ այնուհետև հերթականորեն միանալ մարդու և քաղաքացու իրավունքների և ազատությունների վերաբերյալ միջազգային այլ հանրահայտ փաստաթղթերի:

Ժամանակակից միջազգային իրավունքում ձևավորվել է մարդու իրավունքների և ազատությունների ապահովման և պաշտպանության տարաբնույթ ոլորտները կարգավորող միջազգային-իրավական փաստաթղթերի մի ամբողջ փաթեթ: Դրա հիմնարար պայմանագրերին միացել է երկրների մեծամասնությունը, այդ թվում՝ նորանկախ ու միջազգայնորեն դեռևս չճանաչված Արցախի Հանրապետությունը: Սակայն պայմանագրերին միանալը հանդիսանում է առաջին քայլը միայն: Անհրաժեշտ են ջանքեր միջազգային իրավունքի նորմերը կյանքի կոչելու, դրանցում բովանդակվող դրույթները գործնականում կիրառելու համար: Առավել մեծ ջանքեր պահանջվում են, իրոք, այն երկրների համար, որոնք չունեն միջազգային-իրավական ճանաչում, նորանկախ են, գտնվում են պատերազմական կամ՝ ոչ պատերազմ-ոչ խաղաղություն իրավիճակում, ունեն թույլ տնտեսություն ու բանակ: Հարցի բարդությունը կայանում է ոչ միայն նրանում, որ այդ երկրները պետք է փորձեն մարդու և քաղաքացու իրավունքների, ազատությունների և նրանց օրինական շահերի պաշտպանությունը իրականացնել դեմոկրատական և իրավական պետությանը համապատասխան գործելաոճով, այլև լուծեն ամենօրյա գոյատևման, հանապազօրյա հացի հայթայթման, ինքնահաստատման, պետականության կերտման, դրսի թշնամու դեմ անընդհատ պայքարի, անկախության միջազգային-իրավական ճանաչման և այլ կարևոր ու օրախնդիր հարցեր, որոնց, սովորաբար, չեն անդրադառնում զարգացած ու զարգացող երկրները:

Պետք է փաստել նաեւ, որ սահմանադրական և ներպետական օրենսդրության մակարդակով մարդու իրավունքների վերաբերյալ միջազգային հանրահայտ փաստաթղթերին միանալը հանդիսանում է փոքր, թույլ տնտեսություն ու ռազմաարդյունաբերություն ունեցող, նորանկախ ու չճանաչված երկրների համար միջազգային հարաբերություններին մասնակցելու, աշխարհաքաղաքական իրադարձությունների օբյեկտ դառնալու գլխավոր ու, թերևս միակ, խաղաթուղթը: Քանի որ վերջիններս չունեն միջազգային գործընթացների վրա ազդելու ոչ մի լծակ, նրանց ոչինչ չի մնում, քան միանալ միջազգային հանրահայտ փաստաթղթերին, մանավանդ՝ մարդու իրավունքների վերաբերյալ միջազգային ակտերին /առաջնահերթության կարգով այդ երկրները, սովորաբար, միանում են Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրին /1948թ./, Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին և Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին դաշնագրերին /1966թ./, Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիային /1950 թ./, ՄԱԿ-ի կանոնադրությանը և անկախության, ինքնիշխանության կամ գաղութացումից ազատվելուն վերաբերող այլ միջազգային պայմանագրերին/: Դրանով նրանք աշխարհին ի ցույց են դնում իրենց պատրաստակամությունը՝ միջազգային հանրության մաս կազմելու, դեմոկրատական ու իրավական պետություն դառնալու գործում, ինչը շատ տրամաբանական է: Ասվածն ակնհայտորեն երևում է այդ երկրների անկախության հռչակագրերի, Սահմանադրությունների ու ներպետական օրենսդրության դրույթներից, որի վառ օրինակներից մեկը նորանկախ Արցախի Հանրապետության իրավական դաշտն է:

Տեղեկություններ հեղինակի մասին.

Սոսի Զաքարյան - ԱրՊՀ Իրավունքի ամբիոնի դասախոս, իրավագիտության հայցորդ, sosy21@yandex.com , 097 25 21 61

Հոդվածը տպագրության է երաշխավորել խմբագրական կոլեգիայի անդամ, ի.գ.դ., պրոֆեսոր Գ.Ս.Ղազինյանը:

ՀՏԴ 37:398.1(479.243) Մանկավարժություն

ԱՐՑԱԽՅԱՆ ԺՈՂՈՎՐԴԻ ՀԵՐՈՍԱԿԱՆ ՊԱՅՔԱՐԻ ԱՐՏԱՑՈԼՈՒՄԸ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԲԱՆԱՀՅՈՒՍՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Էլլադա ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

Բանալի բառեր՝ *Հայրենասիրություն, հավատարմություն և նվիրվածություն, խիզախություն, ազատագրական հերոսամարտեր, խաղաղասիրություն, նվիրվածություն, հավաքական ուժ, արժանապատվություն, բարոյական ինքնագիտակցություն, ինքնատիպ համառություն , զորություն:*

Ключевые слова*: Патриотизм, верность и преданность, мужество, героическое освобождение, мир, целеустремленность, сила команды, достоинство, нравственное самосознание, своего рода упорства, силы.*

Keywords*: Patriotism, loyalty and devotion, courage, heroic liberation, peace, dedication, team strength, dignity, moral consciousness, a kind of perseverance, strength.*

ОТРАЖЕНИЕ ГЕРОИЧЕСКОЙ БОРЬБЫ АРЦАХСКОГО НАРОДА В ФОЛЬКЛОРЕ
Э. БАГДАСАРЯН

В Арцахском народном фольклоре отражается георическая борьба арцахского народа против врагов. В нем обсуждается злоба, предательство, алчность, насилие, жадность, бескультурье, лень и другие отрицательные человеческие качества, и наоборот. В реальных исторических, подлинных образах подчеркивается их подлинное человеческое призвание, патриотизм, героизм, трудолюбие, физическая сила, красота, гуманизм, великодушие, щедрость, чесность, справедливость, уважение к правам человека, к свободе и другие положительные качества.

PEOPLE'S HEROIC STRUGGLE OF ARTSAKH REFLECATION OF PEOPLE IN FOLKLORE
E. BAGDASARYAN

In Artsakh folklore reflects the heroic struggle of the Artsakh people against enemies. It condemns anger, betrayel, greed, violence, lack of culture, laziness and other negative human qualities, and vice versa, in the real historical, authentic images emphasizes their genuine human vocation: patriotism, heroism, hard work, physical strength, beauty, humanism, magnanimity, generosity, honesty, fairness, respect for human rights, for freedom and other positive qualities.

Արցախի ժողովրդական բանահյուսության մեջ արտացոլվում է Արցախի ժողովրդի հայրենասիրական պայքարը թշնամու դեմ: Դրա մեջ քննադատվում է չարությունը, դավաճանությունը, աչքածակությունը, բռնությունը, ժլատությունը, անկուլտուրականությունը, ծուլությունը և ուրիշ բացասական մարդկային որակներ և ընդհակառակը: Պատմական իրական կերպարների մեջ ընդգծվում են նրանց իրական մարդկային որակները՝ հայրենասիրություն, հերոսություն, աշխատասիրություն, ֆիզիկական ուժ, գեղեցկություն, մարդասիրություն, մեծահոգություն, առատաձեռնություն, մարդու իրավունքների և ազատությունների նկատմամբ հարգալից վերաբերմունք և այլ դրական որակներ:

Դարերի ընթացքում հայ ժողովրդի և նրա անբաժանելի մասը կազմող արցախցիների ստեղծած մշակութային արժեքները մինչև այժմ էլ հիացմունք են պատճառում ամենքին, իսկ ձեռագիր գանձերը ճանաչողական հարուստ նյութեր են ժողովրդի, նրա կենցաղի, ընտանեկան փոխհարաբերությունների, սովորությունների, ավանդույթների և հայրենասիրության մասին:

Բանահյուսությունում արտացոլվում են իսկական հայրենասիրության, մարդասիրության, հավատարմության և նվիրվածության, խիզախության ու աշխատասիրության օրինակներ և դաստիարակչական այնպիսի հատկանիշներ ու գաղափարներ , որոնք անհրաժեշտ են նաև ժամանակակից մարդու համար:

Արցախի ժողովուրդը հանգամանքների բերումով անընդմեջ ծանր ու հերոսական մարտեր է մղել օտար զավթիչների դեմ: Վաղեմի անցյալի ասորական զավթիչներին միջնադարում փոխարինում են պարսիկներն ու հռոմեացիները, արաբներն ու սելջուկները, մոնղոլները ու թուրք թաթարական մյուս ցեղերը և այլն:Արցախի ժողովուրդը հասակ է առնում իր հողի ու ջրի, իր գոյության ու ինքնության համար մղած ազատագրական հերոսամարտերում, հերոսամարտեր, որոնք նրա միջնադարյան պատմության կարևոր առանձնահատկությաուններից են:

Օտար զավթիչների հարատև հարձակումները և նրանց դեմ մղվող ազատագրական հերոսամարտերը տվյալ ժամանակաշրջանի քաղաքական տիրապետության դեմ ուղղված սոցիալական հզոր շարժումները, տեղահանություններն ու գերեվարումները ընդհանրապես հայ ժողովրդի բոլոր հատվածների պատմության այն առանձնահատկություններն են, պատմական այն հանգամանքները, որոնք իրենց անջնջելի կնիքն են դնում տվյալ ժամանակաշրջանի բանահյուսության վրա, պայմանավորում նրա բնույթն ու բովանդակությունը, նրա թեմաներն ու մոտիվները:

Եվ իսկապես, հայ բանահյուսության ուսումնասիրությունն անհերքելիորեն ցույց է տալիս, որ նրա իշխող և առաջատար թեմաներից մեկը պատմական տվյալ ժամանակաշրջանում մնում է հայրենիքի պաշտպանության թեման, որն իր գեղարվեստական մարմնավորումն է ստանում դեռևս 5-րդ դ.՝ ի դեմս, Արշակ և Շապուհ, և .Տարոնի պատերազմ բարձրարժեք վեպերգերի:Պատկերված իրադարձությունների աներկբա պատմականության հիման վրա նշված վիպերգերը բարձրացել են գեղարվեստական ընդհանրացման աստիճանի օտար զավթիչներից և օկուպանտներից հայրենիքի ինքնության պաշտպանությունը դարձնելով բնորոշ ոչ միայն 3-5-րդ դդ., այլև դրանց նախորդող ու հաջորդող ժամանակաշրջանների համար, ընդհուպ մինչև 10-րդ դար:

Սակայն արցախյան բանահյուսությունը միայն օտար զավթիչների դեմ մղված կռիվներն արտացոլող ստեղծագործություն չէ:Նրա մեջ, սկսած աշխատանքային երգերից, կենցաղային, ծիսական ու սիրային քնարերգությունից (հարսանեկան երգեր, սգո երգեր, գուսանական ժողովրդական տաղեր, սիրո երգեր և այլն), վերջացրած վիպական երգերով, հեքիաթներով, առակներով ու առածներով, հավասար ուժով հնչել է նաև սոցիալ-դասակարգային պայքարի թեման:

9-րդ դարի վերջերից սկսած կյանքն ու մարդը նոր թափով ներխուժում են արցախյան բանահյուսության մեջ և դառնում նրա հիմնական առարկան: Վիպական երգերում, սիրային լիրիկայում և առանձնապես գուսանական, ժողովրդական տաղերում ըստ ամենայնի գովերգվում են կյանքը, բնությունը և մարդու հոգեկան և հուզական աշխարհը իր բոլոր նրբերանգներով:

Միջնադարյան բանահյուսությունը 9-րդ դարի վերջերից սկսած տոգորվում է կենսասիրության հզոր շեշտերով:Այս բոլորը բանահյուսությունը դարձնում են ժամանակի հայերին, նրա բնորոշ առանձնահտկություններից մեկը՝ սկզբնավորվող վերածնության գեղարվեստական տարեգրությունը:

10-րդ դարում արցախի բանահյուսությունը թևակոխում է իր զարգացման նոր փուլ և թեև ոչ բազմակողմանիորեն, բայց արտացոլում է այն հիմնական տեղաշարժերը, որ տեղի են ունեցել սոցիալ-տնտեսական կյանքում, մարդկանց գիտակցության և հոգեբանության մեջ:

Բանահյուսության շատ նմուշներում, հեքիաթներում, ավանդույթներում, սովորույթներում, զրույցներում, հանելուկներում ուղղակի և անուղղակի կերպով արտացոլվում են Արցախի աշխատավորության աշխատասիրությունը, խաղաղասիրությունը, մարդասիրությունը, հյուրասիրության, այլասիրության, բարեգործության և այլ դրական հատկանիշներ, մաքառումներով լի կյանքի բնորոշ կողմերը, անցած դժվարին ուղին:

Արցախի երկրամասում լայն տարածում գտած բանահյուսության յուրաքանչյուր նմուշ մի պատմություն է, գեղարվեստական խոսքի ուժով պարուրված մի պատում:Արցախի հայերի մարդկային առաքինությունների, ուժի և զորության, ճարտարության, դժվար պայմաններում

կողմնորոշվելու ու հմտության մասին:Այդ է պատճառը, որ ժողովրդական բանահյուսության այս նմուշները ունեն ճանաչողական անգնահատելի արժեք; Դրանք պատկերացում են տալիս Արցախի ներկա և անցյալ իրավիճակի, մարդկային հարաբերությունների, տեղի բնակիչների ազգային կազմի, ապրելավայրերի, տարածքի և նրանց կյանքի բազմաթիվ այլ առանձնահատկությունների մասին:

Բարոյական դաստիարակության մեջ կարևոր տեղ է գրավում հայրենասիրության դաստիարակությունը: Հայրենասիրական համոզմունքներն արտահայտվում են ազգային, նյութական և հոգևոր արժեքների նկատմամբ տածած զգացմունքների, վերաբերմունքի մեջ;Այդ ամենից ելնելով վաղ տարիքից երեխաների մեջ պետք է համոզմունք դաարձնել այն գաղափարը, որ մարդը մարդ է իր հայրենիքով, որ հարենիքի հզորությունը, անկախությունը ու ազատությունը պայմանավորված են յուրաքանչյուրի ինչպես աշխատանքով, այնպես էլ հայրենիքը պաշտպանելու պատրաստակամությամբ;Դա ազգային դպրոցի, ընտանիքի և հասարակության առջև ծառացած գլխավոր խնդիրներից մեկն է, յուրաքանչյուր մանկավարժի, ծնողի ու հասարակության անդամի սրբազան պարտականությունը:

Հայրենասիրությունը աշխատավոր ժողովրդի սերն ու նվիրվածությունն է հայրենիքի, նրա պատվի, ազատության և անկախության համար անձնուրաց պայքարի պատրաստակամությունը, անդուլ հոգատարությունը հայրենի երկրի, ազգի ծաղկման ու բարգավաճման նկատմամբ:Արցախյան ժողովուրդը նախնիների հայրենասիրական, հերոսական ավանդույթները պահպանել է իր հիշողության մեջ, իր սրտի անտես գաղտնարաններում և մարմնավորել ինչպես հեքիաթներում, ավանդույթներում, ավանդազրույցներում, այնպես էլ մյուս ժանրերում:

Արցախյան բանահյուսության հայրենասիրական, հերոսական թեմայով գրված յուրաքանչյուր ստեղծագործություն սերունդներին հայրենասիրության ոգով դաստիարակելու լայն հնարավորություն է ընձեռում:

Հայրենասիրության հիանալի նյութ է «Լուս նան մթեն աշխարքեն» ժողովրդական հեքիաթը:Ժողովուրդը այս հեքիաթում դնում է հերոսությունը, խիզախությունը գնահատելու գաղափարը:Այստեղ ժողովուրդը զարգացնում է այն միտքը, որ ինքը անողոք է նրանց նկատմամբ, ովքեր համարձակվում են հափշտակել ժողովրդական ունեցվածքը, սպանել կամ խոշտանգել իրենց հարազատներին:

Հեքիաթի գլխավոր կերպարը՝ կրտսեր որդին, հետապնդում է իրենց խնձորի գողին՝ քսանօխտը գլխանի, երեսուն օխտը, քառասուն օխտը գլխանի օշափներին, սպանում է նրանց և ազատում գերված աղջիկներին:Այնուհետև տղան շարունակում է իր հերոսական առաքելությունը և կռվում է գյուղի աղբյուրի ջուրը փակող և գեղեցիկ աղջիկներին լափող օշափի դեմ, սպանում նրան, փրկում թագավորի աղջկան և բնակիչներին:

Արցախյան բանավոր ստեղծագործություններում ժողովուրդն իր հերոսների մեջ խտացրել է համեստության գաղափարը:Համեստությունը իսկական հերոսության մշտական ուղեկիցն է:Հեքիաթի հերոսը ազատելով թագավորի աղջկան, չի պարծենում իր կատարածով, նույնիսկ թաքցնում է, իսկ երբ թագավորը իմանում է և ուզում է լավություն անել նա չի ուզում հարստություն, այլ միայն խնդրում է թագավորից օգնել իրեն վերադառնալու իր հայրենի օջախը:Տղայի զենքը նրա կոպալն է:

Դա հայ ժողովրդի հավաքական ուժն է ընդդեմ չարի, հանուն բարության:Ժողովուրդը ուսուցանում է, որ սիրո արժանի է նա, ով հայրենասեր է:Վերջում հերոսը ամուսնանում է քառասունյոթ գլխանի օշափի կողմից գերված աղջկա հետ:Հեքիաթը հարուստ է դաստիարակչական մի շարք գաղափարներով:Դրանց միջոցով ժողովուրդը դաստիարակում է աշխատասիրություն, ազնվություն, անձնվիրություն:Այստեղ դրվատվում են նաև նվիրվածությունը, սխրանքի պատրաստակամությունը և մարդկային այլ առաքինություններ:Հայրենասիրության, ընկերասիրության մեծ օրինակ է «Վըեսկե թասը» հեքիաթը:Տղան վռնդվում է հայրական տնից «բիդասըլ» (ծույլ) լինելու համար և հանձնվում

ղաչաղներին, որոնք նրան փորձում են թե «Բեղմա քու օժըտ նըշանց տաս վեր մեզ հընգեր անինք: Կեսօրեն վախտը ծովեն իրես տեղը մի ըխճկան ծեռք ա տուս կյիլական մին վեսկե թաս շեռքեն, մունք շատընք չըչարվալ կրեցալչընք կըլինք»:Տղան շատ ուժեղ է լինում, նա խլում է ոսկե թասը և հանձնում ղաչաղներին:Նրանք էլ թասը տալիս են թագավորին, որը և բանտարկում է զաչաղներին, ասելով որ թասը գողացված է իր թագավորությունից: Տղան կարողանում է փախչել , բայց նա հոգեկան ծանր ապրումներ է ունենում իր ընկերների համար:Նա ամենաբարդ հոգեվիճակում կարողանում է գտնել ելքը: Իր բոլոր գործողություններում նա ազնիվ է, ընկերասեր, չի դավաճանում իր ընկերներին և խոստանում է նարանց ազատել:Նա մեծ դժվարությամբ անքուն, անհանգիստ գիշերներ է անցկացնում և ի վերջո խլում ,թիլիսիմ ճըպատը երեք հըրեղեն աղջիկներիցե: Նրանք թեկուզ տղայի հակառակորդներն են , բայց և այնպես հիացմունքով են խոսում տղայի ուժի մասին: Հեքիաթի վերջում նա ձեռք է բերում մի քանի ոսկե թասեր և տալով թագավորին, ազատում է իր ղաչաղ ընկերներին:Գեղեցիկ է հեքիաթի վերջը. Եռեք քույրերը ամուսնանում են փոքրը տղայի հետ, իսկ մեծ քույրերը նրա ընկերների հետ:

Հիանալի օրինակներ կարելի է բերել ավանդապատումներից,որոնց միջոցով կարմիր թելի պես անցնում է Արցախ աշխարհը հավերժ պահպանելու, նրա ծաղկումին անմնացորդ նվիրվելու գաղափարը:Միանգամայն ճշմարտացի է նկատել Պ.Սևակը, գրելով. «Ժխտել ավանդույթը նույնն է, ինչ ժառանգականության ժխտումը, որ ոչ միայն հիմարություն է, այլև խելագարություն»:

Արցախի ավանդությունները ձևավոևվել, կազմվել են դարերի ընթացքում:Դրանք ժողովրդի զարգացման պատմական յուրաքանչյուր ժամանակահատվածում հոկվել, ավելի գեղեցկացել են, դարձել ժամանակի պահանջներին համապատասխան:

Գիտամանկավարժական գրականության մեջ իր ուրույն տեղն ունի Արամ Ղանալանյանի «Ավանդապատումը», որի մեջ հեղինակը ավանդությունների գաղափարական բովանդակության մասին գրում է. «Այն արտացոլում է ժողովրդական զանգվածների ձևավոևվող ազգային ինքնագիտակցությունը, օտարերկրյա նվաճողներից հարազատ հայրենիքը պաշտպանելու համաժողովրդական գաղափարը: Նրա գլխավոր հերոսը հանդես է գակիս միաժամանակ և իբրև կոնկրետ անհատականություն, և իբր ժողովրդի հավաքական ամբողջի մարմնավորում, վերջինիս ազգային բնավորության լավագույն հատկանիշների՝ անպարտելի ուժի, իմաստության, ձգտումների ու ակնկալությունների արտահայտիչ»:

Այդ գիրքն ունի ոչ միայն գրականագիտական, մանկավարժական, այլ նաև քաղաքական մեծ նշանակություն:Նշանակալից է նաև ավանդույթների գաղափարական արժեքը:Նրանց մեծ մասի էությունը կազմում է ժողովրդի ստեղծարար ոգու և հավերժության փիլիսոփայությունը, որ դարից-դար հաղորդվել է ավանդախոսների բյուրավոր սերունդների կողմից:

Ավանդույթների հերոսները էպոսի հերոսների նման բնության տարերքի ու հասարակական կյանքի թշնամական ուժերի դեմ ժողովրդի մղած դարավոր մաքառումների անձնավորումներն են , նրա խիզախության, անձնազոհության ու տոկունության կրողները, նրա հոգեբանության ու բնավորության առանձնահատկությաունների խտացումները; Ավանդությունների մեջ դրսևորված է աշխատավոր մարդու առողջ կենսափիլիսոփայությունը՝ աշխատանքի փառաբանության, մարդասիրության, ազատ ու անկաշկանդ ապրելու ձգտում, աներեր հավատ իր անխորտակելի ուժի, վերջնական հաղթանակի և լավագույն ապագայի նկատմամբ;Իրավացիորեն նկատված է, որ ավանդությունների ճանաչողական արժեքը չպետք է որոնել միայն պատմական շոշափելի իրողության արտացոլման հանգամանքի մեջ:Պակաս նշանակություն չունի նաև նրանց մեջ արտահայտություն գտած պատմական զարգացման հարափոփոխ ընթացքի արդյունք տեսական մտածողությունը, որը նույնպես կարող է ստանալ պատմական գիտության համար նշանակալից փաստի ուժ:

Ղարաբաղցին իր բնավորությամբ հերոսական ժողովուրդ է: Նրա ավանդությունները ժողովրդի հերոսական պայքարի, ազատասիրության արտահայտություններն են: Այս

տեսակետից ուշագրավ է ռուս ականավոր բանաստեղծ, հրապարակախոս, հասարակական գործիչ Սերգեյ Գորոդիցկու «Ղարաբաղ» հոդվածը:

«Սյունիքի (այդպես էր կոչվում Ղարաբաղը հնում) իշխանության մելիքությունները հին ժամանակներում բազմիցս են սեփական ուժերով տեղի հողերից քշել թշնամուն:

Աշխարհով մեկ սպռված ղարաբաղցիներին հեշտ է ճանաչել ամենուր:Հայի հին առաքինությունների համակենտրոնացումն են ղարաբաղցի հայի համակրելի հատկանիշները:Ղարաբաղցու առաքինությունները խամրել են պատմության դաժանություններից և զուտ տեսքով պահպանվել Ղարաբաղում:Բարձրահասակ, պնդակազմ ժողովուրդը կյանքը փրկելու համար բարձրանալով լեռները ամրապնդվեց լեռնային օդի ազդեցությամբ և իրեն զերծ պահեց այն վարակներից, որոնք բաժին են ընկնում հովիտների բնակիչներին:

Գործունեության լայն թափ, անձնուրաց քաջություն, կյանքը վտանգելու պատրաստակամություն, ինքնավստահություն, ինքնատիպ համառություն, շիտակ նպատակամտություն, կենցաղի նահապետականություն՝ ահա այդպիսինն է ղարաբաղցին:

Արցախյան բանահյուսության մեջ ընդգծված երևում են ղարաբաղցու բնավորության այն գծերը, որոնք նկատել է ռուս մեծ գրողը:

Կինը արցախցու ընտանիքում հին ժամանակներից ի վեր օջախի մոտ նստած, տնային հոգսերով ծանրաբեռնված մի անձնավորություն է, բայց և այնպես ժողովուրդն իր բանահյուսության մեջ զարգացրել է կնոջ և տղամարդու իրավահավասարության, նաև կնոջ հայրենասիրության, հերոսության անձնազոհության վրեժխնդրության գաղափարները:Այս տեսակետից բավականին հետաքրքիր է ,ստի կնեգելա ինումե հեքիաթը: Այս հեքիաթում մի գեղեցիկ կնոջ սիրահարվում է այդ երկրի վիշապներից մեկը, որը ապանելով կնոջ ամուսնուն ցանկանում է կինը առնել իրեն:Վերջինս իմանալով այդ մասին վրեժխնդիր է լինում գլխատելով վիշապին և նրա ընկերներին:Նա պատճառած չարիքի համար պատրաստ է վրեժխնդրության և անձնազոհության: Գեղեցիկ է հեքիաթի վերջաբանը:Կինը ամուսնու գերեզմանին ասում է «Հանգիստ քոն իլ , թշնամուցտ կլխընեն պիրալում»:

Արցախյան բանահյուսության ժանրերից մեկում՝ ավանդություններում գլխավոր տեղ է գրավում կնոջ հերոսականության թեման:Այդ ժանրի մեջ արտացոլում են գտել պատմական դեպքեր ու դեմքեր, իրական առարկաներ ու երևույթներ, ժողովրդի կենցաղն ու հավատալիքները, նրա ազգային բնավորության առանձնահատկությունները:Կին հերոսի մեջ ժողովուրդը մարմնավորել է հարազատ մայր- հայրենիքը՝ երկրամասը պաշտպանելու գաղափարը:Այստեղ գլխավոր հերոսը հանդես է գալիս միաժամանակ և իբրև կոնկրետ անհատականություն, և իբրև ժողովրդի հավաքական կերպարի մարմնավորում:Այդ հերոսներից նաև ազգային բնավորության լավագույն հատկանիշների՝ անպարտելի ուժի, իմաստության, ձգտումների ու ակնկալությունների արտահայտիչ են:Հայրենասիրության դաստիարակման գործում մեծ նշանակություն ունի բավականին հետքրքիր ,Դեվի առու կամ դեվ արիե ավանդությունը:Այստեղ պատմվում է այն մասին, որ Ղարաբաղի մելիքն ունեցել է մի աննման աղջիկ, որին սիրահարվել են երկու երիտասարդներ:Նրանցից մեկը շատ հարուստ էր, մյուսը քիչ, Դև անունով:Նա պայման է դրել, ով կարողացավ Թարթառ գետից մինչև մոտիկ մարգագետինները ավելի շուտ ջրանցք փորել, ինքը նրան կընտրի:Դևը ջանասիրաբար, մեծ հաճույքով ու նվիրվածությամբ սկսում է աշխատել: Հարուստ տղան չար պառավի թելադրանքով դիմում է խարդավանքի և սավան է փռում ջրանցքի ճանապարհով, կեղծելով, որ արդեն ավարտել է աշխատանքը: Դևը ինքնասպան է լինում, իսկ աղջիկը, իմանալով Դևի մահվան պատճառը հիվանդանում է և մահանում: Մինչև այսօր այդ տարածքը կոչվում է դևի առու:

Հուզիչ է վերջաբանը, նրանց թաղում են իրար մոտ՝ Դևի փորած ջրանցքից ոչ հեռու:Նրանց գերեզմաններից վարդի թփեր են բուսնում, իսկ պառավի գերեզմանից՝ փուշ:Վարդի թփերը ուզում են միանալ, գրկել իրար, բայց փուշը չի թողնում:

Հերոսականության, հայրենասիրության դաստիարակության, միաբանության վառ արտահայտություն է նաև «Կըրխ- կըզ» (Քառասուն աղջիկ) ավանդությունը, որտեղ փառաբանում են քառասուն հայ աղջիկների հերոսությունը, միասնականությունը, ընկերությունը:

«Ասումըն վեր մին կըռեվ տարե քառասուն ախճիգ զորք կազմած կըռվում ըն թշնամուն նհետ, վերջումը բերթ սարքում ետ սարեն յիրա:Ղուշըն ուրան թևավը, օցն ուրան պորտավը կարում չար մուտանա ետ բերթին:Իտիյել ապրումն նահանք ըտեղ շատ էրկան, սարեն անումնել մնումա Կըրխ-կըզ»:

Արցախյան ժողովրդական բանահյուսությունը լայն հնարավորություն է տալիս և փոքրերին, և մեծերին առնչվելու բարու և չարի հետ, մարդու բարոյական ինքնագիտակցության բովանդակության, պարտքի, խղճի, պատասխանատվության, արժանապատվության, մարդու հուզական ապրումների հետ և դրանց ազդեցության ներքո կազմակերպել իրենց անձնական և հասարակակն վարքը:

Մեծ մանկավարժ- դաստիարակ ժողովրդի կողմից զգայական ձևով են ընկալվում բարոյական նորմաները:

Բարոյագիտական իրավիճակներ ստեղծելու մեծ հնարավորություններ ոն ընձեռում բանահյուսության բոլոր ժանրերը:

Այնտեղ, որտեղ խիղճ ու խղճմտանք չեղաավ, տիրում է չարությունը:Արցախահայությունը իր բանահյուսության համարյա բոլոր ժանրերում ցույց է տալիս անհատի արժանապատվության, ազատության և պաշտպանության պահանջը, մարդու երջանկության իրավունքի գաղափարը:Այդ գաղափարի հիմքում ընկած է մարդու հնարավորությունների անսահմանության և նրա կատարելագործվելու ընդունակության մասին համոզմունքը:

Ժողովուրդը մեծարում է մարդկային առաքինությունները:Սերունդներին սովորեցնում է պայքարել մարդկայինարատների դեմ:Ժողովրդի պատկերացմամբ մարդիկ իրավահավասար են:

Բանահյուսության մոջ դրական հերոսը բարության մարմնավորումն է:Նա ոչ միայն մեծ մարդասեր է, աշխատում է նվիրվել բարեկամներին և հայրենակիցներին, այլև մեծահոգի է նույնիսկ իր թշնամիների նկատմամբ:Բարություն սերմանելու ճանապարհին նա դիմում է զոհողության, միևնույն ժամանակ հեգեկան ծանր ապրումներից հետո նա կարողանում է ներել իր թշնամիներին, նույնիսկ կյանք շնորհել նրանց:Դա պատճառաբանվում է նրանով, որ ժողովուրդը մեծահոգի և հոգեկան զգացմունքներով հարուստ է:

Արցախյան ժողովրդական բանահյուսությունը կենսահաստատ ուժ ունի: Թերևս այդ ուժի դաստիարակիչ ազդեցությունն է փոխանցվել սերնդե-սերունդ, դարձել արյան ճիչ, դարձել մաքառելու կամքու վճռականություն: Թերևս արցախյան բանահյուսության բոլոր դարաշրջաններին հատուկ ազատասիրական ոգին է այսօր գոտեպնդում Արցախի ժողովրդին՝ ներշնչելով ապրելու, գոյատևելու մեծ խորհուրդ ու նպատակ:Ժողովուրդը ինքը իր բանահյուսության մեջ վկայում է, որ ազգերի միջև թշնամանք սերմանողները ժողովրդի ոխերիմ թշնամիներն են:

Արցախի ժողովուրդը պաշտում է իր երկրամասը՝ հողը, ջուրը, բնական և կենդանական աշխարհը, հուշարձանները, սրբաքարերը:Դա է ապացուցում այն հանգամանքը, ու արցախյան բանահյուսության մեջ իր ծանրակշիռ տեղն են զբաղեցնում բնապաշտական թեմայով գրված ավանդությունները:Վառ օրինակ է ջրի բուժիչ հանկությունը նկարագրող «Օխնած գյոլ» ավանդությունը :«Օխնած գյոլ»-ը այժմ էլ գտնվում է Ստեփանակերտի շրջանի Սեյդիշեն գյուղի մոտ;Հոսող գետի հատակին կա մի քերծ, ժայռ, իսկ քերծի մեջ էլ ՝ մկրտության ավազանի մեծությամբ ջրով լցված մի քարափոս, որին տեղացիները Օխնած գյոլ են ասում ՝ ջրի սրբազան ու բուժիչ հատկության համար:

Գեղեցիկ է Արցախ աշխարհի բնությունը, դրա վկայությունն է «Զարդարաշեն» ավանդությունը:Զարդարաշենը գտնվում է Լեռնային Ղարաբաղի Մարտունու շրջանում, որը առաջ կոչվել էր Վերին Թաղավարդ:Ներքին Թաղավարդից տարբերելու համար տեղացիք

որոշում են նոր անուն տալ իրենց գյուղին:Մեկը առաջարկում է դնել Ծմակաշեն, մյուսը Սարի շեն, երրորդը Բարձր: Ըռքեշ անունով մի ծերուկ էլ նայելով շուրջը և տեսնելով , որ գյուղը չորս կողմից զարդարված է ծաղկախ ծառերով ու այգիներով առաջարկում է նրա անունը դնել Զարդարաշեն/:Այդպես էլ անում են:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Գրիգորյան Գր. Հայ ժողովրդական բանահյուսություն, Երևան, 1980
2. Գրիգորյան Մ. Լեռնային Ղարաբաղի բանահյուսությունը, Երևան, 1971
3. Լինիցյան Ետ.Լեռնային Ղարաբաղի հայերը (ազգագարական այնարկ), Հայ ազգագրություն և բանահյուսություն,հ.12, Երևան, 1981
4. Ղազիյան Ա. Հայ ազգագրություն և բանահյուսություն, Հ.15, Արցախ, Երևան, 1983
5. Մախզանյան Հ. Հայ գրականության ուսուցման պատմություն, Ե. 1978

Տեղեկություններ հեղինակի մասին.
էլլադա Բաղդասարյան – ԱրՊՀ Մանկավարժության և հոգեբանության ամբիոնի դոցենտ

Հոդվածը տպագրության է երաշխավորել խմբագրական կոլեգիայի անդամ, մ.գ.դ., Գ.Հ.Հարությունյանը:

ՀՏԴ 37.01(091)(479.25):008 Մանկավարժություն

ԹԱՎՐԻԶԻ ԱՐԱՄԵԱՆ (ՆԵՐՍԻՍԵԱՆ) ԱԶԳԱՅԻՆ ԴՊՐՈՑԸ

Դերենիկ ՄԵԼԻՔԵԱՆ

Բանալի բառեր՝ *Ատրպատականի հայոց առաջնորդ, վանքի վանահայրության, Արամեան (Ներսիսեան) ազգային դպրոց , դպրոցանվեր գործունեություն, գրադարան– ընթերցարան, ազատագրական պայքար, ազգային ոգի, հայեցի դաստիարակություն:*

Ключевые слова*: армянский предводитель Атропатены, патриархат монастыря, Армянская национальная школа Нерсисян, преподавательская деятельность, библиотека – читальный зал, освободительная борьба, национальный дух, армянское национальное воспитание.*

Keywords*: the Armenian leader of Atropatena, patriarchy of the monastery, Aramyan (Nersisyan) national school, educational activity, library – the reading room, liberation struggle, national spirit, the Armenian national education.*

АРМЯНСКАЯ НАЦИОНАЛЬНАЯ ШКОЛА НЕРСИСЯН г.ТАВРИЗА
Д. МЕЛИКЯН

«Арамянская» школа изначально называлась «Нерсисян» (с 1851 по 1875 год). У истоков создания школы в 1851г. стоял Месроп Тагиядян, впоследствии его сменили епископ Саак Сатунян и Рубен Ханазат.

В школе-гимназии преподавались такие предметы, как армянский, русский, французский, персидский языки и другие предметы.

Арамянская школа отличалась мощным национальным духом и патриотическим воспитанием, всегда оказываясь в пекле армянской освободительной борьбы. Школа действовала до 1936 года. За годы существования из ее стен вышли тысячи выпускников.

ARAMYAN (NERSISYAN) NATIONAL SCHOOL OF TABRIZ
D. MELIKYAN

The Aramyan school called initially "Nersisyan" (from 1851 to 1875) was founded by Mesrop Tagiyadyan in 1851. Subsequently he was replaced by bishop Sahak Satounyan and Rouben Khanazat.

The Armenian, Russian, French, Persian languages and other subjects were taught at the school- gymnasium.

The Aramyan school was known of its strong national spirit and patriotic education, being always in the front line of the Armenian liberation struggle. The school worked till 1936, with thousands of peoples graduating from the school.

«Արամեան» դպրոցը ի սկզբանե կոչվել է «Ներսիսեան» (1851-ից մինչև 1875 թ.): 1851թ. դպրոցի գործունեության ակունքներում կանգնած է եղել Մեսրոպ Թաղիադյանը, որին հաջորդել են հետագայում առաջնորդ Սահակ եպիսկոպոս Սաթունյանը, Ռուբեն Խանազատը:

Դպրոց-վարժարանում դասավանդում էին հայերեն, ռուսերեն, ֆրանսերեն, պարսկերեն և այլ առարկաներ:

Դպրոցը գործել է մինչև 1936 թվականը՝ միշտ գտնվելով հայ ազատագրական պայքարի թոհուբոհի մեջ: Արամեան դպրոցում գորեղ է եղել ազգային ոգին և հայեցի դաստիարակությանը, տվել է հազարավոր ընթացավարտներ:

Ներսէս Ե Աշտարակեցի Շահազիզեան կաթողիկոսը (Ներսէս Շնորհալի, 1843-1857) 1851թ. Ատրպատականի հայոց առաջնորդ է նշանակւում «գովութեանց արժանի» ու «.... բարեջան վիճակաւոր վանաց եւ վիճակի Սրբոյ նախկին Լուսաւորչի հայոց Սրբազան Առաքելոյն Թադէոսի ...»[1]՝ Սահակ արք. Սաթունեանց Աշտարակեցուն: Վերջինս միաժամանակ վարում էր նաեւ Թադէոս առաքեալի վանքի վանահայրութիւնը: Նոր առաջնորդի գործունէութեան շրջանը կարճ է տեւում՝ 1851-1857թթ.[2], սակայն նա բաւական օգտակար գործունէութիւն է ծաւալել, մասնաւորապէս Հայոց առաջնորդարանին կից կառուցում է

[1]«Դիւան Ատրպատականի Հայոց Պատմութեան», հ. բ, էջ 79
[2]ՀԱԴ, Ֆ. 319 ց.1 , գ. 108, թ. 58

«Արամեան» տղայոց (արական) դպրոցի նոր շէնքը:[1] Այդ իսկ պատճառով Արամեան դպրոցը ի սկզբանէ կոչւել է «Ներսիսեան»[2] (1851–ից մինչեւ 1875):

1851թ.-ին կառուցած «*Ներսիսեան*» դպրոցի գործունէութեան ակունքներում է կանգնած եղել Մեսրոպ Թաղիադեանը, դեռեւս 1835-56 թւականներին, երբ նոյն դպրոցը անւանակոչւում էր «*Բերդաթաղի դպրատուն-վարժատուն*»: Ատրպատականի թեմի առաջնորդ Նիկողոս Կարբեցի եպիսկոպոսի օրօք (*1833թ.*) եւս դպրատունը շարունակում էր իր ուսումնական գործը գրեթէ նախկինի պէս, որով, ըստ բանասէր Հայկ Աճեմեանի՝ «*Ս. Աստուածածին եկեղեցւոյ շատ քիչ ուսումնական քահանաներէն եւ կամ ոմն դպիր ու տիրացու՝ այդ մենաւոր ու տխրատեսիլ սենեակին մէջ գրել-կարդալ կըսովրեցնէին հայ պատանիներուն: Ասոնք գրաճանաչ դառնալէ ետոյ կըսկսէին կարդալ եւ կամ բերանացի սովրիլ եկեղեցական աղօթքներ, շարականներ, սաղմոսներ, մինչեւ անգամ Գր. Նարեկացիի խրթին գրաբարով աղօթքներն ու փառաբանութիւնները: Դասատուներէ գիտէր քերականութիւն կամ ճարտասանութիւն, բաժին կը հանէր նաեւ իւր աշակերտներուն: Կաւանդի, որ քահանաներէն մէկը, որ քերականութիւն կուտար պատանիներուն, չէր հանդուրժեր, որ անոնք շատ ըմբռնէին եւ կամ հասկանային իր ըսածները, վախնալով, որ կրնան զինք գերազանցել: Այդ քահանան այնքան ծեծու պատիժ կուտար ընդունակ աշակերտներուն, որ ասոնք ստիպւած կըլլային ուսումէն փախչիլ եւ արհեստի երթալ…*»:[3]

Ահաւասիկ, Նիկողոս եպսկ.-ի ժամանակ էր, որ 1836 թւականի ամռանը Հնդկաստանից Թաւրիզ եկաւ Մեսրոպ Թաղիադեանը, որ Նոր Ջուղայում եւ Կալկաթայում իբրեւ դաստիարակ, ազգային գործիչ եւ քաջ ուսումնագէտ՝ մեծ համբաւ ունէր եւ որ տիրապետում էր հայերէն, պարսկերէն եւ անգլերէն լեզուներին: Թաւրիզի հայերը տեսնելով Թաղիադեանի հմտութիւնը եւ դաստիարակի կարողութիւնը, խնդրեցին, որ իրենց վարժարանի հայկաբանութեան դասերն ստանձնի տարեկան 60 թուման ռոճիկով…, ու այդպէս՝ մէկուկէս տարի, մինչեւ 1837-ի վերջերը: Մեսրոպ վարժապետը պաշտօնավարութեան ընթացքում շատ խոր եւ անմոռաց յիշատակներ թողեց Թաւրիզի հայութեան մօտ:

Արամեան դպրոցի բացումը առաջնորդ Սաթունեանի գլխաւորութեամբ կատարւել է՝ 1852թ. սեպտեմբերին 60 աշակերտներով: Այդ թիւը յաջորդ տարին հասնում է 100-ի: «Իրական փաստն այն է,- գրում է Հայկ Աճեմեանը,- որ 1851 թւականի յունիս 30-ին կատարւեցաւ Թաւրիզի Հայոց դպրոցական անդրանիկ շէնքի պաշտօնական հիմնարկութեան մեծաշուք հանդէսը»:[4]

Դպրոցը սկզբնական տարիներում (Սաթունեանի օրօք) տնտեսական ծանր վիճակ ունէր, որը սակայն հետագային բարւոքւում է Գէորգ արք. Վեհապետեանի ջանքերով: Նա 1865-ին 250 թումանի տարեկան նպաստ է ապահովում դպրոցին Նասրէդդին Շահից: 1872-ից թեմական մուտքերից բաժին է հանւում դպրոցին, իսկ 1873-ին յաջողւում է տարեկան որոշ նպաստ ստանալ նաեւ ռուս կառավարութիւնից, որը վճարւել է մինչեւ Ա. Աշխարհամարտ:

1874-75 ուս. տարում դպրոցի տեսուչ է հրաւիրւում Նոր Ջուղայեցի, նշանաւոր լեզուաբան եւ Ֆերդովսիի «Շահնամէ»-ի թարգմանիչ Սամուէլ Գիլզադեանը: Այդ թւից դպրոցը կոչւում է Արամեան:[5]

---

[1] Ֆրանգեան Ե., «Ատրպատական», Թիֆլիս, 1905թ., էջ 35:

[2] Թաւրիզի Հայոց ազգային վարժարանի հիմնադրութեան պաշտօնական հանդէսից յետոյ Առաջնորդ Սահակ եպիս. յատուկ մի գրութեամբ՝ «Յորդորակ ծանուցոկան»-ով յայտնում է, որ « .... դպրոցը յանուն Ներսէսի Շնորհալւոյ պիտի կոչուի «ՆԵՐՍԻՍԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆ»: (Տե՛ս. Հայկ Աճեմեանի «Պատմութիւն Արամեան Ազգային դպրոցի», էջ 29):

[3] Աճեմեան Հայկ, «Պատմութիւն Արամեան ազգային դպրոցի», Թաւրիզ, 1936թ., էջ 9:

[4] Նոյն տեղում, էջ 26:

[5] Տես՛ «Ռաֆֆի տարեգիրք», Ա. տարի, 1969թ., էջ 361:

«Ներսիսեան-Արամեան» վարժարանում դասաւանդուել են հայերէն, ռուսերէն, ֆրանսերէն, պարսկերէն եւ այլ առարկաներ: Տարբեր տարիների դպրոցում դասաւանդել են՝ Ռաֆֆին[1], Հրաչեայ Աճառեանը, որը Շուշիի դպրոցի փակուելուց յետոյ Թաւրիզ էր փոխադրուել, հայագէտ-լեզուաբան Մուշեղ Մուշեղեանը եւ այլն:

Ուշագրաւ վկայութիւն ունի մեծ վիպասան Ռաֆֆին Արամեան դպրոցի մասին.- « Սաթունեանը շինեց դպրոցը, առաջնորդարանը եւ այլ ազգօգուտ հիմնարկութիւններ,- բոլորը իւր փողով, այսինքն այն փողով որ նա ստանում էր վիճակից որպէս «հոգեւոր պտուղ»: Բայց նա ժողովրդից ստացածը կրկին ժողովրդին յետ վերադարձրեց, իւրեան չը սեպհականացրեց: .... Սաթունեանն ինքը ժողովրդական մարդ էր. նա ոչինչ առիթ չունէր իւր դպրոցը կնքել «հոգեւոր» անունով: ... Այս դպրոցը բոլորովին ժողովրդական էր, բայց նորան *եկեղեցականացրին*, մեռցրին: ... Ժողովուրդն այս հասկացաւ, բայց հասկացաւ խիստ ուշ ...»:[2]

Բազմաթիւ աղբիւրների վկայութեամբ Սահակ եպիս. Սաթունեանը իր վեց տարիների (1851 ապրիլ-1857 մարտ) ժողովրդանուէր եւ դպրոցանուէր գործունէութեամբ յաջողեց մեծ ժողովրդականութիւն վաստակել: Որպէս Թաւրիզի Հայոց Ներսիսեան (հետագային Արամեան) դպրոցի հիմնադիր, բարերար եւ հովանաւոր Սաթունեանը իր անձնուէր գործունէութեամբ, իր անկաշառ եւ ազգասիրական աշխատանքներով յաւերժօրէն անմահացել է Ատրպատականի հայութեան եւ մասնաւորապէս Արամեան դպրոցի պատմութեան մէջ:[3]

Ահաւասիկ, «*Արամեան*» դպրոցի եւ Թաւրիզի հայոց կրթական պատմութեան ոսկեդարը 1870-1880թթ.-ը կարելի է համարել: Առաջնորդներից սկսած մինչեւ ուսուցիչներն ու հոգաբարձուները անմնացորդ եռանդով գործի էին լծուել եւ խոր գիտակցութեամբ ու նուիրուածութեամբ ջանում էին բարձրացնել դպրոցի բարոյական ու կրթական մակարդակը:

Արամեան ազգային դպրոցը հետագայ տարիներին օժտուել է նաեւ հարուստ գրադարանով եւ թատերասրահով:

1867-73թթ. Առաջնորդական պաշտօն վարած մշակութասէր եւ կրթասէր Գրիգոր արք. Յովբեանի ջանքերով է հիմնադրուել Արամեան դպրոցի գրադարան–ընթերցարանը, որն սկզբնական շրջանում օժտուել է 93 ընտիր գրքերից եւ 25 բարձր մակարդակներում պատրաստուած հրովարտակներով: Հետագային նոյն գրադարանի տեսուչ Կ.Պոլսեցի Յ. Հաճեանի միջոցով գրադարանը հարստանում է մի քանի հարիւր կտոր զանազան գրքերով: Այս մասին Ռաֆիին գրում է.- « .... Շնորհակալութիւն Կ. Պոլսեցի ազգայիններին, որոնք ցոյց տուին խիստ ազնիւ համակրութիւն դէպի աղքատ Դաւրէժի ընթերցարանը, ուղարկելով նորան, որպէս

---

[1] 1969թ.-ի «Ռաֆֆի տարեգիրք»-ում Նորայր Մամեանի «Կրթական կեանքը Թաւրիզում» պատմա-տեղեկագրական աշխատութեան էջ 360-ում, Թաւրիզում իգական դպրոց հիմնելու մասին կարդում ենք հետեւեալը.- «Այդ շրջանում (1874-1876), դպրոց էին յաճախում միայն տղաները: Իգական սեռի կրթութեան դէմ էին շատերը: Այս առթիւ 1877թ.-ին Ռաֆֆին Թաւրիզից մի յօդուած է ուղարկում Թիֆլիսի «Մշակ»-ին, ծանր օրէն քննադատելով նրանց, ինչպէս եւ որոշ հոգաբարձուների, որ դէմ էին աղջիկների ուսումնառութեան: Այդ թղթակցութիւնը մեծ փոթորիկ է առաջացնում Թաւրիզում, որի հետեւանքով՝ ուսումնական տարին չլրացած՝ Թաւրիզից հեռանում է Ռաֆֆին: Պայքարը շարունակում է Մեսրովբ քհն. Փափազեանը եւ յաջողում է 1879թ.-ի օգոստոսին Ղալայում հիմնել աղջիկների դպրոց («Աւարայրեան» ընկերութեան շէնքում), ինքը տեսուչ եւ իր Աշխէն աղջիկն էլ ուսուցչուհի դառնալով: Այս դպրոցի համար 1887-ին Թումանեանները կառուցեցին նոր դպրոցական շէնք՝ «Աննայեան» անւամբ, որից յետոյ Ղալայի դպրոցները կոչուեցին «Արամեան-Աննայեան» ազգային դպրոցներ: Աւելի ուշ 1879թ.-ի հոկտեմբերին Ղալայի օրինակով Լիլաւա թաղում եւս բացւում է աղջկանց դպրոց: Սա մեծապէս ընդարձակւում է, երբ Թումանեանները այնտեղ 1895 թւականին կառուցում են թաւրիզահայ կրթական կեանքի փառքը հանդիսացող «Թամարեան» փառահեղ շէնքը:

[2] Ռաֆֆի, «Պարսկական պատկերներ», էջ 510:

[3] Տե՛ս. «Պատմութիւն Արամեան Ազգային դպրոցի», էջ 53:

ընծայ 470 հատոր զանազան լեզուներով գրքեր: Իսկ մեր Ռուսաստանի հայերից չը գտնուեցաւ եւ ոչ մէկը, որ մի հատոր գիրք ուղարկած լինէր»:[1]

Իսկ 1913թ.-ին, Ներսէս արք. Մելիք-Թանգեանի առաջնորդութեան օրօք, Թաւրիզում կառուցած «*Արամեան*» նշանաւոր թատերասրահը ժամանակի չափանիշով կոթողական շէնք էր, որն ամբողջ երկու տասնամեակ լիուլի ծառայել է իբրեւ թատրոն, միաժամանակ դառնալով եկամտաբեր աղբիւր՝ դպրոցի համար:

Գտնուելով հայ ազատագրական պայքարի թոհուբոհի մէջ, որտեղ որպէս այդ պայքարի ***«խարիսխ»*** էր ծառայում հինաւուրց եւ հայրենամերձ Ատրպատականը, հայ յեղափոխական ռահւիրաների գաղափարներով է ներշնչուել իրանահայ սերունդը եւս, երբ որպէս նոյն գաղափարի կրողներ Արամեանում են յայտնուել հայ ազգային կուսակցութիւնների ղեկավար դէմքերը:

Այսպէս ուրեմն 1890-91 թւականին «*Արամեան*»-ում իբրեւ ուսուցիչ պաշտօնավարել է նաեւ Հ. Յ. Դաշնակցութեան հիմնադիրներից Ռոստոմը:

1903-ին Թաւրիզի Արամեան դպրոցի տեսչութիւնն է ստանձնում Հնչակեան կուսակցութեան հիմնադիրներից՝ Ռուբէն Խանազատը, իր կողքին որպէս ուսուցիչ ունենալով Ատրպետին, որոնք այդ ճամբով տարածողն են հանդիսացել Հնչակեան կուսակցութեան գաղափարախօսութեան:

Դպրոցը գործել է մինչեւ 1936թ.-ը, երբ կառավարութեան հրահանգով փակւել են միաժամանակ թաւրիզահայութեան միւս կրթօջախները:

Հետաքրքիր զուգադիպութեամբ, Փարիզում հրատարակւող «*ՎԷՄ*» հանդէսի ԺԲ, սեպտեմբեր-դեկտեմբեր (1935թ.) համարի 111-րդ էջում «*Արամեան դպրոցի հարիւրամեակը*» խորագրի ներքոյ կարդում ենք հետեւեալը. «*Այս տարի լրանում է Թաւրիզի «Արամեան» դպրոցի հարիւրամեակը: Այս դպրոցը իրանահայ մշակոյթի առաջին կոթողներից մէկն է, որ ահագին կրթական դեր է կատարել Ատրպատականի կեանքում: Այսօր այդ կարեւոր հիմնարկութիւնը գտնւում է նիւթական խիստ ծանր դրութեան մէջ: Թէ՛ հարիւրամեայ յոբելեանը տօնելու, եւ թէ՛ որոշ նիւթական միջոց ապահովելու նպատակով որոշուած է կատարել դպրոցի յոբելեանական տօնակատարութիւնը 1936թ. ապրիլ 19-ին…*», որից յետոյ, սակայն, փակւում է դպրոցը…:

Արամեան դպրոցում զօրեղ է եղել ազգային ոգին եւ հայեցի դաստիրակութիւնը: Դպրոցը ղեկավարւել է ժամանակի մանկավարժական հիմունքներով: Դպրոցում կազմւել է աշակերտական միութիւն, որն ունեցել է իր պատի, ինչպէս նաեւ ձեռագիր կամ խմորատիպ թերթը, որն էլ ունեցել է իր խմբագրական կազմը:

Թաւրիզի հայոց Ազգային Արամեան դպրոցը իր հարիւրամեայ (1835-1935) գոյութեան ընթացքում, մինչեւ 1936 թւականի փակումը տւել է հազարաւոր ընթացաւարտներ: Շուրջ հինգ հազար հոգի այդ դէարաւոր կաղնիի հովանու տակ պատսպարւելով գրաճանաչ են դարձել եւ ուսում ու կրթութիւն են ստացել: Իբրեւ իմացական, հոգեկան եւ ազգային զգացումների անսպառ գանձարան, նրանց մեջ կաթեցրել են իրենց հոգու եւ մտքի լոյսն ու ճակատի ազնիւ քրտինքը վաստակաւոր դէմքեր՝ թեմական առաջնորդներ, հոգաբարձուներ, տեսուչներ եւ ուսուցիչ – ուհիներ, որպէսզի անշէջ ու յարատեւ պահւի Սուրբ Մեսրոպեան տաճարի ջահը:

Տեղեկություններ հեղինակի մասին.

Դերենիկ Մելիքեան-«ԱԼԻՔ» օրաթերթի գլխաւոր խմբագիր

Հոդվածը տպագրության է երաշխավորել խմբագրական կոլեգիայի անդամ, մ.գ.դ., Գ.Հ.Հարությունյանը:

[1] Նոյն տեղում, էջ 70:

ՀՏԴ 37(410) Մանկավարժություն

ՈՒՍՈՒՑՉԻ ՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՄԻՏՈՒՄՆԵՐԸ ՄԵԾ ԲՐԻՏԱՆԻԱՅՈՒՄ

Իգոր ԿԱՐԱՊԵՏՅԱՆ, Հակոբ ԿԻՐԱԿՈԶՅԱՆ

Բանալի բառեր՝ *ուսուցչի պատրաստման համակարգ, միտում, բովանդակություն, մոտեցումներ, տեխնոլոգիա, ռազմավարություն, մոդել, ծրագիր:*

Ключевые слова: *система подготовки учителя, тенденция, содержание, подходы, технология, стратегия, модель, программа:*

Keywords: *teacher training system, trend, content, approaches, technology, strategy, model, program:*

СОВРЕМЕННЫЕ ТЕНДЕНЦИИ ПОДГОТОВКИ УЧИТЕЛЯ В ВЕЛИКОБРИТАНИИ

И.КАРАПЕТЯН, А.КИРАКОЗЯН

В статье выявляются и в общих чертах анализируются основные тенденции подготовки учителя в Великобританни с учетом особенностей создания и применения конкретных программ, стратегий и технологий обучения, методов и форм, используемых в процессе подготовки британского учителя. В целом выделены тенденции интеграции, увеличения гуманитарных предметов, применения новых предметов, последовательной модернизации учебных программ, а также тенденции глобализации. Одни и те же тенденции с некоторым опозданием характерны для подготовки учителя в РА.

MODERN TRENDS IN TEACHER TRAINING IN THE UK

I.KARAPETYAN, H. KIRAKOZYAN

The article reveals and singles out in general outlines the main trends in teacher training in the UK, taking into account the specifics of the creating and applying specific programs, teaching strategies and technologies, methods and forms used in the training of a British teacher. In general, it highlights the tendencies of integration, the increase in humanitarian subjects, the use of new subjects, the consistent modernization of curricula, as well as the trend of globalization. The same tendencies with some delay are typical of the preparation of a teacher in the RA.

Ուսուցչի պատրաստման հիմնախնդիրն արդիական է բոլոր ժամանակներում, բոլոր երկրներում: Տարածված միտում է այն, որ զարգացող երկրներն աշխատում են ուսումնասիրել և յուրացնել զարգացած երկրների առաջավոր փորձը տվյալ ոլորտում: Սակայն միշտ չէ, որ կրթության բարձր տեմպեր, որակ ապահովող ուսուցչի պատրաստման արտերկրի մոդելները հնարավոր և նպատահակահարմար է ներդնել ՀՀ կրթական տարածքում: Սույն հոդվածում փորձ է արվում ներկայացնել բրիտանական ուսուցչի պատրաստման այն ավանդույթներն ու միտումները, որոնք հաշվի առնելով հնարավոր է նպաստել ՀՀ իրականացվող կրթական բարեփոխումներին:

Վերջին տարիներին ուսուցչի պատրաստման համակարգի արդիականացման միտումներ են նկատվում թե' զարգացող, թե' զարգացած երկրներում: Դա բացատրվում է նախ և առաջ այն հանգամանքով, որ այդ համակարգի կայացմամբ է պայմանավորված տվյալ երկրի տնտեսության, ընդհանրապես՝ հասարակության շարունակական զարգացումը:

Այդ համատեքստում նպատակահարմար է ուսումնասիրել ուսուցչի պատրաստման այն երկրների փորձը, որը կարող է նպաստել ՀՀ-ում ուսուցչի պատրաստման դասընթացների կազմակերպմանը, դրանց որակի բարձրացմանը: Եվրոպական երկրները, մասնավորապես Մեծ Բրիտանիան ունեն ուսուցչի պատրաստման հարուստ ավանդույթներ:

Ուսումնասիրելով տվյալ երկրի ուսուցչի պատրաստման բովանդակությունը, մոտեցումները, տեխնոլոգիաները, ռազմավարությունները, մոդելները, ծրագրերն ու ծրագրային, առարկայական նյութերն ու փաթեթները հնարավոր է դառնում բացահայտել ուսուցչի պատրաստման հիմնական միտումները, կանխատեսել նրա զարգացման

հնարավորությունները և ուղղությունները, գնահատել այդ ոլորտում կուտակված դրական, առաջավոր փորձը և ներդնել այն ՀՀ կրթական տիրույթում:

ՀՀ և Մեծ Բրիտանիայի կրթական ծրագրերի համեմատությունը ցույց է տալիս, որ դրանց զարգացման միտումները հատկապես 20-րդ դարի վերջում, 21-րդ դարի առաջին քառորդում ունեն թե՛ ընդհանուր, թե՛ տարբերակիչ գծեր:

Ուսուցչի պատրաստման հայկական և բրիտանական մոդելների տարբերությունը շոշափելի է, երբ համեմատում ենք ուսումնական պլանները: Դրա պատճառներից մեկն այն է, որ շարունակաբար փոխվում է պարտադիր և նախասիրական դասընթացների հարաբերակցությունը: Կարևոր միտում է այն, որ Մեծ Բրիտանիայում շարունակաբար աճում է ընտրովի դասընթացների քանակը: Նշված միտումը նպաստում է փոփոխական մոդուլների ստեղծմանը և կիրառմանը: Անհրաժեշտ է նշել, որ «փոփոխական մոդուլներն ունեն տեսական բնույթ և ներառում են ոչ միայն հիմնարար մասնագիտական առարկաների արդիական խնդիրների ուսումնասիրությունը /պատմություն, փիլիսոփայություն, հոգեբանություն և կրթության սոցոլոգիա/, այլև վերաբերում են ժամանակակից կրթության ավելի լայն հարցերին (Education Tripos 2001: 5):

Միասնական կրթական ծրագրերի բացակայությունը հնարավորություն է ընձեռում բրիտանական համալսարաններին ինքնուրույն որոշել ուսուցչի պատրաստման բովանդակությունը: Դա է պատճառը, որ մի մոդելի շրջանակներում դրանք տարբերվում են մեկը մյուսից: Ընդ որում՝ որքան ուսուցչի պաստրաստման դասընթացը բարդանում է, այնքան ուսուցման մոդելների միջև տարբերությունները ավելի ակնառու են դառնում:

Մանկավարժական մոդուլների համեմատությունը ցույց է տալիս, որ ուսումնասիրելով մանկավարժական հոգեբանություն կամ կրթության փիլիսոփայություն, բրիտանացի ուսանողները փորձում են ընդլայնել ուսուցանվող առարկաների ցանկը: Երկու կրթական տարածքում էլ տեղի է ունենում ուսումնական առարկաների ինտեգրում:

Նույնը վերաբերում է հումանիտար առարկաների քանակի ավելացմանը: Տարիքային հոգեբանության բրիտանական մանկավարժական ծրագերում ներառված է ճանաչողական հոգեբանությունը, մարդաբանությունը, արժեբանությունը և այլն:

Այստեղ կարելի է խոսել երեք միտումի մասին.

1. Նոր մասնագիտացումների ձևավորումը բերում է ուսումնական ծրագրերի շարունակական արդիականացման, գործնականում՝ կոնկրետացման:
2. Առարկայական ծրագրերի ձևավորման, ստեղծման վրա ազդում են գլոբալացման, ինտեգրման միտումները:
3. Զարգացող երկրներում մանկավարժական կադրերի պատրաստման քաղաքականությունը լուրջ ազդեցություն է կրում զարգացած երկրներից:

Դրա հետ մեկտեղ Մեծ Բրիտանիայի մանկավարժական համալսարաններում և քոլեջներում դեռևս շրջանառվում և ձևավորվում են դասընթացներ, որոնք ինչ-որ առումով անհայտ են ՀՀ-ում: Օրինակ՝ Յորքի համալսարանում մի առարկայախմբի շրջանակներում «Անգլերենը կրթության մեջ» (English in Education) առաջին կուրսում ուսումնասիրում են անգլերեն լեզվի և գրականության դասավանդման հիմքերը (“Introduction to Language and Literature in Education”): ՀՀ-ում այդ վերնագրով առարկա չի դասավանդվում, չնայած վերջին շրջանում մանկավարժական բուհերի օտար լեզուների ֆակուլտետներում առաջին պլան է մղվում «Օտար լեզու և գրականություն» մասնագիտությունը: Ընդհանարապես, օտար գրականության դասավանդման մեթոդիկայի մասին թյուր պատկերացումներ կան: Խնդիրն ավելի է սրվում, երբ պարզվում է, որ նույն համալսարանի երկրորդ կուրսում ոչ միայն շարունակում են նշված դասընթացը, այլև ուսանողները կարող են ընտրել մոդուլներ գրականությունից և խոսքի մշակույթից (“Education in Literature”, “Teaching and Learning Language

Literacy”: Հայտնի և անհայտ պատճառներով ՀՀ-ում այդ առարկաները ընդհանրապես չեն ուսումնասիրվում:

Նույնը վերաբերում է երրորդ կուրսին: Նշված համալսարանում ուսանողները ծանոթանում են գրական ոճերին և բրիտանական պոեզիային (“Models of Writing”, “Landmarks in British Poetry”, ինչպես նաև գիտելիքներ են ձեռք բերում կրթության մեջ դրամայի կիրառման մասին (“Drama in Education”), ուսումնասիրում են հոգեբանության հիմքերը (Language of Psychology” (University Subject Tables 2014/Education// The Complete University Guide. -2013.- Режим доступа: http://www.gteni.org.uk./publications/uploads/document//annual1%20lecture%pdf.):

Ընդհանարպես ուսուցչի պատրաստման գործող հայկական մոդելներում գրականության, գրականագիտության և մանկավարժության առնչությունների, գրականության կրթական դերի, կրթական, դաստիարակչական գործառույթների վրա անհրաժեշտ ուշադրություն չի հրավիրվում: Հիմնական պատճառներից մեկն այն է, որ մայրենի և օտար լեզուների գրականության մեթոդիստները, մեթոդաբաններն իրար հետ հետևողականորեն չեն համագործակցում: Նույնը վերաբերում է արտասահմանյան և հայ գրականության ուսուցման տեսության պատասխանատուներին: Ավելին, առանձին արտասահմանյան գրականության դասավանդման մեթոդիկան դեռևս այլ գիտակարգերի շրջանում իր ուրույն տեղը չի գտել:

Փոխվում են նաև ուսուցչի պատրաստման գործընթացի վերահսկողության և գնահատման միտումները: Աստիճանաբար գնահատման ձևերից անցում է կատարվում ինքնագնահատման ձևերին: Տիպական է հատկապես Մեծ Բրիտանիայի օրինակը: Այնտեղ ուսուցչի պատրաստման բրիտանական ավանդական մոդելի շրջանակներում առաջնային են վերահսկողության գրավոր ձևերը /ակնարկ, գրավոր քննություն և այլն/: Սակայն, ինչպես և մյուս զարգացած եվրոպական երկրներում դեռևս նախորդ դարի վերջին քառորդից սկսեցին աստիճանաբար կիրառել ստուգման գործնական ձևերը /տարբեր բնույթի թղթապանակներ, հաշվետվության ներկայացումներ, անցումնային և մասնագիտական աճի պլաններ/ (Professional Standards for Teachers. Qualified Teacher Status 2007): ՀՀ-ում նույն միտումը շոշափելի է դառնում հատկապես 21-րդ դարի սկզբում:

Ընդհանուր առմամբ, բրիտանական բուհերն առաջարկում են հնարավորինս «ճկուն» հետբուհական մանկավարժական կրթության ծրագրեր (flexible PGCE), որոնք նախատեսված են դպրոցում աշխատող մանկավարժական փորձ ունեցող մարդկանց համար, ովքեր չեն կարող հաճախել համանման համալսարանական դասընթացերի: Փաստորեն, այստեղ խոսք է գնում լրացուցիչ մանկավարժական կրթության մասին: Օրինակ՝ 2013-2014 ուստարում քենթինբերյան համալսարանն առաջարկում է իր շրջանավարտներին մոդուլային հետբուհական վկայական (PDCE Modular Primary), որով իրացվում է անհատական մոտեցումը բարձրագույն կրթության ոլորտում:

Կարևոր միտում է այն, որ գրավոր ստուգման ձևերը աստիճանաբար իրենց տեղն են զիջում բանավոր ստուգման ձևերին /ներկայացում, քննարկում և այլն/: Կարելի է պնդել, որ ՀՀ կրթական տարածքում ճիշտ հակառակ միտում են նկատվում: Նշված միտումն ավելի է ընդգծվում ավարտական քննությունների կազմակերպման ժամանակ:

Ինչպես և ՀՀ-ում, Մեծ Բրիտանիայում լայնորեն կիրառում են պարտադիր և ֆակուլտատիվ մոդուլներ: Ինչպես և ՀՀ-ում Մեծ Բրիտանիայում կրթական ծրագրերն առաջին կուրսում հիմնականում ընդհանուր են, ընդհանարական բնույթ ունեն: Հետագայում դրանք կոնկրետանում են՝ հիմք ընդունելով մասնագիտական գիտելիքների խորացման միտումը:

Գիտական, հետազոտական աշխատանքն ուսուցչի պատրաստման կարևոր բաղադրիչ է Մեծ Բրիտանիայում: Հատկանշական է այն, որ այդ երկրում նույնպես 1-2 –րդ կուրսերում այդ բաղադրիչը դեռևս ձևավորման փուլում է գտնվում: Ինչպես և ՀՀ բուհերում, նրանք ուսումնասիրում են (“Research and Investigation in Education”): Մանկավարժական հետազոտությունների մեթոդաբանությունը մանկավարժների կողմից լուրջ ուշադրության

արժանացավ միայն վերջին երկու տասնամյակում: Կարելի է պնդել, որ բրիտանական մանկավարժական բուհերն ու քոլեջները փորձում են գիտական հետազոտական բաղադրիչը շարունակաբար ավելացնել: Նույն միտումը բնորոշ է վերջին շրջանում ՀՀ մանկավարժական կադրեր պատրաստող բուհերին:

Ակնհայտ է, որ Մեծ Բրիտանիայում և ՀՀ-ում թե՛ բովանդակային, թե՛ եզրույթաբանական տեսանկյուններից ակնառու տարբերություններ կան գիտական հետազոտական և մեթոդաբանական ուղղվածության ուսուցչի պատրաստման դասընթացների միջև: Օրինակ՝ առաջին կուրսում Մեծ Բրիտանիայի առաջավոր բուհերում անցնում են “Ուսումնահետազոտական աշխատանքի մեթոդաբանություն”, (“Skills for Studying”), որը երկրորդ կուրսում շարունակվում է «Մանկավարժական հետազոտությունների մեթոդաբանություն» անվանումով (Educational Research Methodology 2013):

ՀՀ-ում մանկավարժական բուհերում մանկավարժական հետազոտությունների մեթոդաբանությունը հիմնականում ուսումնասիրվում է ՌԴ-ում լույս տեսած դասագրքերով, որոնցում ամբողջությամբ հաղթահարված չէ խորհրդային գաղափարաբանությունը: Այդպիսի իրավիճակը խանգարում է կառուցողական երկխոսության բարձր զարգացում ապահովել կրթական տիրույթների ներկայացուցիչների հետ:

Կարևոր միտում է ընդունել ավարտական աշխատանքը որպես լիարժեք ուսումնական մոդուլ /30-40 կրեդիտ/: Վերջին շրջանում նույն մոտեցումն է դրսևորվում ՀՀ-ում:

Մեծ Բրիտանիայում ուսուցչի պատրաստման բուհական /տեսական/ և դպրոցական /գործնական/ պատրաստման դասընթացների համադրման միտում է նկատվում: Ինչպես նշում է Լ.Ռ. Ակմեևը. «XX դարի վերջում Մեծ Բրիտանիայում հաստատվել է ուսուցչի մասնագիտական-անձնային զարգացման երկու մոդել՝ մասնագիտական կոմպետենտության մոդելը (սոցիալական առաջարկի մոդելը) և գործնական կարողությունների և հմտությունների մոդելը: Առաջինը մեխանիկորեն է ներկայացնում բրիտանական կրթության համակարգում ուսուցչի դերը: Երկրորդը դիտարկում է ուսուցչի մասնագիտական զարգացումը որպես լրացուցիչ, նոր գիտելիքների ձեռք բերման գործընթաց, դրանով իսկ արհամարհելով նրա գիտելիքների կիրառման գործնական փորձը և սեփական աշխատանքի գնահատման դերը» (Акмаева 2003):

Գործնական ուղղվածության մոդելի կիրառման միտումը հաստատվում է այն փաստով նաև, որ մանկավարժական բուհի կամ քոլեջի շրջանավարտին տրվում է փորձնական մեկամյա շրջան: Առաջին ուսումնական տարում շրջանավարտ ուսուցիչները պարբերաբար մասնագիտական աջակցություն են ստանում դպրոցի ղեկավարության, ինչպես նաև ուսուցիչ հոգաբարձուների կամ խնամակալների կողմից, ովքեր սկսնակ ուսուցչին օգնում են դպրոցին հարմարվելու գործընթացում:

Մյուս միտումն այն է, որ Մեծ Բրիտնիայում ուսուցիչ-խնամակալները, մենթորներն ակտիվ մասնակցություն են ունենում ինչպես բուհում կամ քոլեջում ուսուցանելու, այնպես էլ ուսուցչի պատրաստման և վերապատրաստման հետբուհական շրջանում:

Այդ առումով կարևորվում է ուսուցչի պատրաստման հատուկ ծրագրերի դերը: Կարևոր է այն, որ ուսուցիչ –խնամակալները աշխատում են ըստ հստակ մշակված մասնագիտական ծրագրերի (Акмаева 2003):

Ուսուցչի պատրաստման բրիտանական մոդելները վերլուծելիս անհրաժեշտ է հաշվի առնել բարձրագույն կրթության զարգացման համաշխարհային և համաեվրոպական միտումները, մասնավորապես՝ բոլոնյան գործընթացը, որի շրջանակներում տեղի է ունենում եվրոպական կրթական տարածքների ինտեգրում: Դրա հետ մեկտեղ, թե՛ տեխնոլոգիական, թե՛ ծրագրային մակարդակներում Մեծ Բրիտանիան, նոր շունչ ու բովանդակություն հաղորդելով կրթական համաշխարհայացման գործընթացներին, կարողանում է պահպանել ուսուցչի պատրաստման իր ազգամշակութային յուրահատկությունները: Մասնավորապես դա

վերաբերում է մասնագիտական կրթությանն առաջադրվող պահանջների շարունակական խստացմանը, ինչպես նաև մանկավարժական բարձրագույն հաստատությունների ինքնուրույնության բարձրացմանը: Ինչպես և մյուս եվրոպական երկներում Մեծ Բրիտանիայի կրթության բովանդակության կառուցվածքը միավորում է առարկայական և մասնագիտական ոլորտները: Ուսուցչի պատրաստման առարկայական ոլորտը ներառում է հանրակրթական և մասնագիական առարկաների ուսուցում: Մասնագիտական առարկայախումբը ներկայացնում է համամանկավարժական առարկաները՝ մեթոդիկան և մանկավարժական պրակտիկան:

Ըստ Լ.Ն. Պոլունինայի՝ «մանկավարժական կրթության կազմակերպման հիմքում ընկած են երկու մոդել՝ համաժամանակյա և հաջորդական: Համաժամանակյա մոդելի կիրառման դեպքում ուսուցչի պատրաստման առարկայական և մասնագիտական ոլորտները համակցվում են բարձրագույն կրթության ընդհանուր դասընթացում (Полунина 2006):

Համաժամանակյա մոդելը բնորոշ է ոչ միայն Մեծ Բրիտանիայի, այլև ՀՀ կրթական համակարգին: Ըստ այդ մոդելի՝ մեծ տեղ է հատկացվում դիդակտիկային և մեթոդիկային: Հաջորդական մոդելը ենթադրում է, որ շրջանավարտը մի աստիճան ստանալուց հետո, փորձում է սովորել ավելի բարձր աստիճանի համար: Օրինակ՝ Մեծ Բրիտանիայում կամ ՀՀ-ում բակալավրական աստիճան ստանալուց հետո հնարավոր է դառնում ստանալ մագիստրոսական աստիճան "Postgraduate Certificate in Education":

Բացահայտելով ուսուցչի պատրաստման ընդհանուր միտումները, հետազոտողները նշում են հետևյալը.

1. Ուսումնական գործընթացի ինտեսիֆիկացման հաշվին ուսուցման ժամկետների կրճատում /երկու տարվա փոխարեն երեք կամ չորս տարի մագիստրոսական չորսամյա դիպլոմի մակարդակում/:
2. Մասնագիտության ընդլայնում ուսուցման հստակ ժամկետների պահպանմամբ /երկու կամ երեք աստիճան/:
3. Մանկավարժական մասնագիտությունների հետագա խորացում կամ արհեստավարժացում:
4. Նոր գործնական ուղղվածության մարշրուտներ կամ երթուղիներ հիմնական կրթության մեջ /մեկամյա բակալավրիատ առանց կտրվելու աշխատանքից և մեկամյա փորձաշրջան/:
5. Համալսարանական ծրագրերի երկրորդ խումբը մշակված է այն մարդկանց համար, ովքեր արդեն ունեն բարձրագույն կրթություն և ներկայացված են մեկամյա /երկամյա ցերեկային/հեռակա դասընթացներով:

Եզրակացություն. Ուսուցչի պատրաստման հայկական և բրիտանական մոդելների տարբերությունը հնարավոր է բացահայտել ուսումնական պլանների, ծրագրերի, ուսուցման ռազմավարությունների, տեխնոլոգիաների, մեթոդների համամետության արդյունքում:

Թե՛ Մեծ Բրիտանիայում, թե՛ ՀՀ-ում ուսուցչի պատարստման գործընթացում խորացող միտում է ուսումնական առարկաների ինտեգրումը, հումանիտար առարկաների քանակի ավելացումը, նոր մասնագիտացումների ձևավորումը, ուսումնական ծրագրերի շարունակական արդիականացումը: Առաջին պլան են մղվում գլոբալացման, ինտեգրման միտումները:

Մեծ Բրիտանիայում կարևոր միտում է ուսուցչի պատարստման դասընթացներում լեզվի և գրականության ուսուցման հարաբերակցության պահպանումը, ինչը բնորոշ չէ նույն բովանդակության հայկական, մասնավորապես՝ օտար լեզու ուսուցանող դասընթացներին:

Կարելի է արձանագրել, որ Մեծ Բրիտանիայում խորանում են տարբեր դասընթացների առարկայական փաթեթների, ծրագրերի շարունակական հարստացման, առարկաների ինտեգրման, միջառարկայական կապերի ապահովման, տարբեր մոդուլների հստակեցման, ուսուցման անհատականցման և տարբերակման միտումները:

Գիտական հետազոտական և մեթոդաբանական ուղղվածության ուսուցչի պատրաստման դասընթացների քանակի ավելացման միտումը աստիճանաբար սրվում է ոչ Միայն Մեծ Բրիտանիայում, այլև ՀՀ-ում:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Акмаева Л.Р. Основные тенденции развития непрерывного педагогического образования в Великобритании, последняя четверть XX века: Дис. канд. пед. наук: 13.00.01 /Ленар Рустамович Акмаева. - М.: РГБ, 2003. - 183 с.
2. Лысова Е. Б. Новые тенденции в подготовке учителей на Западе //Педагогика. 1994. - № 3,- С. 94-100.
3. Полунина Л. Н. Подготовка учителей в европейских странах: национальные приоритеты и интеграция в контексте Болонского процесса: национальные приоритеты и интеграция в контексте Болонского процесса : Дис. ... канд. пед. наук : 13.00.01 Тула, 2006 202 с.
4. Education Tripos: Programme Specifications. – Cambridge: University of Cambridge, 2001= 5p.
5. Educational Research Methodology”): (University of York. Department of Education. -2013. - Режим доступа: http://www.york.org.uk./education
6. Professional Standards for Teachers. Qualified Teacher Status. – L.:TTA, 2007
7. University of York. Department of Education. -2013. - Режим доступа: http://www.york.org.uk./education
8. University Subject Tables 2014/Education// The Complete University Guide. -2013.-Режим доступа: http://www.gteni.org.uk./publications/uploads/document//annual1%20lecture%pdf.

Տեղեկություններ հեղինակի մասին.

Իզոր ԿԱՐԱՊԵՏՅԱՆ, մ.գ.դ., պրոֆեսոր, ԵՊՀ

Հոդվածը տպագրության է երաշխավորել խմբագրական կոլեգիայի անդամ, մ.գ.դ., Գ.Հ.Հարությունյանը::

ՀՏԴ 37.06 Հոգեբանություն

ՍՏԱՅԱԾ ԿՐԹՈՒԹՅՈՒՆԻՑ ՇՐՋԱՆԱՎԱՐՏՆԵՐԻ ԲԱՎԱՐԱՐՎԱԾՈՒԹՅԱՆ ՀԱՐՑՄԱՆ ՈՐՈՇ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ ԵՎ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Վիոլա ՅԱՐԱՄԻՇՅԱՆ

Բանալի բառեր. *բարձրագույն կրթություն, շրջանավարտ, սոցիոլոգիական հարցում, հարցման արդյունքներ, սոցիալական չափում, կրթության որակի կառավարում, բավարարվածություն, բակալավր, մագիստրոս, կրթական ծրագրեր, տվյալների ցրում, մեթոդի արժանահավատություն, առաջադիմություն, գործոն:*

Ключевые слова: *высшее образование, выпускник, социологический опрос, результаты опроса, социальное измерение, управление качеством образования, удовлетворенность, бакалавр, магистр, образовательные программы, рассеяние данных, валидность метода, успеваемость, фактор.*

Key words: *higher education, graduate, sociological survey, survey, survey results, social dimension, education quality management, satisfaction, bachelor, master, educational programs, data dispersion, method validity, performance, factor.*

НЕКОТОРЫЕ ИССЛЕДОВАНИЯ И РЕЗУЛЬТАТЫ ОПРОСОВ ВЫПУСКНИКОВ ОТНОСИТЕЛЬНО УДОВЛЕТВОРЕНИЯ УРОВНЕМ ПОЛУЧЕННОГО ОБРАЗОВАНИЯ

В. ЯРАМИШЯН

Одним из важнейщих составляющих процесса управления высшим образованием является изучение качества профессиональной подготовки путем проведения социально-психологических опросов среди студентов и выпускников вузов. Опросы студентов и выпускников вузов по определению состояния их удовлетворенности от полученного образования проводятся во всех вузах. В статье представлены некоторые результаты проведенных опросов выпускников бакалавриата и магистратуры от полученного образования в Арцахском государсвенном университете с соответсвующими выводами и анализом. Выделены те факторы, которые по мнению автора влияют на качество выполнения учебных программ.

SOME RESEARCHES AND RESULTS OF GRADUATES SURVEY CONCERNING SATISFACTION WITH THE LEVEL OF OBTAINED EDUCATION

V. YARAMISHYAN

One of the most important components of Management Process of Higher Education is the research of professional training quality through conducting socio-psychological surveys among students and university graduates. Surveys on identifying students' educational satisfaction are conducted among students and graduates of all universities.

The article touches upon the results, as well as the corresponding analyses and conclusions of surveys conducted among Bachelors and Masters of 2016-2017 Academic year. The factors, which, according to author, influence the quality of implementation of educational programs, are also presented in the article.

Բարձրագույն կրթության որակի կառավարման կարևորագույն բաղադրիչներից մեկը մասնագիտական պատրաստման գործընթացի ուսումնասիրությունն է՝ ուսանողների և շրջանավարտների շրջանում սոցիալ-հոգեբանական հարցումներ անցկացնելու ճանապարհով: Ուսանողների և շրջանավարտների մոտ կրթության որակից ստացած բավարարվածության աստիճանի որոշման հարցումներ կատարվում են բոլոր բուհերում: Հոդվածում ներակայացված են 2016թ. և 2017թ. Արցախի պետական համալսարանում ստացած կրթությունից բակալավրիատի և մագիստրատուրայի շրջանավարտների բավարարվածության հարցման որոշ արդյունքներ՝ համապատասխան վերլուծություններով և եզրակացություններով: Առանձնացված են այն գործոնները, որոնք հեղինակի կարծիքով ներազդում են կրթական ծրագրերի իրականացման որակի վրա:

Բարձրագույն կրթության որակի կառավարման կարևորագույն բաղադրիչներից մեկն, անշուշտ, մասնագիտական պատրաստման գործընթացի ուսումնասիրությունն է՝ նրա մասնակիցների շրջանում սոցիոլոգիական հարցումներ անցկացնելու և սովորողների՝ կրթությունից ստացած բավարարվածության աստիճանը որոշելու ճանապարհով: Ուսանողների և շրջանավարտների՝ կրթության որակից ստացած բավարարվածության աստիճանի որոշման հարցումներ կատարվել են նախկինում և այժմ էլ կատարվում են գրեթե բոլոր բուհերում: Օրինակ, ԵՊՀ-ում շրջանավարտների կանոնավոր հարցումներն իրականացվում են 2009թ.-ից սկսած՝ գտնելով, որ բարձրագույն կրթության որակի մշտական վերահսկումը, նրա կանոնավոր սոցիալական չափումը յուրաքանչյուր բուհի արդիականացման չափանիշներից մեկն է (2, էջ 6) :

Աշխարհի տարբեր երկրների բուհերում նույնպես ուսանողական հարցումներին մեծ տեղ է տրվում՝ որպես կրթության ոլորտի առաջնահերթությունների որոշման հավաստի, գրեթե անսխալ եղանակի: Ռուսական բուհերում այս եղանակով որոշվել են, թե ուսանողներն ինչ գործոններ են առանձնացնում՝ որպես կրթության որակի ապահովման կարևորագույն չափանիշներ: Օրինակ, Ալթայի պետական համալսարանում ուսանողները, որպես կրթության որակի ապահովման առաջնահերթ գործոն, առանձնացրել են դասախոս-հռետորի գործոնը, նշելով, որ նա՝ դասախոսը, պետք է ունենա մի շարք կարևոր հատկանիշներ: Նա պետք է ունենա բարձր շփվողականություն (ընդ որում՝ շփման մեջ լինի հաճելի), կարողանա պարզ, հստակ շարադրել ուսումնական նյութը, ապահովել կոնտակտը լսարանի հետ, որպես անձնավորություն լինի հետաքրքիր, ունենա արտաքին գրավչություն, հստակ առոգանություն և գրագետ խոսք: Այսպիսի դասախոսը, ուսանողների պատկերացմամբ, կկարողանա թուլացնել լսարանի լարվածությունը, լինել օբյեկտիվ՝ գնահատման մեջ, շահագրգռված լինել ուսանողների հաջողության մեջ և, իհարկե, ունենալ հումորի զգացում (3 առ 12.12.2017թ.):

ԱրՊՀ-ում ստացած կրթությունից շրջանավարտների բավարարվածության հարցումներն անց են կացվում գիտական խորհրդի կողմից հաստատված հարցաշարով՝ նրանց վերաբերմունքն ուսման և աշխատանքային գործունեության նկատմամբ բացահայտելու, մասնագիտական և ընդհանուր պատրաստման գործընթացում առկա խնդիրներն ուսումնասիրելու, այդ գործընթացի արդյունավետության բարձրացմանը միտված երաշխավորություններ մշակելու և առաջադրելու նպատակով (2, էջ 256):

Սույն հոդվածում ներկայացված են 2016-2017թ.թ. ուսումնական տարում անց կացված հարցումների որոշ արդյունքներ՝ համապատասխան վերլուծություններով:

Կազմակերպումը և մեթոդները: Հարցումներն անց են կացվել 2016թ.՝ հարցաթերթիկներով, 2017թ.՝ համակարգչային հատուկ ծրագրով: Համակարգչային եղանակը արդյունավետ է դարձրել անցկացման տեխնիկան, սակայն որոշակի դժվարություն է առաջ բերել՝ մասնագիտական վերլուծության առումով: Ճիշտ կլինի հետագայում հարցումն անց կացնել մասնագետի մասնակցությամբ (սոցիոլոգ, հոգեբան)՝ հարցման մեթոդի նվազագույն կանոնները պահպանելու, լսարանը հոգեբանորեն նախապատրաստելու համար: Չնայած դրան, ընդգրկված ուսանողների զգալի թիվը՝ 279, տվյալների ոչ էական ցրումն ըստ ֆակուլտետների և կիրառված մեթոդի արժանահավատությունը հիմք են տալիս եզրակացնելու, որ հարցման հավաստիությունը բարձր է և ստացված արդյունքները, ընդհանուր առմամբ, կարելի է ընդունել որպես հիմք՝ եզրակացություններ կատարելու համար:

Ընդհանուր տեղեկություններ: Հարցմանն ընդգրկվել են ԱրՊՀ 5 ֆակուլտետների առկա ուսուցման համակարգի թվով 279 (64)[1] շրջանավարտներ, այդ թվում բակալավրիատ՝ 246 (55) և մագիստրատուրա՝ 33 (9), աղջիկ՝ 247 (62) և տղա՝ 32 (2):

Ըստ ֆակուլտետների, տվյալները բերված են աղյուսակ 1-ում՝

աղյուսակ 1

	ֆակուլտետը	բակալավր				մագիստրոս				ընդամենը հարցվածներ	
		2016		2017		2016		2017		2016	2017
		տղա	աղջ	տղա	աղջ	տղա	աղջ	տղա	աղջ		
	բանասիրական	0	22	0	47	0	0	1	13	22	***61***
	բնագիտական	0	8	18	59	0	0	0	2	8	***79***
	մանկ. և սպորտի	0	8	1	25	0	0	0	3	8	***29***
	պատմ. և իրավ.	0	4	1	46	0	4	1	1	8	***49***
	տնտեսագիտ.[2]	2	10	3	46	0	1	7	5	11	***61***
	անանուն	0	1	0	0	0	4	0	0	5	***0***
	Ընդամենը	2	53	***23***	***223***	0	9	***9***	***24***	62	***279***

Ինչքան էլ դժգոհելու լինենք, որ նոսրացել են գրքասերների շարքերը, որ ընթերցասերները երես են թեքել գրքերից, այնուամենայնիվ լույս են ընծայվում բազմաբնույթ գրքեր, որոնք հաստատում են ոչ միայն հայ մարդու արարող ոգու անմարում կրակի գոյությունը, այլև ծիածանում են ամբողջ ժողովրդի ապրելու լուսառաք բանաձևի ուժն ու հմայքը՝ բարձրաձայնելով այն ճշմարտությունը, որ հայ ժողովուրդը բանաստեղծ ժողովուրդ է, որ նա աչք է բացել »Վահագնի ծնունդը« երգը շրթերին, որ նա աշխարհացունց արհավիրքներին դիմակայել ու հարատևել է իր Մաշտոց որդու հայտնաբերած գրերի ու աստղաշող դպրության, Տիեզերական եկեղեցու 36-րդ վարդապետ Գրիգոր Նարեկացու աստվածախոս «Մատյանի» շնորհիվ: Այդպես, իր Մեսրոպածին տառերը դաջելով սասնակուռ թրերին, հաղթել է ու կորցրել, կորցրել է ու գտել, ճառընտիրների հարևանությամբ լինելիության իր առեղծվածը պահ տվել խաչքարերին ու վիմագրերին ու հասել մեր օրերին, որ գումարվելով՝ դարձան 21-րդ դար, ազդարարելով՝ ապագան մերը լինելու տեսանելի վճռականությունը…

Մեր այս մտորումների առիթը հայտնի մշակութաբան Սերգեյ Աղաջանյանի «Լեզուն և գիրը մշակույթի համակարգում» ուսումնական ձեռնարկն է, որը տպագրվել է Հայոց գրատպության 500-ամյակի առիթով՝ որպես խորհուրդ ու պատգամ գալիք սերունդներին:

Հիմնախնդիրների, պատասխանների և հարցադրումների խտությամբ հանրագիտարանային այս գիրքը հրատարակության է երաշխավորել Հայկական պետական մանկավարժական համալսարանի գեղարվեստական կրթության ֆակուլտետի խորհուրդը, խմբագրել է փիլիսոփայական

գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Սեյրան Զաքարյանը, գրախոսել բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ Արտաշես Մարտիրոսյանը:

Ինչպես տեսնում ենք, հեղինակի թիկունքին կանգնած են այնպիսի կոլեկտիվ ու մշակույթի գործիչներ, որոնց առկայությունը միայն բավական է, որ գիրքը բացես ուրախությամբ, կարդաս երախտագիտությամբ ու գնահատման չափանիշները տնտղես ամենայն պատասխանատվությամբ:

Երեք գլխից ու »Հավելվածներ« բաժնից բաղկացած սույն ձեռնարկը թեկուզ ազդարարում է, որ այն նվիրված է մարդու մշակութաստեղծ գործունեության ամենաուշագրավ և իրար սերտորեն առնչակից ոլորտներից երկուսին՝ լեզվին և գրին, սակայն հեղինակը գտել է, որ նշված բնագավառների իմաստն ու նշանակությունն ամբողջությամբ ընկալելու համար կան երևույթներ, առանց որոնց ծանոթանալու կամ իմանալու, ընթերցողը կմնա կիսաբաց դռների հետևում, հարցականը՝ կեռված ունքերի վրա: Ահա, այս անհրաժեշտ միտումով էլ նա անդրադարձել է նախ »Մարդը« բարդ հարցին՝ փիլիսոփայական ուղեծիրով, ապա մտել »Լեզու և խոսք« հիմնախնդիրների խաչմերուկ, այնուհետև թերթել »Գիր և գիրք« խնճառոտ հուշամատյանները, վերջապես բարեմիտ սերմնացանի պես արծարծել բարոյահոգեբանական, փիլիսոփայական, մշակութաբանական, ազգային այնպիսի հարցեր, որ առաջին հերթին վերաբերում է մեզ բոլորիս, ընդհուպ մինչև »Արտագաղթի հայկական ֆենոմենի« առեղծվածը:

Սույն ձեռնարկը լուրջ մասնագետ-գիտնականի հունձք է: Նրա հարուստ գիտելիքների պաշարը երևում է ոչ միայն գրքի վերջում բերված գրականության ցանկից, ուր նշված է ավելի քան 50 աղբյուր, այլև թեմաների լուսաբանման ընթացքում մատնանշված մեծությունների կարծիքների հոլովումից: Այստեղից էլ հիմնախնդիրների քննարկման ու գնահատման նրա հակիրճ ու խտացված պատասխաններն ու եզրահանգումները: Այսպես, գրքի «Մարդը » առաջին գլխում նա եթե ոչ սպառիչ, ապա համոզիչ ծավալումներով պատասխանում է «Մարդը՝ յուրօրինակ արարած», «Մարդը տեղայնացված չէ», «Մարդը մշակութաստեղծ է», «Մարդը սոցիալական արարած է »հարցադրումներին ու բնութագրում մշակույթը՝ նախնական մշակույթի տեսադաշտի վրա:

Չես կարող դրվատանքի խոսք չասել ձեռնարկի հեղինակի գեղարվեստական ոճի մասին: Զերմությամբ են հնչում նրա ընդհանրացումները:

Սերգեյ Աղաջանյանը մտորելով մարդու և նրա անցած ճանապարհի մասին, ընդհանրացնում է. «Երկիր մոլորակի գոյության ողջ ընթացքում մարդն աննախադեպ է նրանով, որ մշակութաստեղծ է: Դրա էական հատկանիշը ոչ թե բնությանը հարմարվելն է, այլ այն վերափոխել-վերստեղծելով՝ իրեն հարմարեցնելը»[1]:

Բազմավաստակ մանկավարժ-գիտնականը նկատում է, որ ի հակադրություն կենսաբանական էվոլյուցիայի, մշակութային էվոլյուցիան (մանավանդ նոր ժամանակներում) հարահոս է, որն անզսպորեն վերափոխում, ոչնչացնում է բնության մեջ առկա կենդանի ու անկենդան տեսակները, որ Մարդու բանական ձեռքբերումները, ցավոք սրտի, զենք են դառնում իր նյութական պահանջմունքների և կենդանական բնազդների ձեռքին: Մարդն է այն էվոլյուցիան իրականացնողը, ուրեմն և՝ հետևանքների պատասխանատուն:

Ուսումնական ձեռնարկում գիտական հայտնագործությունների հիման վրա ընդգծվում է Մարդու յուրօրինակ արարած լինելը: Միաժամանակ քննարկվում է ցամաքային և ջրային կենդանիների կենսակերպը և ընդգծվում, որ նրանցից յուրաքանչյուրին սովորաբար բնորոշ է տեղայնացվածությունը: Կեցության տեղայնացվածության առումով միակ բացառությունը *մարդն է:* Նա որքան հարմարվում է բնակլիմայական պայմաններին, նույնքան էլ բնակլիմայական պայմաններն է հարմարեցնում իրեն: Եվ դա այն պատճառով, որ միայն մարդն է մշակութաստեղծ: Մարդը մշակութաստեղծ է, քանզի նա բանական է:

Ձեռնարկի հեղինակը չի շրջանցում այն երևույթը, երբ բանական վարքի ինչ-ինչ դրսևորումներ կամ գործունեության տարրեր բնորոշ են նաև այլ կենդանիների: «Սակայն,- նշում է գիտնական-մանկավարժը,- մարդու դեպքում բանական լինելն արտահայտվում է հարափոփոխ գաղափարների մտահղացումով, մշտապես կատարելագործվող առարկաների ստեղծումով: Դա գործընթաց է, որի վերջն առայժմ չի երևում: Այդ ընթացքի մեջ մի անգամ հաջողությամբ ձեռք բերվածն անշարժ նույնությամբ չէ, որ փոխանցվում է սերնդեսերունդ: Յուրաքանչյուր հաջորդ սերունդ (սակավաթիվ ժողովուրդների բացառությամբ) իր բաժինն է հավելում նախորդի ստեղծածին»[2]:

[1] Սերգեյ Աղաջանյան, Լեզուն և գիրը մշակույթի համակարգում, Ե., «Գիտություն» հրատ., 2016, էջ 9:
[2] Նույն տեղում, էջ 17:

Սերգեյ Աղաջանյանը վստահորեն պնդում է, որ մարդը եզակի է ոչ թե բանական լինելով, այլ բանականության այն տեսակով ու չափով, որի շնորհիվ միակ մշակութաստեղծն է բոլոր արարածների մեջ:

Ս.Աղաջանյանն անդրադառնում է նաև մշակութաբանության մեջ ընդունված նյութական ու հոգևոր մշակույթների հասկացություններին և գալիս համոզիչ եզրակացության, ըստ որի մարդու ստեղծածը որքան էլ կատարյալ, ինքնօրինակ, միևնույն է, չի կարող համարվել կամ համեմատվել այն արարչությանն ու նրա արդյունքներին, ինչի մասնիկն ենք և մենք:

Ս.Աղաջանյանը ելնելով ոչ միայն գիտական հայտնագործություններից, այլև իր հարուստ կենսափորձից, փիլիսոփայական ընդհանրացումներ է կատարում մարդու սոցիալական արարած լինելու վերաբերյալ:

Նա նշում է, որ մարդու կայացման համար որքան կարևոր է կենսաբանականը, նույնքան էլ՝ վերկենսաբանական մակարդակի (գիտական) գործունեությամբ ձեռք բերվող սոցիալական կազմակերպման փորձը, հոգևոր ու նյութական արժեքները, իմացությունը: Այդ ամենի համախումբը մշակույթն է, որն արարվում է, պահպանվում ու փոխանցվում խմբային գործունեությամբ:

Քննարկելով մշակույթի փոխանցման հարցը, ձեռնարկի հեղինակը հաստատում է. »Մշակույթը փոխանցվում է միայն սոցիալական իրականությամբ, որն իր կենսապահովմամբ մտահոգ յուրաքանչյուրին պարտադրում է տվյալ արժեհամակարգի կրողը և դրանով իսկ՝ պահպանողը լինել«[1]: Հեղինակը կարևոր է համարում բացել այս ընդհանրացման փակագծերը, մատնանշելով, որ հնարավոր չէ տևականորեն ապրել, օրինակ՝ ֆրանսիական մշակութային մթնոլորտում, բայց մնալ հայկական մշակույթի ներկայացուցիչ:

Քննարկելով սփյուռքահայությանը վերաբերող հիմնախնդիրը, Ս.Աղաջանյանը ի սրտե արձանագրում է. «Ինձ միշտ զարմացրել է միամիտ ինքնավստահությունը կամ չիմացությունը Հայաստանից հեռացող այն հայերի, ովքեր համոզված են, որ կարող են օտար մշակութային միջավայրում հայ մնալ»[2]: Ի պատասխան այս հարցին, նա միաժամանակ գրքի ծանոթագրություններում գրում է. «Գիտեմ, որ մեր ցավոտ խնդիրներից է հայության մանավանդ ժամանակակից արտագաղթի հարցը, սակայն տեղը չէ դրա քննարկման: Միայն հընթացս նշեմ, որ, ի տարբերություն մասնագիտական և ոչ մասնագիտական շրջանակներում լայնորեն տարածված տեսակետի, ես դրա պատճառը տեսնում եմ ոչ այնքան սոցիալական հանգամանքների, որքան էթնիկ նկարագրի մեջ: Իսկ դա արդեն ավելի լուրջ հարց է և դարավոր արմատներ ունի՝ ճանաչման համարժեք լրջություն պահանջող: Ուստի իբրև խնդրին ի մոտո նախնական ծանոթություն՝ առաջարկում եմ ընթերցել և քննարկել «Հավելված» բաժնի համապատասխան նյութը» («Արտագաղթի հայկական ֆենոմենը»):

Վերընթերցելով գրքի »Հավելված« բաժնի առաջարկած նյութը, նկատեցինք, որ այստեղ ևս Ս.Աղաջանյանը իրեն դրսևորում է որպես քաջատեղյակ մասնագետ: Պատմությունն սկսելով երկրագնդի բնակեցման նախնական շրջանից, կատարում է հավաստի և ուսանելի ընդհանրացումներ: Նա նշում է արտագաղթի տարբեր պատճառներ, որոնցից ակնհայտ են ազգային, քաղաքական, պատերազմական հանգամանքներից բխած արտագաղթեր: Գիտնականը դրանց զուգահեռ նշում է նաև հասարակության կառավարման, սոցիալական, տնտեսական և նման այլ հանգամանքների պատճառով ծավալվող արտագաղթ, որը տեղի է ունենում ավելի տևական, դանդաղ, իր մասշտաբներով համեմատաբար ուշնկատելի:

Այս բացատրությունների արդյունքում ձեռնարկի հեղինակն ընդգծում է. »Մարդկության պատմությունը լի է ժողովուրդների արտագաղթի բազմաթիվ դրսևորումներով«[3]: Ս.Աղաջանյանը մատնանշում է, որ մեր պատմությունն այդ առումով ցավալիորեն տարբերվում է շատ ու շատ ժողովուրդների պատմությունից, մեզ համար սովորական է դարձել արտագաղթ, գաղթօջախ, գաղթական և նման բառերով անվանվող ցավալի իրողությունները: Այնուհետև ընդգծում է, որ անընդմեջ այդ գործընթացների արդյունքում ձևավորվել է համարյա ողջ աշխարհին ընդգրկող մեր Սփյուռքը: »Ես գիտեմ,- նշում է հեղինակը,- որ աշխարհի քանի ժողովուրդ ունի սփյուռքի հանրագիտարան: Մենք ունենք, և այն ներկայացնում է յոթանասուն երկրներում եղած հայկական գաղթօջախների պատմությունը«[4]:

[1] Նույն տեղում, էջ 23:
[2] Նույն տեղում, էջ 25:
[3] Նույն տեղում, էջ 106:
[4] Նույն տեղում, էջ 106:

Դժվար չէ նկատել, որ անվանի մանկավարժ-գիտնականի վերոնշյալ մտորումները ժողովրդի ազնիվ ու սրտացավ որդու ապրումների արդյունք են: Այլ կերպ չէր կարող լինել:

Ինչ վերաբերում է հայ ժողովրդի ճակատագրի հետ կապված արտագաղթին, կցանկանայինք բերել մեր մոտեցումները, ոչ թե հեղինակի ցավալի կարծիքը բացառելու, այլ ճշտելու այն պատճառները, որոնց արդյունքում արտագաղթը դարձել է մեր ժողովրդի հարատևող չարիքը:

Բերելով արտագաղթի մի շարք օբյեկտիվ պատճառներ, գտնում ենք, որ այն չի կարելի համարել ազգային բնավորության գիծ, էթնիկ նկարագիր:

Փաստերն ու իրադարձությունները ցույց են տալիս, որ արտագաղթը Հայաստանում բառի բուն իմաստով սկիզբ է առնում 6-րդ դարից: Պատճառը մի կողմից Պարսկական բռնապետության, մյուս կողմից՝ Բյուզանդական կայսրության նենգ քաղաքականությունն էր հայ ժողովրդի հանդեպ: Ահա, թե 7-րդ դարի պատմիչ Սեբեոսն ինչպես է ներկայացնում այդ երկրների բռնապետներ Խոսրով Ապրուեզի և Մորիկ կայսրի թշնամական վերաբերմունքը մեր ժողովրդի հանդեպ:

Սեբեոսն իր պատմության ԺԵ գլուխն անվանում է այսպես. »Մորիկի նենգ մտադրությունը՝ թափուր դարձնել Հայաստանը հայ իշխաններից: Հայաստանի հունական մասի բազմաթիվ իշխանների փախուստը պարսիկների մոտ«: Տվյալ վերնագրում բերված »թափուր դարձնել Հայաստանը հայ իշխաններից«, բավական է հստակ պատկերացնել այդ նենգ քաղաքականության ողբերգական արդյունքը:

Սեբեոսն այստեղ բերում է Մորիկ կայսրի խարդախամիտ նամակը՝ Հայաստանի իշխանների և նրանց զորքերի մասին. »Մի խոտոր և անհնազանդ ազգ են… գտնվում են մեր միջև և պղտորում են: Բայց եկ… ես իմոնց հավաքեմ և ուղարկեմ Թրակիա, և դու քոնոնց հավաքիր և հրամայի՛ր տանել արևելք: Որ եթե մեռնեն, թշնամիները մեռնեն, և եթե սպանեն, թշնամիներին սպանեն, և մենք խաղաղ ապրենք: Որովհետև եթե դրանք իրենց երկրում լինեն, մեզ հանգիստ չի լինի«[1]:

Նշված արհավիրքից հետո Հայաստան ներխուժեցին արաբական խալիֆայության հրոսակները: Իսկ թե ինչ է նշանակում այդ ներխուժումը, ցավով նկարագրել են պատմիչներ Հովհան Մամիկոնյանը, Ղևոնդ Պատմիչը, Թովմա Արծրունին, Հովհաննես Դրասխանակերտցին և այլք:

Հայ ժողովրդի տոկունության և նրան հասած չարիքների մասին է պատմում 8-րդ դարի մատենագիր Ղևոնդն իր գրքում: Նա Մուհամմեդին և նրա ուսմունք-պատվիրանը համարում է աննախադեպ ողբերգություն մի շարք ժողովուրդների, այդ թվում նաև հայ ժողովրդի համար: Ղևոնդը գրում է, որ »Քսան տարի իշխանությունը ձեռքում պահելուց հետո մեռավ Մահմետը (632թ.): Դրանից հետո Մահմետի իշխանությունը փոխանորդեցին Աբու Բաքրը, Ամրը և Օթմանը… Նա որոմ սերմանողներին պատվիրել էր. »Ելեք ամբողջ աշխարհի դեմ, նվաճեցեք նրանց ձեր ձեռքի տակ, քանզի մեզ վայելելու համար տրված է երկրի պարարտությունը, կերեք երկրի ընտրյալների միսը և խմեցեք զորավորների արյունը«[2]:

Մուհամմետի այդ պատվիրանից հետո անմիջապես սկսվում են արաբական խալիֆայության ոստիկանների և զորքերի դաժան հալածանքները նաև Հայոց երկրում: Այդ անընդմեջ ոտնձգությունների մասին դարձյալ ցավով է գրում Ղևոնդը. »Մրուանին փոխարինեց Աբդլան, որն ուղարկեց եղբորը, մյուս Աբդլային, շրջելու իր խիզախության բոլոր երկրներում: Սա նախ և առաջ ելավ Հայոց աշխարհը, բազում վշտերով ու նեղությամբ ամենքին տանջեց և չքավոր սնանկության հասցրեց, հարկ պահանջելով մինչև իսկ մեռյալներից«[3]:

Նույնատիպ ահասարսուռ դեպքերի ու արարքների մասին են խոսում Թովմա Արծրունին, Հովհաննես Դրասխանակերտցին և մյուս պատմիչները իրենց մատյաններում:

Արաբական խալիֆայության 300 տարվա ծանր լծից հայ ժողովուրդն ազատագրվեց ու վերականգնեց իր պետականությունը: Կառուցվեցին ու վերականգնվեցին առևտրաշահ քաղաքներ: Անին դարձավ ոչ միայն Բագրատունյաց Հայաստանի հրաշակերտ մայրաքաղաքը, այլև Արևելքի փառավոր ու հեքիաթային խաչմերուկը: Ու թվում էր, թե մեր ժողովուրդը հասել է իր երազած հանգրվանին: Սակայն 11-րդ դարը դարձավ ավելի աղետալի, քան նախորդ դարերն էին: Հեռավոր Ալթայից ու միջինասիական ավազուտներից Հայաստան ներխուժեցին սելջուկ-թուրքական վայրենի ցեղերը, որոնց հաջորդեցին մոնղոլ-թաթարական բարբարոսները: Նոր հայակործան արհավիրքների նկարագրությունների ենք հանդիպում Արիստակես Լուստիվերցու (XI դար), Մատթեոս Ուռհայեցու

[1] Սեբեոս, Պատմություն, Երևան, 2005, էջ 91:
[2] Ղևոնդ, Պատմություն, «Սովետական գրող» հրատ., 1982, էջ 18-20:
[3] Նույն տեղում, էջ 105:

(XI-XII դարեր), Կիրակոս Գանձակեցու (XIII դար), Ստեփանոս Օրբելյանի (XIII դար), Առաքել Դավրիժեցու (XV դար) և մյուս գործիչների մատյաններում:

Հայոց պատմության խաչմերուկային էջերից է Կիլիկիայի Հայոց պատմության ստեղծումն ու պատմամշակութային գործունեությունը:

Կիլիկիայի հայաշեն քաղաքներն ու գյուղերը կրկին ենթարկվեցին ավարի ու ավերի: Բավական է կարդալ Ներսես Շնորհալու »Ողբ Եդեսիո« պատմական պոեմը ու պատկերացնել սելջուկյան դաժանության տիպիկ ներկայացուցիչ Զանգի ամիրայի կողմից 1144թ. Եդեսիայի գրավումն ու կոտորածը:

Ի դեպ, Շնորհալու պոեմն ավարտում է հայրենադարձության կոչով:

Մեր հոդվածի ծավալը հնարավորություն չի ընձեռում հանգամանալից օրինակներ բերել բոլոր պատմիչների մատյաններից: Միայն ընդգծենք, որ հայ ժողովրդի արտագաղթի հիմնական պատճառը օտար բռնապետությունների, երկիր ներխուժած սելջուկ-թուրքական, թաթար-մոնղոլական, թուրքմենական արնախում հրոսակների ու ցեղախմբերի ավերածություններն են:

Ուստի ճիշտ չի լինի արտագաղթը համարել էթնիկական նկարագիր: Ընդհակառակը, զարմանալ կարելի է, թե բազում պատերազմների մահաբեր հարվածներին ոնց է դիմակայել հայ ժողովուրդը ու հասել XXI դար:

Իհարկե, արտագաղթի հարցը քննարկելիս ճիշտ չի լինի այն համարել միայն արտաքին-թշնամական պետությունների ու վայրենի ցեղախմբերի ավերածությունների հետևանք: Արտագաղթին նպաստել են նաև երկրի ներքին գործոնները՝ սոցիալական անտանելի պայմանները, աշխարհիկ ֆեոդալների անմարդկային վերաբերմունքը աշխատավոր մասսաների հանդեպ, վաշխառությունը, տիրակալների ագահությունը, ինչ-ինչ պատճառներով նաև դավաճանությունը և այլն և այլն:

Ս.Աղաջանյանն անդրադառնում է նաև մերօրյա արտագաղթին՝ երևույթը համարելով ցավալի ու աղետաբեր:

Հայ ժողովրդի հանդեպ 1915-23 թվականներին երիտթուրքերի կազմակերպած ցեղասպանությունը ոչ միայն ավելացրեց հայկական գաղթօջախները Սփյուռքում, այլև արևմտահայության փրկված զանգվածներին դարձրեց հայրենազուրկ: Հայոց հայրենապատումի մեջ մտավ »կորուսյալ հայրենիք« հասկացությունը:

Մեր ժողովուրդը բարեբախտաբար ունեցավ Սարդարապատ, 600 տարվա պետականազուրկ ժողովուրդն զգաց պետության վերածննդի արժեքը: Ծանր տարիներ էին: Փոքրիկ-փրկված Հայաստանի տերերը դարձան բոլշևիկյան-լենինյան կուսակցության լիդերները: 1922 թվականին ձևավորվեց ԽՍՀՄ-ը: Մի կողմ թողնելով անհատի պաշտամունքի պատճառով կրած հարվածները, սխալ չի լինի, եթե ընդգծենք, որ սովետական 70 տարիների ընթացքում հայրենի երկիր վերադարձան հայության լայն զանգվածներ, բնակչության թիվը հասավ երեք ու կես միլիոնի: Հայաստանը դարձավ գիտության, արդյունաբերության, գյուղատնտեսության մշակութային աննախադեպ զարգացում ունեցող երկիր:

ԽՍՀՄ փլուզումը համընկավ Արցախյան ազգային ազատագրական պայքարին, 1988-ի ավերիչ երկրաշարժին, 1991-ի սեպտեմբերին Հայաստանի և Արցախի անկախության իրականացմանը: Ծածանվեց եռագույնը հայկական երկու հանրապետություններում:

Սակայն… այս տանջող սակայնը նորից վերածվեց արտագաղթի: Ահա, այստեղ է, որ արտագաղթի հիմնական պատճառը պետք է տեսնել անկախ Հայաստանի ոչ խոհեմ ու ոչ հասուն ղեկավարության անհեռանկար քաղաքականության գործընթացում: Այս նոր ժամանակաշրջանում սկիզբ առած արտագաղթը, թեկուզ ոչ մեծ ծավալներով, ամեն դեպքում շարունակվում է: Երևույթը, իհարկե, ցավալի է: Միևնույն է, այս դեպքում ևս արտագաղթը չի կարելի համարել հայ ժողովրդի էթնիկական նկարագիր: Աշխարհում ոչ մեկը իր լավ կյանքից չի փախչում: Մնում է արտագաղթի պատճառները տնտղել, ստուգել, քննել ու բարձրաձայնել այդ մասին:

Ինչքան էլ հայ գաղթօջախը լինի մարդաշատ, որակյալ, ուժեղ, միևնույն է, նա չի կարող ազդել տվյալ երկրի պետության քաղաքականության, առանձնապես արտաքին երկրների հետ ունեցած քաղաքականության վրա: Վկան ԱՄՆ կառավարող շրջանների ղեկավարների, կոնկրետ նախագահների երկդիմի վերաբերմունքը Հայոց ցեղասպանությունը ճանաչելու հարցում: Նախընտրական օրերին նրանք խոստովանում են ընտրվելու դեպքում քննադատել երիտթուրքերի հանցագործությունը, ճանաչել Հայոց ցեղասպանությունը: Սակայն ընտրվելուց հետո բավարարվում են միայն ապրիլի 24-ին արված ցավակցական հայտարարությամբ:

Աշխարհում երբևէ չի եղել երկիր, որը, իր ցավալիորեն սակավ ազգաբնակչությունից արտագաղթողների այդքան կործանարար քանակ ունենալով, հաջողել է ոչ միայն շեն ու զարգացող լինել, նաև դիմակայել իր վերջնական բնաջնջմանը ձգտող թշնամի հարևաններին:

Աշխարհին է հայտնի, որ 19-րդ դարի առաջին կեսից սկսած հայ բուրժուազիայի ուժերով կառուցվեց Բաքուն ու զարգացավ նրա նավթարդյունաբերությունը: Քաղաքն արագ կառուցվեց, հառնեցին շինարար հայ մարդկանց ձեռքերով շունչ առած մշակութային, կրթական կոթողներ: Դարի վերջին Բաքվում գործում էր 70 հայկական դպրոց: Աշխարհի հայտնի երգիչներն ու դերասանները հանդես էին գալիս մեծահարուստ Մայիլյանի կարողությամբ կերտած օպերայի և բալետի հոյակապ շենքում, Երամյանի անվան հայկական դրամատիկական թատրոնում, շքեղ ֆիլհարմոնիայում: Քաղաքը հայկական էր նաև խորհրդային տարիներին: 400 հազար հայ էր բնակվում այդ հայակերտ-հայաշունչ քաղաքում: Քաղաքի շրջանային կառույցների, գործարանների, ֆաբրիկաների, մշակութային կենտրոնների ուսյալ ղեկավարները հայեր էին: Նույնը կարելի է ասել նաև նորակերտ Սումգայիթի մասին:

Բայց ի՞նչ տեղի ունեցավ 1988թ. փետրվարին՝ Սումգայիթում, 1990-ի հունվարին՝ Բաքվում, ապա Գանձակում, Մինգեչաուրում և այլ հայաշատ բնակավայրերում: Պատրվակ ընդունելով հայ ժողովրդի Արցախյան ազգային ազատագրական պայքարը, ազերի-թուրքերը իրենց նենգամիտ ղեկավարների թողտվությամբ և անմիջական ղեկավարությամբ կազմակերպեցին Հայոց ցեղասպանություն: Այդ հանցագործությունը նոր երևույթ չէր: Դա թուրքական ցեղասպան գենի ժամանակավոր քնած յաթաղանն էր, որ շարժվեց մեր օրերում: Դա շարունակությունն էր 1895-97թթ. ծավալված հայկական կոտորածների, 1915-ի ցեղասպանության, 1918-ի Բաքվի կոտորածների…

Եվ այսօր լսում ենք Ադրբեջանի կառավարող շրջանների հոխորտանքները ոչ միայն իր անկախությունը նվաճած Արցախի, այլև Հայաստանի Հանրապետության դեմ:

Սակայն, ինչքան էլ վայրահաչի մեր հին ու նոր վայրենաբարո հարևան-թշնամին, միևնույն է, հայ ժողովուրդը ցուցաբերելու է իր կենսունակությունը, պահպանելով իր անկրկնելի տեսակը: Նա երբեք չի փախչելու իր երկրից, իր կենսակերպից, նա բարձրաձայնելու է մեր իսկ թերությունների մասին ու երբեք չի հիասթափվելու ինքն իրենից, միշտ պատրաստ է լինելու իրականացնելու իր դարավոր երազանքը՝ անվտանգ, ապահով, բարգավաճող Հայաստան ունենալու վերաբերյալ՝ հանուն իր ապագա հայախոս ու հայաշունչ, տիգրանված ու մաշտոցված, անդրանիկված ու նժդեհված սերունդների:

Ընդհանրացնելով մեր խոսքը Սերգեյ Աղաջանյանի »Լեզուն և գիրը մշակույթի համակարգում« գրքի վերաբերյալ, ի սրտե նշում ենք, որ նման աշխատությունների կարիքը եղել է, կա ու լինելու է մեր նոր սերունդների ճանապարհին:

Տեղեկություններ հեղինակի մասին.
Սոկրատ ԽԱՆՅԱՆ
Բանասիրական գիտությունների դոկտոր,
պրոֆեսոր, Արցախի Հանրապետության
գիտության վաստակավոր գործիչ

Հոդվածը տպագրության է երաշխավորել խմբագրական կոլեգիայի անդամ, բ.գ.դ. Ս.Ա. Խանյանը:

ՀՏԴ 11.15.89 Լրագրություն

ՂԱՐԱԲԱՂՅԱՆ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅԱՆ ԼՈՒՍԱԲԱՆՈՒՄԸ ԲՐԻՏԱՆԱԿԱՆ «THE TIMES» ՊԱՐԲԵՐԱԿԱՆՈՒՄ

Շուշան ԱՍԿԱՐՅԱՆ

Բանալի բառեր: *տեղեկատվություն, բրիտանական մամուլ, ղարաբաղյան հակամարտություն, թերթ, հոդված, հեղինակ, ԶԼՄ, հրապարակում, լսարան:*

Ключевые слова: *информация, британская пресса, карабахский конфликт, газета,статья, автор,СМИ, публикация, аудитория.*

Key words: *British press, Karabakh conflict, newspaper, article, author, Mass-media, publication, audience.*

ОСВЕЩЕНИЕ НАГОРНО-КАРАБАХСКОГО КОНФЛИКТА В БРИТАНСКОМ ИЗДАНИИ «THE TIMES»

Ш.АСКАРЯН

В данной статье подчеркивается позиция известного британского издания «The Times»– и ее проводимая информационная политика в освещении Нагорно-карабахского конфликта, представлены отношение известных журналистов-экспертов. В процессе освещения этого конфликта выявляется ценность британской «качественной» прессы и влияние этого «гиганта» на местную и международную аудиторию.

THE COVERAGE OF THE NAGORNO - KARABAKH CONFLICT IN THE BRITISH NEWSPAPER "THE TIMES"

SH. ASKARYAN

This article emphasizes the position of famous British newspaper "The Times"– and its information policy in the coverage of the Nagorno-Karabakh conflict, presented the attitude of well-known journalists and experts. There is also presented the value of the British "quality" press and the impact of this "giant" on the local and international audience in the course of covering of this conflict.

Սույն հոդվածում կարևորվում է բրիտանական հեղինակավոր պարբերականներից «The Times»–ի դիրքորոշումը և վարած տեղեկատվական քաղաքականությունը ղարաբաղյան հիմնախնդրի լուսաբանման գործում, ներկայացվում հայտնի լրագրող-փորձագետների դիրքորոշումները: Հակամարտության լուսաբանման գործընթացում բացապարզվում է բրիտանական .որակական մամուլի այս «հսկայի» արժեքշիռը և ազդեցությունը տեղական և միջազգային լսարանի վրա:

Մարդկության պատմության մեջ պատերազմական ժամանակները գերակշռել են խաղաղ ժամանակներին, ինչն էլ գրավել է հետազոտողների ուշադրությունը, ձևավորել և զարգացրել այնպիսի առարկայախմբեր, ինչպիսիք են պատերազմի փիլիսոփայությունը, պատերազմի սոցիոլոգիան, պատերազմի հոգեբանությունը, պատերազմի քաղաքագիտությունը և այլն: Սակայն շարունակում են չուսումնասիրված մնալ այս սոցիալ-քաղաքական երևույթի մի շարք ոլորտներ, այդ թվում՝ պատերազմի և զինված հակամարտության շրջանում ԶԼՄ-ների և իշխանությունների փոխազդեցության և փոխներգործության հիմնախնդիրը, լսարանի վրա ԶԼՄ-երի կողմից տարածված տեղեկատվության ազդեցության գործակիցը:

«The Times»-ը[1] (անգլ. «Ժամանակներ») բրիտանական բոլոր տպագիր լրատվամիջոցներից և «որակական» թերթերից ամենահեղինակավորն է ու ամենահինը: Ներկայումս «The Times»-ը

[1] «The Times»-ը հիմնադրվել է Ջոն Ուոլթերի կողմից 1785 թվականին ու սկզբնապես ունեցել է «The Daily Universal Register» («Ամենօրյա համընդհանուր գրանցում») անվանումը: Ուոլթերն էլ հենց ստանձնեց խմբագրի պաշտոնը: 1788թ. հունվարի 1-ին 940 հրատարակությունների լույսընծայումից հետո անվանումը փոխվեց ,The Timesե-ի: 1830թ. Ջոն Ուոլթերը թերթի խմբագրի ու կառավարչի պաշտոնը հանձնեց որդուն՝ նույնպես Ջոն Ուոլթերին: Իր լրագրողական գործունեության համար հետնորդը տուժել է. 16 ամիս անցկացրել է Նյուգեյթյան բանտում թերթում տպագրված զրպարտության համար, բայց հենց նրա՝ մայրցամաքային Եվրոպայից, մասնավորապես Ֆրանսիայից, նորություններ հավաքելու ջանքերի շնորհիվ թերթը շուտով բարձր համբավ ձեռք բերեց ֆինանսական ու քաղաքական բարձրագույն շրջանակներում: Շուտով որպես թերթի հոդվածների հեղինակներ սկսեցին հանդես գալ քաղաքականության, գիտության, գրականության ու արվեստի նշանավոր գործիչներ: Իր գործունեության վաղ շրջանում թերթը գրեթե չէր զգում մրցակցություն ու հանդիսանում էր շատ շահութաբեր

լրիվությամբ պատկանում է News Corporation-ին, որի ղեկավարը Ռուպերտ Մերդոկն է: Թերթն ունի կիրակնօրյա տարբերակ՝ ,The Sunday Timesն: Աշխարհի մի շարք թերթեր «The Times»-ից փոխառել են անվանումը, ինչպես օրինակ՝ « New York Times», «Times of India» և այլն:

1999թ. մարտից «The Times» ու «The Sunday Times» թերթերը հասանելի են համացանցում՝ սկզբից տեղադրվում էին the-times.co.uk ու sunday-times.co.uk կայքէջերում, հետո միասին timesonline.co.uk կայքում: Այնուհետև նորից առանձնացան ու հիմա օրաթերթը հասանելի է thetimes.co.uk հասցեով, իսկ կիրակնօրյա տարբերակը՝ thesundaytimes.co.uk[1] : Ներկայումս թերթի գլխավոր խմբագիրը Ջոն Վիզերովն է, թերթի տպաքանակը՝ 396,621 օրինակ[2] :

Մինչ ապրիլյան իրադարձությունները բրիտանական այս պարբերականը հաճախ էր տեղադրում Արցախի մասին հրապարակումներ. կայքի որոնման արդյունքում «karabakh» բառը հանդիպում ենք 112 նյութերում, որոնցից 98-ը՝ «The Times»-ում և 14-ը համապատասխանաբար՝«The Sunday Times» -ում[3]:

«The Times»-ի էջերում ապրիլյան պատերազմին առաջինը արձագանքել է Թոմ Փարֆիթը[4] ապրիլի 4-ին իր ,Dozens dead as old conflict flares up again in Caucasusն («Տասնյակ զոհեր Կովկասում կրկին բռնկված հին հակամարտության արդյունքում»)[5] հրապարակման մեջ , երբ անգլիական ամենահեղինակավոր թերթերից մեկի լսարանին հեղինակը խնդիրը սկսում է ներկայացնել այս նախադասությամբ. «Dozens of people have been killed after heavy fighting broke out in a separatist region of Azerbaijan over the weekend, reigniting a century-old conflict and threatening to provoke a regional flare up in the south Caucasus» («Տասնյակ մարդիկ սպանվել են, երբ շաբաթավերջին Ադրբեջանի անջատողական տարածաշրջանում բռնկվել են ծանր մարտեր՝ կրկին հարուցելով դարավոր հակամարտություն ու սպառնալով Հարավային Կովկասում հրահրել տարածաշրջանային բռնկում»): Փարֆիթը Ղարաբաղը ներկայացնում է որպես Ադրբեջանի արևմտյան մասում 1994 թվականից ի վեր Հայաստանի կողմից վերահսկվող տարածաշրջան: Այնուհետև աշխարհաքաղաքական համատեքստում ներկայացնում երկու կողմերին սատարող ուժերին: Մահմեդական Ադրբեջանին սատարում է Թուրքիան, իսկ քրիստոնյա Հայաստանն ու Ռուսաստանն ունեն ուժեղ կապեր՝ չնայած վերջինս զինամթերք վաճառում է հակամարտ կողմերին:

Խոսելով Հայաստանի ու Ադրբեջանի կրած մարդկային կորուստների մասին՝ հեղինակը մատնանշում է, որ կողմերից յուրաքանչյուրը սեփական կորուստներն ավելի քիչ է ներկայացնում: Ավելին՝ Փարֆիթը անդրադառնում է անդրբեջանական կողմի հայտարարություններին, շեշտելով այն փաստը, որ «նավթահարուստ Ադրբեջանը բազմիցս սպառնացել է հետ վերցնել իր տարածքները, բայց երբեք չի ձեռնարկել լայնածավալ ներխուժում» («Oil-rich Azerbaijan has regularly threatened to take back the territory but has never launched a full-scale invasion»): Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիևի հայտարարություններից հեղինակն առանձնացնում է այն, որ «մեծ հաղթանակ է ձեռք բերվել, ու Հայաստանը լավ դաս է քաղել: Եթե հայ զինվորները չեն ուզում մեռնել, ապա պետք է լքեն ադրբեջանական տարածքները» («If the Armenian soldiers don't want to die, they should leave Azeri land»):

Հրապարակման մեջ խոսելով նաև ՌԴ նախագահ Վլադիմիր Պուտինի, Գերմանիայի արտգործնախարար Ֆրանկ-Վալտեր Շտայնմայերի, ԱՄՆ պետդեպարտամենտի ու Թուրքիայի նախագահ Ռեջեփ Թայիփ Էրդողանի կոչերի մասին՝ հեղինակը մանրամասնում է. ,"We will support Azerbaijan to the end." He added: "We pray our Azerbaijani brothers will prevail in these clashes with the

---

ձեռնարկություն: Հենց դրա շնորհիվ էլ թերթը ի վիճակի էր իր հեղինակներին ու տեղեկատվության աղբյուրներին վճարել ավելին, քան այլ հրատարակություններ:

[1] 2010թ. հուլիսից թերթի առցանց տարբերակը լրիվությամբ հասանելի է միայն թերթի բաժանորդների համար. Իսկ կայքէջի այցելուների համար վճարը կազմում է շաբաթական 2 ֆունտ: Երբ NewsUK կազմակերպությունը սահմանել է այս բաժանորդավճարը, կայքի այցելությունը նվազել է 87%-ով՝ 21 մլն օրական այցելուներից հասնելով 2,7 մլն-ի: 2011թ. հոկտեմբերին թերթի վճարովի առցանց տարբերակը ուներ 111.000 բաժանորդ:

[2] 2015թ հունվարի տվյալներ - https://en.wikipedia.org/wiki/The_Times

[3] http://www.thetimes.co.uk/tto/public/sitesearch.do?querystring=karabakh&p=tto&pf=all&bl=on

[4] ,The Timesն-ի մոսկովյան թղթակից - https://twitter.com/parfitt_tom

[5] http://www.thetimes.co.uk/article/from-moscow-nagorno-karabakh-fighting-copy-c3j6gv823

least casualties”ն («Մենք կաջակցենք Ադրբեջանին մինչև վերջ: Մենք աղոթում ենք, որ մեր ադրբեջանցի եղբայրները գերակայեն այս բախումներում ամենաքիչ զոհերով»): Վերջում հեղինակը ներկայացնում է Քարնեգի համալսարանի լրագրող Թոմաս դե՛ Վաալի կարծիքն այն մասին, որ հնարավոր է այդ հակամարտությունը հրահրել է Ռուսաստանը, ԱՄՆ-ին՝ որպես խաղարարարի վարկաբեկելու համար (խոսքն այն մասին է, որ Վաշինգտոնում չի հաջողվել կազմակերպել երկկողմ հանդիպում):

Թոմ Փարֆիթի՝ ապիլյան իրադարձությունների վերաբերյալ հաջորդ՝«Stakes are high as war flares again in Armenian enclave»[1] («Խաղադրույքները մեծ են, քանի որ պատերազմը կրկին բռնկվեց հայկական անկլավում»[2], ապրիլի 9, 2016թ., Թալիշ) վերնագրված հոդվածում բարդ հակամարտությունը բացահայտվում է մարդկային պատմության միջոցով: Թալիշի 52-ամյա գյուղապետ Վիլեն Պետրոսյանը ամեն տարի իր ծննդյան օրը նշում էր մեծ թվով ընկերների ու բարեկամների հետ, այս տարի էր «The cake was baked, the wine stood ready and lamb was soaking in marinade» («Տորթը թխված էր, գինին՝ պատրաստ, գառանը միսն էլ՝ մարինացված»), երբ գիշերը ժամը երեքին հրետանու ձայնից նրանք արթնացան ու ստիպված լքեցին իրենց գյուղը: Փարֆիթը մտավախություն է հայտնում, որ այս պատերազմը կարող է ներքաշել Թուրքային ու Ռուսաստանին, մանավանդ, երբ այդ երկուսի հարաբերությունները սրված են ռուսական ՍՈՒ-26-ը Թուրքայի կողմից խոցելուց հետո[3]: Հեղինակը մի քանի կարևոր փաստ է ներկայացնում Թալիշի դեպքերից: Հրապարակումը փաստում է նաև Թալիշում 60-ամյա ամուսինների ու նրանց 92-ամյա մոր խոշտանգված մարմինների մասին տեղեկությունը. «The Times saw photographs of the corpses which showed they were mutilatedե (««The Times»-ը խմբագրակազմը տեսել է այն լուսանկարները, որոնցում ակնհայտ երևում են այլանդակված դիերը»): Փարֆիթը ասում է, որ չեն ապացուցվել հայ զինվորների մարմինների խոշտանգման դեպքերը: Այնուհետև ներկայացնում է հայ գրող, հասարակական և քաղաքական գործիչ, սպորտի մասնագետ, սպորտային բժիշկ, լրագրող և ճանապարհորդ Զորի Բալայանի, ԼՂՀ արտգործնախարարի տեղակալ Ֆելիքս Խաչատրյանի ու Հայ առաքելական եկեղեցու Արցախի թեմի առաջնորդ Պարգև սրբազան արքեպիսկոպոսի կարծիքները: Վերջինիս արտահայտությամբ էլ եզրափակում է հրապարակումը. «Pointing from his church down at the graves, and a wide stretch of grass leading downhill, he added: “Look how many pages are left to be filled”» («Ցույց տալով եկեղեցուց դեպի գերեզմաններ ու լանջից ներքև տանող լայն խոտածածկ շերտը՝ նա ավելացրեց ,Նայեք, թե որքան էջեր են մնացել լրացվելու համարե ե):

Ղարաբաղի մասին հրապարակումների հեղինակներից Թոնի Հալփինը՝ «Blommberg News»-ի՝ Ռուսաստանի և նախկին խորհրդային երկրների բյուրոյի գլխավոր խմբագիրը[4], ով մինչ այդ զբաղեցնում էր «The Times»-ի՝ Ռուսաստանի և ԱՊՀ երկրների բյուրոյի ղեկավարի պաշտոնը, մասնավորապես 2012թ. սեպտեմբերի 5-ին «Spark that could re-kindle conflict frozen in the past»[5] («Կայծ, որ կարող է բոցավառել անցյալում սառեցված հակամարտությունը») վերնագրով հոդվածում թռուցիկ ներկայացնում է ղարաբաղյան հակամարտության սկզբնավորման պատմությունը՝ հասցնելով այն մինչև ներկա ժամանակներ. “Christian Armenia and Muslim Azerbaijan have heavyweight patrons. Russia has a mutual defence pact with Armenia, while Nato member Turkey backs its ethnic kin in Azerbaijan” («Քրիստոնեական Հայաստանն ու մահմեդական Ադրբեջանը ունեն ծանրակշիռ հովանավորներ: Ռուսաստանը Հայաստանի հետ ունի փոխադարձ պաշտպանության դաշինք, մինչդեռ ՆԱՏՕ-ի անդամ Թուրքիան սատարում է իր էթնիկ ազգակցին՝ Ադրբեջանին»): Հեղինակը մտահոգություն է հայտնում, որ ընդամենը վեց ամիս առաջ մինչև վերընտրություն ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանը անընդհատ ճնշվել է ազգայնականների կողմից, որոնք պահանջում են ճանաչել ԼՂՀ անկախությունը: “Azerbaijan would respond with a declaration of war, potentially

[1] http://www.thetimes.co.uk/article/nagorno-karabakh-copy-kc68flbsz
[2] .երկրի ներսում գտնվող տարածքե
https://hy.wikipedia.org/wiki/%D4%B1%D5%B6%D5%AF%D5%AC%D5%A1%D5%BE_%D6%87_%D5%A7%D6%84%D5%BD%D5%AF%D5%AC%D5%A1%D5%BE
[3] http://armtimes.com/hy/article/74488
[4] https://twitter.com/tonyhalpin?lang=ru
[5] http://www.thetimes.co.uk/tto/news/world/europe/article3528387.ece

destabilising the whole region". («Ադրբեջանը կարձագանքի պատերազմ հայտարարելով, ինչը կապակայունացնի ողջ տարածաշրջանը»): Վերոնշյալ նյութում Թոնի Հալփինը փորձում է չեզոքություն պահպանել ղարաբաղյան հարցում՝ իր դիրքորոշումը ներկայացնելով հետևյալ նախադասությամբ . "Armenia insists on the enclave's right to self determination and Azerbaijan demands respect for its territorial integrity" («Հայաստանը պնդում է ազգերի ինքնորոշման իրավունքը, իսկ Ադրբեջանը պահանջում է հարգանք առ իր տարածքային ամբողջականություն»): Իր ,A game in which everyone has something to loseե («Խաղ, որում յուրաքանչյուրը ունի կորցնելու բան» 2012թ, փետրվարի 11»)[1] հրապարակման մեջ, որը նվիրված էր ադրբեջանական նավթային բիզնեսին, հեղինակը ավելի շատ ադրբեջանական կողմի դիրքորոշմանն է հարում. "Azerbaijan has a large western region under Armenian occupation since a military defeat in the mid-1990s that caused a flood of refugees into the capital, Baku" («Ադրբեջանը 1990-ականների կեսերին ռազմական պարտությունից հետո հայերի կողմից օկուպացված հսկա արևմտյան տարածաշրջան ունի, ինչը առաջացրել է փախստականների մեծ հոսք դեպի երկրի մայրաքաղաք Բաքու»): Հավելենք, սակայն, որ 2013թ օգոստոսին Ադրբեջանի արտգործնախարարության կողմից հրապարակված 335 հոգանոց սև ցուցակում կար նաև Թոնի Հալփինի անունը, ինչի կապակցությամբ բրիտանացի լրագրողն իր թվիթերյան էջում գրել էր. «Անցյալ տարի «Եվրատեսիլ»-ի շնորհիվ ես հասցրեցի տեսնել Բաքուն: Հիասքանչ քաղաք, բարեհամբույր մարդիկ և սարսափելի վարչակազմ» [2]:

Ուշադրության է արժանի Ֆիլիպ Մարսդենի[3] «PhD? I'd rather to be a terrorist»[4] («Գիտությունների թեկնածու՞: Կնախընտրեմ լինել ահաբեկիչ», 2005թ., մարտի 12) հոդվածը՝ նվիրված է Մոնթե Մելքոնյանի կյանքին ու գործունեությանը: Որպես հիմք վերցված է Մարգար Մելքոնյանի անգլերեն հրատարակված ,My brother's road: An American's Fateful Journey to Armeniaե («Իմ եղբոր ճանապարհը. ամերիկացու ճակատագրական ճամփորդությունը Հայաստան») կենսագրական գիրքը (2005թ)[5]: "From Berkeley graduate to Armenian freedom fighter is a small step when history is on your side" («Բերքլի շրջանավարտից մինչև հայ ազատամարտիկ կարճ քայլ է, եթե պատմությունը քո կողմից է») ենթավերնագրով սկսվող հոդվածը միանգամից շարունակվում է հեղինակի անձնական զգացումներով, երբ նա ցավում է, որ ժամանակին չհասցրեց. "I was too late. He was already dead. It was the summer of 1993 and I had come to the Armenian front line to interview Monte Melkonian" («Ես ուշացել էի: Նա արդեն մահացած էր: Դա 1993- ի ամառն էր, երբ ես եկա հայկական շփման գիծ հարցազրույց վարելու Մոնթե Մելքոնյանի հետ»): Հեղինակը նշում է, որ իր համար առավել հետաքրքիր էր այն փաստը, որ ի տարբերություն 4000 զինյալների, որոնց ղեկավարում էր Մոնթեն, նա 70 տարի չի ապրել Խորհրդային իշխանության տիրապետության տակ՝ "He was from California brought up in the most liberal state in the Union" «Նա ծնվել է Կալիֆոռնիայում՝ Ամերիկայի ամենաժողովրդավար նահանգում»: Մարսդենը իր նյութը սկսում է ծայրահեղականների մասին պատումից, որ ի տարբերություն սովորական մահապարտների, որոնք կյանքից բացի ոչինչ չունեն կորցնելու, կա ծայրահեղականների մի այլ տեսակ, որը թողնում է ապահով կյանքն ու բարձրագույն կրթությունը հանուն գաղափարների: Վերջիններիս շարքին հեղինակը դասում է Մոնթեին ու ասում , որ "There began a 15-year odyssey that ended, cheek-down, on a dusty road in Armenian-occupied Azerbaijan" («Միջին Արևելքից սկսվեց նրա «ոդիսականը», որն ավարտվեց Հայաստանի կողմից օկուպացված Ադրբեջանի փոշոտ ճանապարհին»): Նույն գաղափարախոսությամբ Մարսդենը շարունակում է պատումը ու, խոսելով ղարաբաղյան հակամարտության սկզբնավորման մասին, ասում. "In the mountains, Armenian villagers took up hunting rifles to defend their homes and attack their Azeri neighbours" («Լեռներում հայ գյուղացիները վերցրեցին իրենց որսորդական հրացանները՝ պաշտպանվելու և հարձակվելու հարևան ադրբեջանցիների վրա»):

Այնուհետև հեղինակը ներկայացնում է, թե ինչպես Մելքոնյանը, դիմելով իր զինակիցներին, ասել էր. "Lose Karabakh," he said, "and you will be turning the last page of Armenian history" («Եթե

[1] http://www.thetimes.co.uk/tto/news/world/europe/article3316649.ece
[2] http://www.azatutyun.am/a/25066053.html
[3] Անգլիացի ճամփորդագիր ու վիպասան
[4] http://www.thetimes.co.uk/tto/arts/article2397151.ece
[5] http://armeniapedia.org/wiki/My_Brother's_Road:_An_American's_Fateful_Journey_to_Armenia

կորցնենք Ղարաբաղը, կթերթենք մեր պատմության վերջին էջը»): Մարսդենը գտնում էր, որ Մելքոնյանը վախենում էր այդ փաստից, քանի որ մտածում էր, որ սեղմված լինելով Թուրքիայի ու թուրքական Ադրբեջանի միջև՝ հայերը կքշվեն իրենց վերջին հողակտորից, ու 1915թ. աշխատանքը կավարտվի: Վերոնշյալ միտքն էլ ամփոփում է այն եզրակացմամբ, որ անցյալի հանդեպ «բողոքն իր արձագանքն է գտել Խորհրդային միությունում ու Մերձավոր Արևելքում» («His drawing on the grievances of the past was finding echoes throughout the old Soviet bloc and in the Middle East»):

Ի տարբերություն Թոնի Հալփինի ու Ֆիլիպ Մարդսենի՝ Միշել Բինյոնի[1] հայ-թուրքական հարաբերություններին նվիրված «A promise of peace in the shadow of Ararat»[2] («Խաղաղության խոստումը Արարատի ստվերում», 2009թ, ապրիլի 16) հոդվածում Ղարաբաղը ներկայացվում է ոչ թե որպես ,օկուպացվածե տարածք, այլ «էթնիկապես հայկական տարածաշրջան»: Հեղինակը գտնում է, որ հայ-թուրքական բաց սահմանը կարող է օգնել նաև «to thaw one of the last "frozen conflicts" in Europe's backyard» («հալեցնել Եվրոպայի բակում «սառեցված հակամարտության» վերջիններից մեկը»):

Ադամ Լեբորն[3] իր ,War threat after axe murderer returns home to freedom and hero's welcome: Armeniaե[4] («Պատերազմի վտանգ՝ կացնով սպանողին դեպի ազատություն տուն վերադարձնելուց ու հերոսական ողջունումից հետո. Հայաստան», 2012թ., սեպտեմբերի 5) հրապարակման մեջ Ղարաբաղն անվանում է ,Ադրբեջանի կազմում գերազանցապես հայկական տարածաշրջանե[5]: Հոդվածը վերաբերում էր Հունգարիայի՝ Ռամիլ Սաֆարովին Ադրբեջանին հանձնելու որոշմանը ու նույն կապակցությամբ ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանի հայտարարությանը:

Ապրիլյան պատերազմի վերաբերյալ վերջին հրապարակումը կատարվել է «The Sunday Times»-ի էջերում ապրիլի 10-ին, 2016թ: «Former Soviet states on brink of renewing war»[6] (,Նախկին խորհրդային երկրները վերսկվող պատերազմի եզրին») հոդվածի համահեղինակները Մարկ Ֆրանչետին[7] ու Դմիտրի Բելյակովն[8] են: Վերջինիս՝ արցախյան ֆոտոռեպորտաժը ուղեկցվում է Ֆրանչետիի տեքստով: Հեղինակը սկսում է Քյարամ Սլոյանի[9] մասին պատմությամբ՝ փաստորեն շարունակելով Թոմ Փարֆիթի հոդվածը ու փաստելով հայ զինվորների դիակների խոշտանգումը: Այնուհետև նշում է, որ ըստ հայր Թերմինազի, ով Մատաղիսում գլխավորել է հուղարկավորությունը, Հրանտ Ղարիբյանի[10] դիակը ևս գլխատված էր: Հեղինակը նշում է նաև Վալերա և Ռազմելա Խալափյանների[11] գազանաբար սպանությունը, Վաղարշակ Գրիգորյանի սպանությունը ու նրա երկվորյակ եղբոր վիրավորումը[12] դպրոց գնալու ճանապարհին:

Ֆրանչետին խորը ցավով գրում է, որ «Sloyan's fate was a stark reminder of the deep hatred» («Սլոյանի ճակատագիրը խորը ատելության դաժան հիշեցում էր»): Իսկ Սլոյանի հարազատ Արտաշավան գյուղում բնակիչները հեղինակին վրեժխնդիր լինելու խոստում են տալիս. «Come back here next week and we'll show you ten Azeri severed heads. He died a martyr. We all know how to fight and this won't end like this» («Վերադարձիր հաջորդ շաբաթ, ու մենք ցույց կտանք քեզ ադրբեջանցիների տասը կտրված գլուխներ: Նա նահատակվել էր: Մենք բոլորս գիտենք կռվել, ու դա չի վերջանա այս կերպ»):

---

[1] Բրիտանացի լրագրող, ,The Timesե-ի հայտնի արտասահմանյան թղթակից, նույն թերթի առաջնորդ գրող ու արվեստի ու գրքերի քննադատ

[2] http://www.thetimes.co.uk/tto/law/columnists/article2048719.ece

[3] բիտանացի հեղինակ, վիպասան ու լրագրող

[4] http://www.thetimes.co.uk/tto/news/world/europe/article3528376.ece

[5] ադրբեջանցի մարդասպան, ով հայտնի է դարձել Բուդապեշտում իր կատարած հանցագործության՝ հայկական բանակի լեյտենանտ Գուրգեն Մարգարյանի դաժան սպանության պատճառով

[6] http://www.thetimes.co.uk/article/former-russian-states-on-brink-of-renewing-war-p03fmmc5j

[7] The Sunday Timesե-ի մոսկովյան թղթակից - https://en.wikipedia.org/wiki/Mark_Franchetti

[8] Ռուս ֆոտոլրագրող - https://en.wikipedia.org/wiki/Dmitry_Beliakov

[9] ,Մարտական խաչե առաջին աստիճանի շքանշանակիր – https://hy.wikipedia.org/wiki/%D5%94%D5%B5%D5%A1%D6%80%D5%A1%D5%B4_%D5%8D%D5%AC%D5%B8%D5%B5%D5%A1%D5%B6

[10] http://hetq.am/arm/news/66997/hraparakvum-en-zoheri-anunnery-tarmacvox.html

[11] http://www.tert.am/am/news/2016/04/09/talish/1987017

[12] https://armenpress.am/arm/news/844147/

Խոսելով հակամարտության կարգավորման մասին՝ Ֆրանչեսկին նշում է, որ հրադադարի մասին համաձայնությունը քաղաքական ոչ մի լուծում չտվեց պայթունավտանգ էթնիկական վեճին: «The region's majority ethnic Armenian population declared an independent state which Azerbaijan rejects» («Տարածաշրջանի մեծամասնություն հանդիսացող էթնիկ հայ բնակչությունը հռչակեց անկախ պետություն, ինչն Ադրբեջանը մերժում է»):

Հեղինակը ուրվագծում է նաև քաղաքական ընդհանուր պատկերը՝ սատարող քաղաքական ուժեր՝ ի դեմս Ռուսաստանի ու Թուրքիայի: Ըստ Ֆրանչեսկիի շատ քաղաքական դիտորդներ հակամարտության սրացման մեջ մեղադրում են Ադրբեջանին: Ներկայացնելով Հարվարդի համալսարանի գիտական աշխատակից ու ծնունդով ղարաբաղցի Սիմոն Սարադզյանի ու ռուս քաղաքական վերլուծաբան Օլեգ Վոլոշինի կարծիքները՝ հոդվածագիրն իր հրապարակումը եզրափակում է Մարտակերտի բնակչի խոսքերով. «No one has forgotten the misery and brutality of the first war. When our enemy comes again, we'll send them back in coffins. If they don't leave us alone we'll bring this war all the way to Baku. It's far from over» («Ոչ ոք չի մոռացել առաջին պատերազմի տառապանքն ու դաժանությունը: Երբ մեր թշնամին կրկին գա, մենք նրանց հետ կուղարկենք դագաղներով: Եթե նրանք մեզ հանգիստ չթողնեն, մենք այս պատերազմը դեպի Բաքու տանող ճանապարհ կհասցնենք: Սա հեռու է վերջից»):

ԶԼՄ-ների միջոցով հեղափոխությունների, լարված քաղաքական իրավիճակների և ռազմական գործողությունների մասին տեղեկատվությունը լրացվում է հանրային քննարկումների պակասը: Հակամարտության լուսաբանման գործընթացում բացապարզվում է բրիտանական այս լրատվամիջոցի արժեկշիռը և ազդեցությունը լսարանի վրա: Այս համատեքստում կարևորվում է իշխանությունից հասարակությանը փոխանցված տեղեկատվության ճշգրտությունը և այն, թե զանգվածային լրատվամիջոցը որքան լիարժեք է կատարում իր՝ հանրության քաղաքական կյանքի կարգավորողի գործառույթները: Թերևս սա է պատճառը, որ անհրաժեշտ է վերարժևորել ԶԼՄ-ների դերը ռազմական-քաղաքական հաղորդակցության ոլորտում, ինչն էլ թույլ կտա գնահատել ԶԼՄ-ների դերը ռազմական հակամարտության տարբեր շրջափուլերում, որոշել լրագրության մասնակցության աստիճանը հասարակական գիտակցության և մշակույթի մեջ պատերազմի ձևավորման և վերջնական ամրապնդման գործում:

Տեղեկություններ հեղինակի մասին.

Ծուշան Ակարյան *- ԱրՊՀ գրականության և լրագրության ամբիոնի վարիչ, բանասիրական գիտությունների թեկնածու, ավագ դասախոս*
shush22@yandex.ru

Հոդվածը տպագրության է երաշխավորել խմբագրական կոլեգիայի անդամ, բ.գ.դ. Ս.Ա. Խանյանը:

ՀՏԴ 82.09 Գրականագիտություն

ԱՍՏՎԱԾԱՇՆՉՅԱՆ ՄՈՏԻՎՆԵՐԸ ԵՂԻՇԵ ՉԱՐԵՆՑԻ ՄԱՀՎԱՆ ՏԵՍԻԼՆԵՐՈՒՄ

Անի ՇԻՐԻՆՅԱՆ

Բանալի բառեր: *Աստվածաշունչ, քրիստոնեական մտածողություն, մարգարե, տեսիլ, անողոք պատկեր, հոգու սարսուռ, սարսափների աշխարհ, մահվան մշուշ, զոհաբերություն, մղձավանջ, սատանայի քրքիջ:*

Ключевые слова: *Библия, христианское мировоззрение, пророк, видение, жестокий образ, трепет души, мир страхов, туман смерти, жертвоприношение, кошмар, хохот сатаны.*

Key words: *The Bible, Christian thinking, prophet, vision, cruel image, soul shivering, world of horrors, death sight, sacrifice, nightmare, Demon chuckle.*

БИБЛЕЙСКИЕ МОТИВЫ В СМЕРТЕЛЬНЫХ ВИДЕНИЯХ ЕГИШЕ ЧАРЕНЦА

А. ШИРИНЯН

Чаренц жил и творил в такой реальности, где слышен был хохот дьявола. Смерть стала ужасной реальностью для поэта, заставляя его с тревогой думать о будущем. И хотя отношение Чаренца к Богу было, главным образом, отрицательным, в его работах нашли место различные библейские мотивы. Постепенно усиливающееся чувство надвигающейся трагедии вторглось в душу поэта, приспособилось и осталось... Призрак смерти преследовал поэта до конца жизни.

THE BIBLICAL MOTIVES IN EGHISHE CHARENTS'S DEATH SIGHTS

A. SHIRINYAN

Charents lived and created in such a reality where Demon chuckle was heard. The death had become a terrible reality with its maskless face, a usual day which made the poet think about future trapidly. And despite Charents's behaviour was rejecting towards God, nevertheless, different biblical motives are found in his works. The gradually thickened tragedy emerged into poet's soul, adopted there and remained... The sight of death followed him till the end of his life.

Չարենցն ապրեց ու ստեղծագործեց մի այնպիսի իրականության մեջ, ուր լսելի էր սատանայի քրքիջը: Մահն իր անդիմակ երեսով դարձել էր սարսափելի իրականություն, առօրյա՝ ստիպելով բանաստեղծին՝ տագնապով մտածել ապագայի մասին: Ու չնայած Չարենցի վերաբերմունքն Աստծո հանդեպ հիմնականում մերժողական էր, այնուամենայնիվ, նրա երկերում տեղ են գտել սուրբգրային տարբեր մոտիվներ: Հետզհետե թանձրացող ողբերգությունը ներխուժեց բանաստեղծի հոգին, հարմարվեց, մնաց... Մահվան տեսիլը հետապնդեց նրան մինչև կյանքի վերջ:

Ասվածաշնչի Ծննդոց գրքի հենց սկզբում «լսվում է» Աստծո խոսքը՝ «Եւ Աստուած ասեց», «Եւ Եհովան ասեց», իսկ ԺԲ գլխում Աստված երևում է մարդուն. «Եւ Եհովան երեւեցաւ Աբրամին եւ ասեց. Քո սերունդին պիտի տամ այս երկիրը: Եւ նա այն տեղ սեղան շինեց Եհովայի համար, որ իրան երեւեցաւ» (Ծննդոց, ԺԲ-7)[1]: Ասել է, թե՝ երկրի վրա առաջին տեսիլը հենց ինքը՝ Աստված էր:

Եղիշե Չարենցի բանաստեղծական մկրտությունը կայացավ մի այնպիսի ժամանակահատվածում ու այնպիսի մթնոլորտում, երբ և որտեղ տեսիլը ծավալվում ու դառնում էր իշխող: Տեսիլները բանաստեղծին սկսել են «հետապնդել» հենց առաջին ստեղծագործություններից: «Երեք երգ»-ի բանաստեղծական սյուժեն ունի ինքնակենսագրական հիմք: Ստեղծագործական կյանքի այսքան տխուր սկիզբը փաստում է ժամանակի մղձավանջային ու անհեռանկար օրերի մասին: Անէացել են անցյալի սիրո սուրբ կարոտներն ու երազները, այլևս չկա երջանկության ոչ մի առասպել, ոչ մի սրբություն: Ու բանաստեղծը կարծես հանձնվում է.

Թող կյանքը գլխիս մրրիկներ տեղա
Ու մոխիր ցանի –

[1] Մեջբերումներն Աստվածաշնչից կատարված են Ստոկհոլմի 1989 թվականի Աստվածաշնչի թարգմանության ինստիտուտի հրատարակությունից:

Էլ ո՛չ մի զոջում իմ երազը հին
Հետ չի դարձնի…[1]

Գլխին մոխիր (հող, հող ու մոխիր) ցանել արտահայտությունը գալիս է Աստվածաշնչից, որ նշանակում է ողբալ, կոծել, խոր վիշտ ապրել. «Եւ հեռուանց բարձրացրին իրենց աչքերը եւ նորան չ'ճանաչեցին, եւ իրանց ձայնը բարձրացնելով լացին. եւ ամէն մէկն իր պատմուճանը պատառելով՝ հող ցանեցին իրանց գլխներին դէպի երկինքը» (Յոբի, Բ-12):

«Գլխին մոխիր ցանել» արտահայտությանը հանդիպում ենք նաև 1933 թվականին գրված «Մահվան տեսիլ»-ում. «Եվ լուսինը, ի վերուստ տրված իր ժպիտը անդարձ մոռացած,// Սկըսեց քրքջալ և վերից մեր գլխին պաղ մոխիր թափել...»:

Սակայն այն, ինչ տեսավ 19-ամյա Չարենցը սեփական աչքերով («Դանթեական առասպել»), պահված մնաց իր ուղեղի ծալքերում մինչև կյանքի վերջ: Դժոխային ինչպիսի՜ պատկերներ, մարդկային կյանքի զարգանդոտ ավարտներ… Սա արդեն մահվան տեսիլը չէր, սա իրական մահն էր, որ ամբողջությամբ տարբերվում էր բանաստեղծի՝ այդ երևույթի մասին ունեցած պատկերացումներից: Հոգին մռայլվեց՝ տեսնելով ճամփին ընկած առաջին դիակը: Հօդս ցնդեցին բոլոր երազները.

Երկա՜ր կանգնեցինք: Մի զինվոր-ընկեր,
Դիակն հրելով, խնդաց խելագար:
Բայց չէ՞ որ նա՛ էլ կրել է զենքեր,
Եղել է մեզ պես կյանքի սիրահար:
Ես մտածեցի՝ գնում ենք մենք էլ
Այսպիսի դիակ դառնալու համար:[2]

Ակամայից հիշում ես Սուրբ Գրքի օրենքներից մեկը. «Եւ օտարականին մի նեղիր. դուք էլ գիտէք օտարականի սիրտը. որովհետեւ Եգիպտոսի երկրումը օտարական էիք» (Ելից, ԻԳ-9):

Արդեն լսելի է սատանայի քրքիջը: Սակայն Չարենցը երես չի թեքում մարդուց, այլ կանչում է դարձի: Նրա մարդասիրության ակունքը սահմաններ չունի: Չարենցն ուղիղ նայեց մահվան աչքերի մեջ ու սարսռաց, սակայն չխեղաթյուրվեց նրա բանականությունը: Ավելին, նա հոգու խորքում լուռ ուխտում էր՝ «Լինել գթասիրտ ու հպարտ, ու մեծ»: Հետզհետե թանձրացող ողբերգությունը ներխուժեց նրա պատանեկան հոգին, հարմարվեց, մնաց: Ու թվում էր՝ այդ քայլը ուխտագնացության էր տանում նրանց. «Եվ վերջին անգամ երդվում էինք, որ // Ոչ-ո՛ք իր ուխտը երբե՛ք չխախտի»:

Սուրբ Գրքում բազմաթիվ անգամ հիշատակվում է ուխտի մասին՝ որպես երդում, խոստում, պայմանադրություն կամ դաշինք. «Այն ժամանակ կ'յիշեմ Յակոբի հետ արած իմ ուխտը, նաեւ Իսահակի հետ արած իմ ուխտը, եւ Աբրահամի հետ արած իմ ուխտը կ'յիշեմ, եւ այն երկիրն էլ կ'յիշեմ» (Ղեւտացոց, ԻԶ-42): Բայց արդյո՞ք հեշտ էր ուխտը պահել հենց դժոխքի մեջ:

Սա՛ է գեհենը, ուր «Միայն Մա՛հն է տեր՝ անողոք ու մեծ»: Սա է մահվան թագավորությունը. ամայացած ավեր շենքեր, խոշտանգված կին, սատկած կատու, մոծավանջ, սրունքներ, ստինքներ, հետույքներ... Եվ կուչ է գալիս դիվահար սիրտը: Սատանայական է շուրջպարը տենդոտ, երգը այդ շփոթ՝ «սատանայական տագնապի մի երգ», խուճապը նույնպես սատանայական խինդի է նման: Ինչպե՞ս կարող է այսքանից հետո երազը չցնդել:

Աստվածաշնչյան դրվագներ նկատելի են նաև «Ազգային երազ» պոեմում: Երազների միջոցով Աստված մարդկանց որոշակի տեղեկություններ է հայտնել: Այդպես նա Նազարեթում ապրող Հովսեփին՝ Մարիամի ամուսնուն պատվիրեց, որ նա իր կնոջ ու երեխայի հետ փախչի Եգիպտոս, կամ, օրինակ, Դանիել մարգարեն երազում տեսավ աշխարհակալ ուժերը խորհրդանշող մի քանի գազաններ. «Բաբիլոնի Բաղդասար թագաւորի առաջի տարին Դանիէլն երազ տեսաւ, եւ իր անկողնումն՝ իր գլխի տեսիլքները. յետոյ գրեց երազը. գլխաւոր բանը ասեց» (Դանիէլի մարգարէութիւնը, Է-1):

Նույնիսկ արթնացումից հետո չափազանց խիտ են անողոք իրականության պատկերները: Միաձուլվում, նույնանում են երազն ու իսկությունը.

Այնքան տրտում է հոգիս, բայց միշտ ժպտում է հոգուդ,
Որ երազը չդառնա Գողգոթայի ճանապարհ…[3]

---

[1] Եղիշե Չարենց, Երկերի ժողովածու, հ. 1, Ե., 1962, էջ 16:
[2] Եղիշե Չարենց, Երկերի ժողովածու, հ. 2, Ե., 1963, էջ 16:
[3] Եղիշե Չարենց, Երկերի ժողովածու, հ. 1, Ե., 1962, էջ 67:

Սա այն ճանապարհն է, որը տանում է դեպի խաչելություն ու ինքնազոհաբերում. «Եւ նորան տարան մի Գողգոթա ասած տեղ, որ թարգմանվում է Գանկի տեղ: Եւ նորան զմռսած գինի էին տալիս խմելու, բայց նա չ'առավ: Եւ նորան խաչեցին եւ բաժանեցին նորա հանդերձները վիճակ գցելով սորանց վերայ՝ թէ ով ինչ պիտի առնէ» (Աւետարան ըստ Մարկոսի, ԺԵ-22-24):

Գողգոթա էին տարվում ոչ միայն մարդկային հոգիները, Գողգոթա էր տարվում և «հրասուրբ երկիրը» Չարենցի.

Քեզ խաչել են ու թքել են երեսիդ,
Քրքջացել են լուսավոր քո երազին…[1]

Աստվածաշնչում պատկերված է Հիսուս Քրիստոսին ծաղրելու տեսարանը. «Եւ նորա գլուխը եղէգով ծեծում էին, եւ նորա վերայ թքում էին՝ եւ ծունկ դնելով երկրպագում էին նորան» (Ավետարան ըստ Մարկոսի, ԺԵ-19): Սակայն Գողգոթան Չարենցի մոտ ոչ թե զոհաբերություն է նշանակում, ինչպես Աստվածաշնչում, այլ հանդես է գալիս ավելի շուտ որպես ողբերգության խորհրդանիշ: Քրիստոնեության մեջ «Գողգոթա ելածը» ձեռք է բերում հավիտենական կյանք, իսկ Չարենցի պոեզիայում այն վերջնական անկում է նշանակում.

Հսկումների պահը սուրբ է. ժպտա՛, ժպտա՛, մահացող քույր,
Որ չհանի՞ քեզ Գողգոթա այս կարոտը իրիկնային...[2]

Տարիներ հետո պատկերը, կարծես, շատ քիչ է փոխվել: Մահվան տեսիլը շարունակում է հետապնդել Չարենցին: Բանաստեղծը ստեղծում է իրականության մի անողոք պատկեր՝ «Մի պիրկ պարան ու երկնուղեշ փայտեր երկու»: Հոգու սարսուռն այս անցողիկ չէ, այն կկեղեքի ու հալումաշ կանի ընթերցողին՝ նորից ու նորից բանտելով նրան սարսափների աշխարհում: Մահվան մշուշով է պատվում ողջ երկիրը Նաիրի: Ու ոչ մի հնչյուն չի հանդգնում խախտել մահահոտ լռությունը: Ու հենց այս եղերական լռության մեջ էլ սկզբնավորվում է ինքնազոհաբերումի, նահատակվելու խորհուրդը.

Երթամ հիմա: Ու կարոտով անմխիթար,
Իմ երգիչի երազներով ու հրերով,
Անհրապույր իմ օրերի երգով մթար
Ու նաիրյան իմ երազի վերջին սիրով,-
Երթամ մարող ու մարմրող իրիկվա մեջ,
Որպես ուրու հալածական, որպես տեսիլ-
Տա՜մ պարանոցս կարոտին այն երկնուղեշ
Ու օրորվեմ՝ եղերական ու անբասիր…[3]

Կորուստների ցավով տառապում է դարերից եկած բանաստեղծը: Միայն անչափելի սերը հայրենիքի հանդեպ կարող է մարդուն տանել ինքնայրումի, անմնացորդ նվիրումի, զոհաբերման: Այլևս ոչ մի զոհ, «Ոչ մի ստվեր կախաղանին թող մոտ չգա», և թող գալիքը լինի պայծառ ու լուսավոր.

Թող ո՛չ մի զոհ չպահանջվի ինձնից բացի,
Ուրիշ ոտքեր կախաղանին թող մոտ չգան.
Եվ թող տեսնեն ի՛մ աչքերի մեջ կախված,
Իմ բո՛րբ երկիր, լուսապսակ քո ապագան:[4]

Բանաստեղծն իրեն զոհաբերում է հանուն երկրի լուսապսակ ապագայի, հանուն իր ազգակիցների երջանիկ ու ազատ կյանքի: Աստված իր «Միածին Որդուն տվեց»՝ հանուն համայն աշխարհի մարդկության փրկության. «Սորանով գիտացինք Քրիստոսի սերը, որ նա իր անձը տուաւ մեզ վերայ...» (Յովհաննէս Առաքեալի առաջին թուղթը, Գ-16): Ահա թե ինչպես է չափվում Չարենցի սերն ու նվիրվածությունը: Ապա նա Քրիստոսի վախճանի հետ համեմատում է Մազութի Համոյի վախճանը («Երկիր Նաիրի»)՝ գործածելով Աստվածաշնչի այն ավանդությունը, ըստ որի Գողգոթայում Քրիստոսի խաչին փակցված էր մի տախտակ «Հ. Ն. Ա. Հ.» գրությամբ, որ նշանակում էր՝ Հիսուս Նազովրեցի Արքա Հրեաստանի: Մազութի Համոյի պարագայում այդ տախտակն ուներ հետևյալ գրվածքը. «Մ. Հ. Ա. Ն»՝ Մազութի Համո Արքա Նաիրի: Մազութի Համոյին բնութագրելու համար Չարենցն անցկացնում է հինկտակարանային մի համեմատություն ևս. «Ո՞ր է, ո՞ր է ուժը, ու՞ր է կորովն հնամյա նայիրյան ցեղի. ու՞ր է երկաթե բռունցքը... Ու՞ր է,-հարցնում էր, դառնացած Եհովայի նման մազերը պոկելով, Մազութի Համոն...»: Զկար միֆական հզորությունը: «Խուճապի

[1] Եղիշե Չարենց, Երկերի ժողովածու, հ. 1, Ե., 1962, էջ 161:
[2] Նույն տեղում, էջ 115:
[3] Նույն տեղում, էջ 325:
[4] Նույն տեղում:

ենթարկված բազմահազար ամբոխի» ստեղծած իրարանցման հանդեպ գրողը «մանկական մի խաղ» է համարում Բաբելոնի աշտարակաշինությունը:

Մահվան ուրվականը բանաստեղծին հասցնում է գառանցանքի.

Ատամնաթափ մի մարդ, գանգը նման կապկի,
Նստել էր կոկորդիս և ինձ խեղդում էր...
Թույն էր թորում նա իմ գիշերային շապկին-
Եվ անունը նրա... «Քնքշություն» էր...[1]

Քնքշության քողի տակ թաքնված մարդը նման է «գառան դիմակ հագած գայլի», «...որ գալիս են ձեզ մօտ ոչխարների հանդերձներով, բայց ներսեւանց յափշտակող գայլեր են: Իրանց պտուղներիցը նորանց ճանաչեցէք. մի՞թէ փշերից խաղող են քաղում, կամ տատասկից՝ թուզ» (Աւետարան ըստ Մատթէոսի, Է-15-16):

Վերոնշյալ քառատողի տարբերակներից մեկով էլ հենց սկսվում է Չարենցի «Էկլեզիաստես» գործը, որն ունի տրիպտիքոս ժանրանշումը: Վերջինս իրենից ներկայացնում է երեք մասից բաղկացած ստեղծագործություն, որ առավելապես տարածված է նկարչության և երաժշտության մեջ: Աշխարհի լավագույն գեղանկարչական տրիպտիքոսներից մեկը՝ «Երկրային վայելքների այգին», պատկանում է Հիերոնիմ Բոսխի վրձնին: Միջնադարյան նկարչի անունը մեկ անգամ չէ, որ հիշատակում է Չարենցը: Եվ դա պատահական չէ. բանաստեղծը հմայված էր Բոսխի կտավներով, ում իր իսկ կոլեգաներն անվանել են «մղձավանջների պրոֆեսոր»: Նրա նկարները ողողված են զանազան խորհրդանիշներով, որոնք կարելի է անվերջ բացահայտել: Նկարչի ստեղծագործությունները լի են տարօրինակ ֆանտաստիկ արարածներով, վայրի հրեշներով, որոնք բարդացնում են պատկերված միտքը՝ ծնելով բազմաթիվ մեկնաբանություններ: Թվում է՝ բանաստեղծն ու նկարիչը ապրել են սարսափների և երևակայության նույն աշխարհում: Եվ ստեղծագործության տեսակը, և՛ նրա համար Չարենցի ընտրած բնաբանը («Եւ ով գիտէ զոգի որդւոյ մարդկան՝ թէ ելանէ ի վեր, և զշունչ անասնաց թէ իջանէ ի խոնարհ երկիր»: «ԲԱՆՔ ԺՈՂՈՎՈՂԻ», Գլ. Գ-21), և՛, առհասարակ, բանաստեղծի ստեղծագործության այս շրջանում հանդիպող բազմաթիվ սուրբգրային մոտիվները թույլ են տալիս ենթադրելու, որ այս ամենը պայմանավորված է քրիստոնեական մտածողությանն անդրադառնալով:

Իր՝ որպես զոհի, հոգեբանական փոխակերպումներն առանցքային են հատկապես վերջին շրջանի գործերում: Իր ստեղծագործություններում բանաստեղծին ուղեկցել է մեռնող-հառնողի միֆը, անտիպների շրջանում՝ քրիստոնեական Աստվածը, ինչն առկա է նաև «Դոֆին նայիրական» շարքում: «Սոնետ անկշռելի»-ն սկսվում է «Ու՞ր ես արդյոք քո սև խաչափայտը տանում» տողով: Խաչափայտը չարչարանքի, պատվի և քրիստոնեական փառքի նշան է: Կա՞ արդյոք նոր Գողգոթա, ուր տառապյալները հպարտորեն են բարձրանում: Անպատասխան թվացող հարցերը հրմշտում են իրար.

Իբրև Հիսու՞ս ես դու արդյոք լյառ բարձրանում,-
Թե՞ ավազակ ես լոկ դու մահապարտ...
Պիղատո՞ս է արդյոք այսօր ամեն մի մարդ,
Որ քո հանդեպ ձեռքերն է լվանում...[2]

Բանաստեղծի խոսքում ակնառու է Մատթեոսի Ավետարանի այն դրվագը, երբ Հիսուսը դիմում է բազմությանը. «Ինչպէս մի աւազակի՞ վերայ սրերով եւ բիրերով դուրս եկաք ինձ բռնելու» (Աւետարան ըստ Մատթէոսի, ԻԶ-55): «Պիղատոսն էլ երբոր տեսաւ, թէ ոչինչ օգուտ չէ անում, այլ աւելի խռովութիւն է լինում, ջուր առաւ՝ ձեռքերը լուաց ժողովրդի առաջին եւ ասեց. Ես այդ արդարի արիւնիցն անմեղ եմ, դուք տեսէք» (Աւետարան ըստ Մատթէոսի, ԻԷ-24): Ապա նույն Ավետարանում ընթերցում ենք. «Այն ժամանակ նորա հետ երկու աւազակներ խաչուեցան՝ մէկը աջ կողմին եւ միւսը ձախ կողմին» (Աւետարան ըստ Մատթէոսի, ԻԷ-38): Ընդհանուր իրարանցման մեջ խառնվում ու շփոթվում են սրբերն ու դավաճանները.

Էլ ի՞նչ պսակ լուսե,- էլ Գողգոթա
Ինչպե՞ս ելնես, Հոգիս, չարչարանքով հոժար-
Երբ չգիտես ինքդ է՛լ՝ Հիսու՞ս ես, թե Հուդա...[3]

Սրանք նաև ճակատագրի հարցականներ են, որոնցով պայմանավորված է Չարենցի վերջին շրջանի ստեղծագործության աստվածաշնչային ակունքավորումը: Բախումը ժամանակի հետ նրան

[1] Եղիշե Չարենց, Անտիպ և չհավաքված երկեր, Ե., 1983, էջ 95:
[2] Եղիշե Չարենց, Անտիպ և չհավաքված երկեր, Ե., 1983, էջ 135:
[3] Նույն տեղում:

դարձնում է «անօգ»: Բանաստեղծին պաշարում են անկման նոր տեսիլները («Հուսահատական ժամերին իմ սև», «Եվ ես դիմում եմ քեզ...», «Ես ամեն առավոտ, երբ հանկարծ...» և այլն): Չարենցը գալիս է եզրահանգման. տառապանքից ծնված ճշմարտությունն է սրբազան: Ու նա պատրաստ է հոժար կամքով ընդունելու տառապանքի բաժակը՝ «իբրև լեղի մի թաս». «Նորան լեղիի հետ խառնած գինի տուին խմելու» (Աւետարան ըստ Մատթէոսի, ԻԷ-34):

Բավականին հետաքրքրական մի հանգամանք մեզ ստիպում է ուշադրություն դարձնել «Դոֆին նայիրական» սոնետների շարքի՝ հետևյալ քառատողով սկսվող տարբերակներից մեկին.

Ո՞վ է արդյոք, Հոգիս, քեզ Գողգոթա հանում,
Ի՞նչ է այս խաչն ուզում, որ դու կրում ես արդ.
Ճակատիդ նի՞շ ունես, թե՞ լուսեղեն մի վարդ,-
Եվ ո՞վ է քեզ «հարյավ» խոստանում...[1]

Ճակատին նիշ ունենալու մասին կարդում ենք Հովհաննու Հայտնության գրքում. «Եւ ստիպում է ամենին՝ փոքրերին եւ մեծամեծներին, հարուստներին եւ աղքատներին, ազատներին եւ ծառաներին, որ նորանց դրոշմ տայ նորանց աջ ձեռքումը կամ նորանց ճակատումը: Եւ որ ոչ ով չ'կարողանայ գնել կամ ծախել բացի նորանից, որ գազանի դրոշմը կամ նորա անունն ունի կամ նորա անունի համարը» (Յովհաննէս առաքեալի յայտնութիւնը, ԺԳ-16-17): Ըստ քրիստոնեական մտածողության՝ ճակատին նիշ՝ համար, ունենալն այլաբանորեն նշանակում է լինել Չարի՝ Սատանայի հետևորդ: Սրա հակաբնույթ «լուսեղեն վարդը» Չարենցը վերցրել է Նարեկացուց. «Գոհար վարդն վառ առեալ ի վեհից վարսիցն արփենից: // Ի վեր ի վերայ վարսից ծավալէր ծաղիկ ծովային»: Ինչպես երևում է, վարդը Քրիստոսի խորհրդանիշն է:

Տողերը բերում են Դավիթ Գասպարյանի եզրահանգմանը. «Ի վերջո, Եղիշե Չարենցը Հիսուս Քրիստոսի պես խաչվեց ժամանակի և իրականության խաչափայտին, խաչվեց հանուն իր գրական սկզբունքների և մարդկային բարոյականության, հանուն հայ գրականության պատվի»[2]: Իրապես, ճիշտ էր չարենցագետը. «Չարենցը միշտ հետամուտ էր ոգու և հանճարի գաղտնիքին: Նա որոնում էր իր Աստծուն և գիտեր, որ մի օր իրենք գտնելու են իրար»[3]:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Եղիշե Չարենց, Երկերի ժողովածու, հհ. 1-5, Ե., 1962-1968:
2. Եղիշե Չարենց, Անտիպ և չհավաքված երկեր, Ե., 1983:
3. Եղիշե Չարենց, Նորահայտ էջեր, Ե., 1996:
4. Եղիշե Չարենց, Վերջին խոսք, Ե., 2007:
5. Աստվածաշունչ, Ստոկհոլմի Աստվածաշնչի թարգմանության ինստիտուտ, 1989:
6. Էդոյան Հ., Եղիշե Չարենցի պոետիկան, Ե., 1986:
7. Գասպարյան Դ., Եղիշե Չարենց: Հայոց բանաստեղծության մայրաքաղաքը, Ե., 1996:
8. Աբեղյան Մ., Երկեր, հ. Ա, Ե., 1996:
9. Անտոնյան Ա., Մեծ ոճիրը, Ե., 1990:
10. Իսահակյան Ա., Երկերի ժողովածու, հ. 2, Ե., 1974:

Տեղեկություններ հեղինակի մասին.
Անի Շիրինյան
ԱրՊՀ գրականության և լրագրության ամբիոնի հայցորդ
Էլ. հասցե՝ shirinyanani@rambler.ru

Հոդվածը տպագրության է երաշխավորել խմբագրական կոլեգիայի անդամ, բ.գ.դ. Ս.Ա. Խանյանը:

[1] Եղիշե Չարենց, Վերջին խոսք, Ե., 2007, էջ 185:
[2] Եղիշե Չարենց, Նորահայտ էջեր, Ե., 1996, էջ 5:
[3] Նույն տեղում, էջ 577:

ՀՏԴ 82.09 Գրականագիտություն

ՆՈՐ ԳԻՐՔ «ԻՍԱՀԱԿ ԱԼԱՎԵՐԴՅԱՆ»

Արմինե ՄՈՎՍԻՍՅԱՆ

Բանալի բառեր՝ *Իսահակ Ալավերդյան, արձակ, դրամատուրգիա, թատերագիտություն, մանկավարժություն, գեղարվեստական առանձնահատկություն, հայ գրականություն, Արցախի գրական ընտանիք:*

Ключевые слова: *Исаак Алавердян, проза, драматургия, театроведение, педагогика, художественная особенность, армянская литература, Арцахская литературная семья.*

Key words: *Isahak Alaverdyan, prose, playwright, theatre studies, pedagogy, artistic peculiarity, Armenian literature, literary family of Artsakh.*

НОВАЯ КНИГА „ИСААК АЛАВЕРДЯН”
А.МОВСИСЯН

В этой статье рассматривается и оценивается работа доктора филологических наук, профессора Сократа Ханяна „Исаак Алавердян”.

Отмечается, что автор работы тщательно изучая богатое литературное наследие прозаика, драматурга, театроведа, переводчика, педагога Исаака Алавердяна, создал ценное исследование, которое можно считать знаменательным явлением в процессе изучения современной армянской литературы.

NEW BOOK “ ISAHAK ALAVERDYAN”
A.MOVSISYAN

The article considers and evaluates Doctor of Philology and professor Sokrat Khanyan's work “ Isahak Alaverdyan”. It is mentioned in the article that the author of the work has cveated a valuable research by thorougly studying the literary rich heritage of the prose writer, playwright, theatrical expert, translator and teacher Alaverdyan. This can be considered as a significant phenomenon in the history of modern Armenian literature study.

Սույն հոդվածում դիտարկվում ու գնահատվում է բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Սոկրատ Խանյանի .Իսահակ Ալավերդյանե աշխատությունը: Նշվում է, որ աշխատության հեղինակը հանգամանալից ուսումնասիրելով արձակագիր, դրամատուրգ, թատերագետ, թարգմանիչ, մանկավարժ Ի. Ալավերդյանի գրական հարուստ ժառանգությունը, ստեղծել է արժեքավոր հետազոտություն, որը կարելի է համարել նշանակալից երևույթ արդի հայ գրականության պատմության ուսումնասիրության գործընթացում:

Գրված ու հաստատված է, որ քսաներորդ դարի երկրորդ կեսի հայ մշակույթի հարստացման ու զարգացման գործընթացը հնարավոր չէ պատկերացնել առանց Արցախի գրական ընտանիքի մասնակցության: 1950-ական թվականներից սկսած, առանձնապես անհատի պաշտամունքի քննադատությունից հետո, Հայաստանում ապրող և ստեղծագործող մտավորականների նրբահյուս երկերի ջերմացնող դասերն արձագանք էին գտնում նաև Արցախի գրական ընտանիքի ներկայացուցիչների ստեղծագործական աշխարհում: Նրանց նախասիրություններում և տպագիր երկերում խոսում է Հայկյան Առանի հայախոս ոգին՝ պատմական արմատների կենարար ավիշով և ապագայի հանդեպ ունեցած լուսաբեր հավատով: Նման ստեղծագործողների բույլի մեջ են մտնում Բոգդան Ջանյանը, Բագրատ Ուլուբաբյանը, Սարգիս Աբրահամյանը, Իսահակ Ալավերդյանը, այնուհետև Գուրգեն Գաբրիելյանը, Մաքսիմ Հովհաննիսյանը, Վարդան Հակոբյանը, Սոկրատ Խանյանը, Վազգեն Օվյանը, Նվարդ Ավագյանը, Արմեն Հովհաննիսյանը, Դավիթ Միքայելյանը և ուրիշներ:

Վերոնշյալ գործիչների շարքում իր բազմաբնույթ գործունեությամբ ու բազմաժանր գրական հունձքով առանձնահատուկ տեղ ունի արձակագիր, դրամատուրգ, թատերագետ, թարգմանիչ, մանկավարժ, Արցախի հանրապետության վաստակավոր գործիչ Իսահակ Սերգեյի Ալավերդյանը:

Պետք է նշել, որ բազմավաստակ այդ գործչի գեղարվեստական արձակը, դրամատիկական երկերն ու թատերագիտական ուսումնասիրությունները ժամանակին գնահատվել են ականավոր գրողների, գրաքննադատների, թատերագետների կողմից: Եվ բնական ու խոսուն են նրա ստեղծագործության մասին գրված հոդվածներն ու էսսեները:

Ի. Ալավերդյանը՝ ծնված 1917-ի հունվարի 17-ին, Շուշի քաղաքում, դեռևս մանկության տարիներից, տեսել և զգացել է այն բոլոր հարվածներն ու աղետները, ինչ տեսել են և՛ Արցախը, և՛

մայր Հայաստանը: Հաղթահարելով բոլոր դժվարությունները, ինչպես իր բոլոր հասակակիցները, Ի. Ալավերդյանը ստանալով և՛ միջնակարգ, և՛ բարձրագույն կրթություն, ծավալել է ժողովրդանվեր գործունեություն՝ որպես մանկավարժ ու գրող, հայրենանվեր մի այնպիսի գործիչ, որը պատիվ է բերում և՛ իրեն, և՛ ազգին: Վերև նշեցինք, որ նրա գրական-մշակութային հունձքի մասին ժամանակին գրվել են հոդվածներ, գրախոսություններ: Սակայն մինչև 2017 թվականը՝ նրա ամբողջական ստեղծագործության մասին առանձին ուսումնասիրություն չի ստեղծվել: Եվ ահա, այդ անհրաժեշտ գործին ձեռնամուխ է եղել բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ԱՀ գիտության վաստակավոր գործիչ, Արցախի պետական համալսարանի դասախոս Սոկրատ Խանյանը:

Արդյունքում, համալսարանի գիտական խորհրդի երաշխավորությամբ լույս է տեսել գրականագետի «Իսահակ Ալավերդյան» ուսումնասիրությունը՝ ծննդյան 100-ամյակի և մահվան 25-րդ տարելիցի առթիվ:

Ուսումնասիրությունը՝ բաղկացած ներածությունից, հինգ բաժնից ու մատենագիտության մասից, ամբողջության մեջ լույս են սփռում բազմավաստակ գործչի հարուստ մշակութային ժառանգության արժեքի ու գործառական մերօրյա նշանակության վրա:

Գրքի հեղինակը նպատակահարմար է գտել՝ նախ ներկայացնել Ի. Ալավերդյանի արձակը ժամանակի գրաքննադատության լույսի տակ: Կոնկրետ փաստերի հիման վրա նշվում է, որ ճանաչված գրողի ժողովածուներն արժանացել են անվանի գրականագետների լայն շրջանակների ուշադրությանը:

Փորձառու գրականագետի համոզիչ փաստարկներում Ս. Խանյանը մատնանշում է գրողի «Իմ սաները», «Թող խաղաղ մեծանա», «Անանուն մարդը», «Կապույտ գլխաշորը» ժողովածուները, ընդգծում, որ դրանց մասին իրենց դրվատանքի խոսքերն են ասել ականավոր գրող Սերո Խանզադյանը, գրականագետներ՝ Ժան Անդրյանը, Սերգեյ Աթաբեկյանը, Կիմ Աղաբեկյանը, Շահեն Օհանջանյանը, բանաստեղծներ՝ Միքայել Հարությունյանը, Գուրգեն Գաբրիելյանը, փորձառու մանկավարժներ և այլ մտավորականներ: Գրքի հեղինակը նկատում է, որ բոլոր գրախոսներն իրարից անկախ ընդգծել են արձակագիր Ի. Ալավերդյանի ստեղծագործության առինքնող նշանակությունն ու լեզվաոճական երանգները, պատումների անմիջականությունը, ճշմարտացիությունը, լավատեսությունը, կերպարների բնութագրումները, դիմանկար ստեղծելու հմտությունը, պատմելու ձիրքն ու վարպետությունը, գեղեցիկ նկարագրություններն ու գեղարվեստական խոսքի նպատակային օգտագործումը, հումորը, ժողովրդական խոսակցության համով-հոտով գործածությունը և այլ առանձնահատկություններ:

Ուսումնասիրության մեջ, առաջին բաժնում, առանձին տեղ է հատկացված Ի. Ալավերդյանի գրական երկերի ընտրանուն՝ «Ծաղիկների երգը» խորագրով, որը լույս է ընծայվել գրողի ծննդյան 90-ամյակի առթիվ, հետմահու:

Այստեղ արժանին պիտի հատուցել բանաստեղծ-գրականագետ Ս. Խանյանին՝ մասնագիտական խորությամբ գրողի բազմաժանր երկերը հմտորեն դիտարկելու ու արժևորելու ուղղությամբ:

Ուսումնասիրության հեղինակի տեսադաշտում են գտնվում գրողի բազմաշերտ ստեղծագործության բոլոր մոտիվներով ստեղծված երկերը: Գնահատվում են մայրական շարքը, սիրո մանրապատումները, մանկական երկերը, երգիծական հյուսվածքները, առակներն ու դրամատիկական գործերը:

Նշենք, որ Ս. Խանյանը համոզիչ ընդգծումներով և ընդհանրացումներով բազմաշնորհ գրողի գեղարվեստական երկերը գնահատում է՝ նկատի առնելով կյանքի նկատմամբ նրա հեղինակային վերաբերմունքը, կենսական նշանակություն ունեցող փաստերի և իրադարձությունների բացահայտումը, գրականության գեղարվեստական արտացոլման կերպերն ու եղանակները, պատկերների ստեղծումը, լեզվաոճական առանձնահատկությունները և այլ միջոցներ ու ձևեր: Նա ընդհանրացնում է. ,«Ի. Ալավերդյանի գեղարվեստական հունձքն. ինքնատիպությամբ ու թարմությամբ իր տեղն ունի նորագույն շրջանի հայ արձակի պատմության մեջ: Նրա ստեղծագործության մեջ առկա են կյանքի արտացոլման ճշմարտացիությունը, մարդկային հոգեբանության և ապրումների բացահայտման խորությունը»:[1]

[1] Ս. Խանյան «Իսահակ Ալավերդյան», «Դիզակ պլյուս» հրատարակ., 2017թ., էջ 22

[2] Նույն տեղում, էջ 27-28

Ս. Խանյանը Արցախում արարվող գրականության ընթացքը պայմանավորում է 1960-ականներին Հայաստանում ծավալված ստեղծագործական ուղղության հետ, որի ներկայացուցիչներն էին Հրանտ Մաթևոսյանը, Վարդգես Պետրոսյանը, Պերճ Զեյթունցյանը, Հովհաննես Մելքոնյանը և մյուս տաղանդավոր արձակագիրներ:

Ուսումնասիրության հեղինակն անդրադառնալով գրողի ,Սիսակյանի օրագիրըե նովելաշարին ու գերկարճ առակներին, եզրակացնում է. «Մանկավարժ – գրո՞ղ , թե՞ գրող - մանկավարժ,- դժվար է պատասխանել այս հարցին, որովհետև երկուսն էլ միաձույլ ու միանշանակ են դրսևորվել Ի. Ալավերդյանի գործունեության ընթացքում: Նա կյանքի և գրականության փոխհարաբերության հարցն ընկալել է մանկավարժի հայեցակետով, մանկավարժությունը՝ գրողի: Ի. Ալավերդյան – արձակագրի խառնվածքը ուսուցչի խառնվածք է»: [1]

Ի. Ալավերդյանի գրական ժառանգության մեջ զգալի տեղ է գրավում նրա նամականին: Հայտնի է, որ նա Հայրենական մեծ պատերազմի ժամանակ խորհրդային բանակի շարքերում ծառայել է մեծ գրող Սերո Խանզադյանի հետ: Հենց այդ տարիներից նրանք, որպես մտերիմներ, իրար հետ հաղորդակցվել են նամակներով, որոնց թիվը հասնում է մի քանի տասնյակի:

Գրքում՝ նամակներից բերելով առանձին հատվածներ, Ս. Խանյանը դրանք համարում է անգյալի խոսուն էջեր՝ ուղղված սերունդներին… դրանք ոչ միայն ճանաչողական, այլև գրականագիտական լուրջ տեղեկություններ են:[2]

Ուսումնասիրության «Գրողի դրամատուրգիական խիզախությունը» բաժնում վերլուծվել ու արժևորվել են Ի. Ալավերդյանի «Սիրո ճանապարհը», «Հողի լեզուն», «Ա՞խ, սեր» դրամաները, որոնք ներկայացվել են Ստեփանակերտի Մ. Գորկու անվան (այժմ՝ Վ. Փափազյանի անվան) պետական դրամատիկական թատրոնում և շրջկենտրոնների բեմերում:

Փաստարկելով դրանց վերաբերյալ մամուլի էջերում տպագրված թատերախոսությունները, Ս. Խանյանը նշում է. «Անդրադառնալով Ի. Ալավերդյանի դրամաների փնջին, կրկին ու կրկին համոզվում ես, որ նա ծնվել էր որպես մշակութային նվիրյալ գործիչ, որի գրական-թատերագիտական ժառանգությունն այնքան է հարուստ, որ սպասում է իր գալիք ուսումնասիրողներին»:[3]

Ի. Ալավերդյանի գրական հարուստ ժառանգության մեջ փայլուն էջեր են նրա թատերագիտական աշխատությունները: Անվանի գրողը 1968-1990 թվականներին վարել է Ստեփանակերտի դրամատիկականի գրական մասի վարիչի պաշտոնը: 1992թ. նշվել է թատրոնի 50-ամյակը:

Պարզ է, որ Ի. Ալավերդյանը պետք է ասեր իր ծանրակշիռ խոսքը: Ինչպես նշում է Ս. Խանյանը, Ի. Ալավերդյանը կատարեց ուշադրության արժանի գործ. հրատարակեց, Ստեփանակերտի Մ. Գորկու անվան պետական հայկական դրամատիկ թատրոնե աշխատությունը՝ հայերեն և ռուսերեն: «Գիրքը,- ընդգծում է Ս. Խանյանը, - հետաքրքիր մի տարեգրություն է, ուր ընթերցողը հաճույքով ծանոթանում է թատրոնի բոլոր բեմադրող ռեժիսորների, նկարիչների, ժողովրդական արտիստների, երիտասարդ ուժերի գործունեությանը: Գիրքը կհետաքրքրի ոչ միայն թատրոնի պատմությամբ զբաղվողներին, այլև ընթերցողների լայն շրջանակներին»:[4]

Ի. Ալավերդյանը նվիրումով շարունակեց իր թատերագիտական գործունեությունը: Եվ ինչպես գոհունակությամբ ընդգծում է Ս. Խանյանը, նա գալիքին հանձնեց «Գուրգեն Հարությունյան», «Մարգո Բալասանյան», «Բենիկ Օվչյան» ուսումնասիրությունները՝ բարձր գնահատելով ժողովրդական այդ դերասանների վարպետությունն ու թողած ավանդույթները նոր սերնդի համար:

Քննարկվող աշխատության ուսանելի խորհրդածությունների էջեր են «Մարդը, քաղաքացի, մանկավարժը» բաժինը, որտեղ գրքի հեղինակը ուսուցիչ Ի. Ալավերդյանի գործընկերների և աշակերտների վկայությամբ նրան գնահատում է որպես մեծատառով Մարդ, ժողովրդանվեր Քաղաքացի, հմուտ Մանկավարժ:

«Համաշխարհային երևելիները,- գրում է Ս. Խանյանը,- հաստատել են մի ճշմարտություն այն մասին, որ արվեստագետներն ինչ ստեղծում են կենդանության օրոք, պատկանում է իրենց, սակայն

[3] Նույն տեղում, էջ 53

[3] Նույն տեղում, էջ 65

[4] Նույն տեղում, էջ 70

մահից հետո նրանց ստեղծածը դառնում է ժողովրդի սեփականությունը: Տվյալ դեպքում Իսահակ Ալավերդյանի ստեղծագործությունները պատկանում են հայ ժողովրդինե:

Ուսումնասիրության վերջում Ս. Խանյանը գետեղել է ծավալուն մատենագիտություն՝ ըստ Արցախի Մեսրոպ Մաշտոցի անվան Հանրապետական գրադարանի տեղեկատու – մատենագիտական և երկրագիտական բաժնի կողմից կազմված ցանկի»:[1]

Գրականագետ Ս. Խանյանի բավականին ծավալուն և ընդգրկուն այս աշխատությունը նշանակալից երևույթ է նորագույն շրջանի հայ գրականության պատմության ուսումնասիրության, ականավոր գրողի ժառանգության արժևորման ուղղությամբ: Այն միաժամանակ վկայում է, որ Արցախի պետական համալսարանում ուշադրության կենտրոնում է գտնվում ոչ միայն կրթության բարդ հիմնախնդիրների նորօրյա լուծումը, այլև գիտահետազոտական անհրաժեշտ աշխատությունների ստեղծման գործընթացը:

Տեղեկություններ հեղինակի մասին.
Արմինե Մովսիսյան
Ստեփանակերտի Անդրեյ Սախարովի անվան
հ. 8 միջնակարգ հոսքային դպրոցի
հայոց լեզվի և գրականության ուսուցչուհի
armine808@mail.ru

Հոդվածը տպագրության է երաշխավորել խմբագրական կոլեգիայի անդամ, բ.գ.դ. Ս.Ա. Խանյանը:

[1] Նույն տեղում, էջ 88

ՀՏԴ 82.2 Գրականագիտություն

ՀԱՄԵՄԱՏՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ՊԱՏԿԵՐԱՎՈՐ ԼԵԶՎԱՄՏԱԾՈՂՈՒԹՅԱՆ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆ ՍՈԿՐԱՏ ԽԱՆՅԱՆԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

Մամիկոն ՅԱՎՐՈՒՄՅԱՆ

Բանալի բառեր՝ *համեմատություն, նմանություն, համեմատելի, ընդհանուր հատկանիշ, հեղինակային վերաբերմունք, համեմատվող առարկա, համեմատության միջոց և ընդհանուր հատկանիշ:*

Ключевые слова: *сравнение, сходство, сопоставимый, отношение автора, предмет сравнения, средство сравнения.*

Key words: *comparison, identity, comparable, characteristic feature, author's attidute, comparing thing and means of comparison.*

СРАВНЕНИЕ КАК СПОСОБ ВЫРАЖЕНИЯ ЭМОЦИОНАЛЬНОЙ ЯЗЫКОВОЙ ВИЗУАЛИЗАЦИИ В ПРОИЗВЕДЕНИЯХ СОКРАТА ХАНЯНА

М. ЯВРУМЯН

Сравнения занимает особое место в системе речевой визуализации Сократа Ханяна. С их помощью поэтическая речь становится более эмоциональной и воздействующей, а художественный образ воспринимается глубже. Благодаря умению создавать четкие (меткие) сравнения, Ханян делает свою речь более видимой и ощутимой для читателей. Зоркость поэта в сочетании с богатым словарным запасом позволяют создавать оригинальные сравнения, которые, в свою очередь, являются важнейшими показателями индивидуальности любого поэта.

THE COMPARISON AS AN EXPRESSION OF PICTURESQUE THINKING OF LANGUAGE IN SOKRAT KHANYAN'S WORKS

M.YAVRUMYAN

In Sokrat Khanyan's picturesque speech system comparisons take a great place which make a poetic speech more emotional and effective, help to get the artistic image more deeply.

Due to pointed comparisons that he had created, Khanyan can make his speech visible and sensible for the readers. With the unity of the poet's alert eye and rich vocabulary are created too original comparisons which are important indicators of any poet's personality.

Սոկրատ Խանյանի խոսքի պատկերավորման համակարգում իրենց ուրույն տեղն են զբաղեցնում համեմատությունները, որոնք բանաստեղծական խոսքը դարձնում են առավել հուզական ու ներգործուն, նպաստում են գեղարվեստական պատկերն ավելի խորությամբ ընկալելուն: Շնորհիվ իր ստեղծած դիպուկ համեմատությունների Խանյանը կարողանում է իր խոսքը տեսանելի և շոշափելի դարձնել ընթերցողի համար: Բանաստեղծի սրատես աչքի և հարուստ բառապաշարի համադրությամբ ստեղծվում են չափազանց յուրօրինակ համեմատություններ, որոնք ցանկացած բանաստեղծի անհատականության կարևոր ցուցիչներն են:

Ինչպես հայտնի է, համեմատությունը երկու տարբեր երևույթների զուգորդումն է նրանց որևէ նմանության հատկանիշի վրա: Դրանք առարկաների ու երևույթների ներքին կապակցություններն ու հատկանիշները հասկանալի, ճանաչելի դարձնելու կարևոր միջոցներ են: »Համեմատությունը,- ինչպես նշում է Պողոսյանը,- տարբեր առարկաների կամ երևույթների միջև եղած ընդհանուր հատկանիշի հիման վրա առարկան կամ երևույթը տվյալ պահի ու հանգամանքների պահանջով մյուսին նմանեցնելու, հավասարեցնելու կամ նույնացնելու երևույթն է, որին դիմում ենք առարկային կարևորություն տալու, նրա գեղագիտական արժեքը բարձրացնելու (կամ ցածրացնելու) նպատակով«[1]: Հավելենք նաև, որ համեմատության հիմք կարող է դառնալ նմանեցվող երկու երևույթների նկատմամբ հեղինակի վերաբերմունքը, որի շնորհիվ կապ է ստեղծվում այդ առարկաների միջև: Համեմատության ճիշտ կառուցումը կախված է գրողի դիտողականությունից և պայմանավորված է նրա գեղարվեստական մտածողությամբ: Սովորաբար համեմատության

[1] Պողոսյան Պ., Խոսքի մշակույթի և ոճագիտության հիմունքները, գ. 2, էջ 10:

ժամանակ անծանոթ կամ քիչ ծանոթ առարկան համեմատվում է հանրածանոթ առարկայի կամ երևույթի հետ՝ անծանոթ առարկայի նոր կողմերն ու հատկանիշները բացահայտելու նպատակով: Պետք է ասել, որ Խանյանը բոլորովին ինքնուրույն մոտեցում է ցուցաբերել համեմատությունների նկատմամբ. դրանք ավելի շատ արտահայտում են հեղինակային վերաբերմունքն ու գնահատականը նկարագրվող երևույթների նկատմամբ: Այդ պատճառով էլ Խանյանի գործածած համեմատությունները կառուցված են ոչ այնքան համեմատվող երևույթների միջև եղած արտաքին նմանությունների, որքան հեղինակային վերաբերմունքի տեսակետից նրանց միջև եղած հնարավոր նմանությունների ու բնագրային հանգամանքներով պայմանավորված կողմերի վրա: Համեմատության ուժը նրա համոզիչ լինելու մեջ է: Այն ընթերցողի վրա կարող է ներգործել միայն այն դեպքում, երբ նոր է, անսպասելի, որովհետև նրա ուշադրությունը կենտրոնացնում է համեմատվող երևույթների այնպիսի կապակցությունների վրա, որոնք մինչ այդ չէին նկատվել, ստիպում է տեսնել նկարագրվող երևույթը նոր կապակցությունների ու նոր հարաբերությունների մեջ: Հաջող համեմատության կարևորագույն հատկանիշներից մեկն էլ անսպասելիության, նորույթի, հնարամտության տարրն է: Այդ իսկ պատճառով յուրաքանչյուր բանաստեղծ չափազանց անհատական է համեմատությունների ընտրության և գործածության առումով: Ասվածի վառ ապացույցն են ներքոհիշյալ օրինակներում կիրառված համեմատությունները.

Քրոջ տաքուկ ափերի պես գուլպան փարվեց քաջի ոտքին,
Թևավորող կանչի նման երգը թռավ շրթունքներին… (ԸԵ, հ. 2, էջ 134)
***
…Կնճռոտ դեմքի նման փոքրացել է հողս… (ԸԵ, հ. 2, էջ 106)

Ահա այսպիսի դիպուկ և յուրահատուկ համեմատությունների միջոցով Խանյանին հաջողվում է բանաստեղծական խոսքը դարձնել տեսանելի և լիրիզմի նուրբ տարրեր հաղորդել իր խոսքին:

Ուշադրություն դարձնենք նաև կիրառված համեմատությունների կառուցվածքին՝ համեմատվող առարկա, համեմատության միջոց և ընդհանուր հատկանիշ, որի հիմքով կատարվում է համեմատությունը: Սովորաբար այդ հատկանիշի արտահայտման միջոց է դառնում մակդիր-որոշիչը: Այսպես՝

Եվ թևավոր ես մեր երգերի պես… (ԸԵ, հ. 2, էջ 130)

Բերված օրինակում **թևավոր** հատկանիշը դառնում է ընդհանուր երգերի և խոսակցի համար:

Խանյանական համեմատությունների գերակշիռ մասում, սակայն, բացակայում է երկու առարկաները կամ երևույթներն իրար համադրող հիմքը՝ հատկանիշը, ինչպես օրինակ՝

Արևի պես ժպտում ես,
Ամպի նման մշուշվում…
Մերթ բացվում ես վարդի պես…
Մերթ լացում ես ցավիս պես… (ԸԵ, հ. 2, էջ 281)

Դիտարկված բանատողերում գործածված համեմատություններում բացակայում է երկու երևույթների համար ընդհանուր հատկանիշը, սակայն բանաստեղծության բովանդակությունն ու քնարական հերոսի տրամադրությունը նպաստում են այդ հատկանիշի դրսևորմանը: Այսպես սովորաբար լինում է այն դեպքում, երբ առարկան կամ երևույթը բնորոշվում են միայն մեկ հիմնական հատկանիշով, որն ընդհանրապես հատուկ է տվյալ առարկային կամ երևույթին: Բերված օրինակի առաջին երկու նախադասություններում թեև բացակայում է ընդհանուր հատկանիշը, սակայն միանգամայն պարզ է, որ հեղինակը նկատի ունի **պայծառ** և **մռայլ** հատկանիշները: Այսպես.

Արևի պես (պայծառ) ժպտում ես,
(Մռայլ) ամպի նման մշուշվում…

Անկախ համեմատությունների լեզվաշինական բաղադրության կառույցներից՝ խանյանական դիպուկ ու ներգործուն համեմատությունները բանաստեղծական խոսքը վերածում են հույզի ու ապրումի: Եվ հաճախ ամբողջ բանաստեղծությունը կամ բանաստեղծության մեծ մասը կառուցված է համեմատությունների միջոցով: Այսպես, օրինակ՝

Մութի պես երազ բերող,
Լույսի պես ջերմ ու գերող,
Վարդի պես գարնանաբույր,
Հույսի պես հավերժահուր,
Դու այնպես մեղմ ես ժպտում… (ԸԵ, հ. 2, էջ 172)

Խանյանի չափածո ստեղծագործություններում իբրև լեզվի պատկերավորման միջոց գործածված համեմատություններն աչքի են ընկնում իրենց կառուցվածքային բազմազանությամբ, ինքնատիպ բնույթով ու գեղարվեստական համոզչականությամբ: Բազմազան են բանաստեղծի խոսքարվեստում գործածված համեմատությունների կառուցման միջոցները: Այդ գործառույթով հանդես են գալիս կապերը, եղանակավորող բառերը, որոշ կապակցություններ, դերանուններ և ստորոգումը: Սակայն համեմատությունն իբրև լեզվի պատկերավորման միջոց Խանյանի բանաստեղծական խոսքում տարածված կիրառություն չունի: Համեմատությունները չեն դառնում բանաստեղծի գեղարվեստական մտածողության, իրականության արտացոլման հիմնական միջոց և եղանակ: Համեմատությունների շնորհիվ բանաստեղծն ուժեղացնում է իր խոսքի հուզական ներգործությունը և համեմատվող առարկաների ու երևույթների առանձնացվող հատկանիշների հիման վրա ավելի ցայտուն ու տպավորիչ է դարձնում նկարագրվող երևույթը: Համեմատությունները պատկերների ու համեմատվող երևույթների ընդգրկման տեսակետից լինում են երկու տեսակ՝ համառոտ և ծավալուն: Խանյանը հիմնականում կիրառում է ոչ ծավալուն, համառոտ համեմատություններ: Ըստ որում, նա համեմատությունները կառուցում է նմանության հատկանիշի ուղղակի բացահայտման միջոցով՝ պես, նման, ինչպես և այլ համեմատիչ բառերի օգնությամբ: Համեմատությունը սովորաբար բաղկացած է լինում երեք անդամից՝ համեմատվող առարկայի անունից, համեմատության օբյեկտից և համեմատության հիմքից:

Խանյանի ստեղծագործություններում բավական շատ են այնպիսի համեմատությունները, որոնցում անդամները կապված են համեմատիչ բառերով՝ նման, պես, կարծես, ոնց, ինչպես և այլն:

Օրինակ.

Մոմի **նման** թող հալվեմ… (ԸԵ, հ. 2, էջ 129)
Սարերն են գորքի **պես** կանգնել… (ԸԵ, հ. 2, էջ 85)
Արծիվը անհաս կատարին ժայռի,
Կարծես բազմել է արևի կողքին… (ԸԵ, հ. 2, էջ 86)
Կպաշտպանեմ **ոնց** որդի,
Կփայփայեմ **ինչպես** հայր: (ԸԵ, հ. 4, էջ 141)

Հաճախ Խանյանը համեմատությունները կառուցում է այնպես, որ համեմատության անդամները կապվում են առանց համեմատիչ բառերի: Ելնելով նկարագրվող երևույթների բազմազան հատկություններից՝ բանաստեղծն առանձնացնում է այդ հատկանիշներից որևէ մեկը և դնում համեմատության հիմքում:

Առանց համեմատիչ բառերի կազմված համեմատությունների մեջ բանաստեղծը երբեմն մոտեցնում, համադրում է այնպիսի երևույթներ, որոնց մեջ, թվում է, թե որևէ նմանություն չկա: Նման դեպքերում բանաստեղծը ելնում է համեմատվող երևույթների այս կամ այն հատկանիշների հնարավոր նմանությունից:

Այսպես օրինակ՝

Դադիվանքն իմ հրաշք՝
Խաչի պապիս հոգին,
Դարձել է մի երազ
Թեկուզ իմ տան կողքին: (ԸԵ, հ. 2, էջ 93)

Այստեղ Խաչի պապի հոգու և Դադիվանքի համեմատությունը հիմնված է ոչ թե նրանց արտաքին հատկանիշների նմանության վրա, այլ համեմատության երկու անդամների ընդհանուր հատկանիշի՝ սուրբ ու պաշտելի լինելու վրա:

Միշտ չէ, որ համեմատության ժամանակ պետք է ելնել համեմատվող առարկաների արտաքին նմանությունից, կարևոր է նաև դրանց ներքին բովանդակությունը, որով շատ անգամ պայմանավորված են լինում համեմատության անդամները:

Այս համեմատությունները հիմնականում ունեն նկարագրական բնույթ:

Համեմատվող առարկան համեմատության տարբեր շղթաների մեջ մտցնելով՝ բանաստեղծն աշխատում է ամեն անգամ համեմատությունը դարձնել թարմ, ներդաշնակ ստեղծագործության ընդհանուր տրամադրություններին, բացահայտել համեմատվող առարկայի տարբեր կողմեր ու հատկանիշներ:

Օրինակ՝

Մերթ ամպի պես սփռվում եմ,
Մերթ արևի նման շողում,

Մերթ առվի պես փրփրում եմ,
Մերթ ուռենու նման դողում: (ԸԵ, հ. 2, էջ 144)
***
Եկավ որդու նման, Աստծո նման եկավ… (ԸԵ, հ. 2, էջ 103)

Նույն երևույթը տարբեր առարկաների հետ համեմատելը պայմանավորված է նրանով, որ բանաստեղծն ամեն անգամ տվյալ երևույթին մոտենում է տարբեր կողմից՝ նկատի ունենալով կոնկրետ պայմաններում այդ երևույթից ստացած իր տպավորությունները, և աշխատում է մի կողմից՝ տպավորիչ և պատկերավոր դարձնել նկարագրվող երևույթը, իսկ մյուս կողմից՝ այդ համեմատությամբ արտահայտել այս կամ այն միտքը՝ ուղղակի կամ փոխաբերաբար:

Սովորաբար համեմատության ժամանակ անծանոթ կամ քիչ ծանոթ առարկան համեմատվում է հանրածանոթ առարկայի կամ երևույթի հետ՝ այն ավելի մատչելի դարձնելու համար: Սակայն համեմատությունը միշտ նրա համար չէ, որ ծանոթ առարկայի միջոցով անծանոթ առարկան բնութագրելիս համեմատության անդամների միջև եղած նմանություններն ու ընդհանրությունները ցույց տրվեն: Այն ավելի հաճախ կատարվում է գեղարվեստական խոսքն ավելի ներգործուն ու պատկերավոր դարձնելու համար և արտահայտում է հեղինակի վերաբերմունքն ու գնահատականը նկարագրվող երևույթների նկատմամբ, իսկ այդ վերաբերմունքը կարող է լինել երկու տեսակ՝ դրական և բացասական:

Դրական բնույթի համեմատությունների բանաստեղծը դիմում է հատկապես երևույթներն իդեալականացնելու կամ հիպերբոլիկ (չափազանցված) պատկերներ ստեղծելու դեպքում: Այս կարգի համեմատությունների մեջ հաճախ դրսևորվում են նաև լիրիկական հերոսի ապրումներն ու հույզերը:

Իդեալականացման կամ չափազանցված երանգ ունեն, օրինակ, հետևյալ համեմատությունները.

Զահել կաղնու պես իշխան Եսայը
Ավիշ էր հյուսում երակների մեջ: (ԸԵ, հ. 3, էջ 160)
***
Արևի քույրն է Ծուշանիկն ասես,
Ծափաղ էր տալիս գարնան վարդի պես: (ԸԵ, հ. 3, էջ 162)
***
Մորեխի պես փռվել է հագարացոց զորքը չար… (ԸԵ, հ. 3, էջ 185)

Երբ բանաստեղծը ցանկանում է նկարագրվող նյութի նկատմամբ իր բացասական վերաբերմունքն արտահայտել, գործածում է այնպիսի համեմատություններ, որոնք բացասական երանգ ունեն:

Լուրը հասել էր Արևելաց կողմ,
Որ կատաղել է Բուղան ինչպես հողմ…
…Արցախը ծառս էր եղել ալեկոծ,
Բուղան գալիս էր ինչպես թունոտ օձ: (ԸԵ, հ. 3, էջ 173)
***
Իր սև նժույգին Բուղան էր ճչում ինչպես լեշակեր… (ԸԵ, հ. 3, էջ 181)

Խանյանը հաճախ համեմատությունը կառուցում է այնպես, որ համեմատվող երևույթները, համեմատության երկու անդամներն ընթերցողին ծանոթ են լինում, սակայն համեմատության հիմքը, այսինքն՝ այն հատկանիշը, որի հիման վրա մերձեցվում, համեմատվում են այդ երկու երևույթները, բոլորովին նոր ու անսպասելի է լինում ընթերցողի համար, որի շնորհիվ ամբողջ համեմատությունը դառնում է թարմ ու թողնում է նոր տպավորություն: Այսպես օրինակ՝

Իսկ նրա սուրբ ոտքի տակ Տողասարը ինչպես բերդ,
Կանաչ շորեր է հագել՝ դարձած հավատ ու տքնանք: (ԸԵ, հ. 3, էջ 184)

Կամ՝

Իմ կարոտները անուններ ունեն,
Հասցեներ ունեն իմ կարոտները,
Մեր սարերի պես հառնում են նրանք,
Կանչում՝ ինչպես մեր արոտները: (ԸԵ, հ. 1, էջ 320)

Այս համեմատությունները կառուցված են ոչ թե համեմատվող առարկաների արտաքին հատկանիշների նմանության վրա, այլ նրանց ներքին իմաստի: Համեմատության հիմքը այս դեպքում

համեմատվող երևույթների նկատմամբ բանաստեղծի մոտեցման ընդհանրությունն է, որի միջոցով նա կապ է ստեղծում նրանց միջև՝ նկարագրությունը տպավորիչ դարձնելու նպատակով: Իսկապես, վերը բերված օրինակներում համեմատվող անդամների միջև իսկական իմաստով որևէ նմանություն չկա, բայց բանաստեղծը դրանց միջև նմանություն, համեմատության եզր է գտել՝ ելնելով տվյալ ստեղծագործության գաղափարական հենքից: Խանյանը հետաքրքիր պատկեր է ստեղծել՝ համեմատության մեջ դնելով առաջին հայացքից միմյանց հետ բոլորովին ընդհանրություն չունեցող կարոտները և հառնող սարերն ու արոտները: Բանաստեղծին հաջողվում է ստեղծել այնպիսի յուրօրինակ համեմատություններ, որոնք ընթերցողին են փոխանցում հույզի և ապրումի նուրբ ելևէջները:

Պատկերների և համեմատվող առարկաների ու երևույթների ընդգրկման տեսակետից Խանյանի ստեղծագործություններում հաճախակի գործածական են երկանդամ համեմատությունները, սակայն հանդիպում են նաև ծավալուն համեմատություններ՝ ստեղծելով մի քանի համեմատությունից կազմված ամբողջական պատկեր: Այսպես, օրինակ, հետևյալ քառյակը կառուցված է ծավալուն համեմատության վրա.

Ուղիղ գնամ սլացքի պես,
Թներ առնեմ ասքի պես,
Թե մայր հողին խոնարհվել կա,
Թող խոնարհվեմ հասկի պես: (ՐԵ, հ. 2, էջ 191)

Վերոհիշյալ բանաստեղծության հմայքը, անշուշտ, պայմանավորված է ոչ միայն ինքնատիպ բովանդակությամբ, այլև բազմակի համեմատությունների գործածությամբ: Տվյալ դեպքում ոճական հնարանքը հանդես է գալիս որպես բանաստեղծության կառուցման միջոց և մտքերի ու հույզերի ներգործուն օղակ ստեղծում.

Գինու կուժը ես առա ու նստեցի այգու մեջ,
Ասես կյանքի հուշն առա ու նստեցի այգու մեջ… (ՐԵ, հ. 2, էջ 189)
***
Արծիվը անհաս կատարին ժայռի,
Կարծես բազմել է արևի կողքին… (ՐԵ, հ. 2, էջ 86)
***
Խաչեն գետը շողում է հար,
Ոնց իմ պապի արծաթ գոտին… (ՐԵ, հ. 2, էջ 90)

Ինչպես տեսնում ենք, բանաստեղծը համեմատությունների կառուցման համար արտահայտության բազմազան միջոցներ է ընտրել՝ խուսափելով կրկնությունից և խոսքին հաղորդելով ներգործուն երանգներ:

Խանյանի ստեղծագործություններում հանդիպում են նաև այնպիսի կառույցներ, որոնցում համեմատության միջոց է դառնում անվանաբայական ստորոգյալը, ինչպես օրինակ.

Առուն աղջկա սիրո շշունջն է,
Բարդին սլացքն է աղջկա սիրո,
Ուռին աղջկա սիրո տրտունջն է,
Վարդը հրաշքն է աղջկա սիրո: (ՐԵ, հ. 2, էջ 379)

Նմանօրինակ կառույցներում ստորոգյալն է ստեղծում համեմատություն և նմանեցվում, հավասարեցվում է ենթակային:

Որպես համեմատության եզրեր առավելապես հանդես են գալիս քնարական հերոսն ու բնության երևույթները: »Գեղարվեստական գրականության մեջ,- նկատում է Արտ. Պապոյանը,- հաճախ է պատահում, երբ անհատի բնավորության առանձին գծեր, հոգեկան խայտանքները կամ մարմնական արտաքին եզրերը ավելի պատկերավոր նկարագրելու համար զուգահեռ է անցկացվում դրանց և բնության համապատասխան երևույթների միջև«[1]: Խանյանը հաճախ է թափանցում քնարական հերոսի ներաշխարհ՝ միաժամանակ ստեղծելով դիմառնության հրաշալի օրինակներ, ինչպես՝

Մութն ինձ մտերմացավ, բարդին դարձավ ինձ քույր,
Պարտեզը մայր դարձավ, ախ, ինձ՝ գժվածիս,
Իմ շուրթերից պոկված սուլոցը ոնց թռչուն,

[1] Պապոյան Ա., Պարույր Սևակի չափածոյի լեզվական արվեստը, Եր., 1970, էջ 241:

Ճեղքեց դուռ ու դարպաս, հասավ սիրածիս: (ԸԵ, հ. 4, էջ 186)

Խանյանին հաջողվում է հայտնաբերել ապրումի պահի և բնության երևույթի անսպասելի ընդհանրությունը՝ միացնելով միմյանցից հեռու երևույթների նրբաթելերը: Անդրադառնալով արևմտահայ բանաստեղծության լեզվում համեմատության այս տեսակին՝ Յու. Ավետիսյանը գրում է. »20-րդ դարասկզբի փորձով մեր ազգային բանաստեղծության մեջ ամրապնդվում է Նարեկացուց եկող և Դուրյանով նոր բանաստեղծության մեջ վերստեղծված համեմատության այն տեսակը, երբ բնության երևույթը, անշունչ առարկան է համեմատվում մարդու կամ մարդկային հատկանիշի հետ«[1]:

Համեմատությունները Խանյանի խոսքարվեստի կարևոր լեզվատարրերից են, որոնք աչքի են ընկնում իրենց ինքնատիպությամբ և գաղափար են տալիս բանաստեղծի պատկերավոր մտածողության մասին:

Տեղեկություններ հեղինակի մասին.

Մամիկոն Յավրումյան*, Երևանի «Ուսում» դպրոցի հայոց լեզվի և գրականության ուսուցիչ:*

Հոդվածը տպագրության է երաշխավորել խմբագրական կոլեգիայի անդամ, բ.գ.դ. Ս.Ա. Խանյանը:

[1] Ավետիսյան Յու., Արևմտահայ բանաստեղծության լեզուն, Եր., 2002, էջ 443:

ՀՏԴ 316.77:001.12/.18; 070:001.12/.18 Լրագրություն

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌՈՒՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ

Սամվել ԲԱԼԱՅԱՆ

Բանալի բառեր՝ *Նոր մեդիա, ավանդական հեռուստատեսություն, մարտահրավերներ, տեխնոլոգիական առաջընթաց:*

Ключевые слова: *Новая медиа, традиционное телевидение, вызов, технологический прогресс.*

Keywords: *New Media, traditional televisin, challange, technological pregress.*

ПЕРСПЕКТИВЫ РАЗВИТИЯ АРЦАХСКОГО ОБЩЕСТВЕННОГО ТЕЛЕВИДЕНИЯ

С. БАЛАЯН

Сегодня в ежедневном потоке технологических революций телекомпания встала на путь коренных преобразований. Действительно, традиционное телевидение изо дня в день уступает свои позиции. Зритель диктует изменения, удовлетворения современных требований. В противном случае, необратим проигрыш интернету и полное исчезновение. В армянской медиасфере Арцахскому общественному телевидению предстоит сделать многое, чтоб уверенно встать в один ряд с другими телекомпаниями. Вызовы становятся серьезнее, когда речь заходит о технологическом прогрессе и, соответственно, о развитии новых медиа.

THE DEVELOPMENT PERSPECTIVES OF ARTSAKH PUBLIC TELEVISION

S. BALAYAN

In the everyday flood of technological revolutions today's television stations have taken the way full of revolutions. The reality is that traditional TV is losing its position every day. The viewer demands to change and meet the modern requirements. Otherwise, the TV will irrevocably lose in the competition with the Internet and disappear. In order to stand firmly alongside other TV companies of the Armenian media field, the Public Television of Artsakh has still a lot to do. Challenges are becoming more serious when it comes to promoting technology and, consequently, the development of new media.

Տեխնոլոգիական հեղափոխությունների ամենօրյա հեղեղի մեջ այսօր հեռուստարնկերությունները բուռն հեղափոխությունների ճանապարհ են բռնել: Իրականություն է, որ ավանդական հեռուստատեսությունն ամեն օր զիջում է իր դիրքերը: Հեռուստադիտողը թելադրում է փոխվել, բավարարել ժամանակակից պահանջները: Հակառակ դեպքում՝ անդառնալիորեն պարտվել ինտերնետին ու վերանալ: Հայկական մեդիադաշտում Արցախի Հանրային հեռուստարնկերությունը լուրջ անելիքներ ունի՝ վստահաբար կանգնելու մյուս հեռուստարնկերությունների կողքին: Մարտահրավերները ավելի են լրջանում, երբ խոսքը տեխնոլոգիական առաջընթացի և, ըստ այդմ, նոր մեդիայի զարգացման մասին է:

Հեռուստատեսային տեխնոլոգիաները վիթխարի զարգացում են ապրում՝ թվային տեսախցիկներ, մոնտաժման համակարգչային համակարգեր, թվային հեռարձակման միջոցներ, հեռուստատեսային վիրտուալ տաղավարներ, իրական նկարահանումների և համակարգչային գրաֆիկայի համադրում: Իհարկե, հեռուստատեսային արտադրության մեջ տեխնոլոգիական այս զարգացումները միայն աննշան մասն են կազմում՝ նոր մարտահրավերներ նետելով հեռուստատեսային արտադրանք ստեղծողների համար [1]: 20-րդ դարի հանճարեղ կինոռեժիսոր Ֆեդերիկո Ֆելլինին այսպես է ատահայտվել. - «Հեռուստատեսությունը կինոմատոգրաֆիայից բոլորովին տարբեր մի բան է: Եվ ես ուղղակի չգիտեմ, թե ինչպիսին պետք է լինեն նրա համար աշխատող հեղինակները» [2]:

Ստեղծագործական առումով ինչ սկզբունքով առաջնորդվել. Հարցը շարունակում է բանավեճի առարկա մնալ հեռուստատեսային շատ հեղինակների համար: Արցախի Հանրային հեռուստարնկերությունը ունենալով լրագրողական մեծ թիմ՝ այսօր կանգնած է ստեղծագործական ու արդի տեխնոլոգիաների »հեռուստատեսային« պարտադրանքի առջև: Որակական տեսանկյունից արդյունավետության մասին կարելի է խոսել այն դեպքում, երբ հաղորդակցության արդյունքը համապատասխանում է հեղինակի կողմից ի սկզբանե սահմանված նպատակին: Տեղեկատվության քանակական ասպեկտը հանդես է գալիս որպես տեղեկատվության գիտական ճանաչողության ամենապարզ մակարդակ [3]:

Արցախի հանրային հեռուստատեսության եթերը վերջին երկու տարիներին հիմնականում ապահովվում է ուղիղ եթերի շնորհիվ: Ժամը 17.10-ից մինչև 19.40-ը ,Ողջույն Արցախ՞՞ հեռուստանախագծի շրջանակներում հաղորդավարները ներկայացնում են օրվա անցուդարձը: Հաղորդումը սկսվում է Օրացույց էջով: Այն ամենօրյա հեռուստաշարք է, որը ներկայացնում է Արցախի,

Հայաստանի ու, առհասարակ, աշխարհի՝ օրվա կարևոր իրադարձությունները, պատմական անցքերը: Դրան հաջորդում են արցախյան իրականությունն արտացոլող տարբեր հաղորդաշարեր ու ռեպորտաժներ, որոնց մուտքը եթեր ապահովվում է հաղորդավարի միջոցով: Եթերաժամը հարստացնում է նաև հարցազրույցը: Ուղիղ եթերում, տաղավարում հյուրընկալվում են քաղաքական, տնտեսական, կրթական, մշակութային ու մարզական ոլորտների ներկայացուցիչներ: Այնուհետև ուղիղ եթերում՝ ժամը 19-ին, Օր լրատվական ծրագրից հետո, եթերը շարունակում է Հարց Մասնագետին էջը: Այն թոք շոուի մինի տարբերակ է, երբ հաղորդավարները սուր աչքով դիտարկում են մասնագիտական վերլուծություն պահանջող խնդիրներ, հաճախ հարցախույզին մասնակցում են նաև հեռուստադիտողները: Քննարկվող թեմաներն ու հարցերի շրջանակը բավականին լայն են: Այդուհանդերձ եթերը նորություն է պահանջում, ժամանակն էլ հուշում է, որ նախագիծը սպառում է իր ասելիքը:

Հեռուստաընկերությունը պետք է հնարավորինս մրցունակ լինի իր նպատակային լսարանի ուշադրությունը գրավելու համար: Անշուշտ, յուրաքանչյուր հեռուստաընկերություն ջանում է արձագանքել կարևոր իրադարձություններին (բազմաթիվ և բազմաժանր մատուցման ձևերով)[4]:

Հանրային հեռուստատեսությունն իր լսարանի պահանջները լիարժեք բավարարելու համար բազմաթիվ խնդիրներ ունի: Հեռուստառադիոընկերության խորհրդի նախագահ Նորեկ Գասպարյանի խոսքով, ամեն տարի նոր սարքավորումներ են ձեռքբերում, տեխնիկական հնարավորությունների առումով առաջընթաց գրանցվում է, սակայն այսօր մեծ ծախսեր է պահանջում ժամանակակից հեռուստատեսությունը: Եթե տարվա կտրվածքով ծախսվում է շուրջ 55,000 ամերիկյան դոլարին համարժեք դրամ սարքավորումների համար, պետք է ծախսել շատ ավելին, որովհետև ժամանակակից հեռուստատեսությունը անընդհատ նոր պահանջներ է առաջադրում: Այլ կերպ տեղ ունենալ այլ հեռուստաընկերությունների կողքին հնարավոր չէ: Ունեն ոչ թե մասնագետների խնդիր, այլ բազմաթիվ ոլորտներում համապատասխան մասնագետները իսպառ բացակայում են: Դա վերաբերում է ժամանակակից ինժեներական լուծումներին, վերաբերում է լրագրողներին և մարդկանց, ովքեր իրականում հասկանում են ժամանակակից հեռուստատեսության քաղաքականությունը:

Այն որ լրատվական ծրագրերում քաղաքական թեմատիկան պակասում է, սա քննարկման ենթակա չէ, կարծում է հեռուստառադիոընկերության խորհրդի նախագահը: Իհարկե Օր լրատվական ծրագիրը առաջ է ընթանում հստակ մշակված քաղաքականությամբ, ընդգրված են բոլոր բնագավառները՝ տնտեսականից մինչև մշակույթ: Լրատվական քաղաքականության հիմքերից մեկը ազատագրված տարածքներն են՝ քարոզչության առումով: Լրատվական ծրագրում մեծ ուշադրություն է դարձվում ազատագրված տարածքներին, վերաբնակեցմանն ու ունեցած խնդիրներին: Յուրաքանչյուր արցախցի պետք է տեսնի, որ այդ տարածքները մատված չեն անտերության, որ այդ տարածքներում մարդիկ ապրում են, կառուցվում են տներ ու դպրոցներ, ծնվում են երեխաներ: Այն տրամաբանությամբ են ռեպորտաժները կառուցվում, որ ազատագրված տարածքները դա հենց Արցախի տարածքներն են, պարզապես շատ ավելի երիտասարդն են, քան մյուս շրջանները: Մյուս կողմից հեռուստատեսության ներկայությունը մեծ ոգեվորություն է այդտեղ ապրող մարդու համար: Այլ բան է նրանց համար բնակարան կառուցումը, բոլորովին այլ՝ նրանց մի քիչ գովերգելը, նրանց մասին ռեպորտաժ պատրաստելը: Այլ բան է, երբ Արցախի համեմատաբար երիտասարդ քաղաքացին տեսնում է իրեն էկրանից, այլ տեսանկյունից, և բնականաբար արժեվորում է անցած ճանապարհն ու ամրապնդում հետագա քայլերի անհրաժեշտությունը: Սա հաջողված քաղաքականություն է, որը վերջին տարիներին իրականացնում է Արցախի հեռուստատեսությունը:

2015 թվականին Բերձորում բացվել է «Օր» լրատվական ծրագրի առաջին թղթակցական կետը: Իհարկե ունեցած տեխնիկական ու մասնագիտական սուղ միջոցների պարագայում էլ թղթակցական կետը շուրջ մեկ տարի աշխատել է: Օպերատորական ու մոնտաժի աշխատանքներն իրականացնում էր Արամ Մուրադյանը, լրագրողը Արուս Գալստյանն էր: Թղթակցական կետի լիարժեք գործունեությունը սակայն կասեցվել է մի շարք պատճառներով: Առաջին հերթին մասնագիտական կատարելագործում այդպես էլ տեղի չի ունեցել, ապա թղթակցական կետը ունեցած թույլ տեխնիկական միջոցներով անկարող էր ապահովել լրատվական ծրագրի գոնե նվազագույն պահանջները: Օպերատիվությունն իսպառ բացակայում էր, խնդիրների շարքը լրացնում է նաև համացանցային թույլ կապը:

Հայկական՝ երկրորդ հանրապետությունում շարունակվող լայնածավալ շինարարական աշխատանքները՝ ճանապարհաշինություն, բնակարանաշինություն, ենթակառուցվածքների արդիականացում և, ավելի ստույգ, տնտեսության արդիականացման աշխատանքները երկրորդ պայն են մղում հեռուստատեսությանը: այն իմաստով, որ Արցախի կառավարությունն առայժմ համեստ միջոցներ է ներդնում հեռուստատեսության առաջընթացն ապահովելու համար: Այդուհանդերձ, հանրայինի լրատվական քաղաքականության հիմնական թիրախը պետականաշինության

գործընթացն է, արցախցիների խաղաղ ու ստեղծագործ աշխատանքը: Արցախցիները բավականին հանդարդ ժողովուրդ են, իրադարձությունները, դեպքերը չսրելու սովոր, ավելի հարմարվող իշխանության կողմից տարվող քաղաքականության նկատմամբ: Այս տեսանկյունից հեռուստատեսության խնդիրը դժվարանում է այն առումով, որ խնդիրների մասին բարձրաձայնողները շատ չեն, իսկ հեռուստատեսությունը ենթադրում է խոսք, պրոֆեսիոնալ լրագրողը խնդիրը վերհանելու և այն ժամանակին լուծելու հնարավորություն:

Հեռուստատեսային ծրագիրը հեռուստատեսային ողջ գործընթացի հանրագումարն է՝ ամբողջական տեսքով: Այլ կերպ ասած, »ծրագիրը էկրանային պարբերականների՝ տնտեսապես, գաղափարապես և քաղաքականապես սահմանված բովանդակային ձևն է՝ տարածության և ժամանակի մեջ կազմակերպվող, տարբեր թեմաներով և ժանրերով նյութեր՝ պայմանավորված ալիքի յուրահատկությամբ, նյութատեխնիկական հնարավորություններով, արտադրական ստեղծագործության կազմակերպման մակարդակով և ուղղված է դասակարգված լսարանին« [5]:

Արցախի հանրային հեռուստատեսությունում քաղաքական հաղորդաշարը միանշանակ չի կայանում: Այս օղակը թույլ է ոչ հեռուստատեսության մեղքով: Հաջողված քաղաքական հաղորդաշար ունենալու համար պետք է ունենալ լավ քաղաքագետներ, ովքեր կկարողան շատ ավելի արագ ընկալել ժամանակը, ավելի շուտ տեսնել աշխարհում տեղի ունեցող անցուդարձը, գնահատել երկրի՝ արտաքին մարտահրավերներին դիմակայելու հնարավորությունը: Նման մասնագետների պակաս Արցախում կա: Իհարկե հեռուստատեսությունը փորձեր, դաշտը բաց չթողնելու համար, կատարում է: Այդ աշխատանքներում տարբեր տարիներին ընդգրկվել են հայտնի քաղաքագետներ, վերլուծաբաններ. ԼՂՀ նախագահի աշխատակազմի տեղեկատվության և հասարկայնության հետ կապերի բաժնի պետ Դավիթ Բաբայան, Ալեքսանդր Մանասյան, Հրաչ Արզումանյան, Արցախի արտաքին քաղաքական գերատեսչության պատասխանատուներ: Ներգրավված մարդկանց շրջանակը փոքր է, ասելիքը որքան նույնը, այնքան տարբեր: Այդուհանդերձ հեռուստադիտողը պահանջում է նոր դեմք ու նոր խոսք, իսկ երկիրը այդ հարցում թերանում է, բնականաբար թերանում է նաև հեռուստատեսությունը: Արցախի հեռուստադիտողը երանությամբ թե նախանձով է հետևում այլ հեռուստաընկերությունների ամենօրյա քաղաքական վերլուծական հաղորդաշարերին հարցազրույցներին քաղաքական ենթատեքստով:

Անելիքները հեռուստատեսությունում շատ են: Ցավոք, ադրբեջանա-ղարաբաղյան հակամարտության պատճառով և, վերջին տարիների սրացումների ֆոնին, մարդկային ու տնտեսական կորուստները զարգացման լուրջ հեռանկարներ չեն բացում հանրայինի կարգավիճակ ունեցող երկրի միակ հեռուստատեսության համար: Ֆինանսական սուղ միջոցները խանգարում են ոչ միայն բարձրակարգ մասնագետներ հրավիրել, այլեվ ունենալ ժամանակակից պահանջներին համապատասխան տաղավարներ:

Առանց համապատասխան քայլերի հնարավոր չէ տեղ ունենալ մյուս հեռուստաընկերությունների կողքին: Համապատասխան մասնագետների ու տեխնիկական ժամանակակից հնարավորությունների պակասը հեռուստատեսության թիվ մեկ խնդիրն են, և զարգացման ավելի ուրախ հեռանկար առայժմ չի ուրվագծվում:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Վանիկ Հակոբյան, Հեռուստատեսային հաղորդակցության արդյունավետությունը
2. Ֆելինի Ֆեդերիկո, Կինորարում, Երևան, «Սովետական գրող», 1988, էջ 189
3. Урсул А. Д., Природа информации, Москва, 1968, стр. 58.
4 Борецкий Р. А. О некоторых вопросах программирования. Доклад на конференции: Принципы многопрограммного телевидения, М., 2000, с. 39-40
5. Борецкий Р. А. В Бермудском треугольнике ТВ //http//www. pseudology.org

Տեղեկություններ հեղինակի մասին.

Ս. Բալայան – ԵՊՀ մագիստրոս, ԱրՊՀ Հայ գրակ. և լրագ.ամբիոնի ասիստենտ
e-mail: Samvel_artv@mail.ru

Հոդվածը տպագրության է երաշխավորել խմբագրական կոլեգիայի անդամ, բ.գ.դ. Ս.Ա. Խանյանը:

ՀՏԴ 82.091 Գրականություն

ԳԵՎՈՐԳ ԴԵՎՐԻԿՅԱՆԻ «ԳՈՅԱՄԱՐՏ» ՎԵՊԸ

Աննա ԵՐԿԱՆՅԱՆ

Բանալի բառեր. *գոյամարտ, պատմավեպ, Անի մայրաքաղաք, Գագիկ թագավոր, գոյատևում, անկախ պետականություն, ինքնուրույնություն, հայ ժողովուրդ, Բագրատունյաց թագավորություն:*

Ключевые слова: *борение (борьба за существование), исторический роман, столица Ани, царь Гагик, существование, независимая государственность, самостоятельность, династия Багратуни.*

Key Words:*-battle, historical novel,city of Ani,King Gagik, survival, independence state, independence, Armenian people, Kingdom of Bagratuni.*

РОМАН ГЕВОРГА ДЕВРИКЯНА „БОРЕНИЕ”
А.ЕРКАНЯН

В данной статье исследуется идейно-художественный аспект романа армянского советского писателя Геворга Деврикяна „Борение” (1986г.), в центре которого столица Ани, стоящая на грани уничтожения. Дается соответсвие романа и историческому окружению и постижению времени, и актуальности. Анализируется образ неопытного царя Гагика, не остаются без внимания и другие герои: Сенекерим Арцруни, Ваграм Пахлавуни.

В статье представлена главная идея романа „Борение”, раскрывается тайна выживания армянского народа.

NOVEL “BATTLE” BY GEORGE/GEVORG DEVRIKYAN.
A.YERKANYAN

In this article we are going to present the novel “Battle” by the Soviet Union writer Gevorg Devrikyan, which investigates the city of Ani, which was at the edge of distruction , in an artistic sence.

It shows the novel’s match both with the time of the historical environment and perceptions and also with modernity. In this novel , the writer analyzes the character of inexperienced King Gagik, and also refers to the novel’s other characters. Senekerim Artsruni, Vahram Pahlavuni.

In this article it is presented the main idea of the novel “Battle” and also it clarifies the secret of permanence of Armenian people.

Սույն հոդվածում սովետահայ գրող Գևորգ Դևրիկյանի «Գոյամարտ» վեպը (1986), որի կենտրոնում կործանման եզրին կանգնած Անի մայրաքաղաքն է, քննվում է գաղափարագեղարվեստական առումով: Ցույց է տրվում վեպի համապատասխանությունը թե՛ ժամանակի պատմական մի-ջավայրին և ըմբռնումներին և թե՛ արդիականությանը: Վերլուծվում է անփորձ Գագիկ արքայի կեր-պարը, անդրադարձ է կատարվում վեպի մյուս հերոսներին՝ Սենեքերիմ Արծրունի, Վահրամ Պահլավունի նն:

Հոդվածում ներկայացվում է «Գոյամարտ» վեպի գլխավոր գաղափարը, պարզաբանվում հայ ժողովրդի հարատևության գերխնդիրը:

Սովետահայ գրող Գ. Դևրիկյանի՝ Արցախյան շարժման նախօրյակին գրված «Գոյամարտ» վեպը (1987) հեղինակի «Տրդատ ճարտարապետ» (1983) վեպի ժամանակագրական շարունակությունն է: «Պատմավեպի մեջ անցյալը ոչ թե պիտի ճնշի ներկային, այլ դասեր, հավատ ու ավյուն տա նրան՝ գոտեպնդող ապագային հասնելու համար»[1]: Այս նույն դրույթին հավատարիմ մնալով՝ Գ. Դևրիկյանը ստեղծում է պատմական թեմայով գրված այս վեպը, որի կենտրոնում կրկին Անի մայրաքաղաքն է՝ իր նոր ճակատագրով, զրկանքներով ու դառնագին հալածանքներով:

Նշենք, որ արդեն համանման թեմայով 1962 թ.-ին լույս էր տեսել Վիգեն Խեչումյանի «Գիրք լինելության» վեպը, իսկ 1966 թ.-ին՝ Սերո Խանզադյանի «Մատյան եղելությանց»-ը: Եթե Վիգեն Խեչումյանն իր «Գիրք լինելության» վեպում «գրիչ է վերցրել ոչ թե պատմական իրադարձություններն ու հիշատակները գեղարվեստական ստեղծագործության նյութ դարձնելու, այլ միջնադարյան կյանքի ու հոգեբանության միջոցով ժողովրդի լինելության գաղտնիքը բացատրելու համար»[2], ապա Դևրիկյանը, շարունակելով իր նախորդներին, բացահայտում է հայ

[1] Զավեն Ավետիսյան, Նորագույն գրականության զարգացման միտումները, Երևան, 2002, էջ 111:
[2] Արդի հայ գրականության պատմություն, հ. երկրորդ, Երևան, 1993, էջ 65:

ժողովրդի գոյամարտի խոր ըմբռնումները՝ ապացուցելով և հավաստելով, որ ոչ միայն հոգևոր արժեքներով կհաղթի ու կհարատևի հայը, այև զինված պայքարի միջոցով (այստեղից էլ՝ «Գոյամարտ»):

Ինչպես նախորդ վեպում, այնպես էլ «Գոյամարտում» հայ ժողովրդի անցյալի փառքը ոգեկոչում և վերջինիս օրինակով ապագա անկախ լինելության գաղափարն է պատմավեպի այլաբանության լեզվով արտահայտում Գևորգ Դևրիկյանը:

Վեպի համար հիմնականում նյութ են հանդիսացել 10-11-րդ դարերի հայոց պատմության դեպքերն ու իրադարձությունները, որոնց մասին մեր պատմագիտությունը թողել է աղբյուրագիտական հարուստ նյութեր: Ասվածը վերաբերում է հատկապես Ստեփանոս Տարոնացի Ասողիկին, Արիստակես Լաստիվերցուն և Մատթեոս Ուռհայեցուն:

Վեպում ծավալվող դեպքերը տեղի են ունենում 1020-1080-ական թվականներին, երբ հայ ժողովրդի համար շատ ծանր ժամանակաշրջան էր: Հեռավոր աշխարհից Փոքր Ասիա էին հասել սելջուկ թուրքերի աշխարհակործան 1-ին հրոսակները: Բյուզանդիան էլ ամեն ինչ անում էր Հայաստանը նվաճելու և Բագրատունիների դինաստիան կործանելու համար: Շուտով սկսվում է կամային կտակների քաղաքականությունը, որը Հայոց աշխարհը նվաճելու ամենանենգ միջոցն էր: Այդ կտակների մեջ ամենածանրն ու Բագրատունյաց թագավորության տան համար ճակատագրականն Անիի վաճառքն էր Վասիլ 2-րդ կայսրին: Այսպիսով՝ հարավից թուրքաց վտանգն էր, արևմուտքից՝ հունաց: Հագարացիք դեռ չէին խաղաղվել, իսկ մյուս կողմից էլ առկա էին ներքին լարվածություններ՝ հայ ժողովրդին կանգնեցնելով գոյության ծանր կացության մեջ:

Դևրիկյանը, ուսումնասիրելով պատմական համանման փաստերն ու իրողությունները, շարունակում է «Տրդատ ճարտարապետ» վեպը՝ «Գոյամարտում» արծարծելով նոր խնդիրներ ու հարցեր: «Ժամանակի պատմիչների տեղեկություններն ու զանազան կողմնակի աղբյուրներն օգտագործելիս հեղինակը գերի չի մնացել դրանց: Նա հետևել է ժամանակի ու պատմության տրամաբանությանը և ստեղծել մի գործ, որը կարելի է կոչել նաև վեպ-տարեգրություն: Չէ՞ որ նա, հաճախ ուշադրություն դարձնելով պատմական աղբյուրներում հազիվ հիշատակվող փաստերին ու դեպքերին, իմաստավորել է դրանք, ծառայեցրել իր նպատակադրմանը»[1]:

Վեպը սկսվում է արքունական ժողովի նկարագրությամբ՝ թագավորը մտահոգ է. Վասպուրականի տերը՝ Սենեքերիմ Արծրունին, տագնապած ու հոգնած թուրքական ցեղերի անընդհատ արշավանքներից, վճռել է Վասպուրական աշխարհը հանձնել Բյուզանդիային՝ փոխարենը ստանալով Սեբաստիա քաղաքն իր շրջակայքով: Հայոց աշխարհի այս կարևոր հատվածի կորստյամբ սկսվում է երկրի թուլացումն ու տկարացումը՝ պատճառ դառնալով հետագա ողբերգական իրադարձությունների համար: Գագիկ թագավորի մահից հետո գժտություն է սկսվում նրա 3 որդիների՝ Հովհաննես-Սմբատ, Աշոտ ու Աբաս արքայորդիների միջև: Աշոտ արքայորդին ցանկանում էր նստել գահին, իսկ Աբաս կրտսեր արքայորդու աչքը Կարսին էր, ուր ցանկանում էր անկախ թագավորել: Այս վեճերն ու գժտությունները երկատեցին Անիի թագավորությունը, մասնատեցին ու ջլատեցին ուժերը: Հովհաննես-Սմբատ արքայի վախճանից հետո դարձյալ առանց գահակալի էր մնացել հայոց գահը և կռվախնձոր դարձել: Երկար ժամանակ թագավոր չունեցող Բագրատունիները վերջապես Գագիկին օծում են թագավոր, որի շուրջ էլ զարգանում է դեպքերի հետագա ընթացքը: Ահա և այս վիպական կոնֆլիկտի լուծման շուրջ են համախմբվում բազմաթիվ իրական և մտացածին կերպարներ:

Վեպի հերոսներն իրական պատմական դեմքեր են կամ ունեն նախատիպեր, որոնց արարքները Գ. Դևրիկյանը ներկայացրել է պատմությանը հնարավորինս հարազատ: Գլխավոր հերոսը անչափահաս Գագիկ արքան է, որին դաժան ճակատագիր էր բաժին ընկել: Նա հայտնվում է դավաճան հայրենակիցների և ենթգ թշնամու ճիրաններում: Գ.Դևրիկյանը Գագիկ արքայի կերպարը կերտում է երկխոսությունների միջոցով: «Դևրիկյան արձակագիրը բավական ինքնատիպ գույներով է կերտել մերթ դյուրահավատ, մերթ հուսահատ, մերթ ըմբոստ ու համարձակ, հայրենասեր ու հպարտ արքայի կերպարը: Նա հակապատկերն է Հովհաննես-Սմբատ թուլակամ արքայի»[2],-գրում է Հայկ Խաչատրյանը: Գագիկի պայքարը թշնամու դեմ դիտվում է որպես հուսահատ մաքառում: Նա միաժամանակ ցանկանում է պայքարել և՛ հոռոմների, և՛ սելջուկների դեմ: Գագիկ թագավորին կարելի է համեմատել Պապ թագավորի հետ: Ճատերն են

[1] Վ. Սանթրյան, Երեկոյան Երևան, 1987, 9 սեպտեմբերի, էջ 3:
[2] Հայկ Խաչատրյան, 1987, հոկտեմբերի 23, էջ 4, N 128:

դժվար հասկանում երիտասարդ արքաների ինքնուրույն քաղաքականության գաղափարը: Եվ Գագիկը, և՛ Պապը ցանկանում են լինել ազատ և անկախ, մերժում են քաղաքական կողմնորոշումները: Նրանք երկուսն էլ աշխատում են սահմանափակել եկեղեցու իրավունքները՝ հոգում երազելով Հայաստանի անկախությունն ու ազատությունը: Անփորձ Գագիկ արքան ծուղակն է ընկնում և ցանկանալով փրկել հայոց պետականությունը՝ գնում է Մոնոմախ կայսեր մոտ և այլևս չի տեսնում իր հայրենիքը: Ահա թե ինչպես է այս մասին Մատթեոս Ուռհայեցին արձանագրել. «Կայսրը կանչեց Գագիկին, նրա առջև դրեց քաղաքի բանալիներն ու նամակը և ասաց. «Անին և բովանդակ Արևելքը ինձ տվեցին»: Գագիկը հասկացավ չարաբաստիկ գործի մասին, արտասվալից հառաչեց և ասաց. «Թող Քրիստոսը դատաստան տեսնի իմ և ինձ նենգողների նկատմամբ»: Գագիկն ասաց Մոնոմախին. «Հայոց երկրի տերն ու թագավորը ես եմ, ես քեզ չեմ տալիս Հայաստանը, որովհետև դու ինձ խաբեությամբ Կոստանդնուպոլիս բերեցիր»: Գագիկն այդպես անսասան մնաց երեսուն օր, բայց երբ տեսավ, որ ելք չի գտնում, Անին հոռոմց հանձնեց. Մոնոմախը դրա դիմաց Գագիկին տվեց Կալոն Պեղատը և Պիգուն»[1]:

Պատմագեղարվեստական շնչով են կերտված նաև նախարարական տների ներկայացուցիչների կերպարները: Նախարարների անմիաբանությունը թուլացնում է երկրի ուժերը՝ հայ ժողովրդի համար ստեղծելով գոյության մարտի ծանր և հանգուցավոր պայմաններ: Այն դերը, որը Արշակունյաց թագավորության և մարզպանական Հայաստանի շրջանում կատարում էին Մամիկոնյանները, Բագրատունյաց շրջանում կատարում են Պահլավունիները[2], ովքեր կանգնած էին երկրի ամրապնդման և ամրակայման դիրքերում: Իշխանաց իշխան Վահրամ Պահլավունին լավ է գիտակցում, որ անմիաբանությունն է կործանել հայոց երկիրը, և դարեր շարունակ հենց դրանից են օգուտ քաղել թշնամիները: «Անցյալի սխալները մեզ դաս են դառնում այսօրվա ու վաղվա համար: Եթե ժամանակին մենք սթափ հայացք ձգեինք մեր անցյալի վրա, շատ դասեր կքաղեինք այնտեղից՝ այսօրվան ու վաղվան պիտանի: Եվ ամենից առաջ այն, թե անմիաբանությունն է միշտ կործանել երկիրս Հայոց: Եվ հարկ է կրքերին իշխել՝ գերադասելով հայրենյաց շահը»[3]-ասում է Վահրամ Պահլավունին արքային:

Իշխան Վահրամ Պահլավունին, աներեր կանգնած լինելով հայրենի հողի պաշտպանության դիրքերում, հանդես է գալիս թե՛ որպես քաջ ու կորովի զորական, թե՛ որպես հայոց պետականության ջատագով ու պաշտպան, ով մինչև վերջին շունչը կռվում է հանուն ժողովրդի գոյատևման: «Ամենաապահով վայրը հողն է հայրենի, որ ուժ է տալիս բոլորին: Թե սովորենք մշտապես ապահով վայր փնտրել, կդառնանք ազգ թափառիկ: Իսկ թափառիկ ազգը չի ունենա ո՛չ արժանապատվություն, ո՛չ անձնասիրություն և ո՛չ էլ հայրենիքի զգացում»[4],-ասում է Վահրամ Պահլավունին Սենեքերիմ Արծրունուն և ամեն ջանք ներդնում՝ երկրի վերահաս վտանգը կանխելու համար:

Հեղինակը խոր հոգեբանական վերլուծության է ենթարկում Սենեքերիմ Արծրունու ողբերգական կերպարը՝ փորձելով հասկանալ ու բացատրել վերջինիս արարքը: Վասպուրական աշխարհը հանձնելով Բյուզանդիային՝ նա լավ է գիտակցում օտարի լծի ծանրությունը, բայց ուրիշ ելք էլ չի գտնում. «Եվ թող հիմա ու ապագայում իրեն մեղադիր չլինի և ոչ ոք, քանզի ինքը ենթարկվում է միայն ու միայն ճակատագրին: Եվ ի վերուստ հաստատված ճակատագիրն է վճռում ու ինքը լոկ կամակատարն է դրա»[5],-բացատրում է վերջինս:

Վեպում Դևրիկյանը ստեղծել է նաև միջնադարյան կերպարների՝ գրիչների, ծաղկողների, կառուցողների մի ամբողջ շարք՝ արարչագործ կարողությամբ, բնավորության ուրույն և հաստատուն գծերով: Նրանք վեպի սկզբից մինչև վերջ չեն մասնակցում գործողությունների հաջորդականությանը, հայտնվում են մի փոքր դրվագում, կերտում իրենց կերպարը և արագ անհետանում: Մեծ տեղ է տրված նաև շինականներին, ովքեր ամուր կառչած են հողին և պատրաստ են ամեն գնով պաշտպանել հայրենիքը՝ «հայրենի հողին տեր լինելու մարդկային

[1] Մատթեոս Ուռհայեցի, Ժամանակագրություն, Հայաստան, 1973, էջ 63:

[2] Մեծ էր Պահլավունիների դիրքն ու դերը արքունիքում: Նրանք համարվում էին գլխավոր ազատներ: Վասակ Պահլավունին սպարապետն էր, Վահրամը՝ իշխանաց իշխան, Ապլղարիբը՝ Արծրունիներից հետո մարզպան:Պահլավունիները տիրույթներ ունեին Շիրակում՝ Մարմաշենը, Բագնայրը, հայրենի կալվածք էր Բջնին իր շրջակայքով, նրանց էր հանձնված Անբերդը և այլն:

[3] Գ. Դևրիկյան, Գոյամարտ, Երևան, 1986, էջ 7:

[4] Գ. Դևրիկյան, Գոյամարտ, Երևան, 1986, էջ 19-20:

[5] Նույն տեղում, էջ 45:

օրենքով»: «Մենք ենք ծնունդն այս հողի և ապավենն այս հողի, ուրեմն և մենք ենք տերը հողի: Մեր նախնիք իրենց արյամբ ու կյանքով են պաշտպանել այս հողն ու հայրենիք ստեղծել և մեզ են կտակել պաշտպանելու և գալոց ժամանակներին հանձնելու»[1],-ասում է Սիմոն շինականը:

Վեպի կարևոր արժանիքներից է երկաստիճան պատմականությունը, երբ վեպի պատմական միջավայրում ներկայացվում է նախորդ դարերի պատմական որևէ իրադարձություն, որն էլ դառնում է պատմության ընկալումը պատմության մեջ: Հետադարձ հայացքով հեղինակը պատմության մեջ դիտարկում և արժևորում է պատմությունը՝ պատգամելով չերկյուղել ճշմարտությունից. «Հարկ էր նախնյաց սրի գործերով ոգեպնդել ապրողներին և շատ հետո աշխարհ եկողներին»[2]:

Պատմության ընթացքը ըստ Դևրիկյանի մարդու լինելության ճգտումն է, գոյության համար մարտնչելու կարողությունը, հայրենիքին ծառայելու վեհ զգացումը:

Հայ ժողովրդի դիցաբանությունն անգամ պատմական հայացքով է դիտվում 10-11-րդ դարերը պատկերող այս պատմական վեպում: Պատմության երկաստիճան ներկայացման ժամանակ պատմավիպասանի առջև ծագում է դժվարին մի խնդիր: Ինչպես որ նա դիմում է անցյալի այնպիսի թեմաների և հերոսների, ովքեր համահունչ են իր ապրած ժամանակին, այնպես էլ պատմության մեջ ավելի վաղ անցյալի այնպիսի դեպքեր պետք է ընտրվեին, որոնք իրենց հերթին համահունչ էին անցյալի տվյալ ժամանակահատվածին: Այս դեպքում պատմավեպի տվյալ մասերը կրկնակիորեն են համահունչ դառնում գրողի ապրած ժամանակին և նրա ասելիքին: Այս տեսանկյունից բնորոշ են հատկապես Փավստոս Բուզանդի «Հայոց պատմության» տարբեր դրվագների մեկնաբանությունները «Գոյամարտի» հերոսների կողմից:

Վեպում մեկնաբանվում են Մ. Խորենացու «Հայոց պատմության» միջոցով ավանդված առասպելները՝ Արա Գեղեցիկ, Տիգրան և Արտաշես: Անդրադարձ է կատարվում Մեսրոպ Մաշտոցին և հայոց գրերի արարմանը:

Նշենք նաև, որ հեղինակին հաջողվել է վեպին հաղորդել պատմական տվյալ ժամանակաշրջանին հատուկ բառապաշար՝ օգտագործելով միջին հայերենին բնորոշ բառեր, հնաբանություններ, գրաբարյան քերականական ձևերի կիրառություններ, միջնադարյան հատուկ անուններ:

Եթե հեղինակի նախորդ «Տրդատ ճարտարապետ» վեպում նկարագրվում է Անիի ծաղկման շրջանը, ապա «Գոյամարտը» արծարծում է հայ ժողովրդի լինելության խնդիրը, այն գոյության մարտը, որը մղվում է մինչև հիմա: Վեպում հեղինակն անդրադարձել է ոչ միայն Անի մայրաքաղաքին, այլև ընդգրկել է ողջ Հայոց աշխարհն իր գավառներով, հարևան երկրների հետ հարաբերություններով, շեշտադրել Բյուզանդիայի նենգ քաղաքականությունը Հայոց և Վրաց աշխարհների հանդեպ:

Հեղինակը դեռևս այն ժամանակ կարևորել է մշտապես զինված լինելու գաղափարը՝ խոր ենթատեքստով արտահայտելով սեփական ուժերին ապավինելը: Գագիկ արքան զենքի արտադրման համար չի խնայում ոչինչ.

-Զե՞նք է հարկավոր երկրիս, զե՞նք, իսկ դուք հապաղում եք գործատանը: Այժմ հացից առավել կարևորը զենքն է, ըմբռնե՛ք,-ասում է արքան[3]:

Անկախ պետականության գաղափարը դառնում է վեպի գլխավոր առանցքը, իսկ հայ ժողովրդի «գոյության գաղտնիքի» բացահայտումը՝ դևրիկյանական որոնումների գերխնդիրը: Ինքնուրույնությունից զատ հեղինակը բացահայտում է հայ ժողովրդի գոյության գլխավոր գաղափարը՝ հոգով չստրկանալն ու զենքով թշնամու դեմ կռվելը. «Ուրեմն վաղը զենքի կոչենք բոլորին և ի մարտ առաջնորդենք: Մենք ավելին չենք ցանկանում, քան մեր հողն ու ընտանյաց պատիվը մեր պաշտպանելը: Իսկ դա երբեք էլ չի անի հոռոմը՝ խորամանկ ու դրուժան: Այդպիսին ահա կլինի վախճանը նրա, ով հույսը կդնի ոչ թե իր սրի, այլ խաչի վրա այլոց՝ հավատակից ձևացող: Ապավինենք ուրեմն մեր սրին ու հողին հայրենի: Եվ ունկնդիր մի՛ լինեք օտարին, որն ահաբեկում էր ձեզ ամեն օր, թե չլինենք ապստամբ, քանզի կմատնի ձեզ ձեռքն անօրինաց»[4],-ահա դևրիկյանական պատգամը: Վեպն ամբողջությամբ լեցուն է հայրենասիրական զգացումով, պետականության ընկալմամբ, հերոսական դրվագներով: Դևրիկյանը ևս մեկ անգամ Վարդանանց

[1] Նույն տեղում, էջ 36:
[2] Նույն տեղում, էջ 582:
[3] Նույն տեղում, էջ 213:
[4] Նույն տեղում, էջ 765

պատերազմը օրինակ է բերում արդեն մեր սերնդակիցների համար՝ նրանց առաջ մղելով դեպի Արցախյան շարժում և գոյամարտ. «Վարդանանք մաքառեցին ու հաղթեցին, քանզի առաջնորդում էր նրանց արդարության դարավոր ու հավերժական ոգին: Եվ ոգին այդ, անցնելով դարերի հոլովույթի միջով ու անմեռ մնալով, զորանալու էր առավել՝ շաղկապելով սերունդներին[1]»:

Հեղինակը համոզված է, որ այդպես կռվել ու կռվելու են դարեր, այդպես մարտնչելու և մաքառելու են սերնդեսերունդ, ու Վարդան սպարապետի բարձրացրած սուրը դեռ շատ քաջեր են բռնելու: Եվ դեռ իրենցից շատ հետո էլ անկոտրում կամքով ու համառ համարձակությամբ կռվի կելնեն շատերը: Ու ժողովրդի հիշողության մեջ միշտ անմահ ու անմեռ կմնան նրանք՝ որպես ոգեղեն պաշտպաններ:

Գահազուրկ է Գագիկ թագավորը, կործանվել է Բագրատունիների թագավորությունը, սակայն վեպն ավարտվում է Կիլիկիայի պետականության կառուցումով. «Եվ ահա մեր ուժին ապավինելով էր, որ այժմ՝ երեսունևհինգ տարի Անվո ստոր վաճառքից անց, մենք ոչ միայն հոռոմին դուրս վանեցինք հողից Կիլիկիո և Բագրատունյաց դրոշը պարզեցինք այս ամրոցի վրա, այլև արծարծեցինք հայոց փրկության հույսերը: Եվ հաղթանակը մեր այսօրվանից սկիզբը դրեց Կիլիկիո հայոց իշխանապետության, որն օրինական ժառանգն է լինելու Բագրատունյաց հարստության»[2],-ասում է Ռուբեն իշխանը: Դևրիկյանը հավատում է, որ դեռ գալու է հայոց փրկության ժամը, և հայ ժողովուրդը մղելու է դարավոր գոյության մարտը՝ արդեն ոգեկոչված ու զորացած:

Գևորգ Դևրիկյանի «Գոյամարտ» վեպն ունի արդիական հնչեղություն և անմիջական արձագանքն է 80-90-ական թվականներին հայ ժողովրդի առջև ծառացած խնդիրների: Այն ընդգծում է հայ ժողովրդի ազատատենչ ձգտումը, չարի դեմ պայքարելու հավերժական պատրաստակամությունը: Հերոսական ոգով գրված այս ստեղծագործությունը վկայում է, որ գործ ունենք հզոր մի երկրի և ուժեղ մի ժողովրդի կյանքի ու պատմության հետ: Ի զուր չէ, որ արդեն իսկ Արցախյան շարժման նախօրյակին գրված «Գոյամարտը» պետք է ոգեշունչ լիներ հայ ժողովրդի համար և առաջ մղեր՝ ի կատար ածելու մի նոր գոյամարտ ևս:

Տեղեկություններ հեղինակի մասին.

Երկանյան Աննա - հայցորդ՝ Խ. Աբովյանի անվան մանկավարժական համալսարան

e-mail: annajanyerkanyan@mail.ru

Հոդվածը տպագրության է երաշխավորել խմբագրական կոլեգիայի անդամ, բ.գ.դ. Ս.Ա. Խանյանը:

[1] Նույն տեղում, էջ 630:

[2] Նույն տեղում, էջ 814:

ՀՏԴ 809. 198. 1. Հայոց լեզու, ոճագիտություն

ՇՐՋԱՍՈՒՅԹԸ ԿՈՄԻՏԱՍ ՀԱԿՈԲՅԱՆԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

Միլվա ՄԻՆԱՍՅԱՆ

Բանալի բառեր՝ *Շրջասույթ, շրջասություն, դարձված, գեղարվեստական խոսք, չափածո, արձակ, հուշագրություն, հոմանիշ, նույնանիշ, համանիշ, հականիշ, նույնանուն, գոյական, բայ, ծավալուն, սեղմ, ինքնարնութագրական շրջասույթ:*

Ключевые слова*- авторские структуры, глагол, катахрез, мемуар, перифраз, проза, синонимические отношения, сушествительные.*

Key words*- catachresis, memory, neologism, noun, paraphrase, poetry, prose, phraseological collocations, structure, synonymous relation, verb.*

ПЕРИФРАЗЫ В ПРОИЗВЕДЕНИЯХ КОМИТАСА АКОПЯНА

С.МИНАСЯН

В статье исследованы перифразы использованные в поэзии К. Акопяна, которые доминируют в сравнении с прозой, т.е. мемуаров.

Эти единицы относятся не к общепринятому пласту, а являются авторскими структурами, можно сказать неологизмами. Исследованные нами сочетания имеют как обширные, так и небольшие стуктуры. Они построены на основе катахреза. Есть перифразные единицы, которые состоят в синонимических отношениях.

Эти структуры имеют значения сушествительных и глаголов.

THE PARAPHRASE IN THE CREATION OF KOMITAS HAKOBYAN

S.MINASYAN

The article deals with paraphrases used from K. Hakobyan. These phraseological collocations dominate in his poetry as compared to prose: memoris.

These units are not productive . The author has created a new structures, they are neologisms.

There are so long phrases, so small. They are built on the basis of catachresis.

Created unites even are in synonymous relation. The structures have value of noun and verb.

Շրջասույթները (շրջասությունները) Կոմիտաս Հակոբյանի չափածոյում գերիշխող են, իսկ արձակում՝ հուշագրությունում, քիչ: Նրանց մերձ *դարձվածները* սակավ են: Կ. Հակոբյանը գործածել է ոչ թե միայն *հանրածանոթ շրջասույթներ*, այլ ստեղծել է նաև *կայուն,հեղինակային* նորը: Շրջասույթները ծավալով մեծ, միջակ ու փոքր կառույցներով են դրսևորվել և գեղագիտական իմաստաբանական բազմազանությամբ ամբողջական միավորով են *այլաբերվել:Շրջասությունների* ձևաիմաստային կիրառություններից հոմանիշներն իշխող են ու առավել շատ վերաբերում են սիրային թեմային, իսկ հականիշն ու նույնանունը սակավ են: Շրջասույթները գոյական ու բայ խոսքի մասերով են գործառվել:

ՈՉ ՈՔ ՉԻ ՄՈՌԱՑՎԵԼ, ՈՉԻՆՉ ՉԻ ՄՈՌԱՑՎԵԼ
(ազատամարտիկ, ուսանող-ուսուցիչ, ստեղծագործող Կ. Հակոբյան-45)
Ինձ կհիշեք այսպես՝
Երազկոտ ու մոլոր: (ԳՊ, 14, Ն, 30)[1]

[1]Հակոբյան Կոմիտասի երկու ստեղծագործությունների անվանումները կրճատ գրությամբ են ներկայացված էջանշումի թվերի մոտ, ԳՊ՝ «Գոյության պատրանք», Արցախ հրտրկչ., Ս., 1993 թ., 48 էջ, Ն՝ «Նվիրում», Ե., 1997 թ., 76 էջ:

Կ. Հակոբյանը (1972-1994) արցախյան այն ստեղծագործողներից էր, որ իր ուսանողական կյանքը և գեղագիտական նվաճումների ծաղկուն ուժը մեկտեղեց հայրենիքի համար մղվող ահազարհուր գոյապայքարին: Այդ գերհամեստ ու համարձակ անձնավորությունն ուշադրության արժանի վեհանձն ու անպարփակ գեղագետ էր: Արցախյան ԳՄ ղեկավար Վ. Հակոբյանը նշել էր՝ «…քո իսկ բառերով՝ աստվածներն են հորինել: Հավատում էինք դրան բոլորս: Երբ Ստեփանակերտի փողոցներում հանդիպում էինք, դու քաշվելով մոտենում էիր ու, ասես, քո բանաստեղծության չբացված երակների ոսկին էիր պարզում պատանեկան ամոթխածությանդ մեջ[1]»: Առինքնող է Կոմիտաս Արսենի Հակոբյանի գեղագիտական խոսքը: Դեռ ուսանող էր (1989-1994), որ հրատարակեց բանաստեղծությունների առաջին գիրքը: Այդ գրքի վերաբերյալ իր դասախոս լեզվաբան-ոճաբան խոնարհ ծառաս հիացմունքով նույնիսկ շրջասույթների վերաբերյալ նշել էի՝ «*Հակոբյանի պատկերային կառույցների միջուկը շրջասության հավասար բառակապակցություններ են*[2]»: Այնուհետև հրատարակվեց չափածոյի ու արձակի՝ հուշագրության գիրքը[1]: Կ. Հակոբյանի մի բանաստեղծությունում իմաստնացած մարդու երազանք կա:

Օ՜, լիներ մի ձայն,
որ ինձ հաղորդության տաներ աստվածներին:
Ես իմ էությանը կմիախառնեմ
նրանց մոգությունը,
ու կվերադառնամ… ոգեղենացած:
Դրանից հետո
ես կերազեի մի *դիպված*,
որ *իմ վախճանը կնմանեցներ*
աստղային մահվան՝
հաջորդ օրը երևալու
ակնկալությամբ: (ԳՊ, 20, Ն, 35)

Եվ իրոք, անմահ բանաստեղծն աստղի նման հաջորդ օրը երևաց ու առ այսօր երևում է իր գեղագիտական նվաճումներով, որի մասին միայն գիտականորեն կարելի է խոսել: Կ. Հակոբյանը իմաստասիրական (փիլիսոփայական) մտորումներով իր հայրենիքի դառը ճակատագիրն է ցավով ընդհանրացրել, իր ընկերների՝ հանուն հայրենիքի, մատաղ կյանքի կորուստը փաստել, մարդ արարածի ցգացմունքները ընդգծել:

Եվ ահա կոմիտասյան *տողերը* ճիշտ վերլուծել կարելի է վկայակոչելով իր անզուգական պատկերաարտահայտչական գաղտնիքները: Դրանք փորձելով մասնակիորեն վերծանել, երբեմն, պարզ թվացող կապակցությունները մեկնաբանելիս, կարելի է մտորել բազմակողմանիորեն, հատկապես առինքնող ու տարածված *շրջասույթների* շուրջ (*շրջասույթների* թիվը հասնում է մոտավորապես 200-ի, անհարկի շրջասույթները քննադատված են դարեր առաջ): Կ. Հակոբյանի չափածոյում *շրջասույթները* արբշիռ են կիրառված, իսկ արձակում՝ հուշագրությունում՝ քիչ: Այս կապակցությամբ արժե ուշադրություն դարձնել լեզվաբան Պ. Բեղիրյանի նշումին՝ «*Մեր նոր գրականությունը, կարելի է ասել, հեղեղված է շրջասական արտահայտություններով. Իսահակյան, Դուրյան, Տերյան են*[3]»: Եվ ահա կոմիտասյան մոտեցումները դրանց օրգանական շարունակությունն են:Լեզվաբանական բառարանում *շրջասույթ* (անգլ.՝ paraphrase//periphrasis) և *շրջասություն* գիտաբառերը մեկ հասկացությամբ է տրված՝ «*Ոճաբանական հնար, երբ պարզ հասկացություն արտահայտվում է նկարագրական եղանակով, այսինքն՝ առարկայի կամ երևույթի իսկական անվանումը*

[1]Հակոբյան Վ. Ս., «Ամենաբարձր բանաստեղծությունը», Կ. Հակոբյանի «Նվիրում», Ե., 1997 թ., էջ 3:
[2] Մինասյան Ս. Ա., Ջրաբերդ (Մարտակերտի շրջանային թերթ), հոկտեմբեր, 1995 թ.:
[3]Բեղիրյան Պ.Ս., «Հայերեն շրջասույթների բառարան», Էդիթ պրինտ հրտրկչ., Ե., 2006 թ., 316 էջ, էջ 3:

փոխարինվում է նրա այս կամ այն հատկանիշն ընդգծող որևէ դարձվածով[1]»: Ոճագետ Ֆ. Խլղաթյանը *շրջասությունը* և *շրջասույթը* լեզվաբանական տարբերակներով է բնութագրել: Շրջասությունը «*Երևույթների, առարկաների նկարագրական բնութագրումն է ուղղակի անվանման փոխարեն, սովորական բառերի փոխարինումը նկարագրական արտահայտություններով, …Դարձույթ: Շրջասության հետևանքով առաջացած բառակապակցություն կամ նախադասություն, որ օգտագործվում է փոխաբերաբար, փաստերն ուղղակիորեն անվանող բառերի փոխարեն*»:Հետո ավելացրել է տարակուսելին՝ «*Նրանք կարող են լինել ուղղակի և փոխաբերական*[2]»: Սրա մի տեսակը Ֆ. Խլղաթյանըհամարել է՝ *պարզաբանումն*, երբ «*…խոսքի մեջ եղած որևէ հասկացություն կրկնվում է նկարագրական-բացատրական ձևով*[3]»: Օրինակ՝ *օրս, հաշմված օրս*, ավերվի իմ չգոյությունից (*գեղագիտական աշխատանք չկատարելուպահեր*՝հաշմված օրեր (ԳՊ, 26):

Շրջասությունն ու շրջասույթն արդեն արժե նույնը համարել, ինչպես լեզվաբանական հնչույթ և հնչյուն, բառ և բառույթ ևն, նույնիսկ ոճագիտական ոճ, ոճույթ (Լ. Եզեկյանի գործածությունը[4]): Պ. Բեդիրյանը *շրջասություն* գիտաբառը բնութագրել է հետևյալ կերպ՝ «*Շրջասությունները շրջուն արտահայտություններ են,* ***բառեր*** *կամ բառակապակցություններ, որոնցով առարկան կամ գործողությունն անուղղակիորեն ենք անվանում*[5]»: Եթե ուշադիր հետևենք Պ. Բեդիրյանի կանոնարկմանը, ապա կտեսնենք *մեկ բառով* արտահայտված շրջասություն, որը գործածել է բառարանի սկզբում՝ նույն էջում բացատրելիս և սյունակներով տրվող շարքերում: Դա համընդհանուր ճանաչում գտած մարած *փոխաբերություն* է՝ *այլաբերություն*: Այդպիսի բառերից եթե *բրդոտ* ձևը ճանաչվում է նաև *արջի* այլաբերված անվանում, ապա *շլդիկը* սովորական *նապաստակի* բառային *հոմանիշ* է հասկացվում, մարած *փոխաբերությունը* կամ *այլաբերությունն* այլևս չի ընկալվում (բառարանային աշխատանքն է օժանդակում պարզաբանմանը): Այստեղ *շիլ աչք* հասկացությունն ուշադրությունից դուրս է մղված ու սովորական բառի արժեք է ստացել՝ *նապաստակ* (այս ձևը բառարաններում դեռևս առաջնային իմաստով գրանցված չէ[6]:

Շրջասույթը մոտ է դարձվածին, բայց վերջինս ժողովրդախոսակցական բնույթ է կրում, տարբեր խոսքի մասեր են (*շրջասույթը* գոյական ու բայ է) և մեկ բառով դեռևս չի ընկալվում (Լ. Եզեկյանը շրջանցել է *շրջասույթը*[7]):

Կ. Հակոբյանի ստեղծագործություններում սակավ է գործածված դարձվածը, դրան երբեմն ավելացվել է խոսուն բառ, որով այդ կառույցը սերտացրել է շրջասույթին, ինչպես *արցունք թափել* դարձվածից ստեղծել է *շրջասույթ՝ գրիչն* արցունք թափել (ԳՊ, 17)՝ *թախծոտ թեմա գրել*, կամ *բկին մնալ* դարձվածից՝ *գալիք օրվա կաղապարն անհայտության* բկին մնալ (ԳՊ, 21)՝ *սեր, հայրենիքի ազատություն՝ անհասկանալի պատճառով արգելակվել* ևն *շրջասույթը*: Երբեմն դժվար է սահմանազատել դարձվածն ու շրջասույթը՝ աստղերից սեր կաթել (ԳՊ, 33)՝ 1. *աստղալից երեկո լինել*, 2. *սիրելու տրամադրություն ստեղծվել,* (որն առիթ է տալիս դրանք երբեմն ոմանց կողմից չտարբերակելուն):

---

[1]Պետրոսյան Հ. Զ., Գալստյան Ս. Ա., Ղարագյուլյան Թ. Ա., «Լեզվաբանական բառարան», Հայկ. ՍՍՀ ԳԱ հրտկչ., 1975 թ., 320 էջ, էջ 245:

[2]Խլղաթյան Ֆ. Հ., «Ոճաբանական բառարան» (II լրացված հրտ.), Զանգակ հրտրկչ., Ե., 2000 թ., 176 էջ, էջ 131:

[3]Խլղաթյան Ֆ. Հ., «Ոճաբանական բառարան» (II հր.), Զանգակ հրտկչն., Ե., 2000 թ., 176 էջ, էջ 150:

[4]Եզեկյան Լ. Կ., Ոճագիտություն (ուսումնական ձեռնարկ), ԵՊՀ հրտկչ., Ե., 2003 թ., 376 էջ, էջ 16:

[5]Բեդիրյան Պ. Ս., «Հայերեն շրջասույթների բառարան», Էդիթ պրինտ հրտրկչ., Ե., 2006 2., 316 էջ, էջ 3:

[6]«Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան», հ. 4, ՀՍՀ ԳԱ հրտրկչ., Ե., 1980 թ., 828 էջ, էջ 75, Աղայան Է. Բ., «Արդի հայերենի բացատրական բառարան», Հայաստան հրտրկչ., Ե., 1976 թ., 1616 էջ, էջ 1110:

[7]Եզեկյան Լ. Կ., Ոճագիտություն (ուսումնական ձեռնարկ), ԵՊՀ հրտկչ., Ե., 2003 թ., 376 էջ, էջ 190-194:

Շրջասույթը երբեմն ստեղծվում է բուն գեղագիտական հենքի (տեքստ) մտքերի հորդումից: Օրինակ՝ անուշ տառապանք՝ *սեր, սիրային ապրումներ, կարոտ*:

Դու ինձ այն գիշեր
այն աշխարհը տարար,
ուր մշտագո է սերը,
ու դեռ գոյություն ունի
հորդաբուխ սիրելու
տառապանքն անուշ: (ԳՊ, 33)

Նույնիսկ Կ. Հակոբյանն ուշադրության արժանի *բառը* նշել է ու նրան երբեմն հավելել անզուգական կառույց ունեցող *շրջասույթը*: Այսինքն՝ ընթերցողը ջանք չի թափում *շրջասույթի* շուրջ մտորելու, հասկանալու համար, այլ միայն սքանչանում է գեղագիտական բառարվեստի նվաճումով, որովհետև ծանոթ, սրտամոտ պատկեր է կառուցվում: Օրինակ՝ *աստղազարդերեկոյի* հոյակերտ գեղագիտական հակիրճ խոսքարվեստի արտահայտություն.

Երեկոն-*գեղեցկագույն տիկնոջ*
պարանոցի զարդ է… (ԳՊ, 34)

Հանրամատչելի, պարզունակ, բայց յուրաքանչյուրին ծանոթ հակադիր սեռերի զգայամոտ, ցանկալի տեսակցության ճշմարտացի նկարագրություն է *մեծ, միջակ ու փոքր* հասարակ *շրջասություններով* առլեցուն մեջբերվող կերտվածքը:

Բերանքսիվայր ընկած գավաթներ
Եվ անհրապույր *սենյակ ծխահամ*,
Վերջին փայլերն է արձակում արդեն
Շփոթված մոմի մի թախծող լեզվակ:
Հանգավ: Գիշեր է: Նոյեմբեր ամիս:
Իր *հնադարյան թախիծն է փռում*
Աշունն անհոգ,
Եվ *փլատակված մազերդ կրծքիս*
Մի անանցողիկ հուշ են լոկ կռում:
Հետո…չեմ հիշում, գիշեր էր երկար,
Եվ *պահն* այնպես *հեքիաթ* էր *թվում*,
Ու *ժամանակի տարածության* մեջ,
Այսպես ակամա,
Լոկ քո *հառաչն եմ ես մտաբերում*:
Հիմա՝ դիմում քեզ, ինչպես Աստծուն,
Ների՛ր, խնդրում եմ, մեղքերս ների՛ր,
Չէ՞ որ այս *կյանքի բարդ թոհուբոհում*
Լոկ մի *գիշեր էր տերը պարգևել*: (ԳՊ, 38, Ն, 52)

Շրջասությունների բառարանում ընդգրկված են *շրջասական կայուն կապակցությունները*[1], որոնք նաև հին ժամանակներից են ու համընդհանուր ճանաչում ունեն: Ցավոք, գեղագիտությունում նոր ստեղծվածները մնում են դուրս, իսկ լիակատար բառարան ստեղծելուն այդ բացակայությունը կվնասի (ցանկալի է յուրաքանչյուր հեղինակի շրջասույթներ առանձին բառարանով լիներ, որոնցից ընդհանուրը հանվեր):

Կ. Հակոբյանն ունի բանաստեղծություններ, որոնք առլեցուն են շրջասույթներով՝ «Ես» (ԳՊ, 21, նվիրված օրվան), «Դարձյալ» (ԳՊ, 22), «Հայրենիք իմ, Արցա՛խ» (Ն, 22), «Քեզ» (ԳՊ, 34) ևն, նույնիսկ պոեմի՝ «Գոյության պատրանքի» գլուխների մեծ մասը (ԳՊ, էջ 17, 18, 19, Ն, էջ 32, 33, 34) նույնպես առլեցուն են շրջասույթներով: «Հայրենիք իմ, Արցա՛խ» (Ն, 22) տասնհինգ

[1]Բեդիրյան Պ. Ս., «Հայերեն շրջասույթների բառարան», Էդիթ պրինտ հրկչ., Ե, 2006 թ., 316 էջ, էջ 6:

տողանոց բանաստեղծությունում տասը շրջասույթի գործածություն կա, որը գեղագիտորեն երբեմն մեկնաբանվել է հենց գործում: *Հույսի աստղ// հույսի աստղեր ծնվել* շրջասույթները՝ օրոցք-երեխա-*կյանք// կյանք լինել* բառերն են նշանակում, որը տրվել է հաջորդ տողերում՝ ….հույսի աստղեր են ծնվում// որոնց արձագանքն այստեղ// *օրորոցներ* են (Ն, 22, *օրորոց* այլաբերությունը նշանակում է *կյանք. օրորոց-երեխա-կյանք*):

Գեղագիտական կիրառությամբ որոշ շրջասույթներ ոչ միայն ճանաչողական նպատակ են հետապնդում, այլ նոր գիտաբառի գործածությամբ վերականգնում են նախնական հասկացությունների ձևավորման արդի վիճակը: Օրինակ՝ *հիշողության ցանց* (ԳՊ, 13) շրջասույթը *հիշողություն* է նշանակում (հիշողությունը մտքում՝ ուղեղի գալարներում, որը (հեղինակի կողմից 20 տարի առաջ) տեսածի, լսածի, պատերազմական դժոխայինն ընկալածի տեղադրումն է իր ուղեղում): *Ցանց* գոյականը հեղինակի ապրած ժամանակաշրջանում տեխնիկայի նվաճում *համակարգչային փոխմիացման*[1] հասկացություն էր նաև: Արդեն գեղագիտական կառույցում *նորարարության* գործածություն է դա շրջասության շրջանակում: *Նորարարական* նրբերանգային իմաստով խորացվել, բազմակողմանի է դարձվել *ռազմական դժոխային հիշողությունը*: Պատերազմական իրավիճակի ահազարհուրի հետ համատեղումով միայն ապշանք է պատճառում այսպիսի կառույցը: Ուրեմն՝ տեխնիկայի դարին հասու երիտասարդ ստեղծագործողը կարողացել է գեղագիտական կառույցի պատկերին ձուլել ու պատերազմական ահասարսուռ իրադրությունում լինող իր Արցախը ներկայացնել հեռու ընկերներին (երևանցի Դավիթ, Արթուր): Այս նույն բանաստեղծությունում էլի տեխնիկայի հետ կապված, բայց արդեն կես դար առաջ եղած նվաճում, *շարժասանդուղք* բառն է կիրառել *ժամանակ* բառի հետ՝ կերտելով յուրատիպ շրջասույթ՝ *ժամանակիշարժասանդուղք*: Դա նշանակում է *կյանք*: Ուրեմն, կարճ, հասարակ բառային բովանդակությունը հեղինակը գեղագիտական հաճելի շրջասությամբ է արտահայտում՝ խոսքը դարձնելով ախորժալուր հայերենի մարգարտաշար: Ահա ամբողջական գործը, որի բազմակետերի միջև եղած հինգ տողը միայն յոթ շրջասույթներ է ընդգրկում:

ԴԱՎԻԹԻՆ ՈՒ ԱՐԹՈՒՐԻՆ

Դուք ապրում եք
Առանց ցավի ու կարոտի,
Վայրկյանները երանության ապրելով
Ինձանից հեռու:
Թող *ժամանակիշարժասանդուղքը*
Ինձ կրկին հասցներ ձեզ մոտ՝
Նորից այն անքուն գիշերներին երգելու
Եվ հարբելու, գեթ հարբելու համար:
…Այստեղ՝ ցավի ու մահվան դաշտում
Ռումբերն ու արկերը
Թքում են արյուն,
Ու *հիշողության ցանցում* մեռնող
Ռոպեներից նվվում է երակս:
……
Ինձանից հեռու դուք ապրում եք
Նույն տարօրինակ ու պոետիկ վարքով: (ԳՊ, 13)

Այս հինգ տողում կան նաև ծավալուն շրջասույթներ՝ սերված իր մեջ ընդգրկված փոքրակառույցներից (այդպիսի ձևերը կարելի է օգտագործել Պ. Բեդիրյանի *կրկնակի*[2]

[1]«Անգլերեն-հայերեն համակարգչային եզրերի բառարան», Ե., 2004 թ., 390 էջ, էջ 228:
[2]Բեդիրյան Պ.Ս., «Հայերեն շրջասությունների բառարան», Էդիթ պրինտ հրտկչ., 2006 թ., 316 էջ, էջ 7:

շրջասական հասկացության շրջանակներում): Ճանաչողական մեծ արժեք ունեցող այս բանաստեղծությունում *շրջասույթները* զուտ ռազմական իրադրության վարպետ արտացոլանքներ են (պատերազմին մասնակցողների ու խուսափողների հակադրությունը վարպետ քողարկումով է տրված, եթե այստեղ երիտասարդ ընկերոջն է խոսքը վերաբերում, ապա մանկական ընկերոջը ևս այդպես է հիշել «Վերհուշ» բանաստեղծությունը, Ն, 42): Ահա պատերազմական թեմային առնչվող *շրջասույթները՝* ցավի ու մահվան դաշտ՝ *կռվի տեղանք*, արյուն թքել// ռումբերն ու արկերն արյուն թքել՝ *վիրավորել/վել, սպանել/վել*, մեռնող բոպեներ՝ *անցնող ժամանակ և դրա հետ անցնող՝ վիրավորվող, մահացող ընկերներ*, երակը նվվալ՝ *լարումից, տառապանքից հոգնել*, հիշողության ցանց՝ *հիշողություն* (ամեն ինչ՝ ընկերների վիրավորվելը, մահանալը աչքի առաջ տեսնել, դժոխայինը հիշել), հիշողության ցանցում մեռնող բոպեներից երակը նվվալ՝ *ահազարհուր իրադրությունից, լարումից, ընկերների կորուստից տառապել, հոգնել*:

Գեղագիտական նյութում կիրառված հնչեղ *բառը* նաև հեղինակի կողմից *շրջասույթի* կառույցի զուգորդմամբ, նրբերանգային իմաստներով կոնկրետացվել, մեկնաբանվել, կարևորել է և մտքի կենտրոն դարձել: Այդ բառի իմաստի գեղագիտական *կրկնությամբ՝ շրջասությամբ, աստիճանավորել,* հնչեղացել է: Այն այս հենքում՝ տեքստում, շարահյուսորեն երկրորդական նախադասությամբ է կառուցվել: Օրինակ՝ լուսեղեն թագ (6, Ն)՝ *գալիք, Արցախի գալիք*:

Ես իմ հավատի միջից
կարկառված ձեռքս
հպում եմ քո *գալիքին*,
որ *լուսեղեն թագ* է (ԳՊ, 6, Ն, 23):

Կարող է բացահայտիչ լինել (բնագրում բացահայտչի բութ չի գործածվել)՝…որ նրանցից մեկը դառնում է քո *հիշողությունը*, մի *ճերմակ մտահույզ* (ԳՊ, 41, Ն, 54):

Շարահյուսական կապակցության որոշ բառային փոփոխություններ, ավելացումներ իմաստաբանորեն երբեմն կարող են շրջասությունները չփոխել, ինչպես՝ *տողերի տակ ընկած անցյալ* (18, ԳՊ)// տողերի տակ ընկած անցյալի *վերհուշ՝ գեղագիտական ստեղծագործություն, գրվածք,* տենչանքների շղթա// տենչանքների անդամալույծ շղթա (16, ԳՊ)՝ (*ստեղծագործական*) *երևակայություն* (անդամալույծն ուղղակի *խտացնում* է իրականի վերածելու անհնարինությունը), մի օր վարքը ծրարել (31, ԳՊ)// մի օր վարքը ծրարել որպես հիշողություն (31, ԳՊ)՝ 1. *դագաղում դնել*, 2. *ստեղծագործությունները գրքի վերածել* ևն: Սրանք հենց *կրկնակի* կոչված *շրջասույթներ* են, ինչպես նշեցինք վերևի տողերում, այսինքն՝ միևնույնի *տարբերակ*: Եթե այդ կառույցից սերվածն այլ խոսքի մաս է դառնում (գոյականից բայ, բայից գոյական), ուրեմն առարկայականից դառնում է փոփոխային ընթացական: Սա արդեն այլ շրջասույթ է ձևաբանական մակարդակում: Ձևաբանական փոխանցումները բառային համակարգում վաղուց են արժևորված, թեև Գ. Ջահուկյանը շարահյուսական մակարդակում երբեմն այդպիսի միավորներն ընդհանրացրել է (գիր-գրել): Օրինակ՝ տողերի տակ ընկած անցյալի վերհուշն *ապրել* (18, ԳՊ)՝ *ստեղծագործել* (նաև կարելի է ասել՝ *հիշել*): Այս *բայ շրջասույթի գոյականը* կլինի՝ տողերի տակ ընկած անցյալի վերհուշ//տողերի տակ ընկած անցյալ, կամ՝ կորուստների դագաղ (16, ԳՊ)՝ *պարապություն*, օրը կորուստների դագաղ *դառնալ* (16, ԳՊ)՝ *պարապ լինել* ևն:

Կ. Հակոբյանի գեղագիտական *շրջասություններում* ուշադրության արժանի են իմաստասիրական (փիլիսոփայական) միավոր *ժամանակի* հասկացության հետ կապված բառային կիրառությունները (ժամ, ժամանակ, բոպե, վայրկյան), ինչպես՝ անհոգության ժամ (Ն, 16)՝ *երիտասարդական զվարճություն, զրույց*, խելագար վարքի վայրկյան (Ն, 16)՝ *երիտասարդական պոռթկուն արարմունք*, ծխի հետ ներքաշել վայրկյանները գունաթափ (23, ԳՊ)՝ *անիմաստ ժամանակ*, ժամանակը ստվեր շտկել (ԳՊ, 12)՝ *կեսօր լինել՝ արևը զենիթում լինել*, ժամանակի տարածություն (ԳՊ, 38, Ն, 52)՝ *պահ*, ժամանակի շարժասանդուղք (ԳՊ, 13)՝

կյանք, մեռնող բոպեներ (ԳՊ, 13)՝ *անցնող ժամանակ,* ժամանակի փոշուց օրվա գորգերի հնանալը (21, ԳՊ)՝ *օրավուր կյանքի զարգանալը, փոփոխվելը* են:

Հեղինակի գործածած *շրջասություններում* նաև հեղինակային բնավորության, էության նրբերանգային *ինքնաբնութագրություններ* կան՝ Երազկոտ ու մոլոր (ԳՊ, 14, Ն, 30)՝ *բանաստեղծ*, տենչանքների անդամալույծ շղթա (ԳՊ, 16)՝ *ստեղծագործական երևակայություն*, մամռակալած քարանձավների սառույցը քամել շուրթերիս վրա (ԳՊ, 17)՝ 1. *խմել*, 2. *սթափ ներշնչվել, ստեղծագործել*, ներշնչանքի մեջ հառաչանքներն աչքերը խեղդել ու գրիչը արցունքներ թափել (ԳՊ, 17)՝ *թախծոտ թեմա ստեղծագործել* (Արցախի, հայության տխուր պատմությունը, այդ ժամանակի վիճակը, պատերազմը են), անապատների դեղին թախիծ (ԳՊ, 17)՝ *տրտմություն*, հառաչանքներն աչքերը խեղդել (ԳՊ, 17)՝ *ոչ մի նշանի արտահայտությամբսգալ, ներքուստ տխրել, ցավն արտաքուստ հաղթահարել ու ցույց չտալ,* քայլերը հանգավորել (24, ԳՊ)՝ *համաչափ քայլել* են:

Կ. Հակոբյանի գործածած *շրջասույթների* մեծ մասը լիարժեք *սերտ* է ու բառերն *ամբողջական* են *այլաբերված*: Օրինակ՝ երկնող ոգու անկում (16)՝ *չստեղծագործելը, հիասթափություն, վախճան*, անցյալի սմքած ստինք (18, ԳՊ)՝ *սիրոանցյալ*, բերանքսիվայր ընկած գավաթներ (38, ԳՊ, 52, Ն)՝ *անփութություն*, գոյության մասնիկ (ԳՊ, 19)՝ *արյուն, ողջություն*, գոյության մասնիկը եռալ (ԳՊ, 19)՝ *արյունը շարժվել, ողջ լինել*, գալիքաեռ երազով օծուն գավաթը պարպել (ԳՊ, 19)՝ *միանալ սիրածին, կենակցել* են:

Մտորումներով առլեցուն *իմաստասիրական* (փիլիսոփայական) «Ծխախոտ» բանաստեղծության սկզբում ու վերջում գործածված *օր* բառը տրված է նաև *շրջասույթներով* (ծխահամ օր՝ *հեղինակի կողմից ծխախոտ շատ գործածած օր, անգործ օր*, ծխախոտի ծխին օրն ագուցել՝ *շատ ծխել* ու քարշ տալ տաղտուկի միջով՝ *անհետաքրքիր լինել* են): Այս բանաստեղծության խոհադատողական, երբեմն էլ սոփեստության հասած *հաշմվածօրը չգոյությունից ավերվել* (ԳՊ, 26) շրջասությունը կրում է *օրն անօգուտանցկացնել՝ չստեղծագործել*, այսինքն՝ հեղինակը *շրջասությամբ* քննադատում է անգործությունը: Կյանքի փթթուն տարիքում տեսնել արցախյան պատերազմական իրավիճակը (և ընդհանրապես ոմանց համար էլ անգործ վիճակ, որոշ աշխատանքային տեղերի փակում) արդեն հեղինակին ոմանց մարդկային կյանքի վախճանի մասին են խորհել տվել՝ ներառյալ *մահ*, որն արդեն հասունացած, տարիքն առած մարդու դատողության նախանշան էր: Փթթուն տարիք ունեցող բանաստեղծը վերջում ընդհանրացրել է *շրջասությամբ*.

Ես վախենում եմ,
որ մի օր չլինեմ,
և օրս,
հաշմված օրս
ավերվի իմ *չգոյությունից*… (ԳՊ, 26)

Ահա այսպիսի մտորումներ ունենալն ու դրանք սոփեստական դառն *շրջասույթներով* արտահայտելը հեղինակի համար կյանքի գնահատման, արժևորման աստվածային տուրք էր: Այդպես է նաև «Մի օր» բանաստեղծությունը, որտեղ հեղինակը նաև այդ անցողիկությունը *շրջասույթից* բացի մեկտեղել է մեկնությանը՝ սիրածի ապագա գործունեությունը իր չլինելուց հետո՝ վարքը ծրարել (Ն, 46)՝ *հիշողությունը մի կողմ դնել*, ուրվականների ուղեկցությամբ հրեշտակների մոտ հասնել (Ն, 46)՝ *մահանալ*, անդերկրային առասպելների քահանա (Ն, 46)՝ *մտավորական ննջեցյալ*, (մահից հետո) խորանի պատերին ողջագուրվել, աղոթել (Ն, 46)՝ *անդրշիրիմվել*, աստվածները մարմինը ընծա առնել (Ն, 46)՝ *մահանալ, նահատակվել*, գահավիժման ընթացք (Ն, 46)՝ *ննջեցյալի հողին հանձնելը*, գահավիժման ընթացքին կտակել (Ն, 46)՝ *հողին հանձնել*:

Լեզվաբանական միավոր շրջասությունների հիմնական մասի բոլոր բաղադրիչների բառային իմաստներն *այլաբանորեն* փոխվում են՝ ներդաշնակ ստվեր (ԳՊ, 14)՝ *էություն*, օրը

կորուստների դագաղ դառնալ (ԳՊ, 16)՝ *պարապ լինել*, ափը ոչ կատարյալ մոմակալ (ԳՊ, 39, 53)՝ *ոչ հասուն, դեռ միակողմանի, անարձագանք սեր*, անդրսերյան տարիները չ/հիշել (ԳՊ, 47)՝ 1. *բուռն սիրել//սիրահարվել,* 2. *հիշողությունը թուլանալ*, լուսնի կաթնագույն հիշողություն (ԳՊ, 47)՝ *գիշեր*, չապրածի համար կյանքում չվճարել (ԳՊ, 37, Ն, 51)՝ *անիմաստ ազատ լինել*, *չհիշվել*, իմ ձեռքերից ծորացող ներշնչանքի ելևէջների մեջ մարմին թրթռալ (ԳՊ, 44, Ն, 58)՝ *սիրածին փայփայել, դրա շուրջը ստեղծագործել* ևն:

Հազվագյուտ է շրջասույթի որևէ բաղադրիչ նույն *ուղղակի իմաստով* պահպանվել՝ ցուրտ պարետատան ներքնահարկում դողալ//ով ծխել (*կրկնակի շրջասույթ*, ԳՊ, 37, Ն, 51)՝ *կալանավորված վիճակում լինել և ծխել* ևն: Դրանք Կ. Հակոբյանի գործածած շրջասույթներում հիմնականում սովորական իմաստով ընդգրկված գործուն բառեր են: Օրինակ՝ ծխահամ օր՝ *հեղինակի կողմից ծխախոտ շատ գործածած օր*, ծխախոտի ծխին օրն ագուցել՝ *շատ ծխել* ու քարշ տալ տաղտուկի միջով՝ *անհետաքրքիր լինել* ևն: Խոհադատողական երբեմն էլ սոփեստության հասած *հաշմվածորը չգոյությունից ավերվել* (ԳՊ, 26) շրջասությունը կրում է *օրն անօգուտանցնել* իմաստը, անհրապույր սենյակ ծխահամ (38, ԳՊ, 52, Ն)՝ *ուսանողական սենյակ,* սիրո լուսին (42, ԳՊ, 56, Ն)՝ *հասուն սեր* ևն:

Շրջասույթներն իրենց մեջ ընդգրկած բառերի քանակով, ծավալով տարաբնույթ են, որոնք կարելի է մոտավորապես խմբավորել երեք տեսակով՝ *մեծ, միջակ, փոքր*: Երբեմն մեծ շրջասույթն իր մեջ կարող է բովանդակել փոքրերը, ինչպես՝ մոմե լրջություն (34, ԳՊ)՝ *մեղմմտորումներ* և լուսե երազները մոմե լրջությամբ հանգչել (34, ԳՊ)՝ *պայծառ երևակայություն չլինել* (հեղինակի ապրած ուսանողական ժամանակ մեծ մասամբ էլեկտրական լույս չկար): Սրանք արդեն տարբեր շրջասույթներ են:

1. *Մեծ՝ ծավալուն,*շրջասույթները վեցից ավելի բառ են պարունակում, ինչպես՝ ժամանակի մրոտ թևերը լվանալ սուրբ մեռոնով (Ն, 6)՝ *քրիստոնեական հավատով կնքվել, վերականգնել հավատը*, հիշողության մատները թողնել թշվառ անցյալի զսպանակի մեջ (ԳՊ, 17)՝ *հիշել*, երակների ջրհեղեղի մեջ գոյության մասնիկ եռալ (ԳՊ, 19)՝ *սերունդ տալու հնարավորություն լինել*, (ծխախոտը վառել) անհոգության լույսի տակ և գունաթափ վայրկյանները ներքաշել ծխի հետ (ԳՊ, 23)՝ *ծխել*, փողոցների մութ հիշողությունից քո անունն օտարել (ԳՊ, 34)՝*չհիշել*, մատները…հեքիաթային տենդից կերոնների պես հալվել մարմնին (ԳՊ, 33)՝ *սիրել շոյելով, փայփայել* ևն:

2.*Միջակշրջասույթները* չորս-հինգ բառ են ընդգրկում՝ անվարժ թռչունի նման վանդակում թպրտալ (ԳՊ, 11)՝ *անհանգիստ լինել*, վայրկյանների արձագանքներում գալիքի սերմեր լինել (ԳՊ, 14)՝ *կյանք, սերնդատվություն լինել*, թմրության հաբը մի կողմ նետել (19, ԳՊ)՝ *աշխատել*, գալիքաեռ երազով օծուն գավաթը պարպել (19, ԳՊ)՝ *սուրճ պարպելով գուշակության պատրաստվել*, տառապանքի միջից հևոցներ հուղարկավորել երկինք (21, ԳՊ)՝ *թախծությունից հրաժարվել*, աստված ճանապարհը դեմը երկարել (29, ԳՊ)՝ *ապրել, ստեղծագործել*, բանաստեղծության ձեռագիրը ակվարիումի ձկներն ուտել (34, ԳՊ)՝*չլինել,* անհող տարածության մեջ ապրել (ԳՊ, 18)՝ *գեղագիտորեն աշխատել*:

3. *Փոքր կառույցիշրջասույթներ*, որոնք երկու-երեք բառ են ընդգրկում(սրանք իշխող են)՝ չգոյությունից ավերվել (ԳՊ, 26)՝*չլինել*, արքայություն չերազել (ԳՊ, 45, Ն, 59)՝ *համեստ լինել*, երակների ջրհեղեղ (19, ԳՊ)՝ *արյուն*, գոյության մասնիկ եռալ (19, ԳՊ)՝ *սերունդ տալու հնարավորություն լինել*, գրիչն արցունք թափել (ԳՊ, 17)՝ *թախծոտ թեմա ստեղծագործել*, տարօրինակ ու պոետիկ վարք (13, ԳՊ)՝ *արվեստագետի բնավորություն*, երկնող ոգի (16, ԳՊ)՝ *ստեղծագործող*, մահահոլի ինքնությունը փարատել (16, ԳՊ)՝ *զբաղեցնել, ոգեշնչել*, արարման հրաշք (19, ԳՊ)՝ *ստեղծագործելը*, հուշերգի ելևէջներ (26, ԳՊ)՝ *չափածո*, տողերը վկայակոչել (29, ԳՊ)՝ *բնագրային օրինակները կարդալ*, հիստերիկ գաղափար (30, ԳՊ)՝ *խորհրդային կարգերի ջատագովություն*, հիշելուց արյունը ցավել (34, ԳՊ)՝ *կարոտել,* սերը բառընդերքում տաքանալ (ԳՊ, 36, Ն, 50)՝*ցուրտ սենյակում սիրո մասին ջերմ գրել* ևն:

Այժմ փորձենք այդ *շրջասույթները* լեզվաբանական որոշակի *խմբավորումներով* ներկայացնել:

Կ. Հակոբյանի ստեղծագործություններում կիրառված շրջասույթները բառագիտական *իմաստաբանական* արժեքներով ունեն *հոմանշություն,հականշություն, նույնանություն կամ համանունություն* (նախավերջինն ու վերջինը համեմատաբար քիչ են, իրար կից կիրառությունները սակավ են լինում): Ձևաիմաստաբանական *հոմանիշը* շրջասույթների արտահայտության դիտվածքում (պլան) փոխաբերված են *համանիշներով* ու *նույնանիշներով*: Այլ բառերի նշույթներով ձևավորված այդ շրջասույթները հստակ են և գործածված են հիմնականում տարբեր գործերում:

Համանիշ-Շատ է կիրառված *սիրելուն* վերաբերող գոյական, բայ շրջասույթները՝ *սեր, սիրել,* ուստի դրանց շարքերն ավելի բազմաքանակ են (դա բնական էր երիտասարդ սիրահար բանաստեղծին): Օրինակ՝ անվարժ թռչունի նման վանդակում թպրտալ (ԳՊ, 11)՝ *սիրել, գուրգուրել*// հրեշտակների մույկեր հագած գիշերն այցելել ու բարձը կիսել (ԳՊ, 44, Ն, 57)՝ *սիրել, երազում սիրածին հանդիպել*// երջանիկ անգիտությամբ փարվել (ԳՊ, 44, Ն, 58)՝ *շոյել, սիրել*// ապրած-չապրած կյանքում կորցրած հույսերը վերադարձնել (ԳՊ, 44, Ն, 58)՝ *նորից սիրել*-ձեռքերից ծորացող ներշնչանքի ելևէջների մեջ մարմին թրթռալ (ԳՊ, 44, Ն, 58)՝ *սիրել, փայփայել*// լուսե պարանոցին փարվել (ԳՊ, 43, Ն, 57)՝ *սիրել, գուրգուրել*// լուսաշողերից հունցված անմեղ մարմնին հպումներ կրել (ԳՊ, 43, Ն, 57)՝ *սիրածից փայփայվել, սիրել* //փոթորիկ մարմինը փռել նեղ սենյակի խեղճուկրակ մահճակալին (ԳՊ, 45, Ն, 59)՝ *սիրել* //փշրված գիշերներն ամբողջանալ (ԳՊ, 45, Ն, 59)՝ *սիրել,* կորած հույսերից մեկը (ԳՊ, 43, Ն, 57)՝ *սեր*// փոթորիկ մարմին (ԳՊ, 45, Ն, 59)՝ *սեր*// անուշ տառապանք (33, ԳՊ)՝ *սեր*// անզուսպ գիշերվա հիշողություն (33, ԳՊ)՝ *սեր*//լուսնի կաթնագույն հիշողություն (33, ԳՊ)՝ *սեր* //սիրո լուսին (42, ԳՊ, 56, Ն)՝ *հասուն սեր*: Ուրիշ իմաստով համանիշ շրջասույթների շարքերը սակավաքանակ են, ինքպես՝ երակների ջրհեղեղ (14, ԳՊ)՝ *կենսալից արյուն, ողջություն, կյանք* //գոյության սերմեր (14, ԳՊ)՝ *կյանք*// նախնիների գոյատենչ արյուն (Ն, 22)՝ *կյանք* //հույսի աստղեր (Ն, 22)՝ *կյանք*, սիրո լուսինն աղոտանալ, չքանալ երկնքից (42, ԳՊ, 56, Ն)՝ *չսիրել* //ներկա սերը հուշ դարձնել (40, ԳՊ, 54, Ն)՝ *չսիրել* ևն:

Նույնանիշ-«Ծննդավայր» բանաստեղծության սկզբում ու վերջում գործածել է մեկ բառի տարբերությամբ *հիշել* բովանդակությունը պարունակող նույնանիշ շրջասույթները: Կ. Հակոբյանը ծնվել է *լեռնային* տեղանքում, ուստի այդ բառի նշմամբ *մանկությանը* հոմանիշ է դարձրել՝ *մանկության* դռնով ներս մտնել// *լեռների* դռնով ներս մտնել (Ն, 14)՝ *մանկությունը հիշել*: Ահասարսուռ *պատերազմ*, *մահ* իմաստ ունեցող շրջասույթներ՝ եղեռնաշունչ օրվա երախ (ԳՊ, 7)՝ *պատերազմ*, *մահ*, Հեղձուկ վառոդի հոտ (5, Ն)՝ *պատերազմ*, *մահ*, տագնապոտ օրերի երախ (Ն, 22)՝ *պատերազմ, մահ,* լեռնացող երազ (Ն, 22)՝ *հայրենիք, Արցախ*//կորստյան մոխիրներց կարկառված քարեր (Ն, 22)՝ *հայրենիք, Արցախ*, անդունդի մեջ հասունանալ (21, ԳՊ)՝ *զարգանալ*// գալիքի հիմքը դնել անցյալի մաշված հետքերի վրա (21, ԳՊ)՝ *զարգանալ*, խորության վայրենի ուղեծիրն ընկղմել (23, ԳՊ)՝ *անհավատալին կատարել*// ջրերը հրդեհել (23, ԳՊ)՝ *անհավատալին կատարել*// առասպել դառնալ (23, ԳՊ)՝ *անհավատալին կատարել*, հիշողության պարանները ձգվել (27, ԳՊ)՝ *հիշել*//մանկության ոտնահետքերը կնքել (27, ԳՊ)՝ *մանկական ժամանակների վերաբերյալ հիշողություններ արթնանալ,* տառապանքով վերծանվել (29, ԳՊ)՝ *ստեղծագործել*// տառապանքե թագը կռել (29, ԳՊ)՝ *ստեղծագործել՝ բանաստեղծել*// փիլիսոփայել ԱՆՀԱՅՏի մասին (ԳՊ, 12)՝ *վերացական ստեղծագործել*, ինքնությունը զննել (ԳՊ, 29)՝ *ստեղծագործությունը կարդալ*//տողերը վկայակոչել/վել (ԳՊ, 29)՝ *ստեղծագործությունը կարդալ,* հուշերը փողոցից վաղուց ավլել (36, ԳՊ, 50, Ն)՝ *մոռանալ*//փողոցների մութ հիշողությունը օտարել (34, ԳՊ)՝ *մոռանալ* ևն:

Հականիշ՝ կարծրացած քարերի փոշին սրբել (ԳՊ, 9)՝ *հարատևել*-վերից հսկել (Ն, 9)՝ *մահացած լինել*, հիշողության ցանցում մեռնող բոպեներ (13, ԳՊ)՝ *անցյալ*-լուսեղեն թագ (6,

Ն)՝ *գալիք*, անցած սերերի շարքն ավելացնել մեկով (40, ԳՊ, 54, Ն)՝ *նորից ուրիշի սիրել*- ժամանակի կոպից անցած սերերի շարքը կախված մնալ (40, ԳՊ, 54, Ն)՝ *չմոռանալ նախորդ սերերը*, անցյալի սմքած ստինքին հպվել (18, ԳՊ)՝ *հիշել*- հուշերը փողոցից վաղուց ավլել (36, ԳՊ, 50, Ն)՝ *մոռանալ*//փողոցների մութ հիշողությունը օտարել (34, ԳՊ)՝ *մոռանալ*: *Նույնանուն*՝ մահահղի մենություն (ԳՊ, 16)՝ 1. *սիրածի մոտ չլինելը*, 2. *չստեղծագործելը*, մահահղի մենությունը փարատել (ԳՊ, 16)՝ 1. *սիրածի մոտ լինել*, 2. *ստեղծագործել*, աստղային մահ (ԳՊ, 20)՝ 1. *լուսանալը*, 2. *աստղ ծորալը*, անձեռակերտ հուշերի խորք (18, ԳՊ)՝ 1. *սիրոանցյալ*, 2. *հիշարժան պատմություն*, խորության վայրենի ուղեծիր (ԳՊ, 23)՝ 1. *խորք*, 2. *վտանգավոր գործ, մտադրություն*, մի օր վարքը ծրարել որպես հիշողություն (ԳՊ, 31)՝ 1. *դագաղում դնել*, 2. *ստեղծագործել, գրքի վերածել* ևն:

Շրջասույթները տարբեր խոսքի մասերի արժեքով են: Դրանք հիմնականում ձևաբանական իմաստավորումը ձեռք են բերում գերադաս անդամի շարահյուսական մակարդակում և *գոյականի* ու *բայի* սահմաններում են (երբեմն բնութագրություններում միայն առարկան, երևույթն են նշում):

Գոյական՝ երակների ջրհեղեղ (ԳՊ, 1)՝ *արյուն*, նախապապի հողեղեն վարք (ԳՊ, 6)՝ *հավատացյալ աշխատավորի կյանք ու սովորույթ, գյուղատնտեսական աշխատանք*, գոյության արմատ (ԳՊ, 6)՝ *հավատ*, կյանքոտ հառաչանք (6)՝ *վիրավոր, մահամերձ զինվորի ձայն*, առավոտվող օր (ԳՊ, 7)// աստղային մահ (20, ԳՊ)՝ *լուսաբաց*, նահատակների լեզու (լեզվով, ԳՊ, 7)՝ *հայերեն*, հնդկահավի ներկայացում (Ն, 14)՝ *պչրանք*, հույսի աստղեր (Ն, 22)՝ *կյանք*, ապստամբ մտքեր (21, ԳՊ)՝ *իրականությանը չհարմարվելը*, անցյալից բռնաբարված հետքեր (21, ԳՊ)՝ *արգելված գաղափարներ*, մատների հիշողություն (ԳՊ, 33)՝ *սիրո զգվանք*, խավար անդաստանում հանգերգող լույս (ԳՊ, 39, Ն, 53)՝ *բանաստեղծ*, գիշերվա ափում մոմի թախծող լեզվակ (ԳՊ, 39, Ն, 53)՝ *համեստ սիրահար* ևն:

Բայ՝ հեղձուկ վառոդի հոտով հեղվել (5, Ն)՝ *պատերազմ լինել*, կրակել չափածո (3, ԳՊ)՝ *բանաստեղծելով կռվել*, գրիչն ու ավտոմատը շփոթվել (3, ԳՊ)՝ *մտավորական՝ գրող պատերազմում լինել*, եղեռնաշունչ օրվա երախում մաքառել (ԳՊ, 7)՝ *Արցախի գոյապայքարում լինել*, կոխկրտել բնությունը (բնույթը, բնավորությունը, ԳՊ, 11)՝ *սովորության հակառակ գործել*, ցավի ու մահվան դաշտ (13, ԳՊ)՝ *պատերազմ*, ռումբերն ու արկերն արյուն թքել (13, ԳՊ)՝ *պատերազմի զոհեր լինել*, ծարավ մարմինը՝ գոյաձևը թրջվել (24, ԳՊ)՝ *անձրևի տակ ընկնել*, բաժակից հուշեր քամվել (Ն, 17)՝ *սուրճի բաժակից գուշակել*, գրիչն արցունք թափել (ԳՊ, 17)՝ *տխուր թեմայով ստեղծագործել*, հիշողության մատները թողնել թշվառ անցյալի զսպանակի մեջ (ԳՊ, 17)՝ *հիշել*, երակների հիշողությունը չհատվել (ԳՊ, 17)՝ *սերնդատվության արյունը շարունակվել*, հնի ու նորի առեղծվածներում ձևեր զննել (ԳՊ, 18)՝ *ստեղծագործել*, անհող տարածության մեջ ապրելու պատրանք որսալ (ԳՊ, 18)՝ *գեղագիտական աշխատանք կատարել*, (սիրո) կորուստները հաշվել (ԳՊ, 18)՝ *հիշել*, ճախրանքի համար ծնվել (21, ԳՊ)՝ *ստեղծագործող լինել*, բանականության ծանր բեռներ կրել (21, ԳՊ)՝ *ողջախոհ լինել*, ապստամբ մտքերը ներսը կրծել (21, ԳՊ)՝ *իրականությանը չհարմարվել*, անհոգության լույս (23, ԳՊ)՝ *ծխախոտի համար կրակ վառելը*, հիշողության տառապանքով վերծանվել (ԳՊ, 29)՝ *ստեղծագործել*, լուսնոտի նման զգալ (40, ԳՊ, 54, Ն)՝ *ոչ լուրջ ընկալել*, վաղանցիկ սիրո վախճանը վայել (ԳՊ, 42, Ն, 56)՝ *ափսոսալ ավարտված սերը*, գիշերվա ափի մեջ սեղմվել (ԳՊ, 42, Ն, 56)՝ *գիշերը դրսում սիրածի հետ գրկվել* ևն:

Եթե Գ. Սարյանը «Ծխախո՛տս» բանաստեղծությունում անձնավորել է գլանակը, կիսվել հետը՝ ինքնամփոփությամբ նմանեցնելով իրեն (Ծխախո՛տս, այրվում, վառվում ես// Ինքդդ քեզ, ինչպես ես…) առանց շրջասության կիրառության, ապա Կ. Հակոբյանը քնարական ինքնազրույց պարունակող «Պատրանք» բանաստեղծության երկրորդ տան անձավորած գիշերից թույլտվություն է հայցել ծխախոտը վառելու, նյարդերը հանգստացնելու համար: Մանրամասնված *շրջասությամբ* այդ կառույցը անհարիր թվացող բառերի նկարագրությամբ

գեղագիտական յուրատիպ պատկեր է՝ ծնված մթության ազատությունում՝ անհոգության լույս (23, ԳՊ)՝ *լուցկուց վառված կրակ*, ծխի հետ ներքաշել վայրկյանները գունաթափ (23, ԳՊ)՝ *անիմաստ ժամանակ ծախսել*: Ուրեմն, նյարդեր հանգստացնող ծխախոտը քնարերգուների, նյարդացածների զրուցակիցը դառնալով, հասարակության կողմից ճանաչվում են որպես զորավոր դեղահաբ: Եվ ահա Կ. Հակոբյանն ինքնատիպ կառույց ունեցող այդ գործում, ամբողջականորեն սոփեստ հնգատող տան մանրակաղապարներում յուրօրինակ հետաքրքրություն է ստեղծել, ազատ պահը գեղագետը մարդկային տրամաբանական մտուրումների է ենթարկել: Այդտեղ նաև յուրաքանչյուր տան կենտրոն գոյական առաջին բառից հետո կիրառված է բազմակետեր՝ …….., այսինքն՝ *լռություն*՝ խոսք, ասություն[1] (չգրված բառեր), որոնք էլ, ըստ իս, հեղինակի համար իրենց հերթին յուրատիպ շրջասույթներ են:

Գիշեր …….
ծխախոտս թող վառեմ
անհոգության լույսի տակ
ու *ներքաշեմ ծխի հետ*
վայրկյանները գունաթափ: (ԳՊ, 23)

«Կոմիտասնաչք է բացել քերթվածքներ հորինողների հողում…Նրա հայրական տանպատից ճառագում է Ստ. Ներսիսյանի՝ Մեսրոպ Մաշտոցի հանրահայտ լուսաճաճանչ նկարը՝ հայոց հրաշքը, այն է՝ արյուն չթափած ու հայապահպան 36 քաջազուն զինվորներն արարելիս: Այդ նկարով տոգորված երիտասարդի ուսումնատենչ հոգին մնաց երկնի անհունում»[2]՝ մեզ հավերժելով հայ բանարվեստումնոր շունչ համարվող *շրջասույթները*:

Այսպիսով՝ Կ. Հակոբյանի ստեղծագործություններում նշանակալից տեղ գրավող *շրջասույթները* իրենց կիրառական բազմազան արժույթներով լեզվաբանական լուրջ քննության պահանջարկ ունեն:

Տեղեկություններ հեղինակի մասին.

Սիլվա Մինասյան-բ.գ.թ., դոցենտ, ակ. Ս. Աբրահամյանի անվան հայոց լեզվի ամբիոն
E-mail:silvaminasyan@mail.ru

Հոդվածը տպագրության է երաշխավորել խմբագրական կոլեգիայի անդամ, բ.գ.դ. Ս.Ա. Խանյանը:

[1]Փոլադյան Միշել, «Լեզու և գրականություն», Նոր-դար Զանգակ հրտկչ., Ե., 1998 թ., 96 էջ, «Լռություն», էջ 51-54:

[2]Մինասյան Ս. Ա., «Հատուցվում է արժանին», Լուսաբար (թերթ), N 12 (12-31, V), 2004 թ.:

ՀՏԴ 82.09 Գրականագիտություն

ՀԱԿՈԲ ԿԱՐԱՊԵՆՑԻ «ԱԴԱՄԻ ԳԻՐՔԸ» ԱԶԳԱՅԻՆԻ ՆԱԽԱՀԻՄՔԸ՝ ԻԲՐԵՎ ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ՄՏԱԾՈՂՈՒԹՅԱՆ ՃԱՆԱՊԱՐՀ

Նանար ՍԻՄՈՆՅԱՆ

Բանալի բառեր. *սփյուռք, ազգային կենցաղ, հայկական համայնք, ուծացում, անկում, եղեռն, ահաբեկչություն, Ղարաբաղ, շարժում:*

Ключевые слова: *диаспора, национальный быт, армянская обшина, слияние, спад, геноцид, терракт, Карабах, движение.*

Key words: *diaspora, nationality, Armenian community, mergence, decline, genocide, Karabakh, movement.*

ПРОИЗВЕДЕНИЕ АКОПА КАРАПЕНЦА „КНИГА АДАМА" –ФУНДАМЕНТ НАЦИОНАЛЬНОГО, КАК ДОРОГА ХУДОЖЕСТВЕНОГО МЫШЛЕНИЯ

Н.СИМОНЯН

В данной статье анализируется и оценивается произведение знаменитого писателя армянской диаспоры Акопа Карапенца „Книга Адама". В романе автобиографический элемент сливается с исторической совокупной целостностью. Герой и автор затрагивают жизненные вопросы языка и духа, национальной памяти и национальной принадлежности.

Карапенц бьет тревогу за ассимиляцию восточных армян и вообще всех армян, оставшихся без крова, как дамоклов меч висящей над их головами.

"ADAM'S BOOK" NATIONAL BASE AS THE WHY OF FICTION THINKING

N.SIMONYAN

Adam's Book by famous Armenian writer Hakob Karapents is analyzed and appreciated in this article. In the novel biography is accompanied with historical events. The hero and the author discuss issues of spirit and language, national memory and vital questions.

The danger of mergence like Damocles' sword hangs over western Armenians and the ones who had left their homeland- alerts Karapents.

Այս հոդվածում վերլուծվում և գնահատվում է սփյուռքահայ հայտնի գրող Հակոբ Կարապենցի «Ադամի գիրքը» ստեղծագործությունը: Վեպում ինքնակենսագրական տարրը շաղախվում է պատմական հավաքական ամբողջությանը: Հերոսն ու հեղինակն արծարծում են ոգու և լեզվի, ազգային հիշողության և պատկանելության կենսական հարցեր:

Կարապենցն ահազանգում է՝ ուծացման վտանգը դամոկլյան սրի նման կախված է արևմտահայի և առհասարակ հայրենի տանիքը կորցրած սփյուռքահայի գլխավերևում:

Առաջին վեպից ավելի քան տասը տարի անց Հակոբ Կարապենցը 1980-ի կեսերին գրեց և մեկ տարին չբոլորած՝ ավարտին հասցրեց, իսկ արդեն 1983 թվականին Նյու Յորքի «Ոսկեդար» հրատարակչատունը լույս ընծայեց Սփյուռքի մեջ ազգային կենցաղյան սրված բովանդակությամբ առանձնացող այս երկրորդ վեպը՝ «Ադամի գիրքը» խորագրով, որը, հեղինակի բնորոշմամբ, հայի հոգու պատմությունն է:

Հ. Կարապենցն այն ձոնել է կնոջը՝ Ալիսին: Գրքի հասույթը հատկացվել է Միացյալ Նահանգների արևելյան շրջանի հայկական ամենօրյա վարժարանների առտնին հոգսերին: Այն արժանացել է ՀԲԸՄ «Ալեք Մանուկեան» և ֆրանսահայ գրողների հատկացված «Էլիզ Գաւուքճեան-Այվազեան» հիմնադրամների ուշադրությանը:

Խորքի մեջ նյութը բացելու եղանակը կրկնում է «Կարթագէնի դուստրը» վեպի հարցադրումները՝ միայն թե արդեն զուտ ազգային պատուհանից: Վեպի հերոսը գրող և լրագրող Ադամ Նուրիջանյանն է, ամերիկացիների ականջին դյուրընկալելի արտասանումով՝ Նուրյանը:

«Ադամի գիրքը» ,- գտնում է վեպի հեղինակը 1986-ին «Գրողը իր հետ, այլոց հետ» փորձագրության մեջ,- մտնում է ամերիկեան ժամանակակից գրականութեան «ինքնամփոփ» հոսանքի մէջ, որը մենակ մարդկանց ու մենակ համայնքների մի տխուր ու անդիմագիծ շրջապտոյտ

է»[1] : Տարակուսելին թերևս այն զուգահեռն է, որով Հ. Կարապենցն իր հայալեզու վեպը կառուցում է ամերիկյան գրական նորագույն շարժման ու ներքին թեմատիկայի սահմաններում՝ անտեսելով, որ իր ստեղծագործությունը նախ և առաջ հայ գրականության մաս է, թեև քիչ ավելի ուշ նա «պարտադրաբար» հիշում է այդ մասին: Ի դեպ, արդեն նման մտայնության թելադրության տակ հայրենի լավագույն գրականագետներից Դ. Գասպարյանն այս վեպը փորձում է դիտել «միանգամայն ամերիկյան ու սփյուռքահայ գրականության» արտադրանք, այսինքն՝ «պատկանելության» ցուցիչ, ինչպես հենց ինքն է գրում, «ենթահող ունենալով ամերիկյան ժամանակակից հասարակարգն ու այնտեղ ապրող հայ համայնքը»[2]:

Սրանից էլ հարկ է բխեցնել, որ «Ադամի գիրքը» երկի վիպական գործողությունների զարգացումների ուրվագծի մեջ հայկականը վերակազմվում է իբրև մշտակա ու գերակշիռ գործոն: Ավելին՝ հեղինակը խորացնում է իր համար ծրագրային այն ելակետը, թե Ադամ Նուրյանի համար հայությունը «միակ փրկութիւնն» է: Ահա թե ինչու իր գլխավոր հերոսը, հեղինակի «դրդմամբ», մաքառում է մի կողմից՝ անհատականության պաշտպանության համար, մյուս կողմից ինքնաբուխ ձգտումով փորձում է ներգրավվել համաամերիկյան հետաքրքրությունների հորձանքին: Նրա համար իր հայ հերոսը նկատելի չափով «մատնում է» հայկական ակունքից եկող իր խառնվածքը, վերհանում ազգային երկվության բերած բարդույթները, սակայն միաժամանակ սավառնում վեր ազգային գիտակցության «նեղ թվացող» արահետներից:

«Ուծացումի հոլովոյթի մէջ,- հուշում է ընթերցողին Հ. Կարապենցը,- նա աւելի շեշտակի մարդ է, քան իր համատիպարները ամերիկեան գրականութեան մէջ: Նուրեանը գոնէ նախասիրութիւններ ու ատելութիւններ ունի, միաժամանակ հայ եւ ամերիկացի լինելու երկուութիւն ունի: Պատմական հայեցակէտ ունի: Կիրք ունի, նոյնիսկ ուշացած երազներ: Այս տեսակէտից, դեռ չհաշուած լեզուն, գիրքը մաս է կազմում սփիւռքահայ գրականութեան, անկախ արժեւորման չափանիշներից»[3]:

Հ. Կարապենցն այստեղ անդրադառնում է սփյուռքահայի երկփեղկ ինքնության հարցին: Ուշագրավ է Հակոբ Օշականի նույնքան անհանգիստ գրագետ որդու՝ Վահե Օշականի, քննադատի, իսկ այս առումով անհրաժեշտաբար ընդգծենք, արձակագրի սուր հայացքով մոտեցումը: Անդրադառնալով Ադամ Նուրյանի կերպարին, նա շեշտը դնում է այն մտքի վրա, թե ով է այս հերոսը՝ «...Կարապենցի Ադամն ինքն իր ցոլքին շուրջը դարձող նարգիսական ներշնչեալ մտաւորական-արուեստագէտի հովեր պտտցնող հայ մը՝ անկարող որևէ նշանակալից արարքի, որևէ յուզումի կամ ինքնատիպ մտածումի: Ոչինչ կը պատահի Ադամի կեանքին մէջ՝ ցնորքէ ցնորք, գիրկէ գիրկ, բազմոցէ բազմոց ու պարագաներէն քշուած-տարուած մէկը, ազնուական վրիպած մը»[4]: Մենք բաժանում ենք գրականագետ Անահիտ Քեշիշյանի սևեռուն նկատառումը՝ իրավացի համարելով նրա այն դիտողությունը, թե Վ.Օշականի դիտարկումն ունի «հապճեպութեան» կամ, ինչպես ինքն է նկատում, «մակերեսայնութեան» կնիք: Ընդ որում՝ նա առաջարկում է դիմել արևմտահայ փորձառու գրագետի գնահատականի մեջ խմբագրական շտկումի «բաց» քայլի՝ մոտեցման այն սուր միտումով, որպես թե «նարգիսականութիւնը» պետք է փոխարինել «եսակենտրոնութեամբ»՝ այն դիտելով մարդու՝ օրեցօր խորացող մենության հետևանք:

Այստեղից՝ հենց Ադամ Նուրյանի կերպարի առիթով գրականագետ Ա. Քեշիշյանը, մեր տպավորությամբ, իր հերթին հանգում է ծայրահեղության՝ գտնելով, որ Վ. Օշականը վեպի բնագիրը յուրացրել է որոշ իմաստով «թերընկալումով»՝ ի տարբերություն հեղինակի և նրան հայրենակից խորաթափանց գրականագետի:

Եվ պատկերացրեք, իզուր. չէ՞ որ Վ. Օշականը «չի դժգոհում» Հ. Կարապենցի հերոսի գաղափարական խորքից, աշխարհի հանդեպ կրակոտ վերաբերմունքից, ատելության ու սիրո ապրված «տվայտանքներից», նա միայն հպանցիկ նկատում է, որ Նուրյանը խառնվածքով ինքնրտ է, առավել վերլուծող, քան գործող, մենկնական են նրա դատողությունները, «մտածումները»՝

[1] Յակոբ Կարապենց, Երկու աշխարհ / գրական փորձագրութիւններ, Ուոթերթաուն, 1992, էջ 80:- Ընդգծումը հեղինակինն է – Ն. Ս.:

[2] Դավիթ Գասպարյան, Հայ գրականություն / գիրք երկրորդ, Եր., «Զանգակ», 2002, էջ 245:

[3] Յակոբ Կարապենց, Երկու աշխարհ, էջ 80:

[4] «Հայրենիք» օրաթերթ, Բոստոն, 1983, 8 հոկտ:

ներթաքույց, մերթ ոչ անտարբեր հայկական հարցադրումների առջև և մերթ էլ՝ ակամա, հոգեվիճակից բխող, դրանցից փախչող: Այդ մասին խոստովանում է հեղինակը՝ վեպը գրելուց երեք տարի անց. «Նա այն չէ, ինչ կը ցանկանայինք որ լինէր, այլ այն է, ինչ է՛, իր բոլոր գունատ երազներով, անցողիկ գրգիռներով, որեւէ մէկին եւ որեւէ տեղի չպատկանելու մշտառկայ գիտակցութեամբ: Որոշ առումով, Նուրեանը հակահերոս է, մէկը մեզանից, մեր բոլորի համադրութիւնը: Առնուազն այդ է եղել իմ նախագիծը: Այդ է եղել գրքի գոյութեան իրաւունքը»[1]: Եթե երազները գունատ են, ուրեմն կարիք չունի ընթերցողը դրանց տակ «ազգային հրավառություն» տեսնելու կամ երևակայությամբ վերստեղծելու: Այսպիսին է ամերիկահայ լրագրողը, այսպիսին է ամերիկահայ վիպասանը:

Մեր կարծիքով, սակայն, Վահե Օշականն այնքան էլ չի հեռացել ամերիկահայ վիպասանի կանխադրույթների համակարգից, ընդհակառակը, հետևողական ուրվագծով վերակազմել է դրանք, ինչը, չգիտես ինչու, դուրս է մնացել Ա. Քեշիշյանի քննական հայացքից, մինչդեռ սրվել է ակամա թիրախը քննադատի դեմ, որն անուղղակիորեն սահում-անցնում է նաև Հակոբ Կարապենցին, ինչն, անշուշտ, չէր մտնելու իր ճանաչողական-վերլուծական ծրագրերի մեջ, չէր մտնելու հեղինակին նվիրված իմացական խորքով առանձնացող աշխատասիրության մեջ:

Իսկ Հ. Կարապենցը վեպի հիմնարժեքների մեջ առանձնացնում էր երեք, իր իսկ մեկնությամբ՝ «մակարդակներ», որոնցից առաջինը բացահայտում է «ամերիկեան հասարակարգի դրոյթը», երկրորդը՝ «սփիւռքահայի արդի տագնապը» և վերջապես

երրորդը՝ «Ներկայ դարի ծայրին գտնուող մարդու տագնապը»[2]: Գլխավոր հերոսը ու նրա միջավայրը կազմում են իր շուրջը համախմբված մյուս հերոսները, որոնց մեջ էր՝ ՄԱԿ-ում աշխատող հայ մտավորականներից՝ իր «կիսադեմը» կարծես դառնալ ձգտող Վարուժան Լևոնյանը: Վերջինս գրողի մտահղացումով կարող է դիտվել Սևակ Սուրյանի կրկնակը՝ նախորդ «Կարթագէնի դուստրը» վեպից, միայն թե նկատենք, որ Վարուժանը երկրորդ վեպում այդքան ներկայանալի ու անմիջական, շոշափելի տիպար չէ, ինչպիսին Սուրյանն է: Հերոսին ամբողջացնող ուժերը՝ այդ թվում՝ Մելինեն, զավակները՝ Սեդան ու Վահեն, «սիրո ատրուշան» Զելդան, երկրորդական կերպարները, անգամ դրվագային գործողությունների շնորհիվ ծառայել են «այս եռեակ հանգոյցները միմեանց զօդելու եւ հասնելու»[3] բարձր գեղարվեստական հանձնառության, որից հետո այնքան սպասված «ճշմարտության» իր ճանապարհ-բանաձևն է:

Նկատենք, որ հերոսուհու՝ Զելդայի անակնկալ մահը, իբրև հեռացումի եղանակի ընտրություն, վիպական տրամաբանության չի ենթարկվում: Ադամը և Զելդան այլևս որոշել են միասին ապրել, գնալ Հայաստան՝ երեխաներ ունենալու, ու հանկարծ՝ անբացատրելիին: Առավոտյան կինը գնում է անտառակի դիմացի ժայռից մագնոլիաներ բերելու, որը խորհրդանշելու էր իրենց անմնացորդ սերը: Անտառապահները նկատել են կնոջ գահավիժումը, բայց փրկել չեն կարողացել հասցնել: Հ. Կարապենցը կարող է ընթերցողին բացատրել, թե, ի՛նչ արած, այդպիսին է մեր կյանքը, բայց ակնհայտ է, որ ինքը երբեմն միջամտում է նույն կյանքի բնականոն ընթացքներին՝ հաստատելու համար գաղափարական միտումի մեջ գրողական կողմնորոշման իր գիրթ գծերը: Հեղինակն ու հերոսը նույնանում են. նրանք նույն խորագրով, ըստ էության, նույն գիրքն են գրում, իսկ Զելդան մագնոլիաներով ուզում է զարդարել տոնական այն սեղանը, որը երեկոյան բացելու է սիրելիի գրքի ավարտի կապակցությամբ:

Վեպում հեղինակ-հերոսի հայացքի մեջ արձակագրի ինքնակենսագրական տարրերի հաստատումը, սակայն, չունի անակնկալ ծավալում: Ադամ Նուրյանի տոհմածառի պատումի թեթևասահ մատուցումն իրեն ծնող ժողովրդի պատմությունն է՝ կարևոր էլ չէ, հայտնի թե անհայտ, առասպելախառն, երևակայածին թե խիստ իրական, պատմական ճանաչողության շրջանակում: Ավելի կարևորն այն է, որ Նյու Հեյվընում ծնված որդին աչքի լույսի պես պահում է սերնդից սերունդ

[1] Յակոբ Կարապենց, Երկու աշխարհ / գրական փորձագրութիւններ, էջ 80:
[2] Նույն տեղում:
[3] Նույն տեղում:

եկող դարաբաղյան «համառությունը», այն որդին, որ, թվում է, հոգնեցնելու աստիճան կրկնում է՝ «Ես Ղարաբա՛ղն եմ ուզում», «Ես Ղարաբաղի լեռնե՛րն եմ ուզում»[1] :

Ի՛նչ իմանային իրենց երակներում դարաբաղյան արյան ընդոստ խաղի հորձանքով հպարտացող Ադամ Նուրյանն ու նրան հոգեկից Հակոբ Կարապենցը, որ ընդամենը յոթը-ութ տարի անց մի ողջ ժողովուրդ պիտի կանգներ, մարտնչեր ու աշխարհին հայտներ իր ինքնորոշման կամային խորհուրդը՝ «Ես Ղարաբա՛ղն եմ ուզում»: Դա հենց ամերիկահայ արձակագրի՝ գեղարվեստական հարցադրումի մատուցման խորքում պատմափաստական դեպքերից՝ դարաբաղյան իրական զարգացումներից առաջ ընկնելու գրողական կանխահասությունն է: Պատահական չէ, որ նոր սերնդին է տրված պայքարի գլուխ կանգնելու նախախնամությունը. հարց բարձրացնողն Ադամի որդին է՝ Վահեն: «Նույն ժայռի (իմա՝«համառության» - Ն.Ս.) կտորն է,- հաստատում է հայրը:- Ոչինչ գլուխը չի մտնում: Նրա մօտ երկուութիւններ գոյութիւն չունեն: Կամ այս, կամ այն: Դանդաղ է որոշում, բայց երբ հասնում է եզրակացության, ոչ ոք չի կարող փոխել նրան իր ընթացքից: Ծայրայեղութիւնների տոպրակ է»[2] : Այս ամենին հետևում է իմաստնացող ժողովրդին տրված բնութագրի փիլիսոփայական նոր ձևակերպումը՝ «Եւ ամենայատկանշականը: Նրա համար յետադարձ չկայ: Գերադասում է վարար գետը ցատկել, քան սպասել ջրերի խաղաղմանը»[3] : Պատահական չէ, որ գրքի վերջին գլուխը գրողը կոչում է «Վերադարձ», որը երբեք չես շփոթի «յետադարձի» հետ: Դա վերադարձն է դեպի Հայաստան՝ շատ ավելի հեռուն գնացող նշանառությամբ՝ վերադարձ դեպի պատմության մեջ ինքնության, հերոսականության բարձրակետը:

Հրաշալի գտնված պատկեր է մեր առջև. դարաբաղյան պատերազմը պատմության վարար գետը նետվելու պատմական քայլն էր: Պատահական չէ նաև այն, որ գրողն իրեն տեսնում է նույն այդ պատմության հանգույցներում, պայքարունակ առաջնային գծերում, իրեն՝ իր հերոսական նախնիների օրինակով: Իր գերդաստանի հարուստ պատմությունն է՝ ազգային ուրվագծով. «Այստեղ այլևս հերոսական տարածք են ստանում իրադրութիւնները: Ամէն ինչ ցցուն է, գրեթէ Հոմերոսական: Ժողովրդի առաջն անցած անմահութիւն է կերտում Վայրենի Յակոբը՝ իր ամէն մի քայլը՝ մի մի լեգենդ...: Ջրերից վեր, մռայլ հորիզոնում կանգնում է Մարիամը, իսկ նրա փէշից կառչում են մանուկները՝ Վարդանոյշ, Սաթենիկ,Աստղիկ ու Սիմոն: Եւ յետոյ ամբողջ Մեղրին ու Մեղրիի հետ ամբողջ ազգն ու ցեղը»[4] :

Պայքարի էջերի խիստ հպանցիկ, թվում է՝ զուտ պայմանական հիշողության համար տրված դրվագներում Հ. Կարապենցը կարծես գրիչը թաթախում է Կոստան Զարյանի «Տատրագոմի հարսը» պոեմի ոգեշնչումի մելանի մեջ, երբ բանաստեղծը ոգեկոչում էր եվրոպական միջնադարի երգասաններին: Պատմության հերոսական էջերին մեր արձակագիրը ընդգծված միտումով միախառնում է առասպելականն ու վավերականը՝ վրա բերելով Խաչիկ Դաշտենցի ոճավորման հայտնի եղանակը «Ռանչպարների կանչ»ից. «Մեր գերդաստանի դիտապակուց նայելով՝ այդ շարժման գլուխն է կանգնած լինում Վայրենի Յակոբը: Բայանդուրին ու Ստեփանոս Շահումեանին օժանդակ դերեր են վիճակված, չնայած նրան, որ ասողներ կան, թէ առանց յիշեալ զօրավարների անվեհեր ջոկատների, հրոյ ճարակ դարձած կը լինէր Մեղրին»[5]: Զուգահեռի մեջ Հ. Կարապենցն ավելի հեռուն է գնում ընդգծելու համար հեքիաթայինն ու իրական գույները՝ «Վայրենի Յակոբը այնքան կենդանի է, որքան կենդանի են Սասունցի Դաւիթն ու Դաւիթ-Բեկը»[6] :

Հ. Կարապենցը վիպական հյուսվածքում փորձում է ձեռք գարկել Սփյուռքի մեջ անցյալ դարի 70-80-ական թթ. ազգային-քաղաքական զարթոնքի նորագույն զարգացումների ընկալման պատմությանը և գնահատումներին՝ արտահայտելու համար հայ-թուրքական հարաբերությունների քաղաքական թնջուկը: Թուրքերի դեմ հայերի ռազմական անակնկալ գործողություններն աշխարհի տարբեր կետերում, այդ թվում՝ նաև Թուրքիայում, դրսի աշխարհը բնութագրում է որպես

[1] Յակոբ Կարապենց, Ադամի գիրքը, Նիւ Եորք, .Ոսկետառ, 1983, էջ 245:
[2] Նույն տեղում, էջ 246:
[3] Նույն տեղում, էջ 247:
[4] Նույն տեղում, էջ 248:
[5] Նույն տեղում, էջ 249:
[6] Նույն տեղում, էջ 248:

ահաբեկչությունների շարան: Հ. Կարապենցը հայ վրիժառուների ծրագրած և նախաձեռնած նյույորքյան միջադեպը գործածում է երևույթի շուրջ երկու հայացքների խաչաձև լուսաբանման նպատակով: Հ. Կարապենցի ցանկությունը պարզից պարզ է՝ հեղինակը գտել է իր հայկական լսարանը՝ մերժելով ու հերքելով հայկական «ահաբեկչություն» եզրույթը՝ պատմության մեջ բարձրացնելով երկու ժողովուրդների հավաքական պատասխանատվության ու հայի պահանջատիրության անբեկանելի իրավունքը:

Ադամը շտապում էր ՄԱԿ-ի շենքը՝ հանդիպելու լրագրող Վարուժան Լևոնյանին և թուրքական զբոսաշրջության գրասենյակի մոտ թեթև վիրավորվում է՝ հայերի արձակած ռումբից: Արդեն ոստիկանատանը լարված երկխոսություն է ծավալվում նրա և ամերիկացի քննիչի միջև: Հայ հերոսը գիտակցում է, որ աշխարհի որ ծայրում էլ լինես, արյան փոխկանչից փախուստ չունես: Նա ժողովրդի պատմական արդար բողոքի ձայնն է բարձրացնում՝ քար աշխարհի գիտակից լռության դեմ արթնացումի միակ զենքը համարելով ահաբեկչությունը. «Ահաբեկչութիւն յանուն ահաբեկչութեան ոճրագործութիւն է: Ահաբեկչութիւն յանուն ազգային ազատագրման, առաքինութիւն է»[1]: Մեկ տասնամյակով կանխելով ժամանակը՝ Հակոբ Կարապենցը կատարում է մարգարեական գուշակություն. «Եթէ վեց հարիւր տարուայ գերութիւնից հայերը կարողացան անկախութիւն ստեղծել, ապա՝ ամէն երաշխիք կայ, որ նորից կը կերտեն իրենց անկախութիւնը, երբ այդ գաղափարն ամենօրեայ մտասևեռում է՝ ազգային ձգտում: Իսկ ինչ վերաբերում է աշխարհաքաղաքական պայմաններին, նրանք մնայուն չեն, ենթակայ են փոփոխութիւնների: Երբ մեծ ալիքը գայ, հայերը պատրաստ կը լինեն: Վստահեցնում եմ ձեզ»[2] :

Եվ ի՞նչն է զարմանալին. մահից անմիջապես առաջ Հ. Կարապենցը ոչ այնքան տեսավ, այլ խորապես, հավատքով ապրեց այդ «մեծ ալիքը»: Իսկ «հավատքը» իր ընտրած բառ-պատկերն է նույն հատվածի ենթախորքում, ավելի ծանրակշիռ, քան լավատեսությունն է, ավելի խորունկ, քան տրամաբանությունը:

Սակայն հեղինակի քննած ազգային սուր, քաղաքական մեկնության տեսանկյունից արտաքնապես չմարսված, ինչ-որ տեղ դժվարագնա հարցադրումների կողքին մենք տեսնում ենք նաև լիարժեք «ամերիկացի» Նուրյանի շերտն իբրև նստվածք, իբրև հայացք-պատուհան, ինչից գրողը չի էլ ցանկանում խուսանավել:

Կյանքը վաղանցիկ է, իսկ ցրիվ սփյուռքահայի անկանխատեսելի ճակատագրի վայրիվերումը՝ շարունակական: Վեպում Ադամ Նուրյանն ալեկոծվում է, թե որտեղ պիտի թաղեն իրեն մահից հետո, մտովի թվում երկրներ ու քաղաքներ և ցավով խոստովանում, որ բոլորն էլ խորթ ու օտար են իրեն: Տո՛ւն չունի ինքը: Մնաց թերևս այս «յիմա՛ր, ազգուրաց» հայի համար Երկիր Դրախտավայրը...

Վեպի առթած ազգայինի ու մահվան հարաբերակցումի մտորումները հիմք հանդիսացան, որ իրանահայ նոր սերնդից՝ Սեդրակ Գոճամանյանի ջանքերով 2005 թվականին կյանքի կոչվի «Ո՞ւր պիտի թաղուենք» թատերական մինիատյուրը՝ նվիրված Հ. Կարապենցի 80-ամյակին: Բեմադրության շնորհալի հեղինակը Թեհրանի Հայ Մշակութային «Արարատ» կազմակերպության նախաձեռնությամբ հիմնված «Մեր անկիւն» գրական խմբակի գործուն անդամներից էր, Հ. Կարապենցի ստեղծագործական աշխարհի գիտակներից:

Ինքնաքննության ճանապարհին Նուրյանը հաճախ է կանգնում մտքի բերած անակնկալ փակուղիների առջև: Ավելորդ չէ հիշեցնել, որ երկվության բարդույթներում նա իրեն ո՛չ ամբողջովին հայ է զգում, ո՛չ ամերիկացի, ո՛չ Արևելքից, ո՛չ էլ Արևմուտքից: Շուրջ 30 տարի Ամերիկայում ապրելուց հետո անգամ նա իրեն «դրսեցի» է համարում, նոր գաղթական, նոր սփյուռքահայ: Հայ մարդու հոգին չի խաղաղվում: Նա դառնացած բացականչում է. «Նիւ Եորքն այլոց համար է, Ամերիկան այլոց համար է, ես չունեմ իմ տունը, ես փաստօրէն ոչինչ ունեմ...: Պարսկաստանում՝ խորթ, Եվրոպայում՝ խորթ, Ամերիկայում՝ խորթ, Հայաստանում՝ խորթ: Ի՞նչ ես ուզում, սրիկա՛յ»[3] : Մեր կարծիքով, Հ. Կարապենցը փորձում է խաղարկել նախանցյալ դարավերջին և հաջորդող տասնամյակներին արևմտահայ իրականության մեջ լայն տարածում գտած «դուրսեցի» արտահայտությունը՝ խորացնելու համար սփյուռքացումի ընկալման բացարձակացումի միտումները, որն անտեսվում է

[1] Նույն տեղում, էջ 92:
[2] Նույն տեղում, էջ 95:
[3] Նույն տեղում, էջ 42:

մասնավորապես հայրենի գրականագիտության շրջանակներում: Ուծացման գահավեժ ճանապարհ է սա, որ վերջին տասնամյակներին ոչ քիչ դեպքերում ստանում է «սփյուռքացումի» հանդերձ, ինչն ավելի համարձակները բնականոն վիճակ են համարում:

Լեզուն մասնիկն է ազգային մտածողության, բայց և մարտի պատրաստ ոգու արտահայտման եղանակն է:

Լեզվի և ազգային մտածողության շնչին «անեծքի պես» կառչած ոգին խանգարում է թույլ ու անկար հայերին, որոնք ամեն կերպ ջանում են ազատվել իրենց պարտադրվող ազգային բարդույթներից, երբեմն գլխապատառ փախչում են էթնիկ «ցուցիչներից», անգամ ցեղային ծագումից և, որ ամենացցուն առարկայական փաստն է՝ ավանդական վարքուբարքի կեցությունից:

Այսպես, Ադամից և կեցության հայկական ձևերից փախչում է կինը՝ Մելինեն, երբեմնի հայուհին: Նա ամուսնուն պարզ ու որոշակի հայտնում է իր դժգոհանքը՝ արդարացնելու համար իր եսակենտրոն ու ամերիկյան գահավեժ տարուբերումները. «Մենք տարբեր աշխարհների ծնունդ ենք: Դու ինձ շարունակ երկընտրանք ես պատճառում: Չգիտեմ ո՞րն է հայը, ո՞րը ամերիկացին: ...Քո հայութիւնը խեղդում է ինձ…, ես ազատութի՛ւն եմ ուզում քո կապանքներից»[1] : Ուրիշ ի՞նչ կերպ կարող է լինել ամերիկացումը Մելինեի և նրա պես հազարավոր հայերի համար: Ադամն զգում է, որ դաշույնը խրվել է իր անպաշտպան սրտի մեջ: Ինքը, որ հայության ու մարդկության դատին լծվել է անմնացորդ, չի կարողանում պաշտպանել իրեն: Սա շահնուրյան ահազանգ դարձած նահանջի նոր ու ամենից ահավոր տեսակն է: Ինչպե՞ս պատահեց: Մելինեն ծնվել ու մեծացել էր Ամերիկայում, հարստության մեջ, Քենեդիների և այլոց մեծատունների դուստրերի հետ հաճախել նույն վարժարանը: Նա այլևս խուլ է արյան կանչի հանդեպ և անդառնալիորեն նրա մեջ թագավորելու է ամերիկուհին: Սա առաջին հերթին Ադամ Նուրյանի պարտությունն է: Նա, ամերիկյան գաղափարներին, մարդկության արժեքներին միշտ ընդառաջ նետվող հայ հերոսը, շտապում է ենթագիտակցորեն հրաժեշտ տալ խաբկանքների մեջ թավալվող, արյուն փոխած կույր հայուհուն:

Նման պարագայում ամերիկյան աշխարհը դուռ ու պատուհան չունի, անղեկ է, կլանել ու խժռել գիտի միայն: Ոչնչացնում է էության ամենաթանկ մասնիկները: Վաղ թե ուշ, հիշենք մեկ անգամ ևս շահնուրի բանաձևումը, «գիտությամբ թե անգիտությամբ», երկփեղկված կեցության այս ճանապարհը հանգեցնելու է, լայն բառով՝ օտարացումի, «կոսմոպոլիտ քաղաքակրթության» անմիջական, անտեղիտալի արդյունքներին: Վեպում, հետևելով հույն փիլիսոփա, գրող Նիկոս Կազանծակիսի խոհագրության սկզբունքներին, Հ. Կարապենցն ու իր ես-ը կրող Ադամ Նուրյանը գեղագիտական հավատամքը հանգեցնում են արվեստի վեհագնա հասողությանը՝ աստվածայինին:

Տեղեկություններ հեղինակի մասին.

Սիմոնյան Նանար Վիլենի

Ստեփանակերտի հ. 6 հիմնական դպրոցի կազմակերպիչ

nanar_simonyan@mail.ru

Հոդվածը տպագրության է երաշխավորել խմբագրական կոլեգիայի անդամ, բ.գ.դ. Ս.Ա. Խանյանը:

[1] Յակոբ Կարապենց, Ադամի գիրքը, էջ 3:

ՀՏԴ 891.981.0 Ընդհանուր գրականագիտություն

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԲԱՆԱՀՅՈՒՍՈՒԹՅՈՒՆԸ՝ ԱԶԳԱՅԻՆ ԱՐԺԵՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ. ԱՐՄԵՆ ՍԱՐԳՍՅԱՆԻ «ԱՐՑԱԽԻ ԲԱՆԱՀՅՈՒՍՈՒԹՅՈՒՆԸ» ԳԻՐՔԸ

Զարինե ՍԱՌԱՋՅԱՆ

Բանալի բառեր՝ *Արցախ, բանահյուսություն, ազգային արժեհամակարգ, վիպական բանահյուսություն, քնարական բանահյուսություն, ավանդություն, առակ, զվարճախոսություն, պատկերավոր մտածողություն, առած-ասացվածքներ:*

Ключевые слова: *Арцах, фольклор, национальная система ценностей, эпический фольклор, лирический фольклор, традиция, басни, юмор, образное мышление, пословицы и поговорки.*

Key words: *Artsakh, folklore, national value system, epic folklore, lyrical folklore, tradition, fable, joke, illustrated words, proverbs and sayings.*

НАРОДНЫЙ ФОЛЬКЛОР В СИСТЕМЕ НАЦИОНАЛЬНЫХ ЦЕННОСТЕЙ: КНИГА АРМЕНА САРГСЯНА «АРЦАХСКИЙ ФОЛЬКЛОР»

З.САРАДЖЯН

Фольклор занимает особое уникальное место в системе ценностей армянского народа. Чтобы лучше понять какой-либо народ, нужно прежде всего ознакомиться с его фольклором, в котором отражены менталитет, традиции, привычки, образ жизни, семейная мораль, мышление, мировоззрение данного этноса.

Книга «Арцахский фольклор» Армена Саркисяна - лучший путеводитель, в которой отражается биография, характер и мышление арцахцев. Эта книга пополняет богатую сокровищницу армянского фольклора.

FOLKLORE IN THE SYSTEM OF NATIONAL VALUES: ARMEN SARGSYAN'S BOOK "ARTSAKH FOLKLORE"

Z. SARAJIAN

Folklore occupies a unique place in the national value system of Armenians. Folklore, which reflects nation's mentality, traditions, habits, the way of life, morals, etc., is the best way to get acquainted with a nation.

Armen Sargsyan's collection "Artsakh Folklore" is a guidebook, which introduces the biography, character, as well as the way of thinking of Artsakhians.

The book is one of the valuable treasures of Armenian folklore.

Բանահյուսությունը հայ ժողովրդի ազգային արժեհամակարգում իր ուրույն և առանձնահատուկ տեղն ունի: Որևէ ժողովրդի լավագույնս ճանաչելու համար կարևոր է նախ եւ առաջ ծանոթանալը նրա բանահյուսությանը, որտեղ արտացոլված են տվյալ էթնոսի հոգեկերտվածքը, ավանդույթները, սովորույթները, կենցաղը, ընտանեկան բարքերը, մտածողությունը, աշխարհայացքը եւ այլն:

Արմեն Սարգսյանի «Արցախի բանահյուսությունը» գիրքը արցախցուն, նրա կենսագրությունը, բնավորությունը, մտածողությունը ճանաչելու լավագույն գիրք-ուղեցույցն է: Այս գիրքը գալիս է համալրելու հայ ժողովրդական բանահյուսության հարուստ գանձարանը:

Որևէ ժողովրդի լավագույնս ճանաչելու համար կարևոր է նախ եւ առաջ ծանոթանալը նրա բանահյուսությանը, որտեղ արտացոլված են տվյալ էթնոսի հոգեկերտվածքը, ավանդույթները, սովորույթները, կենցաղը, ընտանեկան բարքերը, մտածողությունը, աշխարհայացքը եւ այլն: Բանահյուսությունը հայ ժողովրդի ազգային արժեհամակարգում իր ուրույն և առանձնահատուկ տեղն ունի և, ինչպես Հովի. Թումանյանն է ասում, նրանով սնվում են գրեթե բոլոր արվեստները, հատկապես գեղարվեստական գրականությունը:

Ու չնայած բանահյուսության սկզբնավորումը յուրաքանչյուր ժողովրդի ձևավորման ու զարգացման հետ է կապված, այնուամենայնիվ, բանագիտությունը համաշխարհային իրականության մեջ ձևավորվեց միայն 19-րդ դարի սկզբներին՝ Գրիմմ եղբայրների, հատկապես՝ Յակոբ Գրիմմի կողմից: Եվրոպական առաջավոր երկրների բանագիտական մտքի ազդեցությամբ մեր երկրում եւս սկսեց կարեւորվել բանահավաքչական աշխատանքը եւ կիրառության մեջ դրվեց «ժողովրդական բանահյուսություն» եզրույթը: 19-րդ դարի վերջին երեսնամյակից սկսած առաջ եկան բանահավաքներ, նկատում է Մ. Աբեղյանը, որոնք, գործ

ունենալով մի շարք հասարակական երևույթների հետ, լուսաբանում էին տվյալ դարաշրջանին հատուկ հասարակական- քաղաքական հարաբերությունները[1] :

Հայ ժողովրդական բանահյուսությունը հարուստ է, բազմաժանր ու բազմաբովանդակ: Սկզբնավորվելով դեռևս անհիշելի ժամանակներում՝ այն նոր շունչ ստացավ Գարեգին Սրվանձտյանցի գիտական, բանահավաքչական աշխատանքով ու ստեղծագործություններով: Իր «Գրոց ու բրոց»-ում գրել էր. «Որքան ձեռնհաս եղեր ու հավաքեր եմ և որքան ևս պատեհություն ունենամ հավաքելու, զանոնք ալ զատ գործ կ'ընեմ, կամ այլոց քան զիս հմտագունից և աշխատասիրաց կ'առաջարկեմ»[2] :

Հայ բանագիտության անխոնջ մշակների շնորհիվ այսօր ժողովրդական բանահյուսությունը ներկայանում է հարուստ գանձարանով, ինչպես նշում է Ա. Ղանալանյանն իր «Հայ ժողովրդական բանահյուսություն» գրքում, հայկական բանահյուսության հարստության պերճախոս ապացույցներն են XIX և XX դդ. գրի առնված շուրջ 2000 հեքիաթները (տպագիր և անտիպ), 5000-7000 երգերը, մոտ 40000 առած-ասացվածքները, «Սասունցի Դավիթ» էպոսի 50-ից ավելի տարբերակները, բազմաթիվ զրույցներ, ավանդություններ և այլն[3] :

Մեր իրականության մեջ ժողովրդական բանահյուսության զարգացումը միշտ եղել է ժողովրդի և պետության ուշադրության կենտրոնում, շրջաններում ու քաղաքներում գործել են ժողովրդական ստեղծագործության հատուկ տներ, որոնք և ի մի էին բերում բանահավաքչական աշխատանքները, հայտնաբերում ժողովրդական տաղանդներ և այլն:

Արցախյան ժողովրդական ստեղծագործությունների հավաքմանն առաջին անգամ ձեռնամուխ են լինում ժամանակի շուշեցի նշանավոր մտավորականներ Առաքել, Ալեքսանդր և Գրիգոր Բահաթրյանները, ովքեր 1860 թ. մայիսի 6-ից օգոստոսի 6-ը Շուշիում գրի են առնում հեքիաթներ, զրույցներ, անեկդոտներ, խաղիկներ[4] :

Արցախյան բանահյուսական նյութերի գրի առման, հրատարակման և պահպանման շնորհակալ աշխատանքում հետագայում իրենց ավանդն ունեցան Տիգրան Նավասարդյանը, Մ. Տեր-Հովհաննիսյանը, Հարություն Թավրիզյանը, Գալուստ Շերմազանյանը, Մակար Բարխուդարյանը և ուրիշ երախտավորներ:

Վերջերս ընթերցողի սեղանին դրվեց մի ստվարածավալ աշխատություն եւս՝ «Արցախի բանահյուսությունը» վերտառությամբ, որը բանասիրական գիտությունների թեկնածու, բանագետ Արմեն Սարգսյանի երկարատեւ ու տքնաջան աշխատանքի արգասիքն է եւ որն, իրավամբ, կարող ենք ասել, որ արցախցուն, նրա կենսագրությունը, բնավորությունը, մտածողությունը ճանաչելու լավագույն գիրք-ուղեցույցն է: Այս գիրքը գալիս է համալրելու հայ ժողովրդական բանահյուսության հարուստ գանձարանը: Բանագիտության մեծ երախտավորներ Գ. Սրվանձտյանցի, Մ. Աբեղյանի, Մ. Բարխուդարյանի և մյուս մեր մեծերի գործի նորօրյա շարունակողն է Արմեն Սարգսյանը, ով մշտապես հավատարիմ է բանագիտության ազգային ավանդներին: Խոսելով Ա. Սարգսյանի կատարած աշխատանքի մասին՝ չափազանցրած չենք լինի, եթե ասենք, որ նա ստեղծել է մի այնպիսի գործ, որով կարող ենք վստահաբար ներկայանալ աշխարհին, գիրքն այդ դնել եվրոպական երկրներում բարձր ճանաչման արժանացած բանահյուսական գործերի կողքին՝ բանագիտության առջեւ դրված չափանիշների ու սկզբունքների նորօրյա պահանջներով:

Ժողովածուն ընդգրկում է բանահյուսական 8078 արցախյան բնագիր՝ գրառված հեղինակի կողմից 1992-2014 թթ. հանրապետության գյուղերի ու քաղաքների հարյուրավոր բանասացների միջոցով: Գիրքը կազմված է ներածությունից, բուն ժողովածուից, ծանոթագրությունների աղյուսակից, բառարանից ու ցանկերից: Բուն ժողովածուն բաղկացած է երեք բաժնից, որոնցից յուրաքանչյուրը ներառում է համապատասխան ժանրերի նյութերը:

---

[1] Աբեղյան Մ., Երկեր, հ. Ա, Երևան, 1966, էջ 13:

[2] Սրվանձտյանց Գ., Գրոց ու բրոց.– Երկեր, հ. 1, Երևան, 1978, էջ 73:

[3] Ղանալանյան Ա., Հայ ժողովրդական բանահյուսություն, Երևան, 1945, էջ 6:

[4] Սարգսյան Ա., Արցախի բանահյուսությունը, Երևան, 2015, էջ 11:

Առաջին բաժինը՝ վիպական բանահյուսությունը, ներառում է հեքիաթներ /22 միավոր/, ավանդություններ /266 միավոր /, առակներ /86 միավոր /, զվարճախոսություններ /592 միավոր /:

Երկրորդ՝ քնարական բանահյուսություն բաժինը, բաղկացած է խաղիկներից /237 միավոր / եւ չափածո այլ ստեղծագործություններից /21 միավոր /:

Երրորդը՝ ասույթաբանական բանահյուսություն բաժինն է՝ բաղկացած առած-ասացվածքներից /3388 միավոր /, անեծքներից /709 միավոր /, օրհնանքներից եւ բարեմաղթանքներից /369 միավոր /, հանելուկներից /734 միավոր /, գյուղերի եւ քաղաքների մականուններից /119 միավոր /, մարդկանց մականուններից /1307 միավոր /, շուտասելուկներից /24 միավոր /, հանգախաղերից /204 միավոր /[1] :

Ծանոթագրությունների աղյուսակում ներկայացվում են վիպական եւ քնարական բանահյուսության բոլոր բնագրերի համարները, վերնագրերը, բանասացի անուն-ազգանունը, ծննդավայրն ու ծննդյան թիվը, նյութի գրառման վայրն ու տարեթիվը:

Բառարանում հեղինակը ընդգրկել է ժողովածուի մեջ գործածված դժվար հասկանալի, հիմնականում բարբառային եւ փոխառյալ բառերն ու դարձվածները՝ իրենց բացատրություններով:

Ուշագրավ է այն հանգամանքը, որ հեղինակը խստորեն պահպանել է բարբառային տառադարձությունը, իսկ վիպական եւ քնարական բանահյուսության ժանրերի բոլոր բնագրերում՝ նաեւ տվյալ խոսվածքի առանձնահատկությունները: Յուրաքանչյուր նմուշ ներկայացրել է բանասացի խոսվածքով:

Կարևորելով գրքի գիտական արժեքը՝ գրականագետ Ա. Աթայանը նկատում է.«Ակնհայտ է գրքի գիտական ուղղվածությունը, մանավանդ, որ այն ոչ միայն Արցախի բանահյուսության հավաքման ու գրառման պատմությունն է, այլև նյութերի բանագիտական վերլուծությունն ու Ղարաբաղի բարբառի հնչյունաբառաքերականական օրինաչափությունների բացահայտումը, ինչին, թերևս, բանագիտության մեջ քիչ է ուշադրություն դարձվել»[2]:

Առանձնահատուկ ուշադրության է արժանի գրքի ներածությունը, որտեղ գիտական լուրջ հիմնավորումներով առանձին ենթաբաժիններում հեղինակը ներկայացնում է Արցախի համառոտ պատմությունը, բանահյուսության հավաքման ու հրատարակման պատմությունը, ժողովածուի բանագիտական վերլուծությունը եւ Ղարաբաղի բարբառի հնչյունաբառաքերականական օրինաչափությունները:

Հետաքրքիր է հեղինակի պատմական ակնարկը ներածության մեջ.«Արցախը, որ տարբեր արձանագրություններում եւ պատմական աղբյուրներում հիշատակվում է Արդախ, Օրխիստինե, Արցախ, Խաչեն, Արցախամուր աշխարհ, Փոքր Սյունիք, Ղարաբաղ եւ այլ անուններով, պատմական Հայաստանի 10-րդ նահանգն է, որը գբաղեցնում էր Կուր եւ Արաքս գետերի միջեւ ընկած հարթավայրի զգալի մասը ու դրանից դեպի արեւմուտք՝ Աղստեւ գետի ավազանից մինչեւ Արաքսի հովիտը ձգվող լեռնային ու նախալեռնային ամբողջ տարածքը: Երկրամասը մ. թ. ա. 9-6 դարերում ընդգրկվել է Ուրարտական պետության կազմում, իսկ մ. թ. ա. 6-րդ դարից կազմել Հայաստանի անբաժանելի մասը, որի մասին փաստացի տեղեկություններ կան տարբեր սեպագիր արձանագրություններում, հին հունական ու հայ պատմիչների վկայություններում»[3] :

Ուշագրավ մի հանգամանք եւս. գիրքը ընթերցողի սեղանին դրվեց այն ժամանակ, երբ ամբողջ աշխարհի ուշադրությունը, ապրիլյան առճակատման պատճառով, կրկին սեւեռված էր Արցախի վրա, երբ ազերական ագրեսիան սկսեց ակտիվանալ ոչ միայն ռազմադաշտում, այլ նաեւ՝ քարոզչական դաշտում՝ վերախմբագրված պատմությամբ ու ապատեղեկատվությամբ մոլորեցնելով միջազգային հանրությանը:

---

[1] Սարգսյան Ա., Արցախի բանահյուսությունը, Երևան, 2015, էջ 5:

[2] Արցախի պետական համալսարանի տեղեկագիր, պրակ 1, Ստեփանակերտ, 2016, էջ 10:

[3] Նույն տեղում, էջ 7:

Արմեն Սարգսյանի «Արցախի բանահյուսությունը» գիրքը համալրում է պատմական արդարությունը փաստարկող այն աշխատությունների ցանկը, որոնք վկայում են, որ Արցախը Հայաստան է, եւ Արցախի անդրենածին ժողովուրդը հայն է, որ ապրել եւ արարել է այստեղ վաղնջական ժամանակներից:

Հայտնի է, որ բանահյուսական նյութը լուրջ հենք է համարվում պատմագիտության, ազգագրության, էթնոլոգիայի, գրականության, արվեստների համար: Այս առումով, բնավ չստվերելով Արցախի բանագիտության մյուս երախտավորների աշխատանքը՝ Ա. Ղազիյան, Լ. Հարությունյան եւ ուրիշներ, պիտի խոստովանենք, որ Արմեն Սարգսյանի վերոհիշյալ գիրքը իր տեսակով եզակի ու նախադեպը չունեցող աշխատություն է, որը, կարելի է ասել, Արցախի ու արցախցու մասին պատմող մի յուրահատուկ հանրագիտարան է, որտեղ արցախցին ներկայանում է իր բնավորությամբ, պատմական ճակատագրով, պատկերավոր մտածողությամբ, հնարամտությամբ, կենսասիրությամբ, քաջությամբ, աշխատասիրությամբ, ճշմարտախոսությամբ, հայրենասիրությամբ, հումորով, հյուրասիրությամբ, բարոյականությամբ, աստվածապաշտությամբ, խառնվածքով, կենցաղով եւ այլն:

Վիպական բանահյուսության ժանրերից հեքիաթները /իրապատում և հրաշապատում/ արտահայտում են բարոյախոսական, ճանաչողական, դաստիարակչական, սոցիալական և բազմաթիվ կարևոր գաղափարներ: Ի դեպ, բանագետի հավաստմամբ, հեքիաթները զարգացման հեռանկար չունեն և աստիճանաբար մոռացության են մատնվում: Նրա վկայությամբ՝ հեքիաթներում այլեւս չի գործածվում որպես հանելուկ հանդես եկող՝ «Քաթ-քաթ, մին չվալ ցակատ, վեչ կօթ օնե, վեչ՝ արկաթ» չափածո նախաբանը: Լայն կիրառություն ունեն՝ «Իլալ ա, չի լալ» , «Ինում ա, չինում» ավանդական սկսվածքներն ու վերջաբան բանաձեւումները՝ «Յէրգինքյան իրեք խնձօր ա վեր ընգնես, մինը՝ էս քաթը ըսօղեն, մինը՝ սկընողեն, մինն էլ լյուս աշխարք տուս ընօղեն»:

Խոսելով Ա. Սարգսյանի սույն ժողովածուի մասին՝ ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի ավագ գիտաշխատող Ս. Վարդանյանը նկատում է, որ գիրքն իր սկզբնաղբյուրային կարևորությամբ բացառիկ է.«Ա.Սարգսյանն անդրադառնում է ժողովածուում ընդգրկված հեքիաթների մոտիվային ու սյուժետային առանձնահատկությունների բացահայտումներին՝ դրանով իսկ օգնելով հեքիաթագիտությամբ զբաղվողներին մի ընդհանուր լեզու գտնել ոչ միայն հայկական, այլև՝ տարբեր ժողովուրդների բանարվեստի ներքին բովանդակությանը հաղորդակցվելու գործում»[1] :

Ավանդությունները ևս վիպական ժանրի ստեղծագործություններ են: Գրքում տեղ գտած ստուգաբանական, բացատրական և վարքաբանական բնույթի ավանդությունները արտացոլում են տեղանունների, անձնանունների առաջացումը, երկնային և երկրային մարմինների ծագման մասին պատմություններ, կենսագրական իրական և մտացածին պատմություններ:

Ուշագրավ են առակներն ու զվարճախոսությունները, որոնք ժողովրդի կողմից սիրված և ժողովրդի մեջ լայն տարածում գտած բարոյախրատական, երգիծական ստեղծագործություններ են:Նկատենք, որ զվարճախոսությունները հեղինակը համարում է Արցախի բանահյուսության վիպական ժանրերից ամենակենսունակը:

Արցախցու պատկերավոր մտածողության, երևակայության և գեղարվեստական յուրատեսակ լուծումներն են խտացված քնարական խաղիկներում և չափածո այլ ստեղծագործություններում, որոնք արտացոլում են մարդկային տարբեր հոգեվիճակներ, զգացմունքներ, սոցիալական խնդիրներ և այլն: Սիրո խոստովանություն և սիրած տղայի գովքն է ամփոփված հետևյալ խաղիկում.

Քէզ նըման տըղան մուրազ ա,
Խէլքավ լիգյը կարաս ա,
Ծօցումըտ քօն իլի,

[1] http://hpj.asj-oa.am/6321/1/220.pdf

Գիդյացէ, թա արազ ա[1] :

Ասույթաբանական բանահյուսության ժանրերից լայն կիրառություն ունեն առած-ասացվածքները:Արցախցու բնավորությունը, աշխատասիրությունը, պատվախնդրությունը, հավատավոր լինելը վկայող առած-ասացվածքներից են.

Ղարաբաղցէն ըստրղավ-ընդրղավ չի ընգընում, խսկը քյասմա յա ասում:

Ղարաբաղցունը օթընա, թօթը, թիյին կօթը[2] :

Աստուծ ընօղանց ա տամ:

Աստուծ լյավէն նեհետ ա առուտուր անում:

Աստուծ ասից՝ հու վէր հացէն ղադիրը գյուդում ա, ընդրրա լյավ ըմ յէշում:

Աստուծ դյարդը տամ ա, դյարմանն էլ նըհէտը[3] :

Նամուսը վընանատակ չըն տալ:

Նամուսը տվէն շանը, կէրավ վէչ:

Նէրակ ընդրրա, հյուրու մըռնէլիս ըղօրմի յըն տամ[4] :

Ըստուծէն քանդյած տօնը կընեգյը կըշինի, ամմա կընգանը քանդյածը Աստուծ կարել չի շինի[5]:

Թօրքէն նըհէտ հընգրրօթուն ըրա, մըհակը ծէրքատ վէր մէլ տինիլ:

Թօրքէն չըքէրանը թակիս վէչ, աշնա չի տէռնալ[6] :

Ժողովրդական այս եւ մյուս բանաձեւումների մեջ ենք բացահայտում մեր բազմադարյա ժողովրդի դիմագիծն ու ազգային հոգեկերտվածքը, որը լավագույնս է արտացոլված Արմեն Սարգսյանի «Արցախի բանահյուսությունը» գրքում:

Գիրքը լուրջ ներդրում է հայ բանագիտության բնագավառում:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Աբեղյան Մ., Երկեր, հ. Ա, Երևան, 1966:
2. Արցախի պետական համալսարանի տեղեկագիր, պրակ 1, Ստեփանակերտ, 2016:
3. Ղանալանյան Ա., Հայ ժողովրդական բանահյուսություն, Երևան, 1945:
4. Սարգսյան Ա., Արցախի բանահյուսությունը, Երևան, 2015:
5. Սրվանձտյանց Գ., Գրոց ու բրոց. Երկեր, հ. 1, Երևան, 1978:

ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ

1. http://hpj.asj-oa.am/6321/1/220.pdf
2. https://hy.wikipedia.org

Տեղեկություններ հեղինակի մասին.

Զարինե Սարաջյան - Բանասիրական գիտությունների թեկնածու

e-mail: zsarajyan@mail.ru

Հոդվածը տպագրության է երաշխավորել խմբագրական կոլեգիայի անդամ, բ.գ.դ. Ս.Ա. Խանյանը:

[1] Նույն տեղում, էջ 436:
[2] Նույն տեղում, էջ 495:
[3] Նույն տեղում, էջ 453:
[4] Նույն տեղում, էջ 510:
[5] Նույն տեղում, էջ 464:
[6] Նույն տեղում, էջ 466:

ՀՏԴ 809.198.1 Հայոց լեզու

ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄՆԵՐԻ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆԸ ԳՐԱԲԱՐՈՒՄ և ՌՈՒՍԵՐԵՆՈՒՄ

Օֆելյա ԲԱԲԱՅԱՆ

Բանալի բառեր՝ *նախադասության անդամների համաձայնություն, գրաբար, ռուսերեն, ներունակություն, ենթակա և ստորոգյալ, որոշիչ-որոշյալ, հատկացուցիչ, բացահայտիչ:*

Ключевые слова: *согласование членов предложения, грабар, русский язык, уподобление, подлежащее и сказуемое, определение, несогласованное определение, приложение.*

Key words: *agreement of the parts of the sentence, Grabar, Russian, immanence, the Subject and the Predicate, the Attribute and the Attributive, the Attribute not in concord, the Apposition.*

СОГЛАСОВАНИЕ ЧЛЕНОВ ПРЕДЛОЖЕНИЯ В ГРАБАРЕ И РУССКОМ ЯЗЫКЕ

О. БАБАЯН

В грабаре так же, как и в русском языке подлежащее согласуется со сказуемым, определение с определяемым словом, несогласованное определение с детерминантом, если он выражен притяжательным местоимением. В русском языке приложение и несогласованное определение считаются разновидностями определения. Согласование выражается в лице, числе и падеже, а в русском - и в роде. В статье рассматривается согласование данных членов предложения в грабаре и русском языке.

AGREEMENT OF THE PARTS OF THE SENTENCE IN GRABAR AND RUSSIAN

O. BABAYAN

In Grabar as well as in Russian the Subject agrees with the Predicate, the Attribute with the Attributive, the Apposition with the Appositive and the Attribute not in concord partially agrees with the determiner if only it is expressed by Possessive Pronouns. In the Russian language the Apposition and the Attribute not in concord are considered the subtypes of the Attribute. The agreement is in person, number and case, while in Russian also in gender. The article deals with the agreement of the above-mentioned parts of the sentence in Grabar and Russian.

Գրաբարում և ռուսերենում համաձայնությամբ կապակցվում են ենթական ու ստորոգյալը, որոշիչն ու որոշյալը, բացահայտիչն ու բացահայտյալը, մասամբ էլ հատկացուցիչն ու հատկացյալը, եթե հատկացուցիչն արտահայտվում է ստացական դերանուններով: Ռուսերենում բացահայտիչն ու հատկացուցիչը համարվում են որոշչի ենթատեսակներ: Համաձայնությունը կատարվում է դեմքով, թվով ու հոլովով, երբեմն՝ հոդով, ռուսերենում նաև անվանական սեռով: Հոդվածում ներկայացվում են նշված անդամների համաձայնության դրսևորումները գրաբարում և ռուսերենում:

Համաձայնությունը նախադասության անդամների կապակցության եղանակներից մեկն է, որի դեպքում կապակցության անդամներից մեկը ստանում է մյուսի քերականական հատկանիշները կամ ձևը, այսինքն՝ համապատասխանում են ընդհանուր քերականական կարգերով՝ դեմքով, թվով, հոլովով:[1] Ըստ այդ կարգային հատկանիշների՝ առանձնացվում են՝ դիմային համաձայնություն,

[1] Տե՛ս Աբրահամյան Ս.Գ., Պառնասյան Ն.Ա., Օհանյան Հ.Ա., Բադիկյան Խ.Գ., Ժամանակակից հայոց լեզու, հ.3, Շարահյուսություն, Եր., 1976, էջ 298: Իշխանյան Ռ.Ա., Արդի հայերենի շարահյուսություն, Պարզ նախադասություն, Եր. 1986, էջ 21-22: Ասատրյան Մ.Ե., Ժամանակակից հայոց լեզու, Շարահյուսություն, Եր., 1987, էջ 49: Գյուլբուդաղյան Ս.Վ., Ժամանակակից հայերենի շարահյուսություն(պարզ նախադասութուն), Եր, 1988, էջ 27: Պապոյան Ա.Հ., Բադիկյան Խ.Գ., Ժամանակակից հայոց լեզվի շարահյուսություն, Եր 2003, էջ 28: Гвоздев А.Н.,Современный русский литературный язык, М., 1973, стр. 30-32, Белошапкова В.А., Современный русский язык, Синтаксис М., 1977, стр. 32-33. Краткая русская грамматика (под редакцией Н.Ю. Шведовой и В.В. Лопатина), М., 1989, стр. 346.

թվային համաձայնություն և հոլովական համաձայնություն: Համաձայնությունը կարող է պայմանավորված լինել կապակցվող անդամներից որևէ մեկի բովանդակությամբ, արտահայտած իմաստի բնույթով: Սա էլ կոչվում է իմաստային համաձայնություն (согласование по смыслу)[1]:

Համաձայնությունը ծավալուն ընդգրկում ունի գրաբարում և ռուսերենում: Հայտնի է, որ գրաբարում և ռուսերենում գոյականներին հատուկ են հոլովի և թվի, ռուսերենում նաև սեռի քերականական կարգերը: Այդ նույն քերականական կարգերը հատուկ են նաև ածականին ու թվականին, դերանունների որոշ տեսակներին: Ածականի, թվականի, դերանունների հոլովն ու թիվը, ռուսերենում նաև սեռն արտահայտող ձևերը կախման մեջ են գտնվում գոյականի համապատասխան ձևերից, որոնց հետ համապատասխանում են՝ շարադասվելով գոյականից առաջ կամ հետո: Մեծ լեզվաբան Մ.Աբեղյանը բառերի ստորադասական հարաբերության երկու տեսակ է ընդունում՝ կախում և ներունակություն: Նա գրում է. «Ներունակության հարաբերության մեջ լրացումի ցույց տված գաղափարը մտածվում է իբրև իր լրացյալի մեջ արդեն պարունակված և նրա հետ միանում, համաձուլվում է իբրև մի գաղափար. կամ թե լրացումն ըմբռնվում է իբրև իր լրացյալի երկրորդ անգամ կրկնությունն ուրիշ բառերով, այնպես որ լրացումն իր լրացյալին ստորադասվելով հանդերձ՝ խոսքի մեջ մի տեսակ նրան հավասար պաշտոն է վարում կամ թե զուգորդվում, լծորդվում է նրան և իր հոլովական ձևով կախված չէ նրանից, մինչդեռ կախման մեջ, ընդհակառակն, լրացումը բոլորովին տարբեր պաշտոն է վարում, քան իր լրացյալը և իր հոլովական ձևով կախված է լրացյալից»:[2]

Այնուհետև Մ.Աբեղյանը մեկնաբանում է, որ ենթական ներունակ է բայի դեմքին, այսինքն բայի դեմքի լրացումը լինելով հանդերձ՝ միանգամայն և զուգադրվում է նրան՝ երկրորդ անգամ նույն գաղափարն արտահայտելով, ինչ որ բայի դեմքը: Այսպես զուգորդվում է բացահայտիչն իր բացահայտյալին: Ստացվում է, որ ենթական մի տեսակ բացահայտիչ է բայի դեմքի, նրա հոլովը ևս կախված չէ բայի դեմքից:[3]

Մ.Աբեղյանը ենթակայի ու ստորոգյալի հարաբերությունը համարում է ներունակություն, իսկ նախադասության այլ անդամների միջև եղած ստորադասությունը՝ կախում: Փաստորեն ենթակայի ու ստորոգյալի միջև լրացման ու լրացյալի, կախյալի և գերադասի հարաբերություն չկա, այլ կա հավասարական կամ հավասարազոր հարաբերություն, որը պայմանավորված է հայերենի բայի խոնարհման ձևերի կառուցվածքի էությամբ: Բայի դիմավոր ձևերն ունեն դեմքի ու թվի քերականական կարգերը, որոնք ցույց են տալիս գործողություն կատարողի՝ ենթակայի դեմքը և թիվը: Այստեղից էլ բխում է ենթակայի ու ստորոգյալի փոխհամաձայնությունը: Ռուս քերականները նույնպես ենթակայի ու ստորոգյալի համաձայնությունը տարբերում են նախադասության մյուս անդամների համաձայնությունից, այն անվանում են արտաքին(ձևային) նմանեցում, հարմարում(уподобление):

Մ. Աբեղյանը բացահայտչի և բացահայտյալի կապակցությունը նույնպես համարում է ստորադասական-ներունակական և ոչ թե կախման հարաբերություն. «Ներունակությամբ զուգադրվում է բացահայտիչն իր բացահայտյալին. օրինակ՝ «Անուց՝ Բագրատունյաց մայրաքաղաքից հեռացա» խոսքի մեջ բացահայտիչը՝ «Բագրատունյաց մայրաքաղաքից» իր բացահայտյալի վերաբերմամբ մի կրկնություն է ուրիշ բառով, որի ցույց տված գաղափարն արդեն պարունակվում է «Անուց» բացահայտյալի մեջ, բացահայտչի բացառական հոլովը կախված է իսկապես ոչ թե բացահայտյալից, այլ «հեռացա» բայի նշանակությունից: Նույն ներունակական հարաբերությունը մնում է և այն ժամանակ, երբ բացահայտիչն իբրև մի ածական մականուն դրվում է լրացյալից առաջ, ինչպես՝ «Բագրատունյաց մայրաքաղաք Անուց հեռացա»»:[4] Քանի որ բացահայտիչը բացահայտյալի կրկնությունն է մի ուրիշ բառով, ապա որպեսզի բացահայտողը բացահայտվողի կրկնությունը լինի մի ուրիշ բառով, առաջինը իր հոլովական ձևով ու թվով, եթե անձնական դերանուն է, նաև դեմքով պետք է համապատասխանի երկրորդին. այստեղից էլ բացահայտչի ու բացահայտյալի համաձայնությունը: Համաձայնությունը ամբողջությամբ դրսևորվում է բացահայտչի և բացահայտյալի միջև, քանի որ բացի թվային ու դիմային համաձայնությունից, այստեղ առկա է նաև հոլովական համաձայնությունը, որը Մ.Աբեղյանը կոչում է ներունակությամբ զուգորդում: Առարկայական իմաստ ունեցող նախադասության յուրաքանչյուր

[1] Տե՛ս Պետրոսյան Հ.Զ., Հայերենագիտական բառարան, Եր., 1987, էջ 320:
[2] Աբեղյան Մ., Հայոց լեզվի տեսություն, Եր., 1968, էջ 307:
[3] Տե՛ս ն.տ., էջ 398:
[4] Տե՛ս ն.տ., էջ 398:

անդամ կարող է բացահայտիչ ունենալ: Իր այս բնույթի պատճառով բացահայտիչը նախադասության լայն ընդգրկում ունեցող անդամ է:

Գրաբարում և ռուսերենում համաձայնությամբ կապակցվում են ենթական ու ստորոգյալը, որոշիչն ու որոշյալը, բացահայտիչն ու բացահայտյալը, մասամբ էլ հատկացուցիչն ու հատկացյալը, եթե հատկացուցիչն արտահայտվում է ստացական դերանվամբ: Ռուսերենում բացահայտիչն ու հատկացուցիչը համարվում են որոշչի ենթատեսակներ:

Գրաբարում ենթակայի ու ստորոգյալի համաձայնությունը կատարվում է թվով, եթե ենթական արտահայտվում է անձնական դերանվամբ՝ նաև դեմքով: Ենթական կարող է դրվել ուղղական, սեռական, տրական և հայցական հոլովներով: Թեք հոլովներով ենթականները չեն համաձայնում ստորոգյալի հետ:[1] Թեք հոլովներով ենթականեր հիմնականում գործածվում են, եթե ստորոգյալն արտահայտվում է բայի անդեմ ձևերով՝ անորոշ և անցյալ դերբայներով, անցյալ դերբայով կազմված վերլուծական ժամանակների եզակի III դեմքով (Արդ **մեր** թողեալ զնոսա, հարցցուք զսոսա (5,148) = Այժմ **մենք,** թողնելով նրանց, հարցնենք սրանց: Եթէ զամենայն **զԱստուած** յամենայնի ի հիւղն լինել ասիցեն, որչափ մեծ եւս ասիցեն զԱստուած զտանի հիւղն մեծ քան զնա (5,60) = Եթե ասում են, որ բովանդակ **Աստված** ամբողջ հյուլեի մեջ է, որքան էլ մեծ համարեն աստծուն, հյուլեն ավելի մեծ կլինի նրանից), կամ էլ միադիմի բայերով (Պարտ է **մեզ**, ասէ, այսպիսում բարեխառնության օդոց և մաքրութեան ջուրց և երկրի, քաղաք և արքունիս շինել բնակութեան(1,62) = Այս բարեխառն օդերի մեջ, մաքուր ջրերի երկրում **մենք** պետք է շինենք քաղաք և արքունիք բնակության համար):

Թե՝ Գրաբարում, թե՝ ռուսերենում եզակի ենթակայի հետ դրվում է եզակի ստորոգյալ, հոգնակի ենթակայի հետ՝ հոգնակի ստորոգյալ: (Իսկ **թագաւորն տայր** նոցա պատասխանի(3,140): Իսկ **քաւդեայքն ետուն** նմա պատասխանի (3,256): **Лес обнажился. Поля опустели**): Ռուսերենում բայի անցյալ ժամանակի բայաձևերը և ենթական համաձայնում են նաև սեռով (Мальчик писал. Дочка читала): Անեզական գոյականով արտահայտված ենթակայի հետ ստորոգյալը դրվում է հոգնակի թվով (Ամենայն **կառք** ի համազգեաց երիվարաց **լծին**, բայց միայն յայսց կառաց(5,17) = Բոլոր **կառքերը** միատեսակ երիվարներից **են լծվում**, բացի այս կառքից (= տիեզերքից): Նույն անեզական գոյականը կարող է և՝ եզակի, և՝ հոգնակի թվերի իմաստ ունենալ(Այս **կառք** զարմանալիք ի հակառակ եւ յանման երիվարաց լծեալ եւ ծածուկ ձեռամբ ուղղեալք, ոչ ի միմիայն կողմն ի հանդէպ երեսացն **արշաւին**, այլ յամենայն կողմանս **վարգին**...(5,16) Այս զարմանալի **կառքը**... արշավում է, վարգում է): Բացի անեզական գոյականներից՝ կան բառեր, որոնք գրաբարում հոգնակի թվով են, աշխարհաբարում՝ եզակի: Քանի որ սրանք իմաստով եզակի են, աշխարհաբար թարգմանում ենք եզակի թվով(Յաւուրս սորա **փոխին արքունիքն** յԱրմաւիրն անուանեալ բլրոյ (1,194)= Սրա օրոք **արքունիքը փոխադրվում է** Արմավիր կոչված բլրից):

Անհոգնական գոյականներով արտահայտված ենթակայի հետ ստորոգյալը դրվում է եզակի թվով(**Երկնէր երկին, երկնէր երկիր**): Հավաքականության իմաստ ունեցող, բայց ձևով եզակի ենթակայի հետ ստորոգյալը կարող է դրվել հոգնակի թվով, այսինքն՝ ստորոգյալը ենթակային համաձայնում է ոչ թե քերականորեն, այլ իմաստով: Իմաստային համաձայնության այս երևույթը գրաբարում ընդունված է անվանել բակառություն (**Տիրեցին** աշխարհիս Հայոց **ազգն** Սասանայ պարսկի (2,12)):

Բազմակի ենթակաների հետ ստորոգյալը սովորաբար դրվում է հոգնակի թվով (**Եկին** ընդ նոսա **Յովսէփ** եւ **Ղեւոնդ** երէց...(2,382)):

Եթե ենթական արտահայտվում է անձնական դերանունով, ստորոգյալը համաձայնում է նաև դեմքով, այսինքն՝ ենթական ու ստորոգյալը կապակցվում են թվային ու դիմային համաձայնությամբ(**Ես** բազում անգամ **կամեցայ** սիրել զԱրշակ արքայ Հայոց(3,254): **Դուք էք մարդիկ** վատք եւ անպիտան, և **եկեալ էք** ի վատի խնդիր, եւ **պատահէք** չարի եւ **կորնչիք** (6,208) **Ինքեանք եկեսցեն** մեզ յօգնութիւն(2,118)):

Գրաբարում հաճախ էր գործածվում նաև բաղադրյալ ենթական, որի համաձայնությունը ստորոգյալի հետ կատարվում է նույն օրինաչափություններով, ինչ պարզ ենթակայի դեպքում (**Դուք ձեզէն** իսկ քաջ **գիտէք**(2,272), Այլ եւ **ինքն թագաւորն** հրամանի նորա **անսայր** (2,178)):

Բազմակի տարադեմք ենթակաների հետ ստորոգյալի համաձայնությունը կատարվում է հետևյալ կերպ. առաջին դեմքի առկայության դեպքում ստորոգյալը դրվում է առաջին դեմքով, առաջին դեմքի բացակայության դեպքում՝ երկրորդ դեմքով(Այլ **ես** և **դու** և ամենայն **բազմութիւնդ** հանդերձ արի

[1] Մկրտչյան Է.Ս., Գրաբարի դասընթաց, Եր., 2008, էջ 157:

թագաւորաւդ այնպէս **աշակերտեսցուք** աստուածային գրոց, զի ի տանջանացն ապրեսցուք...(2,72): **Դուք** եւ **նոքա** արդ **արարէք** որպէս եւ կամիք զմեզ զի հարցանէք(2,272)

Եթե ենթական դիմանիշ չէ, բայց ստորոգելին դիմանիշ է, դիմային համաձայնությամբ կապակցվում են ստորոգելին և հանգույցը (Եւ **են նոքա դարանք** սատանայի (2, 272):

Գրաբարում և ռուսերենում **որոշիչն** ու **որոշյալը** նույնպես կապակցվում են համաձայնությամբ: Գրաբարում ետադաս ածական որոշիչները հիմնականում թվով ու հոլովով համաձայնում են որոշյալների հետ(Եւ կանգնեալ երեւցաւ ինձ յերկրի **բեմ չորեքկուսի ամպեղէն** (6,66): Բայց այս Յակոբ գործէր **սքանչելիս մեծամեծս** (3,42): Ածականով արտահայտված ետադաս որոշիչները կարող են նաև չհամաձայնել որոշյալներին(Եւ բաժանէր լեառն բարձր, ուստի երևէին **գաւառքն բովանդակ**, որում անուն Ընձաքիարս կոչէին(3,40):

Գրաբարում տարածված է, որ ածականը ստանում է **-ութիւն** ածանցը, վերածվում գոյականի, բայց կիրառվում ածականի իմաստով, աշխարհաբար թարգմանվում է որպես ածական(Իսկ մոգուցն գունդք ստիպով բռնադատէին տանել զկրակս ի **տաճար սրբութեանց**...(=սուրբ տաճար) Տեառն(6,130):Ապաքէն զայդ կամիս՝ զի ծածկեսցի **խորհուրդ ամբարշտութեանդ**...(=ամբարիշտ խորհուրդդ) (2,12): Ոճական այդ հնարանքը գրաբարում կոչվում է վերացականը թանձրացականի փոխարեն:

Երբեմն նույն նախադասության մեջ լինում են համաձայնող և չհամաձայնող որոշիչ-որոշյալներ (Եւ նա դնէր օրէնս, զի մեծամեծ աւագանին, **նախարարքն աշխարհակալքն, աշխարհատեարքն** որ էին բիւրաւորքն եւ հազարաւորքն, կայցեն առ արքային, ընդ նմա շրջեսցին, եւ մի' ոք երթիցէ ի նոցանէ ընդ **զօրս արքունի**(3,34):

Գրաբարում նախադաս գործածությամբ կարող են համաձայնել միավանկ, երբեմն էլ որոշ երկվանկ ածականներով արտահայտված որոշիչները (Ապա կոչէր առ ինքն թագաւորն Վռամ Սուրէն Պալհաւն, զիւր զիազարապետն, որ ազգակից և տոհմակից էր **մեծի քահանայապետին** Սահակայ(6,54), երբեմն էլ համաձայնում են միայն հոլովով, հիմնականում գործիական հոլովում՝ (Սա եկեալ ցանկացեալ փափաքեալ **մեծաւ տենչանօք** աղաչէր զԱստուած՝ տեսանել զփրկական տապանն Նոյեան շինուածոյն(3,38): Հազվադեպ հնարավոր է արմատի կրկնությամբ կազմված բազմավանկ ածականով արտահայտված որոշչի համաձայնություն որոշյալի հետ(Եւ զհետ գնացին նորա ի տաճարէն արքունի ամենայն **մեծամեծքն նախարարքն** հայոց(3,332):

Լեզվաբան Վ.Ա. Քոսյանը միավանկ նախադաս ածականներով որոշչի և որոշյալի անհամաձայնության երեք դեպք է առանձնացնում: Մի դեպքում միավանկ ածական որոշիչը, բաղհյուսական հարաբերությամբ կապակցված լինելով բազմավանկ ածականին, չի համաձայնում որոշյալի հետ: Այս դեպքում գործում է բազմավանկ նախադաս ածականով որոշիչ և որոշյալ անհամաձայնության օրինաչափությունը (Քանզի **բազում** և **խիստ դղրդմունք** յայսմ հետէ լինելոց են յաշխարհիս(6,80): Երկրորդ դեպքում լեզվաբանը նշում է մի շարք միավանկ ածականներ՝ **բուն,բուռն, կոյր, թաւ, սերտ, նեղ, ճոխ, թիւր** և այլն, որոնք սովորաբար չեն համաձայնվում գոյականների հետ(Անտի սմա ձեռն տուեալ ի կողմանց Քուշանաց... յիւրեանց ի **բուն աշխարհէն** (4,20): Եւ այնուհետեւ թէ **բուռն գնդաւ**, եւ կամ իւր իսկ գլխով՝ նա իշխէ որպէս եւ գտանէ առնել գլուխս Հայոց գործոյս (6,374): Երրորդ դեպքը վերաբերում է այն միավանկ ածական որոշիչներին, որոնք, այլ դեպքում համաձայնելով, երբեմն մնում են անհամաձայն (Եւ ուսեալք զհաւատսն միասնական **սուրբ երրորդութեանն** եւ ապա մկրտէր իբրեւ հազարս երկուս(3,18):

Գրաբարում բազմավանկ ածականներով արտահայտված որոշիչները նախադաս գործածությամբ սովորաբար չեն համաձայնում որոշյալների հետ: Սա վերաբերում է առաջին հերթին կրկնավոր, բարդ, **-պէս, -օրէն, -երէն, -ածոյ, -ական, -եայ, -ի** վերջածանցներով կազմված ածականներին (Տայր հրաման Շապուհ արքայն Պարսից **զամուր ամուր տեղիսն** հայոց բերդս շինել(3,272): Փոխանակ **կերպասեայ ոսկեհուռ զգենստուցն** խոշոր բրդեայս զգենուին, եւ փոխանակ **բազմադիմի անկողնոյն** փրիսայիւք ի վերայ երկրի գետնատարածք լինէին(6,264): Մակբայական ծագում ունեցող որոշ ածականներ առհասարակ չեն համաձայնում որոշյալի հետ, ինչպես՝ **բարիոք, բարւոք**:[1]

Բազմավանկ ածական որոշիչները համաձայնում են **Աստուած, Քրիստոս**, ինչպես և մեծ մասամբ անձնանուն լրացյալների հետ (Բանայ զդրունս գթոյ **մարդասիրին Քրիստոսի**(4,9): **Բարեբարին Աստուծոյ** նայեցեալ ի գայթակղութիւն նոցա՝ առաքեաց յերկնից սիւն ամպոյ(1,226): Եղեւ դեղագործ մահու եւ մատռուակ կորստեան ոգւոց, **անօրինաւն Միհրներսեհիւ**, ամենայն տկարամիտ

[1] Տե'ս Քոսյան Վ.Ա., Գրաբարի բառակապակցությունները, Եր., 1980, էջ 39-41:

անձանց(6,88): Բազմավանկ նախադաս ածական որոշիչները երբեմն համաձայնում են նաև այլ գոյականների հետ (Եւ ուստի՞ տացէ քաջն Արտաշէս Հազարս ի հազարաց եւ բիւրս ի բիւրուց Ընդ **քաջազգւոյ** կոյս **օրիորդիս** Ալանաց): Սնուցանէ յինքեան երկիրն ջրովք արուեստիւք եւ զառաւելութիւն ի սթափումն որսատենչ ազատացն... եւ կամ այլ բազում եւ անհամար **ցամաքայնոցն** եւ **ջրայնոցն** ջոկք **թռչնոցն**(6,24):

Ռուսերենում ածականն ունի նաև սեռի քերականական կարգ, և նրանով արտահայտված որոշչի համաձայնությունը կատարվում է սեռով, թվով ու հոլովով (**Хорошие** и **радостные вести** получил он. Им это казалось **простым** и **легким делом**.) Ռուսերենում տարբերակում են նաև ածականներ (**краткие**), որոնք, չեն հոլովվում և հոլովով չեն համաձայնում որոշյալի հետ: Որոշիչ-որոշյալի համաձայնությունը եզակի թվում կատարվում է սեռով (город красив, площадь красива) և թվով (города красивы), հոգնակի թվում՝ միայն թվով:[1]

Գրաբարում որոշչային հարաբերությամբ գոյականի հետ գործածվում են նաև թվականի երեք տեսակները՝ քանակական, դասական, անձներական, որոնք դրսևորում են համաձայնության յուրահատկություններ: Գրաբարում որոշ չափով օրինաչափական է **մի, երկու, երեք, չորք** քանակական թվականների համաձայնությունը որոշյալների հետ: **Մի** որոշչի հետ որոշյալը դրվում է եզակի թվով (**Միով պատարագաւ** կատարեաց զսրբեալսն ի մշտնջենաւորս (5,220): **Յաղջկանէ միոջէ** պարտեալ վատթարանայր(4,181): Եւ յետ **երից աւուրցն** ստուգեցաւ զրոյցն, զի մեռեալ էր կայսրն(3,162): Այս ինքն են սոքա **չորք մատեանք** (3,6): **Երկուց գնդացն** զԱնդիկան եւ զՀազարաւուխտ զօրագլուխս կացուցանէր(3,214): Երբեմն հանդիպում են նաև այդ թվական որոշիչների և որոշյալների անհամաձայնության դեպքեր(Եթէ ի **մի օրէնս** դարձուցանես զամենայն ազգս եւ ազինս(2,18): **Երեք մանկամբն** ի հնոցի անդ ընծայեցուցանէ (5,27): Կարգէ զԱրամանեակն **երկու եղբարբն** ընդ աջմէ (1,44):

Հինգ և բարձր քանակական թվականները որոշիչ են դառնում և' ետադաս, և' նախադաս: Ետադաս գործածվելիս դրանք համաձայնում են սովորաբար հոգնակի գործածվող լրացյալին սեռական հոլովում(Ապա յետ լնուլ **աւուրցն հնգետասանիցն** անցելոցն, սատակեցաւ մանուկն որդի կայսերն(3,138), իսկ ուղղականում և հայցականում մնում են անհամաձայն (Լինին **ամք երեսուն** եւ **վեց հազար**(1,18): Պահեալ լինէին պահս **աւուրս վաթսուն** եւ **վեց**(4,722): Հանդիպում են օրինակներ, երբ ուղղական և հայցական հոլովներով թվական որոշիչները համաձայնում են որոշյալներին(Տուփք **ոսկիք երկոտասանք** լի խնկով(4,708): Եւ յայնմ **աւուրս եօթանս** որ մկրտեցան յարքունական բանակէ անտի՝ ընդ այր եւ ընդ կին եւ ընդ մանուկ աւելի քան զչորեք հարիւր բիւր(4,837):

Նույն թվականները նախադաս գործածվելիս ավելի շատ մնում են անհամաձայն, որոշյալը դրվում է և' եզակի, և' հոգնակի:Երբեմն որոշիչը կարող է արտահայտվել քանակական թվականի կրկնությամբ, որը բաշխական թվականի իմաստ է արտահայտում[2]: Ի գունդս գունդս զգազանսն բաժան էր, եւ առ **մի մի** փիղ երեք հազար սպառազէնք (2,232): Պրկեցին զսոսա **մի մի** ի **չորս չորս** **ցիցս**(4,208):

Դասական թվականներով արտահայտված որոշիչների հետ որոշյալը սովորաբար եզակի է դրվում: Հետադաս գործածվելիս դասական թվականներով որոշիչները համաձայնում են լրացյալին(**Յաւուրն չորրորդի** հրաման ետ թագաւորն (4,116), նախադաս գործածության դեպքում սովորաբար չեն համաձայնում: Որում **երկրորդ գրոցն** անուանեն զոմն պատմագիր... (6,10): Համաձայնության օրինակներ հանդիպում են նաև նախադաս գործածության դեպքում(Երանի՜ **առաջնոյ** եւ **երկրորդի փոփոխմանն** (1,446): Դասական թվականով արտահայտված որոշչի հետ որոշյալը հազվադեպ դրվում է նաև հոգնակի կամ էլ անեզական գոյական է լինում (Կամիմ զանիմաստասէր բարս **առաջնոցն** մերոց **նախնեացն** ոչ առանց յիշատակի բամբասանաց թողուլ(1,10): Յափշտակեցաւ **յերրորդ երկինս**(5,157):

Բաղադրյալ դասական թվականով արտահայտված որոշիչը գոյական որոշյալի հետ համաձայնում է կա'մ բոլոր բաղադրիչներով, կա'մ միայն վերջին բաղադրիչով[3] (...Ի լնուլ **վաթսներորդի վեցերորդի աւուրն**, ընդ այգուն առաւօտանալն…(4,726): **Յեաւթն եւ ի տասներորդի ամի** թագաւորութեանն Տրդատայ գտաք նստեալ յաթոռ սրբոյ առաքելոյն Թադէոսի զհայրն մեր Գրիգորիոս (1,298):

---

[1] Տե'ս Гвоздев А.Н.,Современный русский литературный язык, М., 1973, стр 31., Краткая русская грамматика (под редакцией Н.Ю. Шведовой и В.В. Лопатина), М., 1989, стр 350 .

[2] Տե'ս Ն.տ,, էջ 43-45:

[3] Ն.տ., էջ 47:

Անձներական թվականներով արտահայտված որոշիչները սովորաբար նախադաս են լինում և թվով ու հոլովով համաձայնում են հոգնակի որոշյալի հետ: Ավելի հաճախ գործածվում են միավորներից կազմված անձներական թվականները(Յետ այնորիկ ձանձրացան պարտեցան լքան աշխատեցան **երկոքին կողմանքն**(3,246): Կենդանութիւնն ի նոյն **չորեսին հիւթսն** լուծանի (5,134:) Երբեմն էլ հանդիպում են ետադաս գործածության օրինակներ(Իջին հեռագոյն **նախարարքն երեքեան**(4,338): Ծագեաց գլոյսն ի մէջ **սեռանցն չորեցունց** (4,752): Հավաքական իմաստ ունեցող որոշյալը անձներական թվականով որոշչի մոտ երբեմն դրվում է եզակի թվով [1](Արձակեաց թագաւորն ի վերայ նոցա զվաչէ… սատակել կորուսանել **զազգն երկոսեան**(3,18): Ընդ միմեանս **գունդն երկոքեան** բախէին(3,244):

Ռուսերենում քանակական թվական որոշիչները որոշյալների հետ համաձայնում են հոլովով, բացի հայցականից(пяти домов, пятью домами), դասական թվականները՝ նաև սեռով(первый дом, первое лицо, первая школа), անձներական (собирательные) թվականների հետ որոշյալը դրվում է հոգնակի թվով (трое мальчиков)[2]:

Գրաբարում որոշչի պաշտոն հիմնականում կատարում են ցուցական, որոշյալ, անորոշ, հարցական և հարաբերական դերանունները: ***Այս,այդ, այն*** ցուցականները որոշիչ են դառնում և' նախադաս, և' ետադաս գործածությամբ՝ համաձայնելով նրա հետ: Նախադաս լինելիս գործածվում են կարճ ձևերով, համաձայնում են որոշյալի հետ՝ բացի հոգնակի ուղղական, հայցական, երբեմն էլ գործիական հոլովներից, որտեղ դերանունները եզակի են լինում, և նախդիրները դրվում են դերանունների վրա(**Յայնմ ժամանակի** կոչէր առ ինքն Շապուհ արքայն Պարսից զթագաւորն Հայոց զԱրշակ(3,194): **Այն զօրութիւնք** ոչ մարդոյ են (1,174):Հազվադեպ հոգնակի ուղղականի հետ ցուցականները կարող են համաձայնել, երբեմն էլ մյուս հոլովների հետ մնում են եզակի կամ անփոփոխ, երբեմն էլ գոյականից տարբեր հոլովով են դրվում, խիստ հազվադեպ գործածվում երկար ձևով[3]:

Ետադաս կիրառության դեպքում ***այս, այդ, այն*** ցուցականները հանդես են գալիս երկար ձևով, որոշյալները ստանում են համապատասխան ցուցական հոդը, իսկ նախդիրները կրկնվում են(Համբարձաւ թագաւորն **ի կողմանցն յայնցանէ** (4,31): Պատգամս յղէր **օրինակաւս այսուիկ**(4,156): Այս կիրառությամբ հանդիպում են թվի, հոլովի կամ հոդի անհամաձայնության դեպքեր, երբեմն էլ գործածվում են կարճ ձևերով(Կենդանի լինիցին **ոսկերքդ այդ**(4,503):Խնդիր փութապէս **գիւտիս այսմ** հոգացեալ՝ ճեպով զիւր մայրն... յԵրուսաղեմ առաքէր(6,70):

Սոյն, դոյն, նոյն ցուցական դերանունները որոշիչ են դառնում նախադաս կիրառութեամբ՝ համաձայնելով գոյականի հետ հոլովով ու թվով, բացի հոգնակի ուղղականից, հայցականից և գործիականից, որտեղ մնում են եզակի(Կեցուցանէ **զնոյն ոգիս նովին մարմնով**(4,117): Գուցէ մեռանիցիմ **սովին մեղօք** (6,334): Պատահում են դրանց միայն հոլովով համաձայնելու դեպքեր: Քիչ չեն այն դեպքերը, երբ այս դերանունները մնում են անհամաձայն (**Նոյն մարմինք նոյն հոգւով** բերեալ զգործս վաստակոցն արդարութեան... յարքայութիւն վերանայցեն (4,529):

Որոշիչ դառնում են բոլոր անորոշ դերանունները **: Ոմն, ոք** դերանունները սովորաբար դառնում են անձի,երբեմն էլ իրի անունների ետադաս որոշիչ, համաձայնում թվով ու հոլովով, **իմն, ինչ** դերանունները սովորաբար դրվում են իր ցույց տվող գոյականներից հետո՝ համաձայնելով որոշյալի հետ հոլովով (հոգնակի ձև չունեն): **Այլ** դերանունը գործածվում է եզակի ու հոգնակի, **միւս** դերանունը՝ եզակի որոշյալի հետ: Այսպես՝ Որ էր **նախարար ոմն** ի Ստահր գաւառէ(4,18):...Ծածուկ **զօրութեամբ իւիք** (5,122): Զնոյն բաջաղանս **այլովք պատմութեամբ** կարկատեցին(5,83): Ի **միւսում թղթին** ասէ (5,78):

Որոշյալ դերանունները նույնպես համաձայնում են որոշյալի հետ: ***Ամենայն*** դերանունը միայն եզակի թիվ ունի և հոգնակի որոշյալի հետ մնում է եզակի, համաձայնում միայն հոլովով: Երբեմն հանդիպում են անհամաձայնության դեպքեր: Այսպես՝ Մի սիրտ յօժարութեան **ամենեցուն** արանց եւ կանանց (2,238): **Մարգարէիւքն ամենեքումբք** ծանօթս տայ (4,370): Միաբանեալ Ալանք **լեռնականօքն ամենայնիւ** (1,210):

---

[1] Ն.տ., էջ 48:

[2] Краткая русская грамматика (под редакцией Н.Ю. Шведовой и В.В. Лопатина), М., 1989, стр. 350-351.

[3] Ն.տ., էջ 51

Հարցական, հարաբերական դերանուններից **զի՞նչ** դերանունը որոշիչ է դառնում միայն եզակի թվով, հոլովով ևս չի համաձայնում որոշյալի հետ **(Զի՞նչ օրինակաւ** կարասցին ապրեցուցանել զմոգպետն(2,314): Քանզի **զի՞նչ աղէտք** տարակուսի են...(5,130): **Քանի՞** դերանունը նույնպես չի համաձայնում որոշյալի հետ՝ **Քանի՞ աշխարհք են**, որում դուք իշխէք՝ աստուածաբար(6,94): **Որ** դերանունով որոշիչները նախադաս են գործածվում և որոշյալի հետ համաձայնում թվով ու հոլովով, երբեմն էլ միայն հոլովով(Սկսաւ նա այնուհետեւ հարցանել զմեզ, թէ ուստի՞ էք եւ կամ **յորմէ՞ գաւառէ** (6,344:) **Որով կամօք** եւ մեք արբեցաք (6,342):

Գրաբարում գոյականով արտահայտված որոշիչը դրվում է ուղղական, սեռական, հազվադեպ բացառական, գործիական հոլովներով և որոշ դեպքերում են համաձայնում որոշյալի հետ: Հատուկ անուններով որոշիչները ետադաս գորածածության դեպքում չեն համաձայնում, իսկ նախադաս գործածության դեպքում մասամբ են համաձայնում(Լուր լուաւ **յերկրէն Հայաստանէ(**3,40): Կէսքն անցեալ ընդ կամուրջն **Վաղարշապատ քաղաքի** (4,33): Հասարակ անուններով, անորոշ, անցյալ և ենթակայական դերբայներով արտահայտված որոշիչների համաձայնությունը որոշյալների հետ կատարվում է ածականով որոշիչների օրինաչափություններով: Այսպես՝ Զարդարեցին ոսկի եւ արծաթի **կանթեղօք լուցելովք** եւ **լապտերօք վառելովք** եւ **աշտանակօք բորբոքելովք**(4,759): Որում պարգեւէր իսկ վիճակ **յամենաշնորհողէն Աստուծոյ** (8,14):

Ռուսերենում գոյականով արտահայտված որոշիչները ևս համաձայնում են թվով, հոլովով և սեռով: Սեռի կարգ չունեցող որոշյալների հետ գոյական որոշիչը սեռով չի համաձայնում(врачу Ивановой).

Մակբայով արտահայտված որոշիչը չի համաձայնում որոշյալի հետ(***Յոյժ մեծարանօք ....*** տօն յիշատակի առնեն(6,84):

Գրաբարում և ռուսերենում հատկացուցիչը սովորաբար չի համաձայնում հատկացյալի հետ, անկախ հատկացյալի հոլովից՝ այն դրվում է սեռական հոլովով: Միայն ստացական դերանուններով(притяжательные местоимения) արտահայտված հատկացուցիչն է համաձայնում հատկացյալի հետ(Հանդերձ **օգնականօք իւրովք** իջանէր ի քաղաքն Սամոսատացւոց(8,15): Առաջնորդեաց մեզ **ի մանկութենէ մերմէ** (4,167): Я начал мой роман. С героем моего романа):

Սովորական կամ բուն բացահայտիչը թվով ու հոլովով, իսկ եթե բացահայտյալը անձնական դերանուն է, նաև դեմքով (հոդով) համաձայնում է բացահայտյալին: Մասնական բացահայտիչը բացահայտյալին համաձայնում է նախադրության խնդիրների միջոցով, իսկ մասնավորող պարագայական բացահայտիչը չի համաձայնում: Իսկ զՅուսիկ սնուցանէր **Տիրան որդի թագաւորին *Խոսրովու***(3,20): **Դուք հոգեւորքդ** հաստատեցէք զայնպիսի հոգւով հեզութեան (6,476): (Месроп Маштоц-сын Вартана-созидатель армянского алфавита. Вечная память ему-Месропу Маштоцу): Բացահայտիչը բացահայտյալից կանոնարկված կետադրությամբ չի տրոհվում:

Այսպիսով՝ նախադասության անդամների համաձայնությունը որոշակի ընդհանրություններ է դրսևորում գրաբարում և ռուսերենում:

ՍԿԶԲՆԱՂԲՅՈՒՐՆԵՐ

1. Խորենացի Մ., Պատմութիւն Հայոց,Երևան, 1981:
2. Եղիշէ, Վասն Վարդանայ և Հայոց պատերազմին,Երևան,1985:
3. Բուզանդ Փ., Պատմութիւն Հայոց,Երևան,1987:
4. Ագաթանգեղոս, Պատմութիւն Հայոց, Երևան,1986:
5. Կողբացի Ե., Եղծ աղանդոց,Երևան, 1970:
6. Փարպեցի Ղ., Պատմութիւն Հայոց,Երևան, 1982:
7. Սեբէոս, Պատմութիւն,Երևան,1979:
8. Կորիւն, Վարք Մաշտոցի,Երևան 1979:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Աբեղյան Մ., Հայոց լեզվի տեսություն, Եր., 1968:
2. Աբրահամյան Ս.Գ., Պառնասյան Ն.Ա., Օհանյան Հ.Ա., Բաղիկյան Խ.Գ., Ժամանակակից հայոց լեզու, հ.3, Շարահյուսություն, Եր., 1976:
3. Ասատրյան Մ.Ե., Ժամանակակից հայոց լեզու, Շարահյուսություն, Եր., 1987:
4. Ավետիսյան Հ., Որոշիչ-որոշյալի կապակցությունը գրաբարում, Եր., 1972:
5. Գյուլբուդաղյան Ս.Վ., Ժամանակակից հայերենի շարահյուսություն(պարզ նախադասութուն), Եր, 1988:

6. Իշխանյան Ռ.Ա., Արդի հայերենի շարահյուսություն, Պարզ նախադասություն, Եր. ,1986:
7. Մկրտչյան Է.Ս., Գրաբարի դասընթաց, Եր., 2008:
8. Պապոյան Ա.Հ., Բադիկյան Խ.Գ., Ժամանակակից հայոց լեզվի շարահյուսություն, Եր., 2003:
9. Պետրոսյան Հ.Զ., Հայերենագիտական բառարան, Եր., 1987:
10. Քոսյան Վ.Ա., Գրաբարի բառակապակցությունները, Եր., 1980:
11. Белошапкова В.А., Современный русский язык, Синтаксис М., 1977.
12. Гвоздев А.Н.,Современный русский литературный язык, М., 1973.
13. Краткая русская грамматика (под редакцией Н.Ю. Шведовой и В.В. Лопатина), М., 1989.

Տեղեկություններ հեղինակի մասին.
Օֆելյա Բաբայան - բ.գ.թ.,պրոֆեսոր,ակ.Ս. Աբրահամյանի անվան հայոց լեզվի ամբիոն
էլ. հասցե՝ o.e.babayan@mail.ru

Հոդվածը տպագրության է երաշխավորել խմբագրական կոլեգիայի անդամ, բ.գ.դ. Ս.Ա. Խանյանը:

ՀՏԴ- 809.198 .1 Հայոց լեզու

ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆ ԻԲՐԵՎ ԲԱՐԲԱՌԱՅԻՆ ԲԱՌԵՐԻ ՊԱՀԱՐԿՄԱՆ ՈՒ ԳՈՐԾԱԾԱԿԱՆ ԱԿՏԻՎՈՒԹՅԱՆ ՄԻՋԱՎԱՅՐ

Ռենա ՄՈՎՍԵՍՅԱՆ

Բանալի բառեր *- Ժողովրդայնացում, գեղարվեստական գրականություն, ծագումնաբանական բազմազանություն, կենսունակություն, բարբառայնություն, լեզվամտածողություն, ոճավորում, հնդեվրոպական, փոխառություն, իմաստային, բարբառախոս միջավայր:*

Ключевые слова: *популяризация, художественная литература, этимологическое многообразие, живучесть, диалектизм, языковое мышление, стилизация, индоевропейский, заимствование, смысловой, диалектная среда.*

Key words*: popularization, fiction, etymological diversity, vitality, dialectism, linguistic thinking, stylization, Indo-European, borrowing, semantic, dialectal environment.*

ХУДОЖЕСТВЕННАЯ ЛИТЕРАТУРА КАК СРЕДА ХРАНЕНИЯ И АКТИВНОГО УПОТРЕБЛЕНИЯ ДИАЛЕКТНЫХ СЛОВ

Р. МОВСЕСЯН

Одним из художественных способов отображения характера народа, образа мышления, жизненной философии является применение диалектных и разговорных реалий со стороны писателя. Диалектные слова могут проникнуть в художественную литературу непроизвольно, под влиянием языкового мышления, а также преднамеренно, для стилизации художественного произведения. Диалектные слова, примененные в произведениях арцахских писателей, имеют как смысловое, так и этимологическое многообразие. Примечательно, что в изучаемой нами литературе часть диалектных слов незнакома для всех или почти всех представителей нового поколения диалектной среды. Значит, художественное слово часто становится единственной средой сохранения и применения диалектных слов.

FICTION AS AN ENVIRONMENT FOR THE STORAGE AND ACTIVE USE OF DIALECTAL WORDS

R. MOVSESYAN

One of the artistic ways of the writer's reflection of the character of people, the way of thinking, the philosophy of life is the use of dialectal and colloquial realities. Dialectal words can penetrate into the fiction literature involuntarily, under the influence of linguistic thinking, and intentionally, for stylization of the work of art. Dialectal words used in the works of Artsakh writers have both a semantic and etymological diversity. It is noteworthy that in literature some of the dialectal words are unfamiliar to all or almost all representatives of the new generation of the dialectal environment. Hence, the artistic word often becomes the only environment for the preservation and use of dialectal words.

Գրողի կողմից՝ ժողովրդի բնավորության, մտածելակերպի, կենսափիլիսոփայության գեղարվեստական արտացոլման եղանակներից մեկը բարբառային ու ժողովրդախոսակցական իրողությունների գործածությունն է: Բարբառային բառերը գեղարվեստական գրականություն կարող են մուտք գործել ակամա՝ լեզվամտածողության թելադրանքով, և կանխամտածված՝ գեղարվեստական երկի ոճավորման նպատակով:

Արցախի գրողների ստեղծագործություններում գործածված բարբառային բառերը ունեն ինչպես իմաստային, այնպես էլ ծագումնաբանական բազմազանություն: Հատկանշական է, որ ուսումնասիրվող գրականության մեջ գործածված բարբառային բառերի մի մասը անծանոթ է բարբառախոս միջավայրի նոր սերնդի բոլոր կամ գրեթե բոլոր ներկայացուցիչներին: Ուրեմն՝ գեղարվեստական խոսքը հաճախ դառնում է բարբառային բառերի պահպանման ու գործածության եզակի միջավայր:

Գրողի կողմից՝ ժողովրդի բնավորության, մտածելակերպի, կենսափիլիսոփայության գեղարվեստական արտացոլման եղանակներից մեկը լեզվի ժողովրդայնացումն է: Իսկ լեզվի ժողովրդայնացման ուղիներից մեկը բարբառային ու ժողովրդախոսակցական իրողությունների գործածությունն է:

Հայ դասական և ժամանակակից գրողներից շատերն իրենց ստեղծագործությունների լեզվական միջոցների ընտրության շրջանակներն ընդլայնել են՝ ի հաշիվ լեզվի տարածական տարբերակների՝ բարբառների, ենթաբարբառների, խոսվածքների, որը հայ լեզվաբանության և գրաքննադատության մեջ տարբեր ժամանակներում տարբեր կերպ է գնահատվել՝ բարբառային

իրողությունները դիտվելով կամ գրական նորմայից շեղումներ, «ցածր» ոճի դրսևորումներ, կամ էլ բներանգ ստեղծելու, կերպավորման, ազգային հոգեբանության դրսևորման լավագույն միջոցներ և այլն:

Քննելով բարբառային իրողությունների դրսևորման առանձնահատկություններն ու նպատակադրումը՝ նկատելի է հեղինակի կողմից դրանց ակամա և կանխամտածված ընտրությունը: Ակամա ընտրությունը հեղինակի լեզվամտածողության ինքնաբուխ ու բնական արտահայտությունն է: Բարբառը կամ խոսվածքը լեզվական այն տարբերակն է, որին մարդը (այս դեպքում՝ գրողը) տիրապետում է վաղ մանկությունից, և բարբառով է նրա գիտակցության մեջ ձևավորված քերականական տրամաբանությունը: Այդ մասին Հր. Աճառյանը գրում է. «Ամեն մի անհատ, որ գրում է որևէ մայրենի լեզվով կամ բարբառով, ինչքան էլ լավ իմանա այդ օտար լեզուն կամ բարբառը, այնուամենայնիվ իր մայրենի լեզվից կամ բարբառից որևէ հետք կթողնի: Երբ մի վանեցի գրում է գրական հայերենով, լինի դա արևելյան թե արևմտյան բարբառով, անշուշտ մի քանի տեղ որոշյալ բառերի ը հոդը կուլ պիտի տա: Երբ Լեոն իր Հայոց Պատմության մեջ (Ա, էջ 609) գրում է.«Տիգբոնից մոտ է ապրում», դրանով մատնում է իր դարաբաղցի լինելը (Ղարաբաղի բարբառում մօտ նախադրությունը վերցնում է բացառական խնդիր, մինչդեռ ուրիշ բարբառներում սեռական-տրական խնդիր): Կամ երբ Մանանդյանը իր հրատարակած Նոնոսի մեջ (Marburg, 1903, էջ 5, ծան.) գրում է պիտի լինի՛ր փոխանակ պիտի լինէր, դրանով մատնում է, թե խոսում է կարնեցոց բարբառը» [3-116]:

Բարբառային իրողությունների կանխամտածված ընտրությունը ոճական արժեք ունի, գեղարվեստական ստեղծագործության մեջ այդ միավորներն ունեն տարբեր գործառույթներ. բնութագրում են տվյալ տարածաշրջանի կենցաղը, բարբառը կամ խոսվածքը դարձնում են ավելի ճանաչելի՝ ընդլայնելով ընթերցողի պատկերացումը տվյալ բարբառի առանձնահատկությունների մասին, և ստեղծելով համապատասխան բներանգ՝ գրական կերպարները դարձնում են ավելի գործուն, կերպավորումը՝ ավելի համոզիչ: Բարբառային բառերի գործածումով հարստանում են գեղարվեստական լեզվի ոճական և պատկերավորման հնարավորությունները, ավելի անկեղծ է դրսևորվում հեղինակի վերաբերմունքը, բարբառային իրողությունների միջոցով գեղարվեստական խոսքը դառնում է ավելի բնական, և ընթերցողը ավելի է կապվում հեղինակի՝ որպես ժողովրդի միջից ծագած կերպարի հետ: Բացի դրանից՝ բարբառային իրողությունների գործածությունը նպաստում է նաև բարբառների ու գրական լեզվի մերձեցմանը՝ բարբառների հաշվին բազմապատկելով գրական լեզվի զարգացման հնարավորությունները:

Ուսումնասիրության նյութը Արցախի Ժամանակակից գրողների ստեղծագործություններում գործածված բարբառային բառերն են:

Արցախի գրողները Ղարաբաղի բարբառի կրողներն են, և նրանց ստեղծագործություններում դրսևորվող բարբառայնությունները մեծ մասամբ Արցախի տարածքի խոսվածքներին հատուկ իրողություններ են, որոնց մի մասը, բնականաբար, բնորոշ է նաև մյուս բարբառներին ու խոսվածքներին, մյուս մասը ինքնատիպ է, բնորոշ է միայն տարածաշրջանի խոսվածքներին:

Բարբառի հարուստ բառապաշարի հումքը Արցախի ժամանակակից գրողների ստեղծագործություններում դարձել է իրական պատկերների, տիպական կերպարների կերտման լավագույն միջոց: Դրանց գործածությունը ունի տեղական բներանգ ստեղծելու, ժողովրդի լեզվամտածողության և հոգեբանության ինքնատիպությունը ցույց տալու ոճական բեռնվածություն, գեղարվեստական խոսքին հաղորդում է աշխուժություն, կենդանություն, հարազատություն և անմիջականություն:

Ինչպես՝ *Որից վառվող-լույս տվող <u>փիթելան</u>[1] (պատրույգ) սնունդ է առնում [7-591]: Առհասարակ ամեն շնչավոր նեղ օրին քաշվում է իր <u>սամթը</u> (այստեղ՝ կողմ) [9-190]: Ասեմ, որ նմանների ու մեկ էլ՝ <u>փահլևանի</u> (լարախաղաց) երևալը մեր կողմերում զվարճանալու լավ առիթ էր դառնում [4- 82]: Սառույցը ցենաջրի երեսը բարակ <u>փառ</u> (թաղանթ էր) կապել [8-376]:*

Գրողի կողմից բառի ընտրությունը պայմանավորված է ոչ միայն նրա տաղանդով, գեղագիտական ըմբռնումով, այլև երկի թեմատիկ առանձնահատկություններով, այն միջավայրով, որը ներկայացվում է ստեղծագործության մեջ: Եթե փորձենք ընդգծված բարբառային բառերը փոխարինել համապատասխան գրականներով, ապա կխամրի միջավայրի զգացողությունը և խոսքի բնականությունը: Հատկանշելի է մի իրողություն ևս. եթե այս կառույցները մի կողմից՝

[1]Բոլոր բարբառային բառերի բացատրությունը տվել ենք ըստ Ա. Սարգսյանի «Ղարաբաղի բարբառի բառարանի»:

սահմանափակում են ստեղծագործության «հանրամատչելիությունը», այսինքն՝ այլ բարբառակիր ընթերցողը հաճախ բառարանային ընթերցմամբ պետք է ընկալի համահենքը, ապա մյուս կողմից՝ այդօրինակ գործածությունները դառնում են տվյալ հանրության լեզվական առանձնահատկությունների, նաև մշակույթի ճանաչողության իրական փաստեր:

Գեղարվեստական խոսքում կրկնակի արժևորվում են բարբառային այն բառերը, որոնք գրական փոխարինիչներ չունեն: Նման բառերը գրական լեզվին հատուկ նկարագրական միջոցներով փոխարինելը խոսքը ոչ միայն զրկում է վերոնշյալ որակներից, այլև սեղմությունից, դիպուկությունից:

Այսպես՝ *Մագան էլ ես կբերեմ, իլա որ գինին լավ եղավ, մի երկու բանկա էլ կապած կրմզուկ կբացեմ [8-241]: - Խմիչքի հետ գործածվող ուտելիքն էլ ես կբերեմ, իլա որ գինին լավ եղավ, մի երկու բանկա էլ կապած կրմզուկ կբացեմ:*

Շունը իսկույն ետ է դառնում, ցանկանում է աստիճաններով բարձրանալ, բայց աստիճանների վրա խափանգը փակած է [8-401]: - Շունը իսկույն ետ է դառնում, ցանկանում է աստիճաններով բարձրանալ, բայց աստիճանների վրա դեպի ներքնահարկը կամ տանիքը բացված մուտքի վրա դրվող դռնակը փակած է:

Ընդգծված բառերը նշված իմաստներով փոխարինելով՝ կորչում են նկարագրության տիպականությունը, բներանգային առանձնահատկությունները, թուլանում դինամիկությունը, իսկ եթե հեղինակն ընտրեր մոտ իմաստ արտահայտող այլ գրական բառեր (ինչպես՝ *մագա-ուտելիք, խափանգ-դռնակ* և այլն), ապա կտուժեր նկարագրության հասցեավորումը, հեղինակի ասելիքը կկորցներ ներգործության ուժը, խոսքի գեղարվեստական հատկանիշները կկամրնեին:

Արցախի գրողների ստեղծագործություններում գործածված բարբառային բառերն ունեն նաև ծագումնաբանական բազմազանություն: Դրանց մեջ մեծ է և՛ բնիկ բառերի, և՛ փոխառությունների թիվը: Բնիկ հայերեն բառերը կազմում են թե՛ գրական հայերենի, թե՛ նրա բոլոր տարբերակների բառապաշարի միջուկը, հիմնաշերտը:

Հատկանշական է, որ ուսումնասիրվող ստեղծագործություններում իմաստային հետաքրքիր ծավալումներ ունեն հնդեվրոպական ծագման այն միավորները, որոնք վկայված չեն հայերենի գրավոր հուշարձաններում, բայց առկա են հայերենի քիչ թվով բարբառներում, այդ թվում Ղարաբաղի բարբառում: Այդպիսի միավորներ են **հեռ**[1] *(հ.ե. ers, գրբ. եռ) – 1.եռալը,2.ցավ, կսկիծ,* **կեփ**[2] *(գրբ. գաբ, հ.ե. gbabh) - այստեղ՝զիստ, ագդր, Ի՞նչ ես կեփերդ բաց արել, բա դու սկի ամոթ չունե՞ս* [12-306]: ***Տալ***[3] *(հ.ե. dhel)- ծառի ճյուղ 8.Երկու դյուցազուն ծառեր՝ ճղատարած ու հզոր, ամեն մի տալը մի ծառ [8-229] և այլ բառեր:*

Պատմական զարգացման ընթացքում Ղարաբաղի բարբառի բառապաշարի հարստացման արտաքին աղբյուր են հանդիսացել հիմնականում արևելյան լեզուների (արաբերեն, պարսկերեն, թյուրքական լեզուներ) և ռուսերենի բառապաշարը: Արցախի գրողների ստեղծագործություններում բառապաշարի այդ շերտը ակտիվ կենսունակությամբ դրսևորվել է: Փոխառողն, անշուշտ, բարբառն է եղել, իսկ գրողների նպատակը ժամանակաշրջանի ժողովրդական խոսքն ու մտածողությունը ընթերցողին ներկայացնելն է: Հատկանշական է Ռ. Իշխանյանի նկատառումը. «Պետք է խստորեն տարբերել նախ իր՝ գրողի կատարած փոխառությունը օտար լեզվից և այն փոխառությունը, որը ոչ թե գրողը, այլ բարբառն է կա;ցտարել» [5 - 91]:

Օրինակ՝ ***մագազին/մաղազին*** *(ռուս. магазин) – խանութ Կարծեցի՝ ոսկու մագազին ես: Աղջի, էդ ինչի՞ ես զուգվել [12-307]:* ***Գրադուզ/գրադուզ*** *(ռուս.градус) ջերմության, հեղուկի խտության, սպիրտի թանդության աստիճանի չափման միավոր - Որ ընկեր Սահրադյանը տանի գրադուզը ստուգի [12-249]:* ***Սարսաղ*** *(թրք. sarsak) – հիմար, տխմար- Այ սարսաղ տերտեր, քեզ ո՞վ է իրավունք տվել [12-42]:* ***Դայի*** *(թրք. dayə) – 1. քեռի, մորեղբայր, 2. տարեց տղամարդկանց դիմելու հարգական կոչական բառ -Բա չգիտե՞ս, Կուքի դայի...[1-62]:* ***Ափաշկարա*** *(թրք.apaši-kar)– ակնհայտ՝ պարզորոշ՝ բացահայտ կերպով-Վանին քթի տակին նորից խնդմնդաց՝ հիմա ափաշկարա [8-113]:* ***Չովուշ*** *(թրք. čovuš) – զգիր - Գիշերվա կեսին մեկ էլ տարածվում է չովուշ Թեմուրի ձայնը... [8-145]:* ***Մեզար*** *(արաբ. mezar) – մազից՝ բրդից գործած մեծ սփռոց, որի վրա շարում են խմորի գնդերը կամ թոնրից հանած տաք հացերը - Սոնա տատը մեզարը մեկնում էր հատակին, ինքը ծալապատիկ նստում… [8-224]:* ***Լդար***

[1] Տե՛ս Աճառյան Հ., Հայերեն արմատական բառարան, հ.3, Երևան, 1926, էջ 81:

[2] Տե՛ս Հովհաննիսյան Լ., Ղարաբաղի բարբառի բառապաշարի հնագույն շերտերը, Լրաբեր հասարակական գիտությունների, N1, էջ 119:

[3] Տե՛ս նույն տեղում, էջ 119:

(պրսկ., թրք. lagar) – նիհար, վտիտ - Լող-լող կերպարանքում, երկար լաղ դեմքին ու խռիվ բեղերին իջած լրջությունն էր հիմա ծիծաղելի [9-67] ևն:

Խնդրո առարկա գեղարվեստական ստեղծագործությունների մեջ ռուսական փոխառությունները քանակով գերազանցում են մնացած լեզուներից կատարած փոխառություններին: Հետաքրքրական է, որ Արցախի բանահյուսության լեզվի քննությանը նվիրված աշխատանքի մեջ Լ. Մարգարյանը նշում է, որ բանահյուսության լեզվում արևելյան լեզուներից կատարած փոխառությունները քանակով գերազանցում են ռուսական փոխառություններին: Պատկերն այդպիսինն է նույնիսկ նորագիր բանահյուսական նմուշներում, չնայած թվում է՝ նորագիր բանահյուսական նմուշներում պետք է նկատվեր ռուսերեն փոխառությունների կտրուկ աճ՝ պայմանավորված վերջին տասնամյակներում բարբառ ներհոսած ռուսերեն բառերի մեծաքանակությամբ: Սա, ըստ Լ. Մարգարյանի, կարելի է բացատրել նրանով, որ բանասացները ավագ սերնդի ներկայացուցիչներ են, իսկ բանահավաքները բանահյուսական նմուշը փոխադրելիս նախանձախնդիր են նմուշի «բնօրինակային» առանձնահատկությունները պահպանելուն:

Գեղարվեստական գրականության պարագայում գրողի նախանձախնդրությունն ուղղված է տվյալ ժամանակաշրջանի ժողովրդի լեզվամտածողությունը ճիշտ ներկայացնելուն: Մեր կարծիքով՝ դրանով է պայմանավորված այն հանգամանքը, որ, ի տարբերություն բանահյուսական լեզվի, խորհրդային և հետխորհրդային ժամանակաշրջանի գեղարվեստական գրականության լեզվի բառապաշարը հարուստ է ռուսերենից կատարած բարբառային փոխառություններով: *Ինչպես՝* ***չայնիկ*** *(ռուս. чайник) - թեյնիկ-Մենակ ձեր կոծկած կուժն ա կոտրվել, մեկ էլ մի չայնիկ [6-131]:* ***Կառավաթ*** *(ռուս. кровать)– մահճակալ - Մի՞տդ ա, որ քնում էիր էս կառավաթին ես էլ՝ տափին [6-80]:* ***Մասկա*** *- (ռուս. маска)– դիմակ-Ինչո՞ւ է ներս մտել ձեռնոցներով ու սպիտակ մասկայով [7- 218]:* ***Տելեգրեյկա*** *(ռուս. телегрейка) – տղամարդու մգդակած հաստ ու կարճ վերնազգեստ - Եկավ սապոգները քարշ տալով, տելեգրեյկան ուսերին ծռված ու գլխարկն աչքերը համարյա ծածկած [9- 82]:* ***Դոխտուր*** *(ռուս. доктор) – բժիշկ - Բաղունց Հակոբ ապոր Նվարդը դոխտուր է դարձել, չէ՞ [1- 47]:* ***Շոփեր*** *(ռուս. шофер) – վարորդ-Մաթևոսի համար քաղաքի հաստն աղջիկները վարժուհիներ են, երիտասարդները՝ վարսավիրներ կամ «շոփերներ» [12-89]:*

Ծագումով փոխառյալ մի շարք բառեր բարբառում և մեր օրինակներում գործածվում են փոխատու լեզվում ունեցած բառիմաստից տարբերվող նոր իմաստով, մի շարք բառեր էլ զուգահեռաբար պահում են նաև փոխատու լեզվի իմաստը: Օրինակ՝

քիլինկյոշ (պրսկ. kālġūš) բառը փոխատու լեզվում ունի *«եռացրած»* իմաստը, իսկ բարբառում բառիմաստը մասնավորվել է և նշանակում է *«կերակրատեսակ, որ պատրաստում են չորաթանը ջրի մեջ լուծելով և վրան յուղի մեջ խարկած սոխ լցնելով»*: Ինչպես՝ *Քիլինկյոշ … Կարո՞ղ ես եփել: Սիբիրում այնքան եմ հիշել մայրիկի եփած կերակուրները* [7-379]:

Չանչախ (պրսկ. čākačāk)-ը պարսկերենում ունի *«դռան թակիչ»* իմաստը, Ղարաբաղի բարբառում բառիմաստն ընդլայնվել է և ունի հետևյալ նշանակությունները. *1 ջրաղացի կրիճակին ամրացված ու ծայրով ջրաղացքարի վրա ընկած փայտե շերտիկ, որի ցնցումները հաղորդվում են կրիճակին, և աղունը դանդաղորեն թափվում է քարի անցքի մեջ 2. փայտե հաստ ցից, որ խրում են գետնի մեջ, 3. փխբ. շատախոս մարդ*: Մեր օրինակում էլ բառը գործածված է վերջին՝ փոխաբերական իմաստով: Համապատասխան պայմաններով թելադրված՝ առաջին երկու իմաստները գործածության նվազ հաճախականություն ունեն, մինչդեռ փոխաբերական իմաստով գործածությունը կենսունակ է: Ինչպես՝ *Գլուխը լուրջ-լուրջ տմբտմբացնում է չանչախ Բենիկը* [12-31]:

Փանջաք (պրսկ. fenče) բառը փոխատու լեզվում գործածվում է *«ձեռքի թաթ»* իմաստով, բարբառում բառիմաստի ծավալումով ունի *«մի ձեռքով՝ բռով տանելու չափով քանակություն (խոտի, հացաբույսի և այլն)»* և *«տասը կամ քսան խուրձից բաղկացած փոքրիկ դեզ»* իմաստները: *Ինչպես՝ Լավ, ի՞նչ անենք, թե օրական վեց փանջաք հունձ ես անում [12- 232]:*

Շաբաշ (պրսկ. šabaš - կեցցե՛, շա՛տ լավ) բառը բառիմաստի շրջումով բարբառում կիրառվում է *«հարսանիքի՝ տոնախմբության և այլնի ժամանակ նվագողներին, պարողներին տրվող դրամական նվեր»* նշանակությամբ, ինչպես՝ Ինձ համար «Զեյրանի» նվագիր, հիսուն ռուբլի շաբաշ եմ տալիս [12-45]:

Քավթառ-ը (պրսկ. kaϝtār) փոխատու պահլավերենի «բորենի» նշանակությամբ բարբառում չի գործածվում: Այն ստացել է *«տգեղ, ծեր (ջադու)»* իմաստները և ունի ընդգծված բացասական երանգ: Ինչպես՝ *Անամոթ, անամոթ քավթառ կին է, բայց այնպես է զուգվում-զարդարվում, կարծես հարսատեսի է պատրաստվում…* [8-173]:

Խալաթ (արաբ. xəlnt) բառը փոխատու լեզվի «*ընծա, նվեր*» իմաստին զուգահեռ ունի «*տանը կամ աշխատանքի վայրում հագնելու երկար վերնազգեստ*» իմաստը, ինչպես՝ *Սերիկ, այդ ինչո՞ւ է <u>խալաթդ</u> սևացել [7-506]:*

Արցախի և Զանգեզուրի գրողների ստեղծագործություններում գործածված որոշ բարբառային բառերի կենսունակությունը փորձել ենք որոշել՝ հարցում կատարելով տարբեր սերունդների ներկայացուցիչների շրջանում: Առանձնացրել ենք 50 բնիկ և փոխառյալ բարբառային բառեր, որոնք գիտեն և գործածում են 70-85 տարեկան բոլոր հարցվողները (12 հոգի) :

Այդ բառերի մոտ կեսը՝ ***յուրոնիկ-1***[1] *(հավերի ընտանիքին պատկանող վայրի կամ ընտանի փոքրիկ թռչուն),* ***բյատիուռ-0*** *(անխիղճ, անգութ մարդ),* ***դալբ-0*** *(1. կեղծ, խարխլված, 2. ծույլ, դանդաղաշարժ),* ***փանջար-0*** *(տասը կամ քսան խուրձից բաղկացած փոքրիկ դեզ),* ***մազա-3*** *(խմիչքի հետ գործածվող ուտելիք),* ***բյոհլան-0*** *(արագաշարժ),* ***թամբաքյու-0*** *(մորմազգիների ընտանիքին պատկանող բույս, որի չորացրած և մանրացրած տերևները գործածում են ծխելու համար),* ***մաշալլա-3*** *(գոհունակություն, խրախուսանք, բարեմաղթություն արտահայտող բացականչություն՝ կեցցես),* ***մազալլու-0*** *(տեղը տեղին, համով, հոտով, 2. աշխույժ, հետաքրքիր),* ***բյառա-0*** *(ականջները կտրած),* ***դամիշ-3*** *(եղեգ),* ***դաբա-0*** *(կանացի երկար զգեստ),* ***խատիանգ-0*** *(դեպի ներքնահարկը կամ տանիքը բացված մուտքի վրա դրվող դռնակ),* ***սարթ-0*** *(ած., 1. թունդ, բարկ, 2. համառ, 3. խիստ, դաժան, խստաբարո),* ***կուփեճ-0*** *(գորգագործների երկաթե ատամնավոր գործիք, որով գործած ամեն շարքը ծեծում են՝ խիտ նստեցնելու՝ ամրացնելու համար),* ***ճաթ-0*** *(գարուց կամ կորեկից թխած հաց),* ***ղիրմա-3,*** *(1. փամփուշտի արճճե մանր գնդակ, 2. ած., փխբ. մանր (պտուղների մասին),* ***մութրուբ-0*** *(անճարակ, խեղճ ու կրակ),* ***չեռվեր-0*** *(տարողության չափ, որ հավասար է 4 լիտրի, 2. այդպիսի տարողությամբ շիշ),* ***կեփ-2*** *(կարթանման երկճյուղ փայտիկ, որ կապում են թակի՝ պարանի մի ծայրին, իսկ մյուս ծայրն անցկացնելով դրա միջով՝ բեռը պրկում),* ***ղոյրաթ-3*** *(ջանք, եռանդ, ուժ),* ***դաբաղ-0*** *(խոշոր եղջերավոր անասունների վարակիչ հիվանդություն)* անծանոթ է բարբառախոս միջավայրի 15-25 տարեկան բոլոր կամ գրեթե բոլոր հարցվողներին (50հոգի):

Գեղարվեստական գրականության մեջ սրանց գործածությունը առավել արժևորվում է. դրանցով ոչ միայն կոլորիտ է ստեղծվում, այլև գրականությունը դառնում է այդպիսի բառային միավորների գործածության ու պահպանման եզակի միջավայր:

Հիմք ընդունելով այդ բառերի անծանոթությունը, ըստ այդմ նաև սակավ գործածությունը նոր սերնդի խոսքում՝ պայմանականորեն դրանք համարում ենք անկենսունակ միավորներ: Այդ բառերի մի մասի (**կուփեճ, ճաթ, կեփ, թամբաքու, խատիանգ, դաբա**) անկենսունակությունը պայմանավորված է նրանով, որ դրանք նշանակող իրերը, երևույթները դուրս են եկել կամ այլևս քիչ են գործածվում կենցաղում, իսկ մնացած բառերը գործածությունից դուրս են մղել դրանց գրական համարժեքները:

Առանձնացված բառերից համեմատաբար կենսունակ են ***մուշտարի-48*** *(հաճախորդ, այցելու),* ***փառ-48*** *(թաղանթ),* ***աբուռ-47*** *(ամոթի, պատվի, պատկառանքի զգացում),* ***չոփ-47*** *(1.չոր ճյուղ, փայտի կտոր, 2. փխբ. շատ նիհար),* ***ցաք-48*** *(փշոտ թուփ),* ***ճկռել-50*** *(կքանստել),* ***թազնիլ-45*** *(նստել՝ շան, գայլի, արջի մասին),* ***լազաթ-48*** *(1 հաճույք, բավականություն, 2. ած. հաճելի բավականություն պատճառող),* ***կռոճ-49*** *(շաքարի, քարաղի և այլնի ամբողջական կտոր, գուղձ),* ***ղսմաթ-44*** *(բախտով վիճակված բաժին),* ***գյոլ-50*** *(1.լճակ, 2. փոսի մեջ հավաքված ջուր),* ***ղորթ-39*** *(ճիշտ, ճշմարիտ),* ***չոլախ-42*** *(ոտքից կամ ձեռքից հաշմանդամ, կաղ),* ***յալ-42*** *(1.սարալանջ, 2.ձիու և այլ կենդանիների վզի մազ),* ***սատոր-47*** *(փայտի հաստ կոճղ, որի վրա փայտ կամ միս են ջարդում, կտրտում),* ***օյին-48*** *(1.խաղ, խաբեբայություն, 2.մեկ ամբողջություն կազմող խաղի մի մասը, 3. մեկի գլխին բերած փորձանք),* ***փիալա-48*** *(վերևը՝ լայն, տակը նեղ հախճապակե բաժակ՝ առանց ունկի)* բառերը, դրանց իմաստները գիտեին հարցվածների 80 տոկոսից ավելին: Դրանք հաճախ են հանդիպում խնդրո առարկա ստեղծագործություններում:

Այս բառերը հաճախական գործածություն ունեն նաև այսօր: Ի տարբերություն սրանց՝ ներքոբերյալ բառերը կարելի է համարել միջին կենսունակություն ունեցող բառեր: ***Արդո–9*** *(խոշոր աղացած հացահատիկ, որով կերակրում են անասուններին),* ***դալլաք-9*** *(վարսավիր),* ***ռուզի-9*** *(բարիք, բերք, ապրուստի միջոց),* ***փիթելա-18*** *(պատրույգ),* ***սամթ-20*** *(1.նպատակահարմար եղանակ, 2. կողմ, որոշ ուղղությամբ ընկած բնակավայր),* ***խաչալ-21*** *(խոշոր անցքերով մաղ՝ցորենը գարին, ընդեղենը մաքրելու համար),* ***արսրգ-25*** *(1.անհոգ, ոչնչով չմտահոգվող, 2. անամոթ, անպատկառ, 3. դիմացկուն (բույսերի մասին),* ***քիլինկյոշ-25*** *(կերակրատեսակ, որ պատրաստում են չորաթանը ջրի մեջ լուծելով և*

[1] Թվերով տրվում է համապատասխան բառն իմացողների քանակը:

վրան յուղի մեջ խարկած սոխ լցնելով), ***ղիյամաթ-33*** *(սաստիկ ցուրտ, սառնամանիք),* ***չանչախ-27*** *(շատախոս մարդ),* ***նամարդ-24*** *(տմարդի, ստոր մարդ),* ***խախալ-21*** *(խոշոր անցքերով մաղ՝ ցորենը, գարին և այլ ընդեղենները մաքրելու համար),* ***ղուզղուն -35*** *(ագռավ)*:

Հարցումների արդյունքները վկայում են, որ բարբառի զարգացման ընթացքն անընդհատական է, և այն արտացոլում է հասարակական կյանքի տեղաշարժերը: Ըստ այդմ՝ բառային մի շարք միավորներ աստիճանաբար արտամղվում են: Այս դեպքում գրավոր հուշարձանը՝ գեղարվեստական ստեղծագործությունը, դառնում է այդ բառերի ճանաչողության տարածք ու պահոց:

Այսպիսով՝ բարբառային բառերը գեղարվեստական գրականություն կարող են մուտք գործել ակամա՝ լեզվամտածողության թելադրանքով, և կամա՝ գեղարվեստական երկի ոճավորման նպատակով:

Արցախի գրողների ստեղծագործություններում գործածված բարբառային բառերը ունեն ինչպես իմաստային, այնպես էլ ծագումնաբանական բազմազանություն: Ուսումնասիրվող ստեղծագործություններում իմաստային հետաքրքիր ծավալումներ ունեն ինչպես հնդեվրոպական ծագման և հայերենի գրավոր հուշարձաններում չվկայված միավորները, այնպես էլ բարբառային փոխառությունները: Արցախի ժամանակակից գրողների ստեղծագործություններում մեծ թիվ են կազմում ռուսերենից կատարված բարբառային փոխառությունները, ինչը բացատրվում է նրանով, որ այդ հեղինակները ապրել և ստեղծագործել են խորհրդային և հետխորհրդային տարիներին:

Հատկանշական է, որ ուսումնասիրվող գրականության մեջ գործածված բարբառային բառերի մի մասը անծանոթ է բարբառախոս միջավայրի 15-25 տարեկան բոլոր կամ գրեթե բոլոր հարցվողներին: Ուրեմն՝ գեղարվեստական խոսքը հաճախ դառնում է բարբառային բառերի պահպանման ու գործածության եզակի միջավայր:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1.Աբրահամյան Ս., Սերունդների հետ, Երևան, «Ամարաս» հրատ., 2008, 595 էջ
2.Աճառյան Հ.Հ., Հայերեն արմատական բառարան, 1-4, Երևան, Երևանի համալսարանի հրատ., 1971-1979, 697- 688-636-676 էջ
3. Աճառյան Հ., Հայոց լեզվի պատմություն, մաս 2, Երևան, Հայպետհրատ,1951, 608 էջ
4.Ավետիսյան Ն., Սրտի կայծեր, Ստեփանակերտ, «Վաչագան Բարեպաշտ» հրատ , 2013, 239 էջ
5. Իշխանյան Ռ., Բակունցի լեզվական արվեստը, «Միտք» հրատ., Երևան, 1965, 237 էջ
6. Խանզադյան Ս., Երկերի ժողովածու, հ.6, Երևան, «Սովետական գրող» հրատ., 1983, 606 էջ
7. Հակոբյան Վ., Զատիկը ջրավազանի հատակին, «Դիզակ պլյուս» հրատ., Ստեփանակերտ, 2010, 665 էջ
8. Հովհաննիսյան Մ, Երկեր, հ1, «Վաչագան Բարեպաշտ» հրատ., 468 էջ
9. Ղահրիյան Ա., Պատրանք, «Սով«տական գրող» հրատ., Երևան, 1983, 248 էջ
10.Մարտիրոսյան Հ., Համազարկ հրաժեշտից առաջ, ՀԳՄ հրատ., Երևան, 2007,94 էջ
11. Սարգսյան Ա. Յու., Ղարաբաղի բարբառի բառարան, «Էդիտ պրինտ» հրատ., Երևան, 2013, 84 էջ
12. Օվյան Վ., Կապույտ տարիներ, «Դիզակ պլլուս» հրատ., Ստեփանակերտ, 2007, 527 էջ

Տեղեկություններ հեղինակի մասին.

Ռենա Մովսեսյան

Ստեփանակերտի «Գրիգոր Նարեկացի» համալսարանի Հայոց լեզվի և գրականության ամբիոնի դասախոս

rena-mov@mail.ru

Հոդվածը տպագրության է երաշխավորել խմբագրական կոլեգիայի անդամ, բ.գ.թ. Հ.Ղազարյանը:

ՀՏԴ 82.(09) Գրականություն

ՎԱՐԴԱՆ ՀԱԿՈԲՅԱՆԻ «ԿԵՆԴԱՆԻ ՊԱՏ» ՀԵՐՈՍԱՊԱՏՈՒՄԸ ԵՎ ՆՐԱ ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ-ՓԻԼԻՍՈՓԱՅԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՐԱՑՈՒՄՆԵՐԸ

Ամալյա ԳՐԻԳՈՐՅԱՆ

Բանալի բառեր: *Հերոսապատում, ժանրային և ոճական առանձնահատկություններ, քնարաէպիկական պոեմ, հայրենասիրական պոեզիա, ազգային ոգի, խոսքի դինամիկա, սյուժե, իրական դեպքեր, պատկերավորման-արտահայտչական միջոցներ, մակդիր, համեմատություն, փոխաբերություն, հեգնանք, հարակրկնություն, ժողովրդախոսակցական բառեր, ոճական հնարանքներ, մետաֆորի գեղագիտություն:*

Ключевые слова*: эпопея, жанровые и стилистические особенности, лиро-эпическая поэма, патриотическая поэзия, национальный дух, динамика речи, сюжет, реальные события, образно-выразительные средства, притча, сравнение, метафора, ирония, анархия, разговорные слова, стилистические приемы и метафорическая эстетика.*

Keywords*: epos, genre and stylistic features, lyric-epic poem, patriotic poetry, national spirit, dynamics of the speech, plot, real events, figurative means of expression, parable, comparison, metaphor, irony, anarchy, colloquial words, stylistic receptions and metaphorical esthetics.*

ПОЭМА ВАРДАНА АКОПЯНА "ЖИВАЯ СТЕНА" И ЕГО ХУДОЖЕСТВЕННО-ФИЛОСОФСКОЕ ОБОБЩЕНИЕ

А. ГРИГОРЯН

В этой статье проанализирована поэма "Живая стена", написанная в последнее время поэтом Варданом Акопяном. Поэма была написана под новыми впечатлениями четырехдневной войны. В жанровом плане – это новшество в поэзии Вардана Акопяна. В основе поэмы лежит непобедимость национального духа, которая направила наших сыновей на беспрецедентные героические поступки.

Писатель создал художественную, выдающуюся работу, соединенную глубоким наблюдением, острым сарказмом и выразительными способами, в которой представлены: сегодняшняя национальная, политическая, военная ситуации.

VARTAN HAKOBYAN'S «KHENDANI PAT» POEM AND ITS ARTISTIC-PHILOSOPHICAL REVIEW

A. GRIGORYAN

The article analyses the poem «Khendani pat» written by poet Vardan Hakobyan. The poem was written under the immediate influence of 4 days war in April. It is novelty in Vardan Hakobyan's poetry. The poem reflects the national unconquerable spirit, which leads our sons to bravery and heroic deeds.

With a deep and sarcastic observation and a number of stylistic means the author created a remarkable poem which reflects the national, political and military situation of our days.

Սույն հոդվածում քննության ենք առել բանաստեղծ Վարդան Հակոբյանի վերջերս գրած «Կենդանի պատ» պոեմը: Պոեմը գրվել է ապրիլյան քառօրյա պատերազմի անմիջական ու թարմ տպավորությունների տակ: Այն ժանրային ձևի առումով նորույթ է Վ. Հակոբյանի պոեզիայում: Ազգային ոգու անպարտելիությունն է ընկած պոեմի հիմքում, որը մեր քաջ հայորդիներին մղել է աննախադեպ սխրանքի ու խիզախության:

Խոր դիտողականությամբ, սուր սարկազմով ու պատկերավորման-արտահայտչական միջոցների համադրմամբ գրողը ստեղծել է մերօրյա ազգային, քաղաքական, ռազմական իրավիճակը ներկայացնող գեղարվեստական ուշագրավ գործ:

Վերջերս «Ազատ Արցախ», «Գրական թերթ» պարբերականներում տպագրվել է Վարդան Հակոբյանի «Կենդանի պատ» պոեմը, որը նվիրված է արցախյան քառօրյա պատերազմի նահատակներին: Այն գրվել է ապրիլյան քառօրյա պատերազմի անմիջական ու թարմ տպավորությունների տակ և ընդգրկում է ինչպես պատերազմական իրավիճակը ներկայացնող դրվագներ, այնպես էլ արծարծում է ազգային, քաղաքական, սոցիալական և այլ հարցեր:

Վ. Հակոբյանն այն պոետներից է, ով ստեղծագործում է, ինչպես ասում են, մատը ժամանակի զարկերակի վրա: Իսկ երբ վտանգվում է հայրենի երկրի խաղաղությունը, նրա գրիչը դառնում է ավելի սուր, ձայնը՝ հուժկու: Լինելով արցախյան ազատագրական պայքարի ակտիվ մարտիկներից մեկը՝ նա գեղարվեստական ուրույն մարմնավորումների մեջ է ներկայացնում Արցախի ճակատագրին առնչվող յուրաքանչյուր երևույթ և իրադարձություն: Այդ ամենը նա անում է երկրի աչալուրջ զավակի ու դպիրի նվիրումով, ներքին մղումով. «Իսկ Մայակովսկին կամ Ռիթմենը որտեղից իմանան, թե ինչ երանություն է չճանաչված երկրի քաղաքացի, առավել ևս՝ բանաստեղծ լինելը»[1]: Ավելացնենք՝ մարտիկ-բանաստեղծ լինելը: Եվ պատահական չէ, որ Վ.Հակոբյանը որպես պոեմի բնաբան, ընտրել է Ե. Չարենցի հետևյալ երկտողը. «Տասնհինգ թվի վերջերին-//Արթնացա ... զորքերի շարքում»[2]: Հեղինակը՝ դիմելով Չարենցին ու նրա ոճական միջոցներին, առաջին հերթին շեշտում է հայոց պատմության ողբերգական էջերի կրկնությունը, մեր ազգային պայքարի աննկուն ոգին ու ժողովրդի հավերժությունը՝ նեռ ոսոխի ցեղասպան ոճիրների ընդհանուր ֆոնի վրա: Սա այն իրադրությունն է, որ ինքն է մարտիկ-բանաստեղծին(լինի երեկ, թե այսօր, հայ, թե համաշխարհային իրականության մեջ) հուշում բառերը՝ կտրուկ, դիպուկ, կես տոնից հասկացվող, այդպես թեժ կռվի պահին մի հայացքից իրար հասկանում են զինվորները: Եվ տողը կրակում է ամեն մի հատիկ բառով.

Հայոց ապրիլի
1-ը
դարձյալ սկսվեց
ապրիլի
24-ով[3]:

Յուրաքանչյուր բառ բովանդակության մեջ բեռ է վերցնում իր վրա՝ խոսքը հեռու պահելով, ինչպես Նալբանդյանն է ասում՝ «արվեստական թույնից», էժան զգացմունքայնությունից՝ առավել խորություն և լրջություն հաղորդելով ասելիքին:

Պոեմը քնարաէպիկական է: Մեր ժողովրդի միասնականության ու անպարտ ոգու շնորհիվ թշնամին ջախջախիչ պարտություն է կրում: Հայ զինվորը իր կյանքի գնով ետ է շպրտում բարբարոս թշնամուն՝ անառիկ պահելով մեր երկրի սահմանները:

Պոեմը ժանրային ձևի առումով նորույթ է Վ. Հակոբյանի պոեզիայում: Հեղինակը փորձում է աշխարհի ուշադրությունը սևեռել մեր տարածաշրջանում տիրող պատերազմական իրավիճակի վրա: Ադրբեջանի կողմից հրադադարի պայմանավորվածության խախտումներն արդեն խրոնիկ բնույթ են կրում: Կրկին հայությունը կանգնել է լինել-չլինելու խնդրի առաջ:Եվ բանաստեղծը վավերագրում է ողջ եղելությունը՝ գեղարվեստական հետաքրքիր հնարքների ու արտահայտչական հարուստ միջոցների համադրմամբ:

Խորհրդանշական է պոեմի սկիզբը: Դիմելով հայոց ոգու անմահ կրողներին՝ Վարուժան, Անդրանիկ, Չարենց, Նժդեհ, Սիամանթո, Մոնթե, Եղեռնի զոհերին, համայն աշխարհի մարդկությանը՝ կոչնակ է հնչեցնում, ձգում է ասես հավատի բոլոր բերդ-եկեղեցիների զանգաթելերը՝ սթափության հորդորներով: Անթեյի պես հողից նոր ուժ առած պոետի բառը

[1] Հակոբյան Վ., Երկեր, հատոր Բ, «Դիզակ Պլյուս» հրատարակչություն, Ստեփանակերտ, 2007, էջ 296:
[2] Չարենց Ե., Ընտիր երկեր, «Նաիրի» հրատարակչություն, Երևան, 1997, էջ 66:
[3] Գրական թերթ, թիվ 18, 3 հունիսի, 2016թ.:

դառնում է զենք: Եվ այստեղ կրկին պատմության խորհուրդն է մարմնավորում բանաստեղծը՝ Նոյի ժառանգ Առանի անպարտելիության մեջ ներկայանալով նորովի. «Ես եմ՝ Արցախցի մի պոետ, մի նոր Առան, ձեր խոսքի տեր ու ծառան»[1]: Գրողն, այսպիսով, մարդասիրական իր խոսքն է ուղղում աշխարին, նրա ուշադրությունը հրավիրելով հայ ժողովրդին սպառնացող արհավիրքների վրա: Բանաստեղծը կամրջում է հայրենիքի անցյալը ներկային: Եվ դա անում է նպատակադրված: Հարյուր տարի հետո ազերին՝ «քոչվոր թուրքիո քոչվոր պոչը», ելավ իր՝ մեծ Թուրան ստեղծելու վաղեմի ծրագիրն իրագործելու:

Հովանավորվելով Թուրքիայի կողմից՝ Ադրբեջանը մեծ քանակով զենք է գնել նաև մեր դաշնակից Ռուսաստանից, գերժամանակակից զենքեր՝ Իսրայելից: Այստեղ ակնհայտ է գրողի վրդովմունքը: Նա ամբողջովին ընդունում է Դոստոևսկու, բայց ոչ երբեք Ռոգոզինի Ռուսաստանը:Եվ պոետն իր խոսքը թախծոտ իրոնիայով ուղղում է Դոստոևսկուն՝ դրանով իսկ ցույց տալիս(«Բա՞, Ֆեոդոր Միխայլովիչ»), որ Ռուսաստանը զենք վաճառելով Ադրբեջանին, ոչ միայն անտեսում է իր դաշնակից Հայաստանի, այլ հենց իր՝ Ռուսաստանի շահերը, մարդկության ու մարդկայնության շահերը, քանի որ թուրքը բոլոր ժամանակներում մնում է նույն նենգ ու դավադիր թուրքը: Ահա Դոստոևսկու խոսքը («Կարամազով եղբայրներ»). «Իսկ այդ թուրքերը, ի միջի այլոց, հեշտասիրությամբ տանջել են նաև երեխաներին, մոր արգանդից դաշույնով կտրել-հանելուց սկսած մինչև ծծկեր երեխաներին վեր նետելը և սվինի ծայրով բռնելը այն էլ մոր աչքերի առաջ: Հենց բուն հեշտանքն էլ մոր աչքերի առաջ անելն էր: Բայց ահա այսպիսի մի տեսարան հատկապես հետաքրքրել է ինձ: Պատկերացրու. ծծկեր մանկիկը դողահար մոր ձեռքերին, շուրջը ներխուժած թուրքեր: Նրանք մի զվարճալի խաղ են սկսել. փայփայում են փոքրիկին, ծիծաղում են, որպեսզի նրան էլ ծիծաղեցնեն, և հաջողում են, մանկիկը ծիծաղում է: Այդ րոպեին թուրքը նրա վրա ատրճանակ է ուղղում դեմքից չորս մատնաչափ հեռավորությամբ: Մանկիկը ուրախ ծլվլում է, թաթիկները երկարում, որ բռնի ատրճանակը, և արտիստը հանկարծ չրթացնում է բլթակը ուղիղ նրա երեսին, ջախջախում նրա գլուխը... Արվեստ է, այնպես չէ: Ի դեպ, ասում են, որ թուրքերը քաղցրավենիք շատ են սիրում»[2]:

Եվ բառերը, ասես, շիկանում են բանաստեղծի տողերում.

Եկավ ռսի տանկով
(բա՞, Ֆեոդոր
Միխայլովիչ),
«բեզպիլոտնիկներով»
Իսրայելի
(դավը հասցեն
չի փոխել էլի)
եկավ
թուր ու թվանքով,
նռնակով,
Բաքվի
նավթային
բանկով,
15 թվի հանգով,
եկավ՝ ավերով,
ավարով
արյան ծովերով,
մեծ թուրանի

[1] Նույն տեղում:
[2] Դոստոևսկի Ֆ. Մ., Կարամազով եղբայրներ, «Սովետական գրող» հրատարակչություն, Երևան, 1983, էջ 337:

հովերով[1]:

Գրողը համոզիչ գույներով, սպանիչ սարկազմով է ներկայացնում ազերի ասկյարների կերպարը՝ տմարդի, վախկոտ, թույլ, ստորաքարշ, բայց և, զարմանալիորեն, ինքնագոհ: Ասկյարին թվում է, թե ռեմբոյական զգեստներ ու զենքեր կրելով, ինքն էլ Ռեմբո է դառնում…Իսկ զենքը վտանգավոր է, երբ թույլի ձեռքն է ընկնում: Թուրք-ասկյարները, ինչպես հեղինակն է բնորոշում՝ «նեռ ռհմակները» կամ «իսլամիստական,մուջահեդիստական, օձ-կարիճների բյուր վտառները», հարձակվել են հայոց շեների վրա գիշերվա կեսին, թաքուն, ծպտված: Բանաստեղծը այստեղ ահազանգում է թշնամու ծրագրերի մասին: Մանավանդ, որ նրա զորքերի շարքերում մեծ թիվ են կազմում «Իսլամիստական պետություն» խմբավորման ահաբեկիչները: Նրանց ձեռագիրը նույնն է, ինչ ազերիներինը: Սովոր են ավերել տարբեր ազգերի մշակութային արժեքներ, գրավել հողատարածքներ ուրիշ տերություններից և ստեղծել «նոր» պետություն: Միթե այդպես չէ կազմավորվել հենց ինքը՝ Թուրքիան, որն այսօր անգամ ՆԱՏՕ-ի անդամ է:

Հեղինակը բավականին դիպուկ ու պատկերավոր է նկարագրում թշնամուն՝ արտահայտելով նաև իր արհամարհական վերաբերմունքը, որն ակներև է.

Գայլի գորշ
գարշանքով,
նեխանքով,
գիշերաբոզի
աճապարանքով
եկավ.
զենքը՝
դողացող ձեռքին...[2]

Մեր պատմության ընթացքում մենք համոզվել ենք, որ թուրքն իր գործելակերպն ու պայքարի ոճը չի փոխում: Նա հարյուր տարի առաջ և այսօր էլ նույն վայրագ ու գազանաբարո տականքն է. որտեղ ոտք է դնում թուրքը, այնտեղ ավերվածություններ են լինում, մահ ու ավեր: Աշխարհահռչակ Վիկտոր Հյուգոն թուրքի պատճառած սարսափները ներկայացնելու համար ընդամենը գրում է մի քանի բառ. «Այստեղով անցել է թուրքը»[3]: Եվ դրանով ամեն ինչ ասվում է: Թուրքի կերպարն ամբողջականացնող ամենաբնութագրական գիծն է, որը չի վրիպում նրան «անդրադարձող» և ոչ մի գրչից: Ավերն ու արյունը, թալանը բնորոշ են թուրքին, դրանք նրա էության գլխավոր եզրույթներն են: Այդ են վկայում նաև Թալիշի, Մատաղիսի դեպքերը.

Որտեղ եղել են
ազերիները,
ավեր է այնտեղ,
տուն լինի ,
թե հանդ,
ճանապարհ,
թե արտ,
ուր որ մտել են,
մարդկանց
գլխատել.
մարդկանց
հոշոտել

[1] Գրական թերթ, թիվ 18, 3 հունիսի, 2016թ.:
[2] Նույն տեղում:
[3] Chekhov.am:

ու
խոշտանգել են[1]:

Կրկին Արցախը դարձավ աշխարհի ամենաթեժ կետը: Արցախցին ելավ պաշտպանելու իր հայրենի հողը և այդ հողի վրա ազատ ու անկախ ապրելու իր իրավունքը: Հայը միայն ու միայն խաղաղություն է տենչում: Մեր ժողովուրդը մաքառումների դժվարին ճանապարհ է անցել՝ մշտապես պայքարելով իր գոյության, ազատության համար՝ կրելով բազմաթիվ կորուստներ ու զրկանքներ: Սակայն, չնայած այդ ամենին, նա շարունակում է տոկալ, դիմակայել ու պատվով հաղթահարել բոլոր տեսակի մարտահրավերները՝ շնորհիվ իր ազգային մտածողության ու բնավորության անփոփոխ էության (սուբստանց) բարձր որակների՝ ուժեղ կամքի, ազատատենչ հոգու, ազգային արժանապատվության, անկոտրուն ոգու: Մեր ազգի գերերևութականությունը, թերևս, հենց այս որակների պահպանման մեջ է: Եվ հեղինակը կատարում է գեղարվեստական խորն ընդհանրացում. «Թե թշնամիդ թուրք է, զգուշացիր ոչ թե պատերազմից, այլ խաղաղությունից»[2]: Այս տողերի մեջ ազերիների ամբողջ «քաղաքականությունն է» ի ցույց դրվում՝ որպես դաս ու խորհուրդ: Եվ մյուս կարևոր եզրահանգումը, որ կատարում է հեղինակը, պակաս իմաստություն չի պարունակում իր մեջ՝ սերունդներին պատգամելով ինքն իր ուժին ապավինելու ճշմարտությանը. «Արցախը սակայն Արցախ է մնում՝ իր ուժը միայն տեսնելով իր մեջ: Արցախի համար մնացածը «պընգրլ է, հեչ»»[3]: Գրողի ելակետը սկզբունքային է, և հենց դրանով է, որ ամբողջանում է «տասնութ-քսան» տարեկան մեր զինվորի կերպարը, զինվոր, որ ներկայացնում է ոչ միայն «հայոց աննկուն աշխարհը», այլ նաև «ազգի հանճարը»:

Ազգային ոգու անպարտելիությունն է ընկած պոեմի հիմքում, որը մեր քաջ հայորդիներին մղել է աննախադեպ սխրանքի ու խիզախության: Այս առումով, հիրավի «Կենդանի պատը» հերոսապատում է: Նկատենք, Վարդան Հակոբյանի հայրենասիրական պոեզիայի հիմնական շեշտադրությունը ազգային ոգու գաղափարն է, այն մշտապես արտահայտվել է նրա բանաստեղծություններում, պոեմներում: Ժամանակին հետաքրքիր դիտարկում է կատարել անվանի գրականագետ Սնակ Արզումանյանը. «Իմ համոզմամբ, ավանդույթներից ամենագլխավորն ազգային ոգու պահպանման գեղագիտական սկզբունքն է, որը Վարդան Հակոբյանի պոեզիային տալիս է առանձնակի փայլ ու հմայք: Այս առումով նա իր սերնդակիցների մեջ չունի հավասարը, իսկ դա այն չափանիշն է, որով բանաստեղծը երկարակեցություն է ապահովում իր համար մայրենի գրականության անդաստանում»[4]:

Պոեմում հեղինակը հայ ժողովրդի փրկությունը տեսնում է սպառազինվելու և միաբանվելու մեջ, նա հնչեցնում է զենքի ու միասնականության կոչնակները, որովհետև միայն զենքով կլինի հայի փրկությունը.

-Ելեք, Արցախ,
Հայաստան,
Սփյուռք,
Զենքով ելեք[5]:

Այստեղ բանաստեղծը միաբանված պայքարի կոչ է հղում ոչ միայն Արցախին ու Հայաստանին, այլև ամբողջ աշխարհով մեկ սփռված հայությանը: Ինչպես հեղինակն է բնորոշում. «Ինքն իր վաղվան զինվորյալն է հայոց աշխարհը»:

---

[1] Գրական թերթ, թիվ 18, 3 հունիսի, 2016թ.:
[2] Նույն տեղում:
[3] Նույն տեղում:
[4] Սողոմոնյան Տ., Տաճարի ճանապարհին կամ մենարանի ուխտավորը, «Վաչագան Բարեպաշտ» հրատարակչություն, Ստեփանակերտ, 2007, էջ 13:
[5] Գրական թերթ, թիվ 18, 3 հունիսի, 2016թ.:

Հերոսապատումի մեջ հեղինակը վարպետորեն է կիրառում հայ նշանավոր զորականների, գրողների, ազգային-ազատագրական պայքարի խոշոր գործիչների անունների իմաստային կրկնությունը, որը զգալիորեն նպաստում է խոսքի ներքին դինամիզմին, այուժեն դարձնում առավել հարուստ՝ պահպանելով գեղարվեստական խոսքի ազդեսության ներուժն ու բովանդակային լարումը: Տեղն է հիշելու Էլիոթի խոսքը՝ պոեզիան պիտի միշտ ազդի կյանքի վրա[1]: Գեղագետ Վ.Հակոբյանի մտածողական դաշտում ընգծված նոր երանգներով է դրսևորվում նրա անհատականացված և ուրույն ոճը, որը և իր հերթին ավելի խորքային է դարձնում ասելիքը՝ ընթերցողին հնարավորություն տալով անսխալ բացելու բառակոդավորման հակոբյանական արվեստի «գաղտնիքը»:

Ու նրանց մեջ
դուք էիք,
Վարուժան,
Անդրանիկ,
Չարենց,
Նժդեհ,
Սիամանթո,
Մոնթե,
ձեր ոգին էր
անհաղթ
ու
մեծ...[2]

Վարդան Հակոբյանի պոեմում, բնականաբար, «գործում է» պատերազմական ծանր դրաման. զոհեր է տալիս երկիրը, անդառնալի կորուստներ կրում, «տասնութ-քսան տարեկան մեր տղաները» իրենց երազները պահ են տալիս հայրենյաց հողին՝ հավերժ վերընձյուղվելու, ազգին խաղաղության մեջ տեսնելու բաղձանքով: Ենիչերը, չի դիմանում «մեր տղորանց հզոր բազկին»: Մեր տղաները դառնում են կենդանի պատ՝ իրենց արյամբ պաշտպանելով հայրենիքը.

Ազերին բախվեց
պատին՝
ընկավ,
ազերին բախվեց
պատին՝
հանգավ...[3]

Քսանմեկերորդ դարի հայ զինվորի կերպարը պոեմում ներկայացվում է մեր ժողովրդի նվիրական հատկանիշներով ու ասպետական գծերով: Այդ նրա բացառիկ սխագործության,անձնվիրության ու հերոսականության շնորհիվ փրկվեց հայրենիքը: Հեղինակը փառաբանում է մեր «ազնվազարմ, դավթակորով, դյուցազնական քաջերին», ովքեր խիզախեցին հանուն Արցախի լինելիության: Մեր խիզախ, անվեհեր զինվորները՝ «հարյուր արծիվ, հարյուր հերոս, հայոց երկնում՝ մի-մի փարոս» ձուլվեցին հայոց «մեծաց դասակին»:

[1] Թոմաս Ս. Էլիոթ, Մեռյալ երկիրը, «Ապոլոն» հրատարակչություն, Երևան, 1991, էջ 124:
[2] Գրական թերթ, թիվ 18, 3 հունիսի, 2016թ.:
[3] Նույն տեղում:

Բավականին խորը և ոգեցունց վիճակ է պատկերված պոեմի վերջում:Հեղինակը տեղադրել է նահատակված զինվորների վերջին խոսքերը, որոնք հուզմունք, ցավ ու հպարտություն են պատճառում ընթերցողին, մանավանդ, որ դրանք իրական են և բանաստեղծը բառացի մեջբերել է: Բացառիկ հերոսություն են դրսևորել՝ Ռոբերտ Աբաջյանը, Արմենակ Ուրֆանյանը, Քյարամ Սլոյանը, Սարգիս Սահակյանը, Սասուն Մկրտչյանը, Միշա Աղաջանյանը, Ռոբետ Աբրահամյանը, Վլադիմիր Նարինյանը և էլի շատ շատերը:

Գրողն, իրական դեպքերի ու երևույթների հիման վրա ստեղծել է գեղարվեստական բարձրարժեք մի գործ՝ հավաստի ու դիպուկ բնորոշումներով, լեզվառճական տարբեր հնարանքներով:

Հեղինակը պոեմում դիմել է պատկերավորման-արտահայտչական բազմազան միջոցների՝ մակդիր, համեմատություն, փոխաբերություն,հարակրկնություն, նվազաբերություն, հեգնանք, օտարաբանություն, ժողովրդախոսակցական բառեր, ոճական հնարանքներ և այլն, որոնց շնորհիվ խոսքը առավել արտահայտիչ է ու համոզիչ:Բերենք օրինակներ, այսպես՝ մակդիրներ են. Մութ մեղքեր, անականջ աշխարհ, նեռ ոհմակ, արյան ծովեր, օձ-կարիճների բյուր վտառներ, շեյթանազորք համշարի, կրկնակի թուրք, երկնային քույր, հրեղեն տեսիլ ե այլն:Համեմատություններ են. «Եկավ որպես որդնած ճահիճներից փչող բուքը, նա ինքը-թուրքը», «բառերդ նուրբ, ճկուն են, գրողը տանի, ձգվում են՝ ինչպես գեյշի մերկ իրանը գրկած ռեզին, տաք, բռնկուն են՝ հանց էժանացված նավթ կամ բենզին», «Եվ գիտեն տղերքը, գիտեն, անշուշտ՝ որպե հայոց բեղուն հողի ոսկեղեն հունտ», «Արցախի սրտում՝ աստղի պես ծագող, հառնում են մեկ-մեկ հերոսները մեր՝ խիզախ, անվեհեր, ամեն մեկը՝ մի արեգակ, ամեն մեկը՝ մի աշխարհ»:

Պետք է ասել, որ Հակոբյանի պոեզիան աչքի է ընկնում փոխաբերությունների լայն ու հարուստ գործածումներով, որոնցից յուրաքանչյուրն իր խորհուրդն ու ասելիքն ունի: Հիրավի, մետաֆորը Հակոբյանի համար դարձել է աշխարհվելու ձև: Հիշենք, հույն փիլիսոփա Արիստոտելին, ով իր «Պոետիկայում», հանգամանորեն անդրադառնալով մետաֆորի գեղագիտությանը, կարևոր է համարել մետաֆորներից օգտվելը, քանի որ, ըստ նրա. «Պոեզիայի բոլոր գեղեցկություններից միայն դա է, որ սովորել չի կարելի: Այն իսկական տաղանդի նշան է, քանի որ գտնել բնական մետաֆորներ, նշանակում է կարողանալ բնության մեջ նկատել առարկաների նմանությունը»[1]:

Ինքնատիպ ու անընդգրկելի է Հակոբյանի մտածողությունը:

«Կենդանի պատ» պոեմը հարուստ է ինչպես բառային, այնպես էլ շարահյուսական հարակրկնություններով: Ինքնօրինակ ու հետաքրքիր պատկեր է ներկայացնում գրողը նվազաբերական հակիրճ խոսքի մեջ. «Կեռ լուսինը կոնատակին» և այլն:

Պետք է շեշտել, որ հեգնանքը գրողի ոճական հնարանքներից է և մեծ տեղ ունի այս պոեմում, մանավանդ, թշնամուն բնութագրելիս այն վերածվում է սարկազմի.. «Եկավ, եկավ՝ ասկյարներին վագրազոլեր հագցրած, մութ ու սմքած ճակատներին, քամակներին ռեմբոյական նախշ ու նշան թքած-կպցրած, կապկահորանց պոչիկները խիստ խնամքով թաքցրած, կռվի ահից՝ շալվարները թաց», «Իսկ այնտեղ՝ Բաքվում, «իմաստուն,գյոզալ» մտքերի, հոխորտուն, «օգան» կրքերի «սալյուտ» է ու «շաբաշ»… Որպես դեռ դար չբոլորած Ազերբայջանի բազմադարյա «գարդաշ», չունեցած բեղերը սուլթանավարի ոլորած Ռոգոզինը, ահա, այսպես է կրակել՝ պարպելով խավիարից կուշտ «մագազինը», «Ու «հաշտարար» պահը եկավ, կողքից կախ՝ մուրացողի մախաղ ու մաղ, մաղի տակ՝ ծպտված և-ը, ինքը՝ Ալիևը, «բեզպիլոտնիկի պիլոտնիկը» Մի ճապկե մահակ է իջնում ինքն իր մեզից հոտ առած քթին իշու» :

[1] Արիստոտել, Պոետիկա, Հայպետհրատ, Երևան, 1955, էջ 195:

Այստեղ ես ուզում եմ ընդգծել նաև Վարդան Հակոբյանի արցախյան բարբառից հմտորեն օգտվելու («պընգըլ», «ճապկե», «իշտահին՝ քացախ») դրանք գրական գործի մեջ, ըստ անհրաժեշտության, հելուզելու և, դրանով իսկ, կերպարային ընդհանրացումների հասնելու կարողությունների մասին:

Հեղինակը խոսքին անմիջականություն ու պատկերավորություն հաղորդելու նպատակով օգտագործել է մի շարք օտարաբանություններ, այսպես՝ բեզպիլոտնիկ, անգյուման, օզան, սալյուտ, շաբաշ, մագազին, էրմանի, կազիրոկ, մախմուր, իշտահ և այլն:

Պոմում հանդիպում ենք հետաքրքիր բառակերտումների՝ ռեմբոյական, կապկահորանց, շեյթանազորք, գիշերաբոզ, սուլթանավարի, թրքափամփուշտ, նավթաբանկ, կայծակնաթել և այլն:

Խոր դիտողունակությամբ, սուր սարկազմով ու պատկերավորման-արտահայտչական միջոցների համադրմամբ Վ. Հակոբյան ստեղծել է մերօրյա ազգային, քաղաքական, ռազմական իրավիճակն ներկայացնող գեղարվեստական ուշագրավ գործ:

Տեղեկություններ հեղինակի մասին.

Ամալյա Գրիգորյան- Բանասիրական գիտությունների թեկնածու

Հոդվածը տպագրության է երաշխավորել խմբագրական կոլեգիայի անդամ, բ.գ.դ. Ս.Ա. Խանյանը:

ՀՏԴ 821.111 Արտասահմանյան (անգլիական) գրականություն

ԱՆԳԼՈ-ԻՌԼԱՆԴԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՏԻՊԱԲԱՆԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Անուշ ԴՈԼՈՒԽԱՆՅԱՆ

Բանալի բառեր: *Անգլո-իռլանդական գրականություն, Բրիտանական կայսրություն, լեզու, ազգային ինքնություն, առանձնահատկություն, կրոն, մշակութային ժառանգություն, գեղարվեստական պատկանելություն, ազգային վերածնունդ:*

Ключевые слова: *Англо-ирландская литература, Британская империя, язык, национальная идентичность, особенность, религия, культурное наследие, художественная принадлежность, национальное возрождение.*

Keywords: *Anglo-Irish literature, The British Empire, language, national identity, feature, religion, cultural heritage, artistic affiliation, national revival.*

ТИПОЛОГИЧЕСКИЕ ОСОБЕННОСТИ АНГЛО-ИРЛАНДСКОЙ ЛИТЕРАТУРЫ

А.ДОЛУХАНЯН

В статье особенность англо-ирландский литературы рассматривается в контексте языка, национальной идентичности и религии. Рассматривая эти три взаимосвязанные и взаимодополняющие компоненты как единое целое, идентичность англо-ирландских авторов рассматривается историческим подходом, в качестве основного критерия выбрав участие автора в процессах национальной литературы.

THE TYPOLOGICAL FEATURES OF ANGLO-IRISH LITERATURE

A.DOLUKHANYAN

In the article, the peculiarities of Anglo-Irish literature are considered in the context of language, national identity and religion. Examining these three interconnected and complementary components as a whole, the identity of Anglo-Irish authors is considered with the historical approach, selecting the main criterion the author's participation in the processes of national literature.

Հոդվածում անգլո-իռլանդական գրականության առանձնահատկությունները դիտարկվում են լեզվի, ազգային ինքնության և կրոնի համատեքստում: Այս երեք բաղադրիչները դիտարկելով իբրև փոխկապակցված և փոխլրացնող ամբողջություն՝ անգլո-իռլանդական հեղինակների ազգային պատկանելությունը դիտարկվում է պատմական մոտեցմամբ՝ իբրև հիմնական չափանիշ ընտրելով հեղինակի մասնակցությունը ազգային գրականության գործընթացներին:

Իռլանդիան փոքրիկ երկիր է Եվրոպայի ամենածայրում, որի մասին խոսելիս առաջին հերթին ընդգծվում է նրա մեկուսացված աշխարհագրական դիրքն ու ազգային առանձնահատկությունը, ինչն անվերապահորեն իր կնիքն է թողել մշակույթի, մասնավորապես՝ գրականության վրա:

«Անգլո-իռլանդական գրականություն» անվանումը ինքնին մտածելու տեղիք է տալիս այն առումով, թե որ հեղինակներին և կամ ստեղծագործությունը պիտի վերագրել վերջինիս: Եթե իռլանդերեն լեզվով ստեղծագործողների դեպքում ամեն ինչ պարզ է և հասկանալի, ապա անգլալեզու հեղինակների գեղարվեստական պատկանելությունը միանշանակ չէ:

Իռլանդական ազգային գրականության վերաբերյալ տեսաբաններն առաջ են քաշում տարբեր, հաճախ իրարամերժ տեսակետներ: Այսպես, Դանիել Կորկերին անգլո-իռլանդական գրականութունը բնորոշում է հետևյալ կերպ. «Գրականությունը, որը ստեղծվում է անգլերեն լեզվով, մեզ այսօր առավել հայտնի է որպես անգլո-իռլանդական: Իռլանդական

գրականություն մենք անվանում ենք այն գրականությունը, որը գրվել է իռլանդերեն լեզվով և ոչ ավելին. այս տարբերակման ընկալումը ժամանակի խնդիր է»[1]:

Ի հակադրություն վերոնշյալի՝ իռլանդական գրականության պրոֆեսոր Դեյվիդ Գրինը գրում է. «Իռլանդական հանրության լայն մասսաներից ստեղծագործողը բաժանված է երկու պատնեշով՝ ազգային գրող, որն ընթերցող չունի և իռլանդալեզու հեղինակ այն դեպքում, երբ ազգային լեզուն անգլերենն է»[2]:

Ապացուցելու, որ լեզվական չափանիշի բացարձակացումը առնվազն վիճարկելի է, սույն աշխատանքում հեղինակի գրական պատկանելությունը դիտարկել ենք փոխկապակցված և փոխլրացնող երեք բաղադրիչների ամբողջության մեջ, որոնք են *լեզուն, ազգային ինքնությունը և կրոնը:*

Անգո-իռլանդական գրականության տիպաբանական առանձնահատկությունների մասին խոսելիս անհրաժեշտ ենք համարում անդրադառնալ նախնառաջ Իռլանդիայի պատմությանը: Դեռևս 12-րդ դարում անգլիական թագավոր Հենրի I-ի օրոք Իռլանդիայի աշխարհագրական տարածքի զգալի մասն անցել էր Բրիտանական կայսրության տիրապետության տակ և մինչև XIX դարավերջ-XX դարասկիզբ գոյատևում էր գաղութի կարգավիճակով: Այսինքն՝ տևական ժամանակ Բրիտանական կայսրության մաս կազմելով՝ *մայրենի լեզուն՝* իռլանդերենը բռնի կերպով փոխարինվել էր անգլերենով՝ դառնալով նաև երբեմնի իռլանդախոս հասարակության հաղորդակցման լեզուն. հանգամանք, որը խաթարել էր իռլանդական գրականության զարգացման «բնականոն» ընթացքը, հետևաբար՝ կորստյան մատնել կամ փոխակերպել նաև գրական ավանդույթները:

Այդուհանդերձ, իռլանդական գրականությունը չի տարրալուծվել և չի կորցրել ազգային դիմագիծը, ավելին՝ այս անցմամբ յուրահատուկ հող է նախապատրաստվել անգլո-իռլանդական գրականության նոր ընթացքի համար: Ասել է թե՝ անցյալի ազգային-պոետական ավանդույթները պահպանելու և այն ներկայում հաստատելու առավել շատ պատճառներ են ի հայտ եկել. ստեղծագործելով օտար լեզվով, իռլանդացի հեղինակները հաջողել են իրենց ստեղծագործություններում պահպանել ազգային դրվագներ, կերպարներ և պոետական համակարգեր՝ սինթեզելով գեղարվեստական նոր դրսևորումներ: «Անգլիացիները սկսել են հայտնաբերել, որ լեզուն, որը նրանք պարտադրել են ազգին, իրենց իսկ դեմ է դուրս եկել…»[3],- նկատում է Շոն Օ' Քեյսին:

Այս տեսանկյունից կարևոր ենք համարում պատմության ընթացքով պայմանավորված ևս մեկ հանգամանք. ի տարբերություն եվրոպական այլ ժողովուրդների էպոսների, իռլանդական սագաները ոչ թե չափածո, այլ արձակ են, այնինչ XVI դարից սկսած և ընդհուպ մինչև XIX դար զարգացման լայն թափ է ստանում չափածոն: Ռուս իրականության մեջ գործունեություն ծավալած գրականագետ Ա. Սարուխանյանը սույնը պայմանավորում է նրանով, որ «ազգային լեզվի և մշակույթի վերացման պայմաններում դա գրական ավանդույթների պահպանման և տարծման միակ հնարավոր ձևն էր»[4]:

Իռլանդացի պոետ, գրականականագետ և գրաքննադատ Շեյմաս Դինը «Իռլանդական գրականության համառոտ պատմությունն» գրքում գրում է, որ այս կամ այն հեղինակի ազգային պատկանելությունը որոշելու համար կարևոր է ոչ այնքան նրա ստեղծագործության թեման, որքան գաղափարը, տվյալ դեպքում՝ Իռլանդիայի գաղափարը: Նույն սկզբունքով Դինը Իռլանդիայում ծնված, Դուբլինում կրթություն ստացած մի շարք հեղինակների չի դիտարկում ,իբրև իռլանդացի հեղինակներ այն հիմունքով, որ վերջիններս ամբողջությամբ տեղավորվում են անգլիական գրական ավանդույթի մեջ և նրանց

[1] Corcery D. Synge and Anglo-Irish Literature. N. Y., 1965. P. 1.
[2] Green D., Fifty years of writing I n Irish, «Studies». 1966, Spring, P. 56.
[3] Ш. О'Кейси, За театральным, Сборник статьей, Москва, 1971 г., стр. 135.
[4] Саруханян А., Современная ирландская литература, Москва, 1973 г., стр. 15.

իռլանդական ծագումն ու պատկանելությունը ոչ մի կերպ չեն արտացոլվել իրենց ստեղծագործություններում»[1]:

Սակայն, եթե անգամ հեղինակը չի անդրադարձել «Իռլանդիայի թեմային», նրա ոճի մի քանի բնորոշ առանձնահատկություններ, ինչպիսիք են երաժշտականությունը, կերպարների թարմությունը, պոետական երևակայությունն ու ֆանտաստիկ տեսիքլները, կատակերգականի և ողբերգականի համադրումն ու սուր հեգնանքը, գրեթե անսխալ .մատնում ենք իռլանդացի հեղինակին: Դա բացատրվում է նրանով, որ ցանկացած անհատի մտածելակերպի վրա, անկախ նրանից գիտակցում է նա, թե ոչ, դրոշմվում է ազգայինի կնիքը, որը բնորոշ է բացառապես տվյալ ազգի ներկայացուցիչներին: Մտածողության այդ ուղղությամբ որոշում են ազգային մոտեցմամբ գրականության ինչպես ընդհանուր, այնպես էլ մասնավոր հարցեր: Մտածողության նման առանձնահատկությունն ընդունված է անվանել *ազգային ինքնություն*:

Մշակույթը դիտարկելով իբրև իռլանդական ինքնության նախահիմք՝ Կելտական վերածննդի գաղափարախոսները դիմել են Հին Իռլանդիայի ավանդույթներին, մասնավորապես՝ կելտական մշակույթին: 1893 թվականին հիմնադրված Կելտական լիգան համարվում է իռլանդական մշակութային վերածննդի և այն սահմանող կառույցի նախահայրը: Վերջինիս գործունեության հիմքում ընկած էր քաղաքական շարժառիթ՝ պահպանել և զարգացնել իռլանդական ազգային ինքնությունը: Լիգայի անդամների առաջնահերթ խնդիրներից էր Իռլանդիայի ապաանգլիականացումը, որը ենթադրում էր անգլիական սոցիալական և մշակութային ցանկացած ձևաչափի մերժում, ինչը հնարավորություն կընձեռեր դիմակայել ազգային ինքնության քայքայմանը:

Ազգային-ազատագրական պայքարի և մշակութային վերածննդի պայմաններում գլուխ բարձրացրած ազգային ինքնագիտակցությունն իր արտացոլումն է գտնում ոչ միայն Իռլանդիայում, այլև նրա սահմաններից դուրս ապրող հեղինակների ստեղծագործություններում: Գրողներից շատերը, ապրելով օտար ափերում և ստեղծագործելով օտար լեզվով, շարունակում են մնալ իռլանդացի, այսինքն՝ հավատարիմ մնալ իռլանդական գրական ավանդույթներին և իրենց ստեղծագործություններում ընդգծել սեփական ազգային պատկանելությունը:

Ազգային պատկանելության և գրականության ազգային առանձնահատկությունների համար պակաս կարևոր չէ նաև *կրոնը*: Իռլանդիան պատկանում է այն երկրների շարքին, որոնք քրիստոնեությունն իբրև պետական կրոն ընդունել են շատ վաղ՝ դեռևս V դարում, սակայն Բրիտանական կայսրության տիրապետության շրջանում անգլիական վերնախավը մի շարք հրովարտակներով զրկել էր Իռլանդիայի կաթոլիկներին (որոնք մեծամասնություն էին կազմում) քաղաքական, մասամբ նաև քաղաքացիական իրավունքներից՝ դրսևորելով ազգային և կրոնական խտրականություն: Այսպիսի քաղաքականությունը, բնականաբար, անհետևանք չմնաց և իր արտացոլումը գտավ նաև գրականության մեջ:

XVII-XVIII դարերի քաղաքական այս իրադարձությունների ֆոնին սկսեց ձևավորվել պոետական նոր մտածողություն՝ ընդգծված իռացիանալ մոտեցմամբ առ հավատք և ձգտմամբ առ հեթանոսություն, ապա և՝ քրիստոնեական էթիկայի և բարոյախոսության նկատմամբ որոշակի վերաբերմունքով: Այսինքն՝ անգլո-իռլանդական հեղինակներն իրենց ստեղծագործություններում ընդգծում էին կրոնի նկատմամբ ունեցած իրենց դիրքորոշումը և, անկախ նրանից, ընդունելի էր այն, թե մերժողական, նրանք մնում են իռլանդական քրիստոնեական աշխարհընկալման տիրույթում՝ չհաջողելով «ազատագրվել» կաթոլիկ ըմբռնումներից: Ճիշտ այնպես, ինչպես ազգային ժառանգությունը ձևավորվում և ուղղորդվում է մշակութային ավանդույթների ազդեցությամբ, անգլո-իռլանդական պոեզիան ևս ուղղորդվել է կաթոլիկ եկեղեցու (որը յուրահատուկ դերակատարություն է ունեցել Իռլանդիայի հասարակական-քաղաքական կյանքում) կայուն ազդեցությամբ:

[1] Dean S. A Short History of Irish Literature. London, 1986.

Կրոնի և կրոնականության խնդիրներն այնքան հաճախ են հայտնվել անգլո-իռլանդական պոետների ուշադրության առանցքում, որ դարեր շարունակ կրոնական և հայրենասիրական մոտիվները հանդես էին գալիս միաձույլ՝ ստանալով ամենատարբեր լուծումներ: Այս խնդիրներն առավելապես պայմանավորված են կաթոլիկ եկեղեցու արմատավորված ազդեցությամբ և դրան հակադարձող երևույթի՝ Իռլանդիայի աշխարհականացմամբ: Անգլո-իռլանդական հեղինակների ստեղծագործությունները ,կնքում են մի կողմից մարդու ազատագրումը եկեղեցական դոգմաներից և արգելքներից՝ ի դեմս ասկետիզմի , մյուս կողմից՝ հոգևոր և մարմնական պահանջմունքների բնականությունը: Անձի բարոյական ազատությունը երբեմն ստվերում է նրա՝ սոցիալական ազատագրման գաղափարը, բայց չի փոխարինում ամբողջությամբ: Եվ որքան պատասխանատվությամբ է վերջինս պատկերանում, այնքան մեծ նշանակություն և մասշտաբայնություն է ստանում հոգևոր ազատության գաղափարը:

Այսպիսով, պատմական մոտեցմամբ ընդհանրացնելով խնդրո առարկա հարցի քննարկումը՝ կարող ենք եզրակացնել, որ ազգային մտածելակերպն իր արտացոլումն է գտել իռլանդացի հեղինակների գրական ստեղծագործություններում, որով և յուրովի պայմանավորվում է անգլո-իռլանդական գրականության տիպաբանական առանձնահատկություններն ու հեղինակի գրական պատկանելությունը: Իսկ ինչ վերաբերում է գրականության զարգացման միտումներին և ստեղծագործության ընդհանուր գծերին, ապա կասկածից վեր է, որ այն չի կարող ենթարկվել մեխանիկական հաշվարկների:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Саруханян А., Современная ирландская литература, Москва, 1973.
2. Ш. О'Кейси, За театральным, Сборник статьей, Москва, 1971.
3. Corcery D. Synge and Anglo-Irish Literature. N. Y., 1965.
4. Dean S. A Short History of Irish Literature. London, 1986.
5. Green D., Fifty years of writing I n Irish, «Studies». 1966.

Տեղեկություններ հեղինակի մասին.

Անուշ Վլադիմիրի Դոլուխանյան
Արցախի պետական համալսարան,
գրականության և լրագրության ամբիոնի հայցորդ
anush_dolukhanyan@mail.ru

Հոդվածը տպագրության է երաշխավորել խմբագրական կոլեգիայի անդամ, բ.գ.դ. Ս.Ա. Խանյանը:

ՀՏԴ 941 (479. 243)
ԳՄԴ 63. 3 (2Հ) 43
Ա - Բ 706

Գրականագիտություն

ՎԻՊԱԿԱՆ ԱՐՑԱԽԸ ԵՒ ՐԱՖՖՈՒ «ԽԱՄՍԱՅԻ ՄԵԼԻՔՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ»

Զինաիդա ԲԱԼԱՅԱՆ

Բանալի բառեր. *Արցախ, գրականություն Արցախի մասին, Խամսայի մելիքությունները, ազգային, Ռաֆֆի, XVIII-XIX դարեր, քաղաքական դիրքորոշումները, հուսախաբություններն ու կորուստները:*
Ключевые слова: *Арцах, литература об Арцахе, Меликств Хамсы, национальный, Раффи, 18-19 вв, политические ориентации, потери и надежды .*
Key words: *Artsakh, Artsakh literature, Khamsa Melikdoms, national, Raffi, political orientation, educational movement, 18-19th centuries.*

“ЭПИЧЕСКИЙ АРЦАХ И КНИГА РАФФИ “МЕЛИКСТВА ХАМСЫ”
З. БАЛАЯН

Работа охватывает историческую эпоху, которая включает в себя политическую жизнь Меликств Хамсы 18-19 веков, двойные игры соседних стран, которые хотят завладеть политической ситуацией региона, внешние и внутренние взаимоотношения острую картину самоуправления, а так же освободительное движение арцахства, находящиеся под русским правлением, против персидского ига, политические ориентации, потери и надежды, культурно-просветительское движение, Шуши как “оазиса искусств” в Закавказье, представляя картину культуры, литературной богатой жизни Арцаха.

ARTSAKH OF EPIC AND «KHAMSA'S MELIKDOMS» BY RAFFI

Z. BALAYAN

The study covers the political life of Khamsa Melikdoms, the relations of Artsakh with neighboring states, its internal situation, loss of self-government, struggle against Persians and unification with Russia, political stance, educational movement, cultural and literary activity in the 18-19th centuries.

The study was carried out by the application of comparative, synthetic, hermeneutic, axiological and structural methods. The analysis focused on typological method that helped to disclose the characteristics of literature, education, history and culture.

Աշխատության պատմական ժամանակաշրջանն ընդգրկում է XVIII-XIX դդ. Խամսայի մելիքություններում քաղաքական կյանքի, տարածաշրջանում՝ պատմաաշխարհագրական լանդշաֆտում, քաղաքական իրավիճակին տիրապետել ցանկացող հարեւան երկրների երկդիմի խաղերի, արտաքին եւ ներքին հարաբերությունների, ինքնիշխանության կորստի սուր պատկերը, ապա ռուսական կայսրության ենթակայության տակ հայտնված արցախահայության ազատագրական պայքարը պարսից տիրապետության դեմ, քաղաքական դիրքորոշումները, հուսախաբություններն ու կորուստները, լուսավորչական-կրթական շարժումը, Անդրկովկասում Շուշիի՝ «արվեստների օազիսի» լուսավորության կենտրոն հանդիսանալը՝ ներկայացնելով Արցախում ծավալված ազատասիրական կյանքի հարուստ նկարագիրը:

Գրող Ռաֆֆին **«Խամսայի մելիքությունները»** շարադրելիս, վիպական հյուսվածքներ է դարձրել բանահյուսական, գրական ժանրատեսակներից շատերը՝ ավանդությունը, զրույցը, լեգենդը, բանաստեղծությունը, համեմատությունը, ասացվածքը, անեծքը, օրհնանքը, հակադրույթը, փոխաբերությունը, իմաստասիրությունը, ասույթը, նամականին եւ այլն[1] : Դրանց միջոցով ընդգծվում են արցախցու առօրյան, ինտելեկտը, ստեղծագործ ու պայքարող ոգին, երգիծելու տաղանդը, չարին հակադրվելու կամքը, ժամանակաշրջանի դիմագիծը, մելիքությունների գեղագիտական, քաղաքական նկարագիրը:

Նամականու հիանալի օրինակներ շատ կան. այդպիսիներից է Մելիք Բեգլարյան մելիք Աբովի՝ 1807թ. նոյեմբերի 23-ին գրած նամակը՝ ուղարկված Սանկտ Պետերբուրգ՝ Մինաս

[1] Տե՛ս Ռաֆֆի, Խամսայի մելիքությունները, Եժ, տասը հատորով, տասներորդ հատոր, Երեւան, Հայպետհրատ, 1959, էջ 206-210, 209, 252, 269, 305, 306:

Լազարյանին, որում երեւում են հայ մելիքի կատարած գործերը, ճակատագրի որոգայթները, եւ որը համարյա տիպական է մնացած հարազատ մելիքների կերպարների, նրանց գործունեության բնութագրման համար: Պետրոս I կայսրի բարձրագույն հրովարտակի համաձայն վրաց Հերակլ թագավորը Բոլնիսի գավառը շնորհել է մելիք Աբովին, իսկ Լոռին՝ մելիք Զումշուդին:

Նամականու մի այլ հետաքրքիր նմուշ է մելիք Զումշուդի՝ 1806թ. դեկտեմբերի երկուսի գրած նամակը Սանկտ Պետերբուրգ՝ Մինաս Լազարյանին, ապա մելիքների նամակը (համանման բովանդակությամբ)՝ գրված նույն հասցեով[1]:

Վիպական վառ **համեմատության** օրինակ է հետեւյալ ժողովրդական **իմաստասիրությունը**. «Նրա (մելիք Զումշուդի- Զ. Բ.) հայրը անմատչելի Ղարաբաղի մեջ մտցրեց օտար ցեց, որը ուտելով, մաշելով խախտեց տեղային բոլոր հայկական իշխանությունների հիմքը և վերջապես կործանեց այն **հաստատուն շենքը**, որը դարերով կառուցված էր»[2] կամ համեմատական-փոխաբերական իմաստով հետեւյալ ընդհանրացումը. «Մելիք-Զումշուդը մտածում էր վերականգնել **խորտակված շենքը**»[3], այս հերոսին Ռաֆֆին բնութագրում է իբրեւ **կարդացած երիտասարդ,** ապա նաեւ ավելացնում հետեւյալ համեմատություն-մեկնաբանությունը, որտեղ տիպականացված է օտար տիրապետողի վայրագ սովորությունը եւ հայ պատանու արմատների կանչը. «Կարմիր արյունով ցողելով «սև այգին» (Ղարաբաղը- Զ. Բ.), ես նրան վարդի գույն պիտի տամ.... առավոտյան այն բոլոր դավաճանների գլուխներից հրապարակի վրա մի աշտարակ պիտի կազմել տամ, իսկ քո գլուխը Սաֆարալի-բեկ, այդ աշտարակի գագաթի վրա պիտի դնեմ.... »[4]:

Հետաքրքիր երանգ ունեն նաեւ հին հայոց **սովորություններից** մեջբերված հետեւյալ օրինակները. «Հայք վասն երկյուղի ելին ընդ առաջ նորա (Աղա Մամեդ խանի- Զ. Բ.) դասուք քահանայից, խաչիվ և խաչվառավ և ամենայն զարդուք .... արդյոք ո՞րք են դոքա, զի այդպես հրաշափառ զգեստուք և զարդուք գան ընդ առաջ մեր»[5] եւ ապա «... ի հայս կան հնական սովորութիւնք այսպիսիք, գնալ ընդ հառաջ թագավորաց ի մեծարանս և ի պատիվ երեսաց նոցա, առ ի շարժել ի գթածութիւն և ի խնամս վասն ողորմելի ազգին իւրեանց»[6]:

Բոլոր ժամանակների հայոց պատմության ամենասոսկալի չարագործների չարագործը պետք է համարել Իբրահիմ խանին, որի կերպավորումը Ռաֆֆին լավագույնս է վիպականացրել: Ներկայացնենք մի օրինակ, որ սահմռկեցուցիչ, **դրամատիզմով լի** պատմություն է եւ որի մեջ գլխավոր դերակատար Իբրահիմին խարդախության քուրմ կարելի է որակել:

Պարսկական եւ ռուսական միապետներից, իշխանավորներից մեծարված, երբեմնի հզոր իշխանի՝ մելիք Ավան խանի թոռ, Դիզակի իշխան մելիք Ավանյան մելիք Բախտամը, ով իբրեւ քաղաքական հանցավոր աքսորված էր Պարսկաստանի Արդավիլ բերդում, Աղա Մահմեդ խանի կողմից ներում ստանալով, վերադարձավ նախ Էջմիածին՝ իր չգործած մեղքերը քավելու, ապա հայրենիք՝ Աղա Մահմեդ խանի սպանությունից (1797թ.) հետո:

Քանի որ Դիզակի տիրապետողների իշխանությունը ամենավտանգավորն էր Իբրահիմի համար, ուստի, մելիք Բախտամին ինչ-որ մեղադրանքով Շուշի բերդում բանտարկելով, տմարդորեն նրան մահադեղով սպանում է ու սարսափելի որոգայթներ լարում նրա ժառանգների դեմ:

Ռաֆֆին, բնութագրելով մելիք Բախտամի որդու՝ մելիք Աբասի հատկանիշները, կերպարային գծերը, ձեռագիր պատմությունից քաղվածքներ անելով՝ գրում է. «Նրանց

[1] Տե՛ս նույն տեղում, էջ306-308 :
[2] Նույն տեղում էջ 260 :
[3] Նույն տեղում էջ 260 :
[4] Նույն տեղում, էջ 282:
[5] Նույն տեղում, էջ 283 :
[6] Նույն տեղում, էջ 283:

(Մելիք-Ավանյանների- Զ. Բ.) ազգի և սերունդների մեջ տակավին չէր ծնված, արդարև, մի այնպիսի տղամարդ պարթևական, հսկայազոր կերպարանքով և ահագնակերպ հասակով: Իր քաջագործություններով սկսեց հետզհետե նվաճել ոչ միայն իր բոլոր հայրենիքը, այլև մահմեդականների ազգը: Այդ պատճառով, տարածվելով սփռվեցավ նրա քաջության և անաչառ դատաստանների համբավը, որով պատժում էր հանցագործներին և վնասակար անձինքներին»[1]:

Մելիք Աբասը իր դատավճիռները կատարում էր առանց արծաթասիրության և կաշառքի. յուրաքանչյուր մեղավոր, մահապարտ իր պատիժը ստանում էր ըստ կատարած մեղքի չափի և պատիժը կրում էր հասարակության աչքին ի տես, որպեսզի բոլորին դաս լինի:

«Նրա քաջագործությունների համբավը,- նշում է հիշատակագիրը,- շատ վաղ հասել էր մեծ բռնավորի (Իբրահիմ-խանի) ականջներին.... Նրա նպատակը այն էր, որ դարձնի նրան հայկական դավանությունից մահմեդական դենին.... »[2] :

Իբրահիմը բազմաթիվ որոգայթներ լարերով մելիք Աբասի դեմ՝ չհասավ իր նպատակին, քանի որ սպանված հոր փոխարեն իշխում էր նրա հաջորդը կամ տոհմակիցը, ուստի ավելի սարսափելիի մասին մտածեց:

Մելիք Աբասը մի անգամ գնացել էր Ցոր գյուղ՝ մի քրեական գործ քննելու: Ստիպված գիշերեց քահանայի տանը: Գիշերը Իբրահիմի վարձած մի խումբ ձիավորներ հարձակվեցին քահանայի տան վրա եւ մելիքին քնած ու անպատրաստ գտնելով՝ սրահարեցին՝ նրա մարմինը վերածելով կտորների:

Մելիք Աբասի մարմին-նշխարները բերվեցին Տող բերդը եւ երբ եկեղեցու մեջ պատարագ էր մատուցվում ու պատրաստվում էին նրա թաղման հանդեսը կատարելու, Իբրահիմ խանի գինված վարձկանները ներխուժեցին եկեղեցի եւ փորձեցին հափշտակել իշխանի մարմինը՝ սուտ պատճառաբանելով, թե հանգուցյալը կենդանության ժամանակ խոստովանվել էր մահմեդական կրոնն ու նրան պետք է թաղել ոչ քրիստոնեական ծեսերով: Թե՛ ժողովուրդը, թե՛ մելիքի բարեկամները զայրույթից խանի մարդկանց ջարդ տվեցին, շատ սպանություններ կատարեցին ու քշեցին նրանց: Լուրը հասավ Ճուշի՝ Իբրահիմ խանին: Եվ, երբ Իբրահիմը զորք ուղարկեց Տող, հանգուցյալի թաղման արարողությունը արդեն կատարված էր: Ուղարկված զորքը նորից փորձեց քանդել գերեզմանը, նորից արյունահեղություն եղավ, ու քանի որ հայերը չէին սպասում այդպիսի վճռական հանդգնություն ու պատրաստ չէին նման բռնության, ուստի հաղթվեցին:

Տող բերդի եկեղեցու գավթում ամփոփված մելիքի հաղթված նշխարները հանեցին իր պապենական տոհմային գերեզմանատնից ու թաղեցին մահմեդականների գերեզմանատանը:

Այդ բարբարոսության նպատակը մեկն էր. «Այն, որ հետո Իբրահիմ-խանը,- գրում է Ռաֆֆին,- առիթ ունենա ասելու հանգուցյալի ժառանգներին, թե ձեր հայրը մահմեդականների ու մահմեդականության մեջ մեռավ, դուք ևս պետք է ընդունեք նույն կրոնը»[3]:

Ավազակաբարո Իբրահիմը հասավ իր նպատակին՝ մելիքի ժառանգներին անխնայաբար կրոնական հալածանքի ենթարկելով:

Վրա հասած դառը դժբախտություններին ավելացան սովն ու ժանտախտը:

Մելիք Աբասի որդին՝ մելիք Ղահրամանը (Բաղր բեկ) իր ժողովրդի մի մասով գաղթեց դեպի Վրաստան:

Արցախի սերնդեսերունդ շարունակվող միաբան, կամային բարձր հատկանիշներով օժտված հարազատ մելիքների մաքառումների, քաջագործությունների, հերոսացումների նպատակը, հայրենիքը պահպանելու իղձը, ազատ, անկախ, ինքնիշխան

[1] Նույն տեղում, էջ 287-288:
[2] Նույն տեղում, էջ 288:
[3] Նույն տեղում, էջ 289 :

մնալու ու այդ սրբազան ուխտը, պարտականությունը պահելու օրինակները բազում են, զուգահեռ նաեւ անմիաբան մելիքների վարքի օրինակները՝ պատմական եւ վիպական երանգներով լի. վտանգավոր եւ ցավալի փաստ՝ մերօրյա ռեալությամբ ու դասեր քաղելու պարտադրությամբ:

Այդ ուղղությամբ հաճախակի օտար երկրների բարձրագույն մարմինների՝ արքաների, կայսրերի, շահերի օգնությունները խնդրելու փաստերը այդպես էլ դարեր շարունակ իրենց պտուղները չտվեցին, եւ այսօր էլ **նույն քաղաքական իրավիճակն** է տիրում Արցախում. ընդհակառակը՝ օտարներն իրենց որդեգրած անբարո քաղաքականությամբ ծառայել ու ծառայում են միմիայն իրենց պետական ու սեփական շահերին՝ արցախահայության արդարացի պահանջատիրությունը, պետականության ու ինքնորոշման իրավունքը միլիոն անգամ ոտնահարելով:

Այդ ամենից պետք է մեկընդմիշտ հրաժարվել եւ ապավինել միմիայն սեփական ուժերին, քանզի այդ վտանգավոր ճանապարհներին կորցրել ենք մեր ազգի ընտրյալներին՝ նրա սերուցքը, անշուշտ, անօգուտ ու անչափ վտանգավոր Հայոց ազգային ճակատագրի համար թե՛ անցյալում, թե՛ այսօր, թե՛ ապագայում:

Արցախի մելիքների մաքառող սերուցքը իր նպատակաուղղվածությամբ՝ եվրոպամետ, ռուսամետ, պարսկամետ, ամերիկամետ կողմնորոշումներով, զարմանահրաշ, անպատմելի օրինակներ է արձանագրել ու արձանագրում մեր պատմության, հերոսական մաքառումների մեջ՝ միշտ թարմության, արդիականության կնիքը իր ուսերին էպոպեա է դարձել, եւ այսօր էլ այն շարունակվում է:

Պարզվում է՝ այդ բոլոր ջանքերը ապարդյուն էին եւ վտանգավոր. այսօր էլ նույն անհուսալի, անմարմին ու անողոք հույսերով մենք մեր հանճարի ոսկեգեղմը զոհասեղանին ենք դնում, գոնե պատմության ապտակներից, հեգնանքներից, որոգայթներից դասեր առնենք, ճանաչենք մեր ներսի ու դրսի թշնամիներին, ազգովի ապավինենք միմիա՛յն մեր սեփական քաղաքական, ռազմական, տնտեսական, մշակութային, գիտական ուժերին: Այսօր վերջնականորեն սթափվենք ու որոշում ընդունենք՝ հենվել ինքներս մեզ վրա ու մի՛ ոգի, մի՛ մարմին դարձած, մի՛ գաղափար որդեգրած, բռունցքվա՛ծ ու հեղեղվա՛ծ՝ ազգովի կերտենք մեր երազի, հաղթության ներկան եւ ապագան՝ Ազատ, Անկախ Հայաստանը:

Քանի-քանի անգամ թշնամիները խորտակվեցին հայության-արցախահայության հզոր հարվածների տակ, քանի-քանի անգամ հավատակիցները հայերին տվեցին առաջին հարվածները՝ փորձելով իսպառ վերացնել «հայություն» պատմական, էթնիկական միավորը, հասկացությունը. բավ չէ՞ դասեր չառնել...

Արցախահայությանը, մելիքությունների խլված ինքնիշխանությունը, ազատությունը անձնվիրությամբ պաշտպանելու, այն բազկի ուժով ձեռք բերելու դասերը, սերնդեսերունդ մաքառողների օրինակները լիուլի եւ ապշեցուցիչ են: Ահա ռուսամետ կողմնորոշում ունեցող նվիրյալի, Աբաս Միրզայից գերված Մելիք Բեգլարյան մելիք Աբովի որդու՝ քաջակորով Ռոստոմի (Առստամ) բեկի ու նրա ստեղծագործական տաղանդի մասին ինչ է գրում Ռաֆֆին. «Ղարաբաղի հերոսը որքան հաջողակ էր զենք գործ ածելու մեջ, նույնքան հմուտ էր և բանաստեղծության մեջ» [1]: Հերոսի ու նրա բանաստեղծական քանքարի անդրադարձ կա նաեւ Ա. Բեկնազարյանի «Գաղտնիք Ղարաբաղի» բացառիկ գրքի մեջ, որտեղ մելիք Աբովի որդին Առստամ բեկ է անվանված:

Բանաստեղծության շարադրանքը մեզ հուշում է, որ այն նոր գրիչ վերցրած մշակի գրական արտադրանք չէ, այլ հայ մարտիկ-բանաստեղծի՝ մի հզոր անհատականության ու նրա ռազմակոչի, ազգասիրական մտքի թռիչք՝ հայրենիքի անկախության պայքարին նվիրված, քնարական շնչով հյուսված ստեղծագործություն, հերոսի պոետական զենք՝ աննվաճ ոգով, պաթետիկ ու լիրո-էպիկական շեշտով շաղախված մի քերթված: Առստամ բեկը Աբաս Միրզային ամենի ու մահագույժ վայրագ, ժանտ դահիճ է անվանում, նշելով.

[1] Նույն տեղում, էջ 305 :

Սէր հայրենեաց ի թշնամեաց ձեռս մատնեաց....[1]:
Ապա խորին ափսոսանքով քաջանուն հերոսը վերջաբանում է իր խոսքը հետեւյալ կերպ.
Միայն սգամ. զի կապեալ կամ. թե մյուս անգամ հրացան, սուր իմ
Ի ձեռս ունիմ,- զբազուկս իմ ձեռ ցուցանեմ....[2]:

Մելիքների, արցախահայության համառ ընդվզումները, պայքարը, հայրենիքի անկախությունը, իրենց պապենական իրավունքները պահպանելու, իրենց հողի վրա ապրելու բնական իրավունքները հօդս ցնդեցին.... Վրա հասած սովը, Ղարաբաղի խանների հալածանքները, կրոնական խտրությունները, Ղարաբաղի հայոց գաղթականությունը մելիքներին ակամայից հեռավոր ափեր տարան, հայրենի երկրի կեսից ավելին դատարկվեց: Բուն հայոց երկրում եւ օտար ափերում հրովարտակներով շնորհած, հաստատված, խլված, գնված հողերը՝ Արեւմտյան Հայաստանը, Կիլիկիան, Ատրպատականը, Բոլնիսը, Լոռին, Բորչալուն, Ջավախքը հայ արքաները, մելիքները, իշխանները շենացրին: Այսօր այդ հողերը եւս գերության մեջ են, թիզ առ թիզ թշնամին մեզանից խլում, թալանում է մեր ազգային պատկանելիքները, իսկ մենք «ոչինչ» ենք համարում մեր հողերը, թողնում ենք, որ մեզ կողոպտեն, անհայրենիք դարձնեն. մեր վզից կախված օղակը մեր ձեռքով սեղմում ենք մեր պարանոցին. կշնչատվե՞նք: Օտարը հրճվում է հաստատ: Մենք թույլատրում ենք բորենիներին մեզ հոշոտել այն դեպքում, երբ մեր հողերը մեր մարտիրոսված որդիների արիության ու արյան գինն են հիշեցնում, պատմության հեգնանքն ու փիլիսոփայությունը, ազգային գաղափարախոսությունը, հայրենիքի ամբողջականության վտանգված լինելը, նրա վերջնական կորստի ստվերը. ո՛չ, այդ թշվառությունը սազական չէ Արցախ աշխարհին. նա կարող է իր ազատությունը նվաճել ու պահպանել, իր բազկի ուժով հետ վերադարձնել իր գերեվարված պատմական հողերը, սրբությունները:

Վիպասան Ռաֆֆու գրչի տակ վերակենդանացել են Արցախի մելիքությունների 200-ամյա պատմությունը, հոգեւոր եւ աշխարհիկ առաջնորդների պատմական ու վիպական կերպարները՝ տիպական հանգամանքներում անձնավորված հատկանիշներով, որն անչափ ուսանելի է ու իր խորքում արդիական ոգով դասեր ունի անթեղած :

Արցախի՝ սերնդեսերունդ շարունակվող մելիքական տների, իշխանական առաջնորդների, Աղվանից կաթողիկոսական տան ներկայացուցիչների, հակաթոռ հոգեւոր գործիչների կերպավորումը ներկայացված է «Խամսայի մելիքությունների» շարադրանքի բոլոր գլուխներում, միաբան ու անմիաբան մելիքների կերպարների բնութագրումներում՝ շոշափված վիպական խիտ երանգներով, արցախահայության կյանքի անհանգիստ, վտանգավոր բաբախյունով, արդիական քաղաքական հարցադրումներով, XIX դ. Արցախի քաղաքական ճակատագրի բացահայտումներով:

Արցախի ժողովուրդը իր տոհմիկ առաքինություններով է կերպավորված, անվախ, քաջ, հերոսական, իր բարքերին, սովորություններին հավատարիմ, հայրենի հողին պինդ մերված որդիներով, հաճախ անբարենպաստ պայմաններից ելնելով (սով, ժանտախտ, կրոնական հալածանքներ, երաշտ)՝ գաղթի ենթարկված ու հազար ու մի հարվածների տակ կքած: Նա միաժամանակ հայտնի է իր ամուր, աներեր կամքով, քնարական ու նաեւ կոշտ ու փխրուն հոգեբանությամբ, իր հավատին ու հայրենի հիշատակներին կառչած, իշխողների մանր-մունր վեճերին, արյունահեղ ընդհարումներին, պատերազմի արհավիրքներին ենթակա, բայց միշտ պայծառ պահելով հայրենի երկրի պատկերը:

Երկրի արմատական տերերը, այսպիսով հայոց հինգ մելիքական տների ներկայացուցիչներն էին՝ Գյուլիստանի Մելիք Բեգլարյանները, հորոց որդի (Ղարա Յուզբաշին-սեւ հարյուրապետ -սեւ Աբովը, մելիք Բեգլար I (հիմք դրեց Գյուլիստանի մելիքների իշխանությանը, կաղ Աբովը, մելիք Յուսուֆը, մելիք-Բեգլար II եւ ուրիշներ), Ջրաբերդի Մելիք-Իսրայելյանները (մելիք Իսրայելը, որդին՝ մելիք Եսային, Ալլահ Ղուլի

[1] Նույն տեղում, էջ 306 :
[2] Նույն տեղում, էջ 306 :

սուլթանը, մելիք Աթամը, մելիք Մեջլումը), Խաչենի Հասան Ջալալյան մելիքները (Մուլքի բեկը, խելացի, ճարտարախոս մելիք Գրիգորը, մելիք Ալլահվերդին), Վարանդայի իշխանները (մելիք Բաղին, մելիք Հուսեինը, մելիք Հովսեփը, անմիաբան Մելիք Ծահնազար II, մելիք Ջումշուդը), Դիզակի Մելիք Ավանյանները (մելիք Ավանը (Եգանը), Ղուկաս վարդապետի որդին, որոնք մի-մի ավատատերեր էին, իշխան-նախարարներ՝ իրենց հող ու ջրին սիրահար, իրենց ինքնիշխանության գաղափարին ու նրա պահպանմանը հավատարիմ, իրենց տոհմական սկզբունքներին, սովորություններին, հարաբերություններին՝ ականջալուր, նախանձախնդիր, որոնց ժողովուրդը սիրել ու պատմություններ է վիպել նրանց քաջագործությունների մասին, հաճախ՝ մեղմ երգիծել:

Հայրենիքին հավատարիմ եւ անհավատարիմ իշխանները առանձին հարցերի շուրջ ունեցել են իրենց մանր-մունր վեճերը, անհամաձայնությունները, անմիաբանությունը, որը երբեմն վտանգավոր հետեւանքներ է ունեցել, արյունալի կռիվների տեղիք տվել, օտարների ջրաղացին, այսպիսով՝ ջուր լցրել:

Միաբան մելիքների կերպարների քննությանը զուգահեռ Ռաֆֆին ներկայացրել է նաեւ անմիաբան մելիքներին, որոնցից շատերը, դաշնակցելով Ղարաբաղի խանների հետ, ջլատել են մելիքների դիմադրողականությունը, պատճառ հանդիսացել հայրենիքի անկախության, ինքնիշխանության կործանմանը: Ռաֆֆին վիպական հետաքրքիր անցումներով է ներկայացնում հերոսներին, բնութագրում նրանց երկվություններով լի հոգեբանությունը, զուգահեռ ներկայացնում Ղարաբաղի քաղաքական ճակատագիրն ու վիպաէպիկական նկարագիրը:

Այդ ֆոնի վրա վիպասանը ներկայացնում է նաեւ հոգեւոր դասն իր ներքին պարույրներով, տալիս թե՛ պատմական, թե՛ վիպական նկարագիրը, Աղվանից կաթողիկոսական տան ներկայացուցիչների վարքը, հավաթոռ հոգեւոր կենտրոնները:

Ռաֆֆին, իր նյութին հավաստիություն տալու համար, պատմական կերպարներին անդրադառնալիս, միաժամանակ ստեղծագործական երկունք է ապրել՝ նյութի վիպական յուրացումը դարձնելով ժամանակի մարդու ներքին բարդությունն արտահայտելու գլխավոր պայմաններից մեկը, մի կողմից էլ՝ լուծելով շարադրանքի մեջ առկա գեղարվեստական ոճի խնդիրը: Այս դիտանկյունից առկա է դառնում գրողի անհատական ոճի ու ժամանակի ոճի մեկնողական դաշտը, այդ զուգահեռի վրա Արցախի մելիքների կերպավորումների անհատական գծերը, ներքին մարդու հոգեբանական զարգացածության աստիճանը:

«Խամսայի մելիքությունների» շարադրանքից երեւում է վիպասանի՝ մելիքության ժամանակների իրականության սուր զգացողությունը, ինչը բացատրվում է շոշափած նյութի հանդեպ նրա խորը իմացությունները, աղբյուրների հանդեպ ցուցաբերած քննողական վերաբերմունքը, որի արդյունքում տեսանելի է դառնում մելիքության ժամանակների Արցախի հասարակական, քաղաքական կյանքի պատկերը, ժամանակի տագնապների հանդեպ Ռաֆֆու քաղաքացիական խիզախումը՝ ճիշտ ներկայացնելու դրանց դրամատիզմով լի պատմավիպական նկարագիրը, ինչը հնարավորություն է տվել վիպասանին իր խոսքը դարձնելու թե՛ համոզիչ, թե՛ գեղարվեստորեն հագեցած: Նման դիտանկյունից է բացահայտվում հեղինակային ընկալումների եւ ընդհանրացումների որոշարկված համակարգը՝ Խամսայի մելիքությունների երկու դար տեւած պետականության առկայության եւ նրա կորստի նկարագրությամբ: Գրողը այն ներկայացրել է պատկերային կառույցում:

Այսպիսով, Ռաֆֆին հայտնվում է արցախահայության ազգային ճակատագրի ամենաթեժ ու ամենաառողբերգական հանգուցակետում՝ «....աշխարհին պարզելու հայոց ոգու գաղտնարանը»[1],- ինչպես նշում է Ս. Արզումանյանը- ցույց տալու համար Արցախի մելիքների բազուկի զորության առասպելական հմայքն ու հանճարի չափը՝ զուր գործադրված, եւ թե որքան դառնացած է իր պաշտած հայրենիքի՝ հայոց Արցախ աշխարհի երբեմնի առաքինություններն ոտնահարված ու անկախությունը, պետականությունը

[1] Արզումանյան Ս. Սովետահայ վեպը, հ. 5, էջ 277:

կորուսված տեսնելու մտքից, որն, անկասկած, ունի ներկաներիս ուղղված սաստող եւ ուսանելի պատմության, էթիկայի եւ գեղարվեստի, պետականության, քաղաքականության դասեր:

Հայ գրականության ներկայացուցիչները, նկատի ունենալով ժողովրդի ճակատագրի բարդ յուրահատկությունները, տարբեր ժամանակներում նրա պատմության բացահայտումները կատարելիս, եւ իրենց երկերը գրելիս ո՛չ միայն հենվել են ժողովրդական բանավոր հյուսվածքների, ավանդությունների տված տեղեկությունների, ա՛յլեւ պատմության հավաստի փաստերի հիման վրա հավաքված գրավոր ու բանավոր եւ այլ աղբյուրների վրա:

Սկսած մեհենական պատմագիր Օղյումպ Քուրմից, պատմահայր Մ. Խորենացուց մինչեւ արդի ժամանակաշրջանի ստեղծագործողներ, հայ գրականության մշակները այդ կերպ են ստեղծել-գրել իրենց պատմությունները: Հեթանոսական շրջանի առասպելներին, վիպական կտորներին անդրադառնալիս Մ. Խորենացին դրանք բաժանել է երկու խմբի՝ պատմական եւ առասպելական հիմք ունեցողներ:

Վիպականը՝ աներեւակայելին, անհավանականը, ստեղծագործական տարրերով ստեղծվածը, ժողովրդական ասացումներով են հատկանշվում, դառնում սքանչելի հյուսվածք հայ մարդու պայքարի, հավատալիքների, սովորությունների, բանաստեղծական լուծումների, կրոնական պատկերացումների մասին ստեղծված կտորները:

Եվ եթե գիտությունը որեւէ երեւույթի իրողության չափը, հավաստիությունը պետք է հաստատի, ապա կարեւոր գործոն է դառնում պայմանականորեն ճիշտ դիտված երեւույթը: «Հայտնի բան է, միայն ժողովրդական ավանդությունների վրա հիմնվելով, շատ դժվար կլիներ կազմել մի քանի դարերի շարունակ պատմությունը,- գրում է Ռաֆֆին,- ժողովուրդը շատ անգամ շփոթում է անցքերը. մեկի գործողությունը մյուսին է վերաբերում, և ամենադժվարինն այն է, որ ժամանակագրական և տոհմագրական ճշգրտություններ չէ պահպանում...: - Հենց այս ճշմարտությունից ելնելով է, որ շարադրանքին հավաստիություն տալու համար փաստացի, գրավոր աղբյուրներն են օգնության գալիս,- ժողովուրդը ունի իր լեգենդները, իր իդեալները, իր սիրած հերոսները, որոնց ընծայում է նա այնպիսի մեծագործություններ, որոնք նրանց կատարածը չէին կարող լինել: Օրինակ,- շարունակում է վիպագիրը,- ինձ շատ անգամ պատահում էր նկատել, որ միևնույն պատմական իրողությունը ամեն մի գավառի ավանդությունների մեջ ընծայում էին նույն գավառի մի հայտնի հերոսին....Բայց պատմական փաստը դարձյալ մնում է իբրև իրողություն, միայն հարկավոր է նրա կատարող տերը գտնել»[1]

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Ռաֆֆի, Խամսայի մելիքությունները, Եժ, տասը հատորով, տասներորդ հատոր, Երեւան, Հայպետհրատ, 1959 :

Տեղեկություններ հեղինակի մասին.

Զինաիդա Բալայան, դոցենտ, բ. գ. թ., ԱրՊՀ, գրականության եւ լրագրության ամբիոն

E-mail: zinaida_araqelyan@mai

Հոդվածը տպագրության է երաշխավորել խմբագրական կոլեգիայի անդամ, բ.գ.դ. Ս.Ա. Խանյանը:

[1] Ռաֆֆի, Խամսայի մելիքությունները, Եժ, տասը հատորով, տասներորդ հատոր, Երեւան, Հայպետհրատ, 1959, էջ 378-379 :

ՀՏԴ 809.198.1 Հայոց լեզու

ԳՐՈՒԹՅԱՆ և ԱՐՏԱՍԱՆՈՒԹՅԱՆ ԶՈՒԳԱՁԵՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՀԱՅԵՐԵՆՈՒՄ

Հասմիկ ՂԱԶԱՐՅԱՆ

Բանալի բառեր՝ *զուգաձևություն, նորմ, համակարգ, ուղղախոսություն, ուղղագրություն, շեշտ, տողադարձ, իմաստային առանձնահատկություններ, կառուցվածքային առանձնահատկություններ, ոճական առանձնահատկություններ, գրության կանոններ, արտասանության կանոններ:*

Ключевые слова *- параллельные формы, норма, система, орфоэпия, орфография, ударение, перенос, смысловые особенности, созидательные особенности, стилистические особенности, правила написания, правила звучания.*

Keywords *– parallel forms, norm, system, orthology, orthography, accent notation, syllabification, semantic peculiarities, structural peculiarities, stylistic peculiarities, writing rules, pronouncation rules.*

ПАРАЛЛЕЛЬНЫЕ ФОРМЫ НАПИСАНИЯ И ЗВУЧАНИЯ В СОВРЕМЕННОМ АРМЯНСКОМ ЯЗЫКЕ

А. ГАЗАРЯН

В рамках данного исследования представлены правила написания и звучания в соответствии с нормами современного армянского языка тех параллельных форм, к которым относятся орфоэпия, орфография, ударение, перенос, склонения имен, заключенных в кавычки, и использование артикля. Анализ указанных выше параллельных форм мы провели отдельно, по возможности подчеркнув их прикладные, смысловые, созидательные и стилистические особенности.

THE PARALLEL FORMS OF SPEIIING AND SOUNDING IN CONTEMPORARY ARMENIAN LANGUAGE

H.GHAZARYAN

The parallel forms of orthology, orthography, accent notation, syllabification, as well as case ending and article use of the nouns enclosed in quotation marks, corresponding to the writing and pronouncation norms of the modern Armenian language are presented within the scope of this article. The examination of the above mentioned parallel forms has been implemented separately, considering their application, semantic, structural, stylistic features as far as possible.

Սույն աշխատանքի սահմաններում կներկայացնենք ժամանակակից գրական հայերենի գրության և արտասանության նորմով ընդունված այն զուգաձևությունները, որոնք վերաբերում են ուղղախոսությանը, ուղղագրությանը, շեշտադրությանը, տողադարձին, չակերտներում առնվող անունների հոլովական վերջավորությունների և հոդերի գրությանը: Վերը նշված զուգաձևությունների քննությունը կփորձենք կատարել առանձին-առանձին՝ հնարավորինս անդրադառնալով դրանց կիրառական, իմաստային, կառուցվածքային և ոճական առանձնահատկություններին:

Անսխալ գրելն ու արտասանելը, ճիշտ մտքեր կառուցելը մարդու գրագիտության առաջին ու տարրական չափանիշներն են: Դրանից հետևում է, որ յուրաքանչյուրն իր խոսքի գրական որակն ու մակարդակն ապահովելու նպատակով պետք է նախ և առաջ տիրապետի և հետևի լեզվական նորմին, որը լեզվական հանրության կողմից որոշակի ժամանակաշրջանում ընտրած և ընդունված, մշակված կանոնների ամբողջությունն է՝ ամրակայված լեզվի բոլոր մակարդակներում՝ հնչյունական, բառային, քերականական: Գրական նորմը, սակայն, լինելով հարաբերականորեն կայուն և միասնական, նաև նշանակալիորեն տարբերակված է. կան որոշակի լեզվական միջոցների համար զուգաձևություններ, որոնք իմաստով նույն և ձևով տարբեր բառային կամ քերականական ձևեր են, պատմականորեն <<առաջանում են որպես

լեզվական հեղաշրջման հետևանք, լեզվի մյուս գործոնների ազդեցության արդյունք, որպես լեզվական իրողությունների բազմաբնույթ փոխհարաբերությունների հետևանք>>[1]:

Ժամանակակից հայերենը, լինելով համակարգված և նորմավորված լեզու, չի բացառում զուգաձևությունների գոյությունը, և ներկա փուլում նրա բոլոր մակարդակներում՝ հնչյունական, բառային, քերականական, զուգաձևությունները հասել են մեծ չափերի: Եվ քանի որ զուգահեռ տարբերակները կարող են լինել ինչպես նորմի սահմաններում, այնպես էլ՝ ոչ, ուստի անճշտություններից խուսափելու համար անհրաժեշտ է ունենալ ստույգ գիտելիքներ լեզվական նորմի մեջ ընդունված զուգաձևությունների, նրանց առաջացման, գոյության, ինչպես նաև գործածության ոլորտների, տեղին և ճիշտ օգտագործման նրբությունների մասին:

Լեզվական համակարգում առաջացող որևէ զուգահեռ ձև սկզբից դիտվում է նորույթ և ոչ հանձնարարելի: Ժամանակի ընթացքում, եթե այն արմատավորվում է և տարածվում, ձեռք է բերում հավասար գործածության իրավունք արդեն գոյություն ունեցողի կողքին: Որոշ ժամանակ անց՝ դրանք, չունենալով լեզվաարտահայտչական կամ իմաստային որևէ տարբերություն, դառնում են համազոր և փոխարինում իրար: Այնուհետև զուգաձևությունների հավասարակշռությունը խախտվում է, և հաճախանում է նոր տարբերակի գործածությունը: Աստիճանաբար հինը իր տեղը զիջում է նորին (հնարավոր է և հակառակը): Զուգաձևությունների ժամանակավոր հարաբերակցության շրջանում տարբերակների հարաբերակցությունը չի կարող նույնը լինել, ուստի և այդ հարաբերակցությամբ պայմանավորված՝ զուգաձևությունները լինում են կանոնական և ոչ կանոնական:

Կանոնական զուգաձևություններում տարբերակները կարող են լինել համազոր և ոչ համազոր: Համազոր են այն տարբերակները, որոնք իմաստային, ոճական, լեզվաարտահայտչական զգալի տարբերություններ սովորաբար չեն ունենում և կարող են իրար ազատ փոխարինել, կիրառվել բոլոր ոլորտներում: Ոչ համազոր զուգաձևությունները ունեն իմաստային, ոճական, կիրառական, տարածական որոշակի տարբերություններ և գտնվում են լրացուցիչ բաշխման մեջ: Չնայած ոչ կանոնական զուգաձևությունները սովորաբար հակասում են լեզվական նորմին, սակայն լեզուն չի բացառում այնպիսի անկանոն տարբերակների գոյությունը, որոնց գործածությունը որոշակի նպատակով և որոշակի բառային միջավայրում համարվում է թույլատրելի լեզվական նորմի տեսակետից:

Լեզվական նորմով հաստատված ինչպես կանոնական, այնպես էլ ոչ կանոնական զուգաձևությունների իմացությունն այսօր ունի թե՛ տեսական, թե՛ գործնական նշանակություն: Արդի հայ լեզվաբանության մեջ այս առումով առավել շատ կատարվել են նկարագրական աշխատանքներ: Արձանագրել են եղած փաստերը և դրանով իսկ հաստատել նրանց գոյությունը լեզվի համակարգում, բայց թե ինչ արժեք ունեն դրանք լեզվի զարգացման տվյալ փուլում, տարածական ինչ չափերի են հասել, կիրառական ինչպիսի ոլորտներ են ընդգրկում, իմաստային, ոճական ինչպիսի նրբություններ ունեն, կանոնակա՞ն են, թե՞ ոչ, և նման այլ հարցեր մնում են քիչ ուսումնասիրված:

Սույն աշխատանքի սահմաններում կներկայացնենք ժամանակակից գրական հայերենի գրության և արտասանության նորմով ընդունված այն զուգաձևությունները, որոնք վերաբերում են ուղղախոսությանը, ուղղագրությանը, շեշտադրությանը, տողադարձին, չակերտներում առնվող անունների հոլովական վերջավորությունների և հոդերի գրությանը: Վերը նշված զուգաձևությունների քննությունը կփորձենք կատարել առանձին-առանձին՝ հնարավորինս անդրադառնալով դրանց կիրառական, իմաստային, կառուցվածքային և ոճական առանձնահատկություններին:

[1] Զ.Աղաջանյան, Ձևաբանական նորմ և խոսքի մշակույթի հարցեր, Ե., էջ 114:

Ուղղախոսություն

1.Հայերենում բաղաձայնների արտասանությունը հիմնականում համապատասխանում է գրությանը, բայց երբեմն այս համապատասխանությունը խախտվում է: *Բ, գ, դ, ձ, ջ* ձայնեղ բաղաձայններ նշանակող տառերը մի շարք բառերում բառամիջի և բառավերջի դիրքերում՝ հատկապես ղ, մ, ն, ր բաղաձայներից և ձայնավորներից հետո, արտասանվում են *փ, ք, թ, ց, չ:* Ձայնեղ բաղաձայններով մի խումբ բառերի արտասանությունը ներկայումս տատանվում է, և արտասանական տատանումներն ու դրա հետևանքով առաջացած զուգաձևությունները ինքնաբերաբար հանդես են գալիս որպես արտասանական ազատ տարբերակներ: Տարբերակների ընտրության հարցում պետք է առաջնորդվել տերմինաբանական կոմիտեի ընդունած որոշմաբ, որի համաձայն՝ երկակի արտասանության դեպքում նախապատվությունը պետք է տալ գրային արտասանությանը: Արտասանական այս սկզբունքը ամրագրված է ՀՀ ԿԳ նախարարության Լեզվի պետական տեսչության հայերենի բարձրագույն խորհրդի համապատասխան որոշման մեջ, որի առանձին կետերի տակ նշվում են արտասանական զուգաձևություն ունեցող հետևյալ արմատներն ու նրանցից կազմված բառերը՝ *արբել, արբեցողություն, ջրարբի, բորբել, ձերբակալել, ներբող, արգելք, արգելակել, համերգ, մեներգ, գովերգ, մրգաշատ, մրգանուշ, Թորգոմ, արդ, արդիական, ամուրդ, ապարդյուն, գեղարդ, գմբեթարդ, խորանարդ, կորնթարդ, սեղանարդ, կոնարդ, ձվարդ, երիտասարդ, թակարդ, կախարդ, հարդար, մակարդ, մակարդակ, նավասարդ, Տրդատ, արձան, արձանագործ, արվարձան, վրձին, արջառ, արջասպ, երջանիկ, մրջյուն, մրջնաթթու, քրջիկ, քուրջ, գրաբար, արեգ, գոգ, երկրպագել, զուգահեռ, զուգվել, զուգաղիպել, թագուհի, մոգ, նվագ, վարագույր, վառող, Սեղրակ, աջակցել, իջնել, հաջող, մեջք, քրոջ, կնոջ:*[1] Անդրադառնալով նշված որոշմանը՝ Յու. Ավետիսյանը միանգամայն իրավացիորեն նշում է. « Որպես գերակա սկզբունք հռչակելով ձայնեղների գրային արտասանությունը՝ որոշումը երկակի արտասանություն ունեցող բառերի շարքում թվարկում է նաև այնպիսիք, որոնցում ձայնեղների խուլ հնչումը այսօր ընկալվում է , մեղմ ասած, արտառոց ու անհամոզիչ: Այսպես, օրինակ, իբրև երկակի արտասանությամբ բառեր են նշվում նաև հետևյալները՝ *արգելք, Թորգոմ, մեներգ, մարգագետին, արդի, ամուրդ, ապարդյուն, երիտասարդ, մակարդակ, նավասարդ, զուգահեռ, զուգընթաց, հեգ, մոգ, մոգական, նվագել, վառող, աջակցել, հաջողություն* և այլն: Այս բառերի երկրորդ՝ խուլ հնչումով տարբերակները հնացած են և կենդանի խոսքում իրենց տեղը չունեն: Ժամանակակից հայերենում դրանք հնչում են գրային արտասանությամբ: 2006 թ. «Տերմինաբանական և ուղղագրական տեղեկատու»-ում արտասանական այս հնացած ձևերի «հայտնության» պատճառներից մեկն այն է, որ սույն որոշման նախագիծը կազմվել է շուրջ կես դար առաջ՝ 20-րդ դարի 60-ականներին, և հաստատվել տերմինաբանական կոմիտեի 1969 թ. հուլիսի նիստում: 2006-ի տեղեկատուում այն զետեղվել է նույնությամբ՝ առանց վերամշակման ու վերանայման՝ այս անգամ իբրև Հայերենի բարձրագույն խորհրդի որոշում»:[2] Վերը բերված բառաշարքում համաձայն չենք *մարգագետին, նվագել և վառող* բառերի խուլ հնչումով տարբերակների հնացած լինելու հետ, բայց որ որոշումն ունի վերանայման անհրաժեշտություն, միանշանակ է:

2.Լեզվական այն կանոնը, որի համաձայն, եթե բաղադրյալ բառերի բաղադրիչների կցույթում *ե*-ով կամ *ո*-ով սկսվող բաղադրիչին նախորդում է ձայնավոր, ապա *ե*-ն արտասանվում է *յէ, ո*-ն՝ *վո,* որպեսզի ձայնավորների կուտակում չառաջանա՝ *ամենաե/յէ/րկար*, ամենաո/վօ/ռակյալ, իսկ եթե նախորդում է բաղաձայն, ապա *ե*-ն արտասանվում է՝ *անե/է/ռես, ո-ն՝օ՝անո/օ/ռակ:* Պետք է նկատել, սակայն, որ սահմանված կանոնը ժամանակակից հայերենի ուղղախոսության մեջ ամբողջությամբ չի գործում: *Ան* – ժխտական նախածանց ունեցող բառերի մի որոշ մասում գործում է արտասանական զուգահեռ տարբերակ. Է-ի փոխարեն արտասանվում է նաև *յէ, օ*-ի

[1] Տե՛ս Տերմինաբանական և ուղղագրական տեղեկատու, Եր., 2006, էջ 197:

[2] Ավետիսյան Յու., Տեղաշարժեր արդի գրական հայերենում, Ե., 2011, էջ 25-26:

փոխարեն՝ նաև վo, ինչպես՝ *ան/է/կամտաբեր // ան/յէ/կամտաբեր, ան/է/ինակայելի // ան/յէ/ինակայելի, ան/է/ռանդ // ան/յէ/ռանդ, ան/է/զրական // ան/յէ/զրական, ան/է/դանակ // ան/յէ/դնակ, ան/է/բաժշտական //ան/յէ/բաժշտական, ան/է/իկաթ//ան/յէ/իկաթ, ան/է/իկիմաստ//ան/յէ/իկիմաստ, ան/է/իկմտություն//ան/յէ/իկմտություն, ան/է/նթադատ//ան/յէ/նթադատ, ան/է/իկյուղություն // ան/յէ/իկյուղություն, ան/օ/դնաշարավոր // ան/վo/դնաշարավոր, ան/օ/ղջամիտ // ան/վo/ղջամիտ, ան/օ/խակալ//ան/վo/խակալ, ան/օ/ղդի//ան/վo/ղդի ան/օ/տնահարելի//ան/վo/տնահարելի, ան/օ/խ//ան/վo/խ, ան/օ/խություն//ան/վo/խություն, ան/օ/դնուց//ան/վo/դնուց, ան/օ/ճ//ան/վo/ճ, ան/օ/սպնյակ//ան/վo/սպնյակ, ան/օ/տ// ան/վo/տ, ան/օ/տնահարելի//ան/վo/տնահարելի, ան/օ/տնյա//ան/վo/տնյա, ան/օ/ղոգայթ// ան/վo/ղոգայթ:* Նշված բառերում երկրորդ տարբերակներն այսօր ավելի մեծ գործածություն ունեն, որն էլ պայմանավորված է ե-ով, ո-ով սկսվող բաղադրիչների իմաստային անկախությամբ, ինչպես նաև ան- ածանցով դրանց ժխտումն ընդգծելու անհրաժեշտությամբ:

Ուղղագրություն

Հատուկ անունների գրության զուգաձևություն

1.Հատուկ անունների համակարգում զուգաձևությունները առավելապես կապվում են նույն բառի մեծատառով կամ փոքրատառով գրության, ինչպես նաև այլ հանգամանքների հետ, որոնց էլ կանդրադառնանք ստորև:

ա.Պաշտոնական փաստաթղթերում և հաղորդագրություններում մեծատառով գրվող *Պառլամենտ, Կոնգրես, Սենատ, Սեյմ, Մեջլիս, Դումա, Ռադա, Խուրալ, հայերեն՝ Կառավարություն* և այլ անունները՝ իբրև պետական կենտրոնական ղեկավար մարմնի տեսակ անվանող բառեր գործածվելիս գրվում են փոքրատառ, մտնում են բառարան որպես հասարակ անուն և իմաստային տարբերությամբ պայմանավորված՝ առաջ բերում գրության զուգաձևություն / *Պառլամենտ//պառլամենտ/:*[1]

բ.*Արևելք//արևելք, Արևմուտք//արևմուտք, Հյուսիս//հյուսիս, Հարավ//հարավ* զուգաձևություններում տարբերակների ընտրությունը կատարվում է խոսքային իրադրությամբ պայմանավորված: Փոքրատառով տարբերակները գործածվում են աշխարհի չորս կողմերը ցույց տալու իմաստով, մեծատառով տարբերակները նշանակում են մեկից ավելի երկրների աշխարհաքաղաքական, տնտեսական, մշակութային մի ամբողջություն:

գ.Տառադարձության և գրադարձության սկզբունքների ոչ հստակ տարբերակումը, այլ լեզուներում բացակայող հնչյութերի արտահայտման տարբեր սկզբունքների կամ հին ու նոր տառադարձման հին ու նոր օրենքների կիրառումը և ընդհանրապես տառադարձության որոշակի սկզբունքների բացակայությունը հանգեցնում են նրան, որ կողք կողքի հանդիպում են երկու և ավելի համարժեքներ, որոնք համարվում են կանոնական համազոր տարբերակներ: Դրանցից են՝ *Քեոպս//Քեոփս, Ֆահրատ//Ֆահրադ, Թագոր//Տագոր, Միսաք//Միսակ, Դելֆիս//Դելֆի, Դոն Կիխոտ//Դոն Քիշոտ, Թբիլիսի//Թիֆլիս, Բյութանիս//Բութանիս, Սոլոմոն//Սողոմոն, Պլատոն//Պղատոն, Գալիա//Գաղիա, Ուիլյամ//Վիլյամ, Էմանվել//Էմանուել, Էդվարդ//Էդուարդ, Մեդուզա//Մեդուսա , Օսեե//Օսիա* և այլն:

դ.Զուգաձևություն են ներկայացնում մի շարք անունների *–իկ* փոքրացուցիչ-փաղաքշական ածանցով ձևավորված տարբերակները, որոնք, ստանալով ինքնուրույն գործածություն, ժողովրդախոսակցական լեզվից անցել են գրական լեզու: Օր.՝ *Բենիամին//Բենիկ, Գարեգին//Գարիկ, Զորայր//Զորիկ, Խաչատուր//Խաչիկ, Հովհաննես//Հովիկ, Արա//Արայիկ, Շուշան//Շուշանիկ* և այլն: Անձնանունների որոշ ձևափոխված տարբերակներ ևս՝ որպես զուգաձևություն, գրական նորմի սահմաններում են, և նրանց գործածությունը թույլատրելի է: Դրանցից են՝ *Զաքարիա//Զաքարե//Զաքար, Հարություն//Հարութ, Վաչե//Վաչագան,*

[1] Տե՛ս Տերմինաբանական և ուղղագրական տեղեկատու, Ե., 2006, էջ 292:

Արուսյակ//Արուս, Միրանուշ//Միրուշ, Հայկանուշ//Հայկուշ, Սոկրատես//Սոկրատ, Ջուլիետա//Ջուլիետ և այլն: Ժողովրդախոսակցական ոճին բնորոշ փաղաքշական – փոքրացուցիչ մասնիկներով կազմված շատ տարբերակներ, լինելով հասարակաբանություն, ժարգոնային, խոսակցական, գրական լեզվում հանձնարարելի չեն:

ե.Կրոնաեկեղեցական ոլորտը մեծատառի գրության հարցում յուրահատուկ մի համակարգ է ներկայացնում: Արևմտահայերենի և եվրոպական լեզուների ազդեցությամբ, ինչպես նաև արտալեզվական որոշ գործոնների թելադրանքով կրոնական գրականության և պարբերական մամուլի մեջ քրիստոնեական հավատին և եկեղեցուն առնչվող բազմաթիվ հատուկ անուններում հաճախ մեծատառով են գրվում բաղադրյալ հատուկ անունների բոլոր բաղադրիչները՝ առաջացնելով զուգահեռ տարբերակներ, ինչպես՝ *Հայաստանյայց առաքելական սուրբ եկեղեցի// Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցի, Կաթողիկոս ամենայն հայոց//Կաթողիկոս Ամենայն Հայոց, Կաթողիկոս մեծի տանն Կիլիկիո// Կաթողիկոս Մեծի Տանն Կիլիկիո, Կաթողիկոսություն ամենայն հայոց//Կաթողիկոսություն Ամենայն Հայոց, Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոս// Մեծի տանն Կիլիկիո կաթողիկոս, Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսություն// Մեծի տանն Կիլիկիո կաթողիկոսություն, Մայր աթոռ//Մայր Աթոռ, Մայր աթոռ Սուրբ Էջմիածին//Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, Մայր տաճար//Մայր Տաճար, Երուսաղեմի հայոց պատրիարքական աթոռ//Երուսաղեմի Հայոց Պատրիարքական Աթոռ, Արարատյան հայրապետական թեմ//Արարատյան Հայրապետական Թեմ, Բուն բարեկենդան//Բուն Բարեկենդան, Տոն տապանակի//Տոն Տապանակի, Երկրորդ օրենք//Երկրորդ Օրենք, Սուրբ գիրք//Սուրբ Գիրք* և այլն: Զուգաձևություններ են հանդիպում նաև դիմալաձևերի, եկեղեցական արարողությունների անուններում, ինչպես՝ *Ճրագալույց//ճրագալույց, Դոնբացեք//դոնբացեք, Սուրբ պատարագ//սուրբ պատարագ, Տիեզերական ժողով//տիեզերական ժողով, Սինոդ//սինոդ, Վկայության խորան//վկայության խորան, Վեհարան//վեհարան, Ուխտի տապանակ//ուխտի տապանակ, Սրբազան հայր//սրբազան հայր, Տեր հայր//տեր հայր* և այլն: Նշված զուգաձևություններում գրական լեզվի նորմի տեսակետից ճիշտ են առաջին տարբերակները , սակայն քանի որ ՀՀ ԿԳՆ լեզվի պետական տեսչության հայերենի բարձրագույն խորհրդի որոշման մեջ նշվում է Հայոց եկեղեցու պաշտոնական լեզվում մեծատառերի ազատ գործածության մասին[1], բնականաբար ճիշտ են նաև երկրորդ տարբերակները: Կան նաև կրճատ և լրիվ գրությամբ արտահայտված զուգաձևություններ՝ *Ն. Ս. Օ. Տ. Տ.//Նորին Սուրբ Օծություն Տեր Տեր*:

Հիսուս Քրիստոս և Մարիամ Աստվածածին նշանակող զուգաձևություններում նախընտրելի են երկու բաղադրիչների մեծատառով գրության ձևերը, ինչպես՝ *Աստծու Որդի, Բարի Վարդապետ, Երկրորդ Ադամ, Աշխարհի Լույս, Աստծո Սուրբ, Բեթղեհեմի Մանուկ, Դավթի Որդի, Թագավորների Թագավոր, Խաղաղության Իշխան, Տերերի Տեր, Բարի Հովիվ, Սուրբ Կույս* և այլն:

զ.Դիվանագիտական և պաշտոնական փաստաթղթերում թույլատրվում է *Նախագահ* (երկրի նախագահ) բառի մեծատառով գրությունը: Պաշտոնական գրությունների մեջ մեծատառով են գրվում պայմանական հատուկ անունները: Օրինակ՝ *Պայմանագիրը ստորագրող կողմերը՝ Երևանի պետական համալսարան (այսուհետև՝Համալսարան) և ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիա (այսուհետև՝Ակադեմիա), պարտավորվում են…:* Այդպես էլ միայն պայմանագրերում և որոշ այլ գրություններում մի շարք հասարակ անուններ կարող են հանդես գալ մեծատառով:

2.Հատուկ անունների համակարգում կան նաև ձևաբանական-ձևակազմական զուգաձևություններ, որոնք համազոր տարբերակներ են և կարող են ունենալ միայն ոճական տարբերություն: Դրանցից են՝ *Աղրիական //Աղրիատիկ ծով, Ալպեր //Ալպյան լեռներ,*

[1]Տերմինաբանական և ուղղագրական տեղեկատու, Ե., 2006, էջ :

Անդեր//Անդյան լեռներ, Բյուրակնյա//Բյուրակնի լեռներ, Բոտնյան//Բոտնիկ ծոց, Գողթն//Գողթան գավառ, Գեղամա//Գեղամի լեռներ, Գառնիի//Գառնու հեթանոսական տաճար, Սասնա//Սասունի դաշտ, Սևանա//Սևանի լիճ, Մարմարա//Մարմարի ծով և այլն:

Անջատ, գծիկով և միասին գրվող բառերի գրության զուգաձևություն

1.Արմատի կրկնությամբ կազմված կամ հոմանիշային, հականիշային հարաբերություն արտահայտող, կամ էլ իմաստային առնչակցություն ցույց տվող այն բարդությունները, որոնց բաղադրիչները կապակցվում են ու, և շաղկապներով, առ, ի նախդիրներով, եթե առանձնաբար շեշտվում են, գրվում են առանձին, իսկ եթե արտասանվում են միասնաբար, գրվում են միասին՝ առաջ բերելով զուգաձևությունների համազոր տարբերակներ, այսպես՝ *ահ ու դող//ահուդող, անց ու դարձ//անցուդարձ, բառ ու բան//բառուբան, զօր ու գիշեր//զօրուգիշեր, ինձ ու ինձ//ինձուինձ, քեզ ու քեզ//քեզուքեզ, լաց ու կոծ//լացուկոծ, լիտր ու կես//լիտրուկես, մեկ ու կես//մեկուկես, տարի ու կես//տարիուկես, ամիս ու կես//ամիսուկես, տոննա ու կես//տոննաուկես, լուռ ու մունջ//լուռումունջ, խաղ ու պար//խաղուպար, ծանր ու մեծ//ծանրումեծ, կարգ ու սարք//կարգուսարք, ներս ու դուրս//ներսուդուրս, նիստ ու կաց//նիստուկաց, վարք ու բարք//վարքուբարք, չափ ու ձև//չափուձև, չեմ ու չեմ//չեմուչեմ, , բայց և այնպես//բայցևայնպես, առ և տուր//առևտուր, դեմ առ դեմ//դեմառդեմ,մեջ առ մեջ//մեջառմեջ, մի առ մի//միառմի, փոխ առ փոխ//փոխառփոխ, մերթ ընդ մերթ//մերթընդմերթ* և այլն:

Զուգաձևությամբ են հանդես գալիս նաև հետևյալ բառերը՝ *թեպետ և//թեպետև, ուստի և//ուստին, գուցե և//գուցեև, այսօր եթէ//այսօրևեթ, իսկույն եթէ//իսկույնևեթ, առ այսօր//առայսօր, ի միջի այլոց//իմիջիայլոց, առօրյա խոսակցական//առօրյա-խոսակցական, համենայն դեպս//համենայնդեպս, հարյուր հազարավոր//հարյուրհազարավոր, Շահ Աբաս//Շահ-Աբաս, Թեժ լեռ//Թեժլեռ, Եվրոպական խորհուրդ//Եվրախորհուրդ, Եվրոպական միություն//Եվրամիություն, Կուրո Սիվո//Կուրոսիվո, Դեր Զոր//Դեյր-էզ-Զոր, Բաբելմանդեբի// Բաբ-էլ- Մանդեբի* և այլն:

2. Գոյականներով և ի վայր/վար/, ի վեր հետադրություններով բաղադրված այն բարդ բառերը, որոնք ունեն մեկ բառային շեշտ և մակբայի, երբեմն էլ ածականի կամ գոյականի խոսքիմասային նշանակություն, գրվում են անանջատ, ինչպես՝ *բերանքսիվայր/վար/, բերանքսիվեր, գլխիվայր/վար/, գլխիվեր, զառիվայր/վար/, զառիվեր, դարիվայր/վար/, դարիվեր, երեսնիվայր/վար/, երեսնիվեր, հիմնիվայր/վար/, հիմնիվեր:* Թույլատրվում է անանջատ գրության միավորների բաղադրիչների անջատ գրությունը, եթե առաջին բաղադրիչը նույնությամբ անկախ գործածություն ունի: Օր.՝ *դար ի վար, դար ի վեր, երեսն ի վար, հիմն ի վար:*[1]

Չակերտներում առնվող բառերի հոլովական վերջավորությունների և հոդերի գրության զուգաձևություն[2]

Չակերտներում առնվող անունների հոլովական վերջավորություններն ու հոդերը գվում են չակերտներից դուրս, գծիկով անջատված այն դեպքում, երբ անվան և վերջավորության կամ հոդի միասին գրությունը առաջ է բերում հայերենի համար անսովոր ձևեր կամ դժվարացնում բնագրի ընկալումը, մասնավորապես՝ 1.*եթե անունը արտահայտված է ամբողջական նախադասությամբ /<<Սերմնացանները չվերադարձան>> -ը/, 2.եթե անունը բաղադրյալ լինելու դեպքում վերջին բաղադրիչը կա՛մ բառի հոլովաձև է, կա՛մ անձնական ու ցուցական դերանուն/ <<Ամպի տակից>>-ը>>, <<Երգ մեր քարերի մասին>>-ի, <<Դու և ես>>-ի/, 3/եթե անունը բերված է օտար կամ կրճատ գրությամբ, անվան վերջավորության բաղադրիչը թվանշան կամ տառային հապավում է /<<ՀՀ>>-ի փոստից, <<Երգ 2001>>-ի հաղթողները/:*

[1]Տե՛ս Տերմինաբանական և ուղղագրական տեղեկատու,Ե., 2006, էջ 276:

[2] Տե՛ս Տերմինաբանական և ուղղագրական տեղեկատու, Ե., 2006, էջ216-217 :

Մնացած դեպքերում վերջավորություններն ու հոդերը գրվում են չակերտներում՝ անվան վերջին բաղադրիչին միացած, սակայն թույլատրվում է վերջավորության կամ հոդի անջատ գրությունը, եթե անհրաժեշտ է առանձնացնել անվան ուղիղ ձևը՝ այն հստակ և հասկանալի դարձնելու նպատակով, այդպես էլ ստացվում են զուգահեռ տարբերակներ, ինչպես՝ *հատված «Սամվելից»//«Սամվել»-ից //«Սամվել» վեպից:*

Շեշտադրության զուգաձևություններ

Շեշտադրության հետ կապված արտասանական զուգաձևությամբ հանդես են գալիս մի շարք բառեր՝ *գո՛նե/գոնե՛, գու՛ցե//գուցե՛, նա՛և//նաև՛, մա՛նավանդ//մանավա՛նդ, նու՛յնիսկ//նույնի՛սկ, նու՛յնքան//նույնքա՛ն:* Արտասանական տեղաշարժ նկատվում է նաև օտար բառերի թեք ձևերում՝ *Պու՛շկին-Պուշկինի՛//Պու՛շկինի, ֆի՛զիկա-ֆիզիկայի՛//ֆի՛զիկայի:*[1]

Տողադարձի զուգաձևություններ[2]

1.Քանի որ հայերենի *յա, յո, յու* երկբարբառակերպ վանկերի *յ* բաղադրիչի և նրան նախորդող բաղաձայնի միջև *ը* չի արտասանվում, ուստի յ-ին նախորդող բաղաձայնը կամ բաղաձայներից վերջինը կարող է նաև նրան միացած անցնել հաջորդ տողը՝առաջացնելով տողադարձի զուգաձևություն, օրինակ՝ *անկ-յուն//ան-կյուն, արդ-յոք//ար-դյոք, գոչ-յուն//գո-չյուն, գիտութ-յուն//գիտու-թյուն, կոստ-յում//կոս-տյում, կոն-յակ//կո-նյակ, Հակոբ-յան//Հակո-բյան, հոբել-յար//հոբե-լյար, մատ-յան//մա-տյան, սեն-յակ//սե-նյակ, սին-յոր//սի-նյոր, ուխտ-յալ//ուխ-տյալ* և այլն:

Տողադարձի այս զուգաձևությունը չի պահպանվում *երկարա-կյաց, կնքա-զգյաց, բյուրա-բյուր, ամենա-հյուրասեր, ան-հյուրընկալ, լեռնա-գյուղ, ոսկե-հյուս, սառցա-ձյուն, քարա-սյուն* ու նման բաղադրություններում, որոնց սույն վանկային կամ արտասանական և բառակազմական տողադարձումները նույնական են:

2.Անշեշտ և թույլ արտասանվող *ը* ձայնավորը գրական արտասանությամբ առավելապես սղվում, իսկ ժողովրդական արտասանությամբ և բանաստեղծական խոսքում հաճախ պահպանվում է՝ առաջացնելով արտասանության և տողադարձի զուգաձևություն՝

ա/ բառասկզբի *ը* զաղտնավանկին հաջորդած վերջնավանկի *ի* կամ *ու* ձայնավորը շեշտային հնչյունափոխության ենթարկված հետևյալ կրկնաբաղաձայն բայերում՝ *զը-նը-նել//զըն-նել, խը-ճը-ճել//խըճ-ճել, խը-տը-տել//խըտ-տել, կը-ծը-ծել//կըծ-ծել, պը-տը-տել//պըտ-տել, փը-թը-թել//փըթ-թել, քը-թը-թել//քըթ-թել, քը-նը-նել//քըն-նել, , այսպես նաև՝մը-րը-րիկ//մըր-րիկ, խըր-տընել//խըրտ-նել, սը-րըս-կել//սրըս-կել* և այլն.

բ/վերջնավանկի *ի*-ն մեկ՝ սղված, մեկ՝ *ը*-ի հնչյունափոխված բազմավանկ այլ բառերում՝ *աղջը-կա, աղջ-կա, արճը-ճի, արճ-ճի, խըն-դըրել//խընդ-րել, կարմը-րել//կարմ-րել, մարմը-նի//մարմ-նի, քըր-տը-նել//քըրտ-նել* և այլն.

գ/պատճառական և երկու բաղաձայնից հետո *վ* ածանց ունեցող կրավորական բայերում՝ *թըռ-ցը-նել//թըռց-նել, խաղացը-նել//խաղաց-նել, մերկացը-նել//մերկաց-նել, մոտեցը-նել//մոտեց-նել, վազեցը-նել//վազեց-նել, փախցը-նել, փախց-նել, զըս-պը-վել//զըսպ-վել, թըր-ջը-վել//թըրջ-վել, կազմը-վել//կազմ-վել, տանջը-վել//տանջ-վել* և այլն:

Այսպիսով՝ ժամանակակից գրական հայերենի հնչյունական համակարգի տարբեր ենթահամակարգերում արտահայտված կանոնական և ոչ կանոնական , համազոր և ոչ համազոր զուգաձևությունները զգալի թիվ են կազմում: Նրանց մեծ մասն ունի նրբիմաստային, կիրառական, տարածական ու ոճական տարբերություններ, որոնց իմացությունը միայն հնարավորություն կտա համապատասխան խոսքում կատարելու ճիշտ ընտրություն:

---

[1] Ավետիսյան Յու., Սարգսյան Ա., Թելյան Լ. և այլք, Հայոց լեզու և խոսքի մշակույթ, Ե., 20016, էջ50:

[2] Տողադարձի զուգաձևություն*/բերվում են ըստ ՀՀ ԿԳ նախարարի 2003թ. հունվարի 14-ի հ.22 հրամանով հաստատված որոշման/ Տե՛ս Տերմինաբանական և ուղղագրական տեղեկատու, Եր., 2006, էջ 295-296:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1.Տերմինաբանական և ուղղագրական տեղեկատու, Երևան, 2006:
2.Աղաջանյան Զ., Ձևաբանական նորմ և խոսքի մշակույթի հարցեր, Երևան, 2007:
3.Ավետիսյան Յու., Տեղաշարժեր արդի գրական հայերենում, Ե., 2011:
4.Ավետիսյան Յու., Զաքարյան Հ., Հնչյունաբանություն. ուղղագրություն, ուղղախոսություն, Ե., 2008:
5. Ավետիսյան Յու, Սարգսյան Ա., Թելյան Լ. և այլք, Հայոց լեզու և խոսքի մշակույթ, Ե., 20016:
6.Գյուրջինյան Դ., Միասին, անջատ կամ գծիկով գրվող բառեր. հայերեն բառարան-տեղեկատու. Ե., 2001:
7.Գյուրջինյան Դ., Մեծատա՞ռ, թե՞ փոքրատառ. հայերեն բառարան-տեղեկատու, Ե., 2001:
8.Սուքիասյան Ա., Սուքիասյան Ք., Արդի հայերենի ուղղագրական-ձևակազմական բառարան, Ե., 2002:

Տեղեկություններ հեղինակի մասին.
Հասմիկ Ղազարյան - բ.գ.թ., դոցենտ, ակ. Ս. Աբրահամյանի անվան հայոց լեզվի ամբիոն
E-mail: Hasmik. ghazaryan @mail.ru

Հոդվածը տպագրության է երաշխավորել խմբագրական կոլեգիայի անդամ, բ.գ.դ. Ս.Ա. Խանյանը:

ՀՏԴ 809.198.1 Հայոց լեզու

«ԽՈՍՔ» ԲԱՌԱՄԻԱՎՈՐԻ ԸՆԿԱԼՈՒՄՆ ՈՒ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ ՂԱՐԱԲԱՂԻ ԲԱՐԲԱՌՈՒՄ

Արմինե ԱՐԶՈՒՄԱՆՅԱՆ

Բանալի բառեր. *բառամիավոր, լեզվամտածողություն, Ղարաբաղի բարբառ, խոսք, լեզու, իմաստային դաշտ, վերաիմաստավորում, դարձված, հնդեվրոպական լեզու, բառապաշար:*

Key-words: *lexeme, linguistic thinking, Karabakh dialect, speech, language, semantic field, resemantization, idiom, Indo-European Language, vocabulary.*

Ключевые слова*: лексическая единица, языковое мышление, карабахский диалект, речь, язык, семантическое поле, переосмысление, фразеологизм, словарный запас.*

PERCEPTION OF THE LEXEME ԽՈՍՔ IN THE KARABAKH DIALECT AND ITS CHARACTERISTICS

A. ARZUMANYAN

*Semantic field of the lexeme **խոսք** (meaning 'speech', also 'sayings', 'word', 'language', 'proverb', 'thought', 'sentence', 'morality', 'right to speak', 'engagement agreement', etc. in Armenian and also in the Karabakh dialect) has some interesting manifestations in Karabakh dialect that can etymologically be explained. Various derivations of the word were found in Armenian monuscripts. All the meanings of the analyzed word in Kharabakh dialect have their analogues in the Literary Armenian Standard. The word unit **խոսք** has specific pronunciation in the Karabakh dialect. It has often used in both in word combinations and idioms. The etymological analysis of this lexemes similar the research of the word unit **խոսք** in Karabakh dialect and lexemes similar to them relationships with Proto-Indo-European language, Classical Armenian (Grabar) and the Karabakh dialect are revealed.*

ВОСПРИЯТИЕ И ХАРАКТЕРИСТИКА ЛЕКСИЧЕСКОЙ ЕДИНИЦЫ ԽՈՍՔ В ДИАЛЕКТЕ КАРАБАХА

А. АРЗУМАНЯН

*Лексическая единица **խոսք** (основное значение - "речь", на армянском, а также в карабахском диалекте имеет значения "высказывание", "слово", "язык", "поговорка", "мысль", "предложение", "мораль" и другие) имеет различную семантику в карабахском диалекте, что объясняется его этимологией. В армянских письменных памятниках данное слово сохранилось с разными вариантами словообразования. Используемые в карабахском диалекте все значения слова **խոսք** имеются в современном литературном армянском языке. Слово **խոսք** имеет характерное для карабахского диалекта произношение. Часто используется как в идиомах, так и в свободной речи. С исследованием данного слова, а также подобных лексических единиц становится видимым взаимоотношение карабахского диалекта с индоевропейским языком, а также с классическим армянским языком (Грабар).*

***Խոսք** բառամիավորը Ղարաբաղի բարբառում իմաստային հետաքրքիր դրսևորումներ ունի, որը կարելի է բացատրել նրա ծագումնաբանությամբ: Բառը հայերենի գրավոր հուշարձաններում վկայված է բառաբարդության տարբեր ձևերով: Ղարաբաղի բարբառում գործածվող բոլոր իմաստները հայերենում առկա իմաստային դրսևորումներից են:*

***Խոսք** բառն ունի Ղարաբաղի բարբառին հատուկ արտասանություն: Հաճախական է և՛ վերաիմաստավորված, և՛ ազատ կապակցություններում: Նշված բառի և այդօրինակ բառամիավորների կենսագրության քննությամբ տեսանելի են դառնում հնդեվրոպական նախալեզվի և գրաբար ու բարբառի առնչակցությունները:*

Հանրության լեզվամտածողությունն արտահայտությունն է իր կեցության, իր գիտակցական հասունության ու կենսահայեցողության: Լեզվով է նյութականանում հանրության աշխարհընկալումն ու աշխարհաճանաչողությունը: Խոսքը, լինելով լեզվի իրացումը, դառնում է այդ ճանաչողության ու նրանով առկայացող արժեհամակարգի ձևավորման ճանապարհ:

Այն, որ հանրության լեզվամտածողության գնահատության և արժևորման կշռաքարը բառն է, հայտնի իրողություն է: Եվ յուրաքանչյուր լեզվի բառապաշար բնութագրում է այդ լեզուն կրող ժողովրդի կենսագրությունը: Այդպիսով՝ բառը դառնում է աշխարհի ճանաչողության բանալի և պատմության շրջադարձները բացելու անցագիր:

Հայերենը պահպանել է մարդկային լեզվի և խոսքի հետ կապված հնից եկող բազմաթիվ նշանակումներ (բան, բարբառ, ասեմ, լեզու, բառ ևն),[1] որոնք բառիմաստային առանձին խումբ են կազմում (ձայնական արտահայտություն, խոսք, ընթերցանություն, գիր)[2] և հատկանշվում են խոսքը բնութագրող բառարմատների տարբերակմամբ:

Ղարաբաղի բարբառի բառապաշարն իրապես արտացոլում է արցախցու լեզվամտածողությունն ու կենսափիլիսոփայությունը: Հայերենի բարբառների շարքում այն առանձնանում է բառապաշարային հնագույն տարրերով ու բառիմաստային հետաքրքիր իրողություններով: Ինչպես բոլոր բարբառների, այնպես և Ղարաբաղի բարբառի բառապաշարը կազմում են հայերենի գրավոր հուշարձաններից ավանդված, նաև բանավոր աղբյուրներում պահպանված բառային բնիկ միավորները, փոխառությունները, օտարաբանությունները: Գերակշռող մասը բարբառային բառերն է, որոնք ստեղծվել են հին հայերենից ավանդված ու փոխառյալ ձևույթներից՝ բառակազմական տարբեր միջոցներով: Հետաքրքրական են բնիկ հայերեն բառերը, որոնք ժառանգություն են հնդեվրոպական նախալեզվից և կազմում են բարբառի հնագույն շերտը:

Մեր ուսումնասիրության նյութն է դարձել ***խոսք*** բառամիավորի իմաստային դաշտը Ղարաբաղի բարբառում: Այն իմաստային հետաքրքիր ծավալումներով է դրսևորվում, և դա կարելի է բացատրել բառի ծագումնաբանությամբ: Որքան երկար է բառի կենսուղին, նույնքան բազմաշերտ է բառի իմաստային դաշտը:

Խոսքը լեզվաբանորեն սահմանվում է որպես որոշակի գործունեություն, որը հոսում է ժամանակի մեջ և մարմնավորվում է հնչյունային թաղանթով կամ գրային նշաններով՝ նշանակելով ինչպես բուն խոսողական գործընթացը, այնպես էլ նրա արդյունքը:[3] Իսկ թե ինչ է խոսքը բառագիտական սահմանմամբ, նրա կենսագրության քննությունն է պարզում:

Խոսք բառը սերվում է հնդեվրոպական լեզվից: Ծագում է հնդեվրոպական k'augh արմատից, որը շրջմամբ տվել է ghauk' – հյ. «խաւս»: Բնիկ հայերեն «խօս» արմատն է, որը բարբառին է անցել գրաբարից՝ ***ք*** հոգնակերտ մասնիկով: Արցախի բարբառում ***խօսկ*** հնչատարբերակով է հանդես գալիս՝ *ս* բաղաձայնից հետո *ք>կ* հնչյունափոխությամբ:[4] Հնչյունափոխության այս երևույթն օրինաչափ է Ղարաբաղի բարբառի համար, երբ բառավերջում ք-ն, արմատին չպատկանելով, ս-ից, ս < ց-ից, ս < ծ-ից հետո դառնում է կ, ինչպես՝ անեծք-անէսկ, լվացք-լվասկ:[5]

Բառը հայերենի գրավոր հուշարձաններում վկայված է բառաբարդության տարբեր ձևերով և տարբերակներով: Բարբառի ամենակենսունակ բառամիավորներից մեկը լինելով՝ ժամանակի ընթացքում ընդլայնել է իր բառիմաստային դաշտը: Իր հիմնական գործածությամբ բառն ունի «ասած, ասելիք» նշանակությունը. ինչպես՝ *«Ղարաբաղցէն ըստըղավ-ընդըղավ չի ընգնում, խօսկը ք՛öսմö յա ասում»* ասացվածքում:

Բառամիավորը ասելիքը կարևորելու գաղափարի արտահայտմամբ հատկանշվում է հետևյալ բանաձևերում. *«**Խօսկ** կա՝ քարըն էլ ա ճըքըցնում», «**խօսկը** մը՛ծէնն ա, ճöրը կուճինինը», «**խուսկանը** յը՛րը բիրիք՛մէ պէն չի կա», «**խուսկէն** էլ ա էք՛ ու վը՛րց հինöւմ», «դէրը մըրօք չօնար, **խօսկը** ընցավ վէչ», «դöւզ **խօսկը** ամմէն մարթ կարէլ չի կօլ տա»* :

Ղարաբաղի բարբառում ***խոսք*** բառով բաղադրված դարձվածները մեծաթիվ են: Բառի հիմնական իմաստի արտահայտությունն ունենք ***խօսկը օրէնք՛ հինիլ, խօսկ յըրա պիրիլ, խօսկը պիրանումը, խուսկէն տակէն մնալ, խօսկը փոխէլ, խուսկէն պէնդ վը՛ննը կէնալ, խօսկը մին անէլ, խօսկըտ շըք՛öրöվ ըմ կըտըրում*** և այլ դարձվածներում:

*Վէր մինը ասմա՝ կ՛արունքը յէկավ, մինըն էլ **խօսկ ա յըրա պիրում**, թա. – Գիդվալ չի, հö լö մ պըռավէն էծնըը պըծալ չի: (ԱՍ, ԱԲ, էջ 251), **Հö լö խօսկը պիրանումը**՝ մարթը սաղ ջանավը ընգնում ա յէգնանը յիրան, ծիրքէրավն էլ կլ խը խըտտում: (ԱՍ, ԱԲ, էջ 269), Ամմա դէ էն վախտէրքը ըխճըկանը հու վա՞ մըհալ քըցöլ, հօրը **խօսկը օրէնք՛ ա հիլöլ:** (ԱՍ, ԱԲ, էջ 235), Նա՛խագա, **խօսկըտ շըք՛öրöվ ըմ կըտըրում,** դöւզ ա՞, վէր քըչէրէս կըլխօզէն էշը ճօխտ ա ծընալ: (ԱՍ, ԱԲ, էջ 391)*

Ոչ միայն վերաիմաստավորում պարունակող, այլև ազատ կապակցություններում նույնպես բառամիավորի առաջնային նշանակությամբ գործածությունը ամենահաճախականն է: *Յէտնան վէր*

---

[1] Տե՛ս՝ **Գ. Բ. Ջահուկյան**, *Հայոց լեզվի պատմություն. նախագրային ժամանակաշրջան*, ՀՍՍՀ ԳԱ հրատարակչություն, Երևան, 1987, էջ 271:

[2] Տե՛ս՝ Նույն տեղում, էջ 220:

[3] Տե՛ս՝ **Լ. Մ. Խաչատրյան**, *Լեզվաբանության ներածություն,* Երևան, 2008, էջ 51:

[4] Տե՛ս՝ **Ա. Մ. Պողոսյան,** *Հայ բարբառագիտություն,* Բարձրագույն դպրոց, 1996, էջ 189:

[5] Տե՛ս՝ **Ալ. Ս. Մարգարյան,** *Գորիսի բարբառը,* Երևան, 1975, էջ 92:

*քըշալ ըն, յէկալ բատըէղ շէն շինալ, դէրին **խօսկը** մընընռնէն ա ընգալ, շէնին անումը տիրալ ըն Ճարտար: (ԱՄ, ԱԲ, էջ 189),*

Խոսք-ը ոչ միայն հայերենում, այլև Ղարաբաղի բարբառում գործածական է «բառ՝ լեզվական միավոր» նշանակությամբ: Որպես առանձին լեզվական միավոր՝ ***բառ***–ն ածանցվում է հնդեվրոպական ***bhā (հայերեն՝ բա)*** արմատից՝ «1.ասել, խոսել, 2. խոսք, մարդկային բան» իմաստներով:[1] ***Բա*** արմատն առանձին կիրառություն չունի: Հին հայերենից ավանդված է անորոշ դերբայի ***բալ*** ձևով, որից էլ՝ ներկայի ***բամ, բաս, բայ*** ձևերը:

Խոսք-ի գործածությունը վերոբերյալ իմաստով հաճախական է և՛ ուղղակի՝ *Կըլ'խէս յարան սըղացալ ա, ամմա սըրտէս յարան էն օրվա ասած **խօսկատ** վէշ մին վախտ սըղանալ չի, (ԱՄ, ԱԲ, էջ 241), Աստուծ, տըրա **խօսկէրը** ըսկըընալավ, ուրխանում ա (ԱՄ, ԱԲ, էջ 152)* և՛ դարձվածային արժեքով՝ *խուսկավ ասվէլ չի, խուսկու հը՛տաւ շօռ չըկյա̈ լ, խուսկու հը՛տէ ծը՛ըրը ջուբը չըտանէլ* և այլն:

Ղարաբաղի բարբառում ***բառ***-ը ***պառ*** հնչատարբերակով է գործածական, սակայն իր հիմնական՝ «խոսք», իմաստով քիչ է հանդիպում և ձեռք է բերել «վերաբերմունք» փոխաբերական իմաստը (*պառը կալօղ* - մարդամոտ, *պառը կօշտ* - կոպիտ):

Հաղորդակցության մեջ ***խոսք***-ն ունի նաև «լեզու» նշանակությունը,[2] որն ընկալվում է որպես «միտքը բառերով արտահայտելու եղանակ»[3]: Գրաբարից ևս ավանդված է «բարբառ, կամ լեզու ազգի»[4] իմաստով:

Ծագած լինելով հնդեվրոպական dn̥g'hu̅ā, dn̥g'hu̅ նախաձևից՝ բնիկ հայերեն ***լեզու*** բառը գրաբարում ունեցել է նաև «խոսք» նշանակությունը[5] և ժողովրդական ստուգաբանությամբ կապակցվելով *լիզել* (Ղարաբաղի բարբառում՝ *լյա̈ զիլ*) բառի հետ (հնդեվրոպական՝ leig´h-լիզել)՝ բարբառներում կրել է որոշակի փոփոխություններ՝ դառնալով նաև *լիզու, լուզու, լիզօ, լզու,*[6] Ղարաբաղի բարբառում՝ *լյա̈ զյու̈ / լյա̈ զի* և այլն:

Ղարաբաղի բարբառում ***խոսք***-ը «լեզու» իմաստով սակավ գործածական է: Դրա օրինակ է ***խուսկավ կապել*** դարձվածը՝ «ճարտար լեզվով դիմացինին շփոթեցնել» նշանակությամբ: *«Մէլիք'-Շահնազարէն մին ծառա օնն, վէր լուխճին **խուսկավ կապըմ ա»**: (ԱՄ, ԱԲ, էջ 295)*

Խուսկավ կապել-ը հոմանիշ է ***լյա̈ զվավը քըչէղակ փըռնէլ*** դարձվածին՝ «ճարտարախոս լինել, սնապարծ լինել իմաստով»:

Հետաքրքրական է նաև հակառակ իրողությունը, երբ ***լեզու*** բառն է հանդես գալիս ***խոսք*** բառի իմաստային տարածքում, ինչպես հոմանիշային հետևյալ դարձվածներում՝ խուսկէն տակէն մնալ - լյա̈ զվյա̈ տակ մընալ (պատասխան չկարողանալ տալ), խօսկը պըրանէլ - լյա̈ զյա̈ ն պըրանէլ (խոսակցության նյութը փոխել), խուսկակօխ անէլ/ինիլ/տէռնալ - լյա̈ զվակօխ անէլ/ինիլ/տէռնալ (ճարտար լեզվով դիմացինին լռեցնել/ճարտարախոսությանը չկարողանալ պատասխանել) և այլն:

*Բաղվանչին ճըրճըղամ ա, ինք'ըն էլ **խուսկէն տակէն ա մընամ**, կարում չի ջօղաբը տա: (ԱՍ, ՇՄ, ՂԲԴԲ, էջ 223), Տը՛սնըմ ա, վէր պէն չի ա̈ մա̈ լ չի կ'ամ, **լյա̈ զյա̈ ն պըրանում ա**: (ԱՍ, ՇՄ, ՂԲԴԲ, էջ 206), Կնեգ'ը հանց **լյա̈ զվակօխ ա անում**, թաքավէրը մընում ա ծէնը կըտըրած: (ԱՍ, ՇՄ, ՂԲԴԲ, էջ 202)*

Խոսք բառի՝ «բառերով արտահայտված միտք»[7] իմաստը հականշային հարաբերությամբ է ընկալվում ***գործ*** բառի իմաստի հետ, ինչպես՝ *«Խօսկը մը՛ղըր ա, կօրծը՝ տա̈ խտը՛ղ», «Խօսկը կօրծավ ա խօսկ», «Խօսկը օրիշը կասէ, կօրծը օրիշը կանէ», «Խուսկավ շինաշէն, կօրծավ՝ տնաքանդ» ասացվածքներում:*

«Խօսկը կօրծան տա̈ ս կյամ, կօրծը՝ խօսկան, թա խօսկը կօրծ չի, սկի խօսկ էլ չի» ասացվածքում, ընդհակառակը, **խոսք**-ը իմաստով նույնանում է **գործ** բառի հետ: Այստեղ այն հարաբերվում է ***բան***

[1] Տե՛ս՝ **Հր. Աճառյան,** *Հայերեն արմատական բառարան,* Երևանի համալսարանի հրատարակչություն, Երևան, 1926, հ. 1, էջ 383-384:
[2] Տե՛ս՝ *Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան,* ՀՍՍՀ ԳԱԱ հրատ., Երևան, 1972, էջ 1180:
[3] Տե՛ս՝ **Է. Բ. Աղայան,** *Արդի հայերենի բացատրական բառարան,* Երևան, 1976, էջ 538:
[4] Տե՛ս՝ **Հ. Գ. Ավետիքյան, Հ. Խ. Սյուրմելյան, Հ. Մ. Ավգերյան,** *Նոր բառգիրք հայկազյան լեզվի,* Վենետիկ, 1836, էջ 1020:
[5] Տե՛ս՝ **Ռ. Ս. Ղազարյան,** *Գրաբարի հոմանիշների բառարան,* Անթիլիաս, 2006, էջ 311:
[6] Տե՛ս՝ **Հր. Աճառյան,** *Հայերեն արմատական բառարան,* Երևանի համալսարանի հրատարակչություն, Երևան, 1926, հ. 2, էջ 272:
[7] Տե՛ս՝ **Գ. Ջահուկյան, Փ. Կ-Տոնիկյան, Ա. Տ-Խաչատուրյան,** *Հայոց լեզվի նոր բառարան,* Բեյրութ, 1992, էջ 896:

բառամիավորի հետ, որը ևս կազմված է ***բա*** արմատից և ունի «խոսք», «գործ» նշանակությունները:[1] Ղարաբաղի բարբառում ***բան***-ը հնչյունափոխված ***պէն, պա̈ն*** տարբերակներով է առկա և իր իմաստային ծավալումներում ներառում է վերոնշյալ երկու դրսևորումներն էլ:[2] ***Բան*** բառամիավորի և «խոսք», և «գործ» ընկալումները իմաստային խոր ակունքներ ունեն: Աստվածաշնչյան «Ի սկզբանէ էր բանն. եւ բանն էր առ Աստուած. եւ Աստուած էր բանն» (Ավետարան ըստ Հովհաննեսի, Գլուխ Ա, 1) ձևակերպումը հենց արտացոլում է Աստծո՝ խոսքը անվերապահորեն գործ դարձնելու բնույթի իրողությունը և, ընդհանրապես, խոսքի ու գործի նույնական լինելու գաղափարը: Հնդեվրոպացիների կրոնական գաղափարներում ևս արտահայտվել է աստվածային խոսքի (***bhā***, որից հայերեն ***բան***) անառարկելիությունը:[3] Վերը նշված ասացվածքում արտահայտված ենք տեսնում արցախցու բնավորության էական հատկանիշներից մեկը՝ խոսքը գործ դարձնելու, այն է՝ մշտապես կատարելության ձգտելու գիծը:

Հիշյալ վերաիմաստավորումն ունենք նաև ***խօսկը խօսկ ինիլ*** դարձվածում՝ *«Խընա՛մէ, տըղըմարթին **խօսկը խօսկ ա**, ասալ ըմ քըսան, ուրէմըս՝ քըսան, էլ տը՛ղ չօնիմ»: (ԱՍ, ԱԲ, էջ 307)*

Մեկ այլ՝ «խոստում, հանձնառություն» իմաստով ***խոսք***-ը կապվում է ***խոստ*** արմատի հետ: Վերջինս իրանական փոխառություն է և հնդեվրոպական ças, cans արմատի ու հայերեն «խօսք, խօսիլ» բառերի հետ կազմել է *խոստանալ*՝ սկզբնապես մեկնվելով ***խիւսթու, խուստու***՝ «խոսք տալ» ձևով:[4]

Այս իմաստն արտահայտող դարձվածներ են՝ ***խօսկ տալ, խուսկէն տար վը՛ննը կէնալ/կէնալ, ինիլ, խուսկան յը՛տ տէռնալ*** և այլն: *«Մէ՛յիք-Շահնազար, շօն-շան տըղա ըմ՛ ցէր, մը՛ննըս ընգավ, պա հնձ մին կօլա կ՛ինի յըս **խօսկ տըվալ**»: (ԱՍ, ԱԲ, էջ 288), «Թաքավէրըն ապրած կէնա, յէս տափէն տական էլ ա, քու ըխչըզ՛անըտ կըրըթէնա̈մ պիրիմ, թա̈ք՛ի տու քու **խօսկատ յը՛տ չի տը՛ռնաս**»: (ԱՍ, ԱԲ, էջ 153), «Այ տըղա, իմ խօսկըս խօսկ ա, ամմա վէր տու չի քու **խօսկէտ ռ ր վըէննը կէնաս**, ջա՞ն քու օր»: (ԱՍ, ԱԲ, էջ 153)*

Քննվող բառամիավորը ուշագրավ կիրառություններ ունի առած, «ասացվածք» նշանակությամբ, որով ընդգծվում է հաղորդվող նյութի պատկերավորությունը: *«**Խօսկ** ա՝ հու վէր մին կատու ըսպանէ, բէղմա օխտը յը՛խծէ շինի, հանցու մէխկա միզվի»: (ԱՍ, ԱԲ, էջ 240), «Էտ չըխանց էլ **խօսկ** ա տը՛ռալ՝ շանը վէր տա̈զըը պահիս, շա̈կ՛ը էլ կօւտէ »: (ԱՍ, ԱԲ, էջ 250), «Փը՛նա, **խօսկ** ա՝ փը՛սան հանօրը էշն ա, խըմինք՛ քու կէնացըտ»: (ԱՍ, ԱԲ, էջ 404)*

Հիշյալ նշանակություններից բացի՝ առկա է բառամիավորի գործածությունը **«նախադասություն, արտահայտություն»** իմաստով՝ *«Կըկարի՞ս մին **խօսկ** ասիս, վէր մաչին վէ՛չ «պօ» ինի, վէ՛չ «յաղուզ»» (ԱՍ, ԱԲ, էջ 349),* **«պատգամ, խրատ, պատվեր»** նշանակությամբ՝ *«Մը՛ծէն **խօսկը** ըսկըընօէն վը՛ննը քարէն նի չի կյալ» (ԱՍ, ԱԲ, էջ 502),* **«խոսելու հերթը, իրավունքը»** իմաստով՝ *«Վէրչումը սուդյան **խօսկը** տամա կրիքօրին» (ԱՍ, ԱԲ, էջ 378),* **«խոսքկապ, նշանադրության համաձայնության»** նշանակություններով՝ *«Այպէրքը քինամ ըն թաքավէրին պալատը՝ **խօսկ** օզիլ» (ԱՍ, ԱԲ, էջ 146)* և այլն:

Այսպիսով՝ Ղարաբաղի բարբառում ***խոսք*** բառամիավորն ունի «ա. ասած, ասելիք, բ. բառ, լեզվական միավոր, գ. լեզու, դ. բառերով արտահայտված միտք, ե. գործ, զ. խոստում, հանձնառություն, է. նախադասություն, արտահայտություն, ը. պատգամ, պատվեր, խրատ, թ. խոսելու հերթը, իրավունքը, ժ. խոսքկապ, նշանադրություն» իմաստները: Գործածությամբ հաճախական է բառի ուղղակի իմաստը, այնուհետև՝ «բառ» և «խոստում հանձնառություն» իմաստները: Ընդ որում՝ թվարկված բոլոր իմաստները գրական լեզվում բառի ունեցած իմաստային դրսևորումներից են:

Խոսք բառի իմաստային ընդլայնումը վկայում է այդ բառի անցած ճանապարհի ու այդ ճանապարհին ձևավորված արցախցու ընկալումների մասին: Բացի այդ՝ ***խոսք*** բառի ու այդօրինակ միավորների կենսագրության քննությամբ մեզ տեսանելի են դառնում հնդեվրոպական նախալեզվի և գրաբարի ու բարբառի առնչակցությունները:

---

[1] Տե՛ս՝ **Հր. Աճառյան,** *Հայերեն արմատական բառարան,* Երևանի համալսարանի հրատարակչություն, Երևան, 1926, հ. 1, էջ 403:

[2] Տե՛ս՝ **Ա. Յու. Սարգսյան,** *Ղարաբաղի բարբառի բառարան,* Երևան, 2013, էջ 611:

[3] Տե՛ս՝ **Գ. Բ. Ջահուկյան,** *Հայոց լեզվի պատմություն. նախագրային ժամանակաշրջան,* ՀՍՍՀ ԳԱ հրատարակչություն, Երևան, 1987, էջ 85:

[4] Տե՛ս՝ **Հր. Աճառյան,** *Հայերեն արմատական բառարան,* Երևանի համալսարանի հրատարակչություն, Երևան, 1926, հ. 2, էջ 1105:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. **Աղայան Է. Բ.,** *Արդի հայերենի բացատրական բառարան,* Երևան, 1976:
2. **Աճառյան Հր.Հ.,** *Հայերեն արմատական բառարան,* Երևանի համալսարանի հրատարակչություն, Երևան, 1926, հ. հ. 1-2:
3. **Ավետիքյան Հ. Գ., Սյուրմելյան Հ. Խ., Ավգերյան Հ. Մ.,** *Նոր բառգիրք հայկազյան լեզվի,* Վենետիկ, 1836:
4. *Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան,* ՀՍՍՀ ԳԱԱ հրատ., Երևան, 1972:
5. **Խաչատրյան Լ. Մ.,** *Լեզվաբանության ներածություն,* Երևան, 2008:
6. **Ղազարյան Ռ. Ս.,** *Գրաբարի հոմանիշների բառարան,* Անթիլիաս, 2006:
7. **Ճերեճյան Գ., Կ-Տոնիկյան Փ., Տ-Խաչատուրյան Ա.,** *Հայոց լեզվի նոր բառարան,* Բեյրութ, 1992:
8. **Մարգարյան Ալ. Ս.,** *Գորիսի բարբառը,* Երևան, 1975:
9. **Պողոսյան Ա. Մ.,** *Հայ բարբառագիտություն,* Բարձրագույն դպրոց, 1996:
10. **Ջահուկյան Գ. Բ.,** *Հայոց լեզվի պատմություն. նախագրային ժամանակաշրջան,* ՀՍՍՀ ԳԱ հրատարակչություն, Երևան, 1987:
11. **Սարգսյան Ա. Յու.,** *Ղարաբաղի բարբառի բառարան,* Երևան, 2013:
12. **Սարգսյան Ա. Յու., Մինասյան Շ. Մ.,** *Ղարաբաղի բարբառի դարձվածաբանական բառարան,* Երևան, 2017:
13. **Սարգսյան Ա. Յու.,** *Արցախի բանահյուսությունը,* Երևան, 2015:

Տեղեկություններ հեղինակի մասին.

Արմինե Արզումանյան - Արցախի պետական համալսարան, բանասիրական ֆակուլտետ
E-mail: armivarzumanyan@gmail.com

Հոդվածը տպագրության է երաշխավորել խմբագրական կոլեգիայի անդամ, բ.գ.թ. Հ.Ղազարյանը:

ՀՏԴ 82.09 Գրականություն

ՀԱՅՐԵՆԻՔՆ ՈՒ ԱԶԳԱՅԻՆ ԿԵՐՊԱՐԸ ԳՐԻԳՈՐ ԳՈՒՐԶԱԴՅԱՆԻ ԽՈՀԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

Զուխրա ԵՐՎԱՆԴՅԱՆ

Բանալի բառեր՝ *հոգեժառանգ, հիմնորոշ, գեղագիտական, կարգախոսներ, ազգային կերպար, անխաթար, արժեհամակարգ, հետնահանջ:*

Ключевые слова *- духовный наследник, основополагающий, эстетический, слоганы, национальный образ, неискаженный, система ценностей, отступление.*

Key words *- spiritual heir, fundamental, aesthetic, slogans, national image, undistorted, value system, retreat.*

РОДИНА И НАЦИОНАЛЬНЫЙ ОБРАЗ В ЭССЕЯХ ГРИГОРА ГУРЗАДЯНА

З. ЕРВАНДЯН

Гурзадян в основе тематического мировоззренческого развития своих эссе отделил значительное место эстетическому изображению родины и основополагающему принципу отображения национального образа. Для представления и оживления национального образа в эстетической системе Гурзадян сделал художественным ту среду, где отображены нравственные представления народа.

Взгляды писателя, рожденные от национальной среды и неискаженного восприятия национального образа, являются уроками регулирования общественного поведения.

HOMELAND AND NATIONAL IMAGE IN GRIGOR GURZADYAN'S ESSAYS

Z. YERVANDYAN

